<p><b>ՀԱՐՄԱՆԵԿԱՆ</b>, ան. Հարսանիքին յատուկ, վերաբերեալ:</p> <p><b>ՀԱՐՄԱՆԻԹ</b>, S. Կարմրուկի տեսակ մորթի հիւանդութիւն:</p> <p><b>ՀԱՐՄԱՆԻՔ</b>, գ. Անուանութեան հետ կապուած ծէսեր:</p> <p><b>ՀԱՐՄԱՆՔԱԽԱՂ</b>, գ. Հարսանիքի ժամանակ տեղի ունեցող խաղ:</p> <p><b>ՀԱՐՄԱՆՔԱՀԱՅ</b>, գ. Հարսանիքի խընջոյք, հացկերոյթ:</p> <p><b>ՀԱՐՄԱՆՔԱՍՐԱՀ</b>, գ. Հարսանիքի սրահ, դահլիճ:</p> <p><b>ՀԱՐՄԱՆՔԱՏԷՐ</b>, գ. Հարսանիքի տէրք:</p> <p><b>ՀԱՐՄԱՆՔԱՏՈՒՆ</b>, գ. Հարսանիքի տուն:</p> <p><b>ՀԱՐՄԱՆՔԱԻՈՐ</b>, S. Հարսնետր:</p> <p><b>ՀԱՐՄԻԿ</b>, (Փաղաքշ.), գ. Միրեյի հարս:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՈՇ</b>, գ. Հարսնացուի տանը թխուած յօշ կլ լաւաշ հաց, որ ուղարկում են ազգականներին հարսանիքի հրաւիրելու համար:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՊՕՍ</b>, S. Խնամախօս:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՊՕՍՈՒԹԻՒՆ</b>, գ. Աղջիկ խնդրելու միջնորդութիւն:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՍԱՂԻԿ</b>, S. Հարսնոյ ծաղիկ:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՏՈՒ</b>, գ. Հարս բերող:</p> <p><b>ՀԱՐՄՆԱԿԱՆ</b>, ան. Հարսին յատուկ:</p> <p><b>ՀԱՐՄՆԱԿՈՒԴՕՔ</b>, գ. Հարսի կուրծք, հարսի ստինք:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՀԱՅՐ</b>, գ. Հարսի հայրը:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՀՐԱԻՐ</b>, ան. Հարս հրաւիրող, հարսնութեան հրաւիրող:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՂՋԻԿ</b>, գ. Հարսնացու աղջիկ:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՄԱՅՐ</b>, գ. Հարսի մայրը:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՄԱՆ</b>, ան. մկ. Հարսի նման:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՊԱՃՈՅՃ</b>, ան. Հարսին պաճուճող:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՌ</b>, գ. Հարսն առնելը:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՄԻՐՈՒՆ</b>, ան. Միրուն հարսներ:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՏԷՐ</b>, ան. Հարսի տէր:</p> <p><b>ՀԱՐՄՆԱՅՈՒ</b>, ան. Հարս դառնալու ամուսնանալու հասակին հասած աղ-</p>	<p>ջիկ:</p> <p><b>ՀԱՐՄՆԱԻԵԼԻ</b>, գ. (Բուս.) xeranthemum. Erpbedra vulgaris:</p> <p><b>ՀԱՐՄՆԱԻԷՐ</b>, գ. Հարսին մերձաւոր կին:</p> <p><b>ՀԱՐՄՆԵԱԿ</b>, գ. S. Հարսնեակ: (Կենդ.) Թրթուրը այլակերպութեան այն վիճակում, երբ պատած է բոժոժով:</p> <p><b>ՀԱՐՄՆԵՂՔԱՅՐ</b>, գ. Հարսը իր փեսային տունը տանող անձը:</p> <p><b>ՀԱՐՄՆԵՂԷՆ</b>, ան. գ. Հարսների խումբը:</p> <p><b>ՀԱՐՄՆԵՒՈՐ</b>, գ. Հարսանիքի հիւրեր պակուողների պարագաները:</p> <p><b>ՀԱՐՄՆԵՏՈՒՆ</b>, գ. Այն տունը, որտեղ կատարուում է հարսանիքը:</p> <p><b>ՀԱՐՄՆԻԿ</b>, գ. (Փաղաքշ.) Միրունիկ հարս:</p> <p><b>ՀԱՐՄՆԻՔ</b>, S. Հարսանիք: Անուանութեան հանդէս, պսակ:</p> <p><b>ՀԱՐՄՆՄԱՍ</b>, գ. (Բուս.) S. Նունուֆար:</p> <p><b>ՀԱՐՄՆՈՅ ՕՍՂԻԿ</b>, գ. (Բուս.) Խաշխաշի մի տեսակը:</p> <p><b>ՀԱՐՄՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հարս լինելը:</p> <p><b>ՀԱՐՄՆՈՒԿ</b>, գ. Նոր հարս, խաշխաշ ծաղիկը, պուպրիկ:</p> <p><b>ՀԱՐՄՆՏԵՍ</b>, գ. Առաջին պաշտօնական հանդիսաւոր այցելութիւնը (խօսքկապից յետոյ):</p> <p><b>ՀԱՐՄՆՑԱԻ</b>, գ. Նորահարսերին յատուկ մի կանացի հիւանդութիւն:</p> <p><b>ՀԱՐՄՆՔՈՅՐ</b>, գ. Հարսանիքի ժամանակ հարսին միշտ ընկերակցող ու ծառայող մտերիմ աղջիկ:</p> <p><b>ՀԱՐՄՆՔՈՒԹԻՒՆ</b>, գ. Հարսանիք:</p> <p><b>ՀԱՐՄՆՔՏՈՒՆ</b>, S. Հարսնետուն:</p> <p><b>ՀԱՐՄՆՕՐԷՆ</b>, մկ. Հարսի պէս:</p> <p><b>ՀԱՐՄՏԱԿԱՆ</b>, S. Հարուստ:</p> <p><b>ՀԱՐՄՏԱՀԱՐ</b>, ան. Հարստահարուած:</p> <p><b>ՀԱՐՄՏԱՀԱՐԱԿԱՆ</b>, ան. Հարստահարութեան վերաբերեալ:</p> <p><b>ՀԱՐՄՏԱՀԱՐԵԼ</b>, նբ. Ոյժի զօրութեամբ ճնշել, նեղել: Որնեցուածքի տիրանալ, կեղեքել:</p>
---	--

**ՀԱՐՍԱՀԱՐԻՉ**, անծ. գ. Նա որ հարըստահարում է: Կեղեքիչ:  
**ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Հարստահարելը:  
**ՀԱՐՍԱՀԱՐՈՒՄ**, գ. Հարստահարելը, կեղեքելը:  
**ՀԱՐՍԱՄԻՏ**, S. Մտահարուստ:  
**ՀԱՐՍԱՅՈՅՍ**, անծ. Յոյսով հարուստ:  
**ՀԱՐՍԱՆԱԼ**, չբ. Ուժեղանալ, զորանալ: Ունեւոր դառնալ:  
**ՀԱՐՍԱՊԷՍ**, մկ. Ոյժով, բռնաբար:  
**ՀԱՐՍԱՅՆԵԼ**, անց. ձեւ Հարստանալի:  
**ՀԱՐՍԱՅՈՒՅԻՉ**, անծ. Նա որ հարըստացնում է, հարստացնող:  
**ՀԱՐՍԻ**, անծ. Փարթամ մարմնով:  
**ՀԱՐՍՈՒԹԻՒՆ**, գ. Հարուստ լինելը: Հկո. Աղքատություն: Ունեւորություն:  
**ՀԱՐՑ**, գ. Առաջարկություն: Հարցում:  
**ՀԱՐՑԱԴՐՈՅԹ**, գ. Հարցադրում, առաջ քաշում դրոյթ:  
**ՀԱՐՑԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. Հարցում ընելը:  
**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ**, գ. Հարցում պատասխանով զրոյց:  
**ՀԱՐՑԱԹԵՐԹ**, S. Անկետ, Հարցացուցակ:  
**ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ**, գ. Հարցացուցակ:  
**ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԱՅԻՆ**, անծ. Հարցաթերթիկին վերաբերող:  
**ՀԱՐՑԱՆՆԻՐ**, գ. Նա որ հարցումներ է տալիս քննելու՝ պրպտելու նպատակով:  
**ՀԱՐՑԱԿԱՆ**, անծ. Հարցում պարունակող: Թէական:  
**ՀԱՐՑԱԿԱՆԱՊԷՍ**, մկ. Հարցական կերպով:  
**ՀԱՐՑԱԿԷՏ**, գ. Հարցական նշան:  
**ՀԱՐՑԱՅԱՐՈՅՑ**, գ. Հարցեր առաջացնող:  
**ՀԱՐՑԱՆԻՇ**, գ. Հարցական նշան: Պարոյկ:  
**ՀԱՐՑԱՆՇԱՆ**, գ. Հարցանիշ:  
**ՀԱՐՑԱՊՆԵԼ**, նբ. Հարցապնդում անել: Հարցաքննել:

**ՀԱՐՑԱՊՆԵԼՈՒՄ**, գ. Պատճառաբանում եւ օրակարգի մէջ մտքած հարցում:  
**ՀԱՐՑԱՄԷՐ**, անծ. Հարցնել սիրող:  
**ՀԱՐՑԱՄԻՐԱԿԱՆ**, անծ. Հարցասերին յատուկ:  
**ՀԱՐՑԱՄԻՐԵԼ**, բ. Ուսումնասիրել, հարցով հետաքրքրուել:  
**ՀԱՐՑԱՄԻՐՈՒԹԻՒՆ**, գ. Հարցասեր լինելը:  
**ՀԱՐՑԱՐԱՆ**, գ. Հարցնելու, հարցաքննելու տեղ: Հարցումներ պարունակող ցուցակ:  
**ՀԱՐՑԱՐԱՐ**, գ. Հարցեր տուող:  
**ՀԱՐՑԱՅԱՆԿ**, գ. Հարցերի ցանկ:  
**ՀԱՐՑԱՓՈՐՉ**, գ. (Իրարբ.) Հարց եւ փորձ, դատական քննություն՝ յանցանքի կմ վէճի հանգամանքները պարզելու համար:  
**ՀԱՐՑԱՔՆԻՆ**, անծ. Հարցաքննող:  
**ՀԱՐՑԱՔՆՆԱԿԱՆ**, անծ. Հարցաքննութեան վերաբերեալ:  
**ՀԱՐՑԱՔՆՆԵԼ**, նբ. Հարց ու փորձ անել:  
**ՀԱՐՑԱՔՆՆԻՉ**, անծ. Նա որ հարցաքննում է:  
**ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ**, գ. Հարց ու փորձ անելը: (Իրարբ.) Հարցափորձ:  
**ՀԱՐՑՄՈՒՆՔ**, S. Հարցում:  
**ՀԱՐՑՆԱՓԱՈՒ**, գ. (Եկեղ.) Կարճ շարական:  
**ՀԱՐՑՆԵԼ**, արեւմտ. լեզու. ցուցի, ցուր, նբ. Դիմել մէկին՝ նրանից պատասխան տանալու, մի բան իմանալու համար: Հարցուփորձ անել:  
**ՀԱՐՑՆԵԼԻՔ**, անծ. գ. Հարցնելու, հարցնելու բան:  
**ՀԱՐՑՆՈՂ**, ներկ. դերբ. Նա որ հարցնում է:  
**ՀԱՐՑ ՈՒ ԲԱՐՈՎ**, գ. Առողջությունը հարցնելը:  
**ՀԱՐՑՈՒԿ**, գ. (Մտտ.) Նա որ աստուածների հարցնում է՝ գուշակություն անե-

<p>լու համար:  <b>ՀԱՐՑՈՒՄ</b>, գ. Հարցնելը:  <b>ՀԱՐՑՈՒՓՈՐՁ</b>, գ. Հարցնելը:  <b>ՀԱՐՑՈՒՓՈՐՁԵԼ</b>, նբ. Հարցուփորձ  անել:  <b>ՀԱՐՐԱՆԱԼ</b>, չբ. Երամովին թռչել գետ-  նի վրայով:  <b>ՀԱՐՐՎԱՐ</b>, ած. Արորով վարում:  <b>ՀԱՅ</b>, գ. Յորենի՝ գարու եւն ալիւրից  ջրով զանգում, խմորում եւ վառա-  րանում թխում ամենօրեայ ուտելիք:  Յորեն, գարի, որոնցից հաց են պատ-  րաստում: Ընդհանրապէս ուտելիք:  <b>ՀԱՏԱԲԱԺԻՆ</b>, գ. Հացի բաժին:  <b>ՀԱՏԱԲԱՇԽ</b>, ած. Հաց բաժանող:  <b>ՀԱՏԱԲԵՐ</b>, ած. Հաց բերող:  <b>ՀԱՏԱԲՈՅՍ</b>, գ. Որեւէ բոյս, որի սերմե-  րից հաց է պատրաստում:  <b>ՀԱՏԱԳԻՆ</b>, գ. Հացի զին: Մենդադրամ,  ապրուստի փող:  <b>ՀԱՏԱԳՈՐԾ</b>, գ. Արհեստաւոր, որ հաց է  թխում: Հացեփ, փռապան:  <b>ՀԱՏԱԳՈՐԾԱՐԱՆ</b>, գ. Փռու կմ թռնիք  ունեցող խանութ, որտեղ հաց են թխում:  <b>ՀԱՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ</b>, գ. Հացագործ լի-  նէլը:  <b>ՀԱՏԱԴԵՂ</b>, գ. (Բուս.) Խոտեղէն տարե-  ւոր բոյս:  <b>ՀԱՏԱԴԻՐ</b>, գ. Հաց դնելու աման:  <b>ՀԱՏԱԴՈՒԼ</b>, գ. Հաց ուտելուց դադա-  րելը:  <b>ՀԱՏԱԹԽԱՐԱՆ</b>, գ. Հաց թխելու ար-  տադրամաս:  <b>ՀԱՏԱԹԽՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաց թխելը:  <b>ՀԱՏԱԹՈՆԻՐ</b>, գ. Հաց թխելու թոնիք:  <b>ՀԱՏԱԼԻՑ</b>, ած. Հացով լիքը, որտեղ  հացը առատ է:  <b>ՀԱՏԱԿԱՊՈՑ</b>, գ. Հացի կապոց:  <b>ՀԱՏԱԿՈՐՈՒՄՏ</b>, ած. Պարէնը սպառ-  ում, հացապակաս:  <b>ՀԱՏԱԿԱՐՕՏ</b>, ած. Հացի կարօտ:  <b>ՀԱՏԱԿԵՐ</b>, ած. գ. Հաց ուտող:</p>	<p><b>ՀԱՅԱՀԱՋ</b>, գ. Շան հաջոցի այն եղա-  նակը, երբ նա հաց է խնդրում:  <b>ՀԱՅԱՀԱՏ</b>, ած. Հացից կտրում:  <b>ՀԱՅԱՀԱՏԻԿ</b>, գ. Ընդհանուր անուն այն  սերմերի՝ հատիկների, որոնցից հաց է  պատրաստում:  <b>ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԱՆ</b>, ած. Հացահատիկ  ցանող:  <b>ՀԱՅԱՀՈՏ</b>, գ. Հացի հոտ:  <b>ՀԱՅԱՄԱՆ</b>, գ. Հացի աման:  <b>ՀԱՅԱՄԵԾՄԱՐ</b>, ած. Հացով մեծարում:  <b>ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄ</b>, գ. Հացահատիկ  մթերելը:  <b>ՀԱՅԱՄՈՒ</b>, ած. Չափազանց հաց սիրող:  <b>ՀԱՅԱՆԱԼ</b>, չբ. (Կրօն.) Հաց դառնալ:  <b>ՀԱՅԱՆՈՑ</b>, գ. Հաց թխելու տեղ, հացա-  գործարան:  <b>ՀԱՅԱՇԱՏ</b>, ած. Հացը առատ:  <b>ՀԱՅԱՇԱՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հացաշատ լի-  նէլը:  <b>ՀԱՅԱՇԵՐՏ</b>, գ. Հացի շերտ:  <b>ՀԱՅԱՇԷՆ</b>, ած. Հացով շէն մնացող:  <b>ՀԱՅԱՊԱԿԱՍ</b>, ած. Որտեղ կմ երբ հացը  պակաս է:  <b>ՀԱՅԱՊԱՇՏ</b>, ած. Հացը պաշտող:  <b>ՀԱՅԱՊՈՒՐ</b>, գ. Հացով ապուր:  <b>ՀԱՅԱՊՏՂԻ</b>, գ. (Բուս.) Հացապտղիների  կարգին պատկանող ծառ:  <b>ՀԱՅԱՊՏՂԻՆԵՐ</b>, գ. (Բուս.) Բոյսերի  կարգ, որոնք պարունակում են կաթ:  <b>ՀԱՅԱՊՏՈՒՂ</b>, գ. Հացապտղի պտուղը:  <b>ՀԱՅԱՌԱՏ</b>, ած. Որտեղ առատ է հացը,  հացաշատ:  <b>ՀԱՅԱՌԱՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հացառատ լի-  նէլը:  <b>ՀԱՅԱՎԱՃԱՌ</b>, ած. գ. Հաց վաճառող:  <b>ՀԱՅԱՎԱՃԱՌԱՆՈՑ</b>, գ. Հաց վաճառելու  տեղ:  <b>ՀԱՅԱՎԱՃԱՌՈՒՂԻ</b>, գ. Կին հացավա-  ճառ:  <b>ՀԱՅԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ</b>, գ. Հացավա-  ճառ լինելը:</p>
--	---



**ՀԱՏԱՏՈՒՆ**, գ. Տան այն աչքը, որտեղ թռնիրն է թաղուած:  
**ՀԱՏԱՐԱՐ**, ած. Տ. Հացագործ, Հացթուխ:  
**ՀԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**, Տ. Հացագործութիւն:  
**ՀԱՏԱՐՄԱՏ**, գ. (Բուս.) Կաղանջանների կարգին պատկանող ծառ:  
**ՀԱՏԱԻՔՏ**, ած. Առատ հաց պարունակող:  
**ՀԱՏԱՓՈՒՆ**, գ. Հացկերոյթ:  
**ՀԱՏ-ԲԱՐԻ**, գ. Հաց եւ բարիք:  
**ՀԱՏԲՈՒՐԴ**, գ. Բրդած հացով կերակուր:  
**ՀԱՏԵՆԵԱԿ**, գ. (Բուս.) *Dictamus*:  
**ՀԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ**, գ. Հացի փառաքանութիւն:  
**ՀԱՏԵՐԷՅ**, գ. (Հարսանեկան) հացկերոյթի ճաշի կառավարիչ:  
**ՀԱՏԵՓ**, գ. Հաց եփող կին:  
**ՀԱՏԵՓԻ ՔԱՐ**, գ. Հաց եփելու քար:  
**ՀԱՅՐԱԹՐԻՔ**, գ. Իրիկնահաց:  
**ՀԱՅ-ԹԱՅ**, գ. Հաց եւ ուրիշ կերակուրներ, ընդհանրապէս՝ ուտեստեղէն:  
**ՀԱՅԹԱՐԱՐԱՆ**, գ. Հացթուխի գործարան, փուռ:  
**ՀԱՅԹՈՒՆ**, գ. Հաց թխող արհեստաւոր, հացագործ:  
**ՀԱՅԻ**, գ. (Բուս.) Ջիթաբերների կարգին պատկանող մեծ ծառ:  
**ՀԱՅԻԿ**, գ. Փոքրիկ հաց: Մի տեսակ կերակուր:  
**ՀԱՅԻԿՆԵՐ**, յոգն. գ. Խմորեղէն, որ պատրաստում են՝ կտրտած խմորը իւղի մէջ տապակելով:  
**ՀԱՅԿԱՏԱԿ**, ած. գ. Հացկերոյթի ծաղրածու: Անկոչ սեղանակից:  
**ՀԱՅԿԱՏԱԿԵԱՆ**, գ. Հացկատակների խումբ:  
**ՀԱՅԿԱՏԱԿՈՒԹԻՒՆ**, գ. Հացկատակ լինելը:  
**ՀԱՅԿԵՐՈՅԹ**,  
**ՀԱՅԿԵՐՈՒԹԻՒՆ**, գ. Հաց ուտելը: Խըն-

ճոյք, խրախճանք:  
**ՀԱՅՀԱՄԵՄ**, գ. Սամիթի սեւ հունտը:  
**ՀԱՅՀԱՆ** } գ. Կեռ ծայրով շիշ կմ  
**ՀԱՅՀԱՆ – ՇԻՇ** }  
 ակիշ, որով թռնիր ընկած (կուտ գնացած) հացը հանում են:  
**ՀԱՅՄԻՋՈՒԿ**, գ. Հացի միջուկը:  
**ՀԱՅՄՈՒՐ**, ած. գ. Հաց մուրացող:  
**ՀԱՅՈՎ ՀԱԻԿԻՔ**, գ. Կակուղ հաց:  
**ՀԱՅՈՎ ՏԱՊԱԿ**, գ. Ձուածեղ:  
**ՀԱՅՈՒՈՐ**, ած. գ. Արտում աշխատողներին հաց տանող մարդ:  
**ՀԱՅՈՒՊԱՆԻՐ**, գ. Հացի տակ: (Բուս.) Տ. Մոլոչ, փիփերդ:  
**1. ՀԱՅՈՒՏ**, ած. գ. Որտեղ հացի ծառեր շատ կան:  
**2. ՀԱՅՈՒՏ**, ած. Հաց կերած:  
**ՀԱՅՈՒՏԻՔ**, յոգն. գ. Հաց ուտելու հանդէս:  
**ՀԱՅՊԱՆ**, Տ. Հացագործ:  
**ՀԱՅՏԱՊԱԿ**, Տ. Հացով հաւկիթ:  
**ՀԱՅՏՈՒ**, գ. Հաց տուող, ճաշ կոչունը սարքող:  
**ՀԱՅՓՆՁԻԿ**, գ. Մանկական խաղ:  
**ՀԱՅՓՈՒՆ**, գ. Հաց փոխելը:  
**ՀԱՅՓՈՐ**, ած. մկ. Մի փոքր հացի՝ լոկ սնունդի համար:  
**ՀԱՅՔՈՒԼԵՓ**, ած. Հաց լափող, անյագ ուտող:  
**1. ՀԱԻ**, գ. Սկիզբ, ծայր: Նախնիք, մեծ Հայր:  
**2. ՀԱԻ**, գ. Ընդհանրապէս թոչուն: Մարի:  
**3. ՀԱԻ**, գ. Գուրանի թրի վերի ծայրի ծաղկի մէջ խրած սեպը:  
**ՀԱԻԱԲՈՅԾ**, ած. գ. Հաւարուծութեամբ պարապող: Հաւեր մեծացնող, բազմացնող:  
**ՀԱԻԱԲՈՅՆ**, գ. Փոքրիկ շինութիւն, որտեղ հաւերը զիջերում են:  
**ՀԱԻԱԲՈՒՍԱՐԱՆ**, գ. Հաւարուծական գործարան:  
**ՀԱԻԱԲՈՒՍՈՒԹԻՒՆ**, գ. Հաւեր պա-

<p>հելը: Հաւեր բազմացնելը:  <b>ՀԱԻԱԳՈՂ</b>, գ. Հաւի գող:  <b>ՀԱԻԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ</b>, S. Ատաւիզմ:  <b>ՀԱԻԱԴԵՏ</b>, ած. գ. Հմայող, որ թռչուններին թռիչքները դիտելով գուշակութիւններ է անում:  <b>ՀԱԻԱԺՐՊԱԿ</b>, գ. (Բուս.) Եզնալեզուի մի տեսակը:  <b>ՀԱԻԱԼՈՂՈՎ</b>, գ. Անորոշ տեսակի թուփ:  <b>ՀԱԻԱԼՈՒՄՆ</b>, գ. (Կենդ.) Լողացող թռչունների կարգին պատկանող մեծ թռչուն:  <b>ՀԱԻԱՆՈՏ</b>, գ. (Բուս.) Խոտեղէն բոյս մինչեւ մի մետր բարձրութեամբ:  <b>ՀԱԻԱՆՕՍ</b>, գ. Հաւի խօսելու՝ արլորի՝ այգածագ կանչելու ժամանակը:  <b>ՀԱԻԱԿ</b>, գ. Սկիզբ, սկզբնապատճառ:  <b>ՀԱԻԱԿԱՆՉ</b>, S. Հաւախօս:  <b>ՀԱԻԱԿԱՍԱՐ</b>, գ. Հաւակատարագիների ընտանիքին պատկանող բոյս:  <b>ՀԱԻԱԿԱՍԱՐԱԶԳԻՆԵՐ</b>, գ. Միամեայ եւ բազմամեայ խոտաբոյսերի ընտանիք:  <b>ՀԱԻԱԿԵՐ</b>, ած. Հաւ ուտող: Թռչունների կեր:  <b>ՀԱԻԱԿՈՒՉ</b>, գ. Հաւերի՝ թռչունների կռիչներին գուշակութիւն անող:  <b>ՀԱԻԱԿՈՒԻ</b>, գ. Հաւերի՝ արլորների կռիւ:  <b>ՀԱԻ(Ա)ԿՏՈՒՑ</b>, գ. (Կենդ.) Կտցաւոր անասունների կարգին պատկանող կաթնասուն կենդանի:  <b>ՀԱԻԱՀԱԼԱՄ</b>, ած. գ. Հաւերին՝ թռչուններին հալածող:  <b>ՀԱԻԱՀԱՐ</b>, ած. (Գիշատիչ) Թռչունից զարկուած՝ յափշտակուած:  <b>ՀԱԻԱՀԱՐՅՈՒԿ</b>, S. Հաւահարց, Հաւահրմայ:  <b>ՀԱԻԱՀՄԱՑ</b>, գ. Թռչունի միջոցով ապագայ գուշակող:  <b>ՀԱԻԱԴԻՔՆԵՐ</b>, գ. (Բուս.) Աստղածաղիկների դասին պատկանող բոյսերի</p>	<p>կարգ:  <b>ՀԱԻԱԴՅԱՆ</b>, գ. (Բուս.) Կատուախտոյ սեռի մի տեսակը:  <b>ՀԱԻԱՄԳԻՆԵՐ</b>, գ. (Բուս.) Փողածաղիկների կարգին պատկանող բոյսերի կարգ, թփեր կմ ծառեր, կաշեկերպ մըշտադալար տերեւներով, գեղեցիկ բազմաթիւ ծաղիկներով:  <b>ՀԱԻԱՑ</b>, գ. Քաջագործութիւն, յաղթութիւն:  <b>ՀԱԻԱՆ</b>, գ. Հաւանութիւն, հաճութիւն:  <b>ՀԱԻԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւանութեան բերելու խօսուածք:  <b>ՀԱԻԱՆԱԲԱՐ</b>, մկ. Հաւանութեամբ, հաճութեամբ:  <b>ՀԱԻԱՆԱԳԻՐ</b>, գ. Հաւանութեան՝ համաձայնութեան գրութիւն:  <b>ՀԱԻԱՆԱԼ</b>, չբ. Սկզբնաւորուել, առաջանալ:  <b>ՀԱԻԱՆԱԿԱՆ</b>, ած. Հաւանող, ընդունող: Կարելի բայց ոչ ստույգ:  <b>ՀԱԻԱՆԱԿԱՆԱԲԱՐ</b>, S. Հաւանօրէն:  <b>ՀԱԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւանեցնող՝ հաճեցնող:  <b>ՀԱԻԱՆԱԿԻՑ</b>, ած. Ուրիշի նման հաւանող:  <b>ՀԱԻԱՆԱՊԷՍ</b>, S. Հաւանաբար:  <b>ՀԱԻԱՆԳ</b>, գ. Փոքր սանդ:  <b>ՀԱԻԱՆԳԱԿՈԹ</b>, գ. Հաւանգի կոթ:  <b>ՀԱԻԱՆԵԼ</b>, չբ. Անսալ, ականջ դնել:  <b>ՀԱԻԱՆԵԼԻ</b>, ած. Հաւանող, համաձայնող:  <b>ՀԱԻԱՆԸՆԿԵՐՔ</b>, գ. Համերաշխ՝ արտակից ընկերներ:  <b>ՀԱԻԱՆՈՂԱԿԱՆ</b>, գ. Հաւանութիւն՝ հաճութիւն արտայայտող:  <b>ՀԱԻԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւան լինելը:  <b>ՀԱԻԱՆՕՐԷՆ</b>, մկ. Ինչպէս հաւանական է թոռում:  <b>ՀԱԻԱՊԱՀ</b>, S. Հաւաբոյծ:  <b>ՀԱԻԱՊԱՆ</b>, գ. Հաւ պահող:  <b>ՀԱԻԱՊԱՏԻՐ</b>, գ. Գիշերային թռչուն:</p>
--	--

<p><b>ՀԱԻԱՊՈՒՐ</b>, գ. Հաւուվ եփած ապուր:  <b>ՀԱԻԱՌ</b>, գ. Երկինք:  <b>ՀԱԻԱՍԱՐ</b>, ան. մկ. Միւննոյն չափի եւ քանակի: Միւննան, անփոփոխ: ան. Հասարակաց, ընդհանուր:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԲԱԺԻՆ</b>, ան. Հաւասար բաժանած՝ բաժանուած:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԲԱՇԽ</b>, ան. Հաւասարապէս բաշխող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԲԱՐ</b>, Տ. Հաւասարապէս:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԳԻՆ</b>, ան. Նոյն գնի:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԳՈՐԾ</b>, ան. Ուրիշին հաւասար գործող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւասարագործ լինելը:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԳՈՒԹ</b>, ան. Ամենքի վերաբերմամբ հաւասար գույթ ունեցող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՂԱՏ</b>, ան. Հաւասար կերպով դատող, անաչառ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՂԱՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւասարադատ լինելը:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶԳՈՑ ԼԻՆԵԼ</b>, (Աստղար.) Երկու երկնային մարմնի՝ գողիակոսի մի կէտում լինելը:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶՈՅԳ</b>, ան. Հաւասար զոյգ ունեցող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶՕՐ</b>, ան. Հաւասար զօրութիւն ունեցող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶՕՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւասարագօր լինելը:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԹԻ</b>, ան. մկ. Հաւասար թռուվ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԺԱՄԱՆԱԿ</b>, Տ. Ձուգածամանակ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԽՈՂ</b>, Տ. Համախոհ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿԱՐԳ</b>, ան. Միւննոյն կարգի, համեմատ, նման:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿԻՑ</b>, ան. Ձուգահաւասար, համահաւասար:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՇԻՌ</b>, ան. Նոյն կշիռը՝ ծանրութիւնն ունեցող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՇՈՒՆԵԼ</b>, նբ. Հաւասարկշիռ</p>	<p>դարձնել: Հակառակ գործողութեամբ հաւասարակշռութիւն պահպանել:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՇՈՒՆԹԻՒՆ</b>, գ. Հաւասարակշիռ լինելը: Նման. Ճշգրիտ յարաբերութիւն:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՇՈՒՄ</b>, գ. Հաւասարակշռելը, հաւասարակշռուելը:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՈՂ</b> } ան. Որի բոլոր  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՈՂՄ</b> } կողմերը հաւասար են իրար:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՑԵԼ</b>, չբ. Հաւասար եւ կցորդ՝ մասնակից դառնալ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԿՑՈՂ</b>, ան. Հաւասարապէս կցորդ, զուգակցորդ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՀԱՆՂԵՊ</b>, ան. Ուղիղ դեմուդեմ գնացող (գիծ), տրամագիծ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶԵԻ</b>, Տ. Ձուգակերպ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶԵՒՈՒՆԱԿ</b>, ան. Հաւասարաձեւ դառնալու ունակութիւն ունեցող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՄԱՍ</b>, ան. մկ. Հաւասար մասեր ունեցող:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՄԱՆԵԱԼ</b>, ան. Հաւասարապէս մասնակից դարձած:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՄԱՐՑ</b>, ան. Երկու կողմից հաւասարապէս մղուող (պատերազմ):  <b>ՀԱԻԱՍԱՐԱՄԵՑ</b>, ան. Մեծութեամբ իրար հաւասար:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՄԻՑ</b>, ան. Հաւասար մտքով:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՆԿԻՒՆ</b>, ան. Որի անկիւններն իրար հաւասար են:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶՍՓ</b>, ան. մկ. Նոյն չափի, նոյն քանակի, նոյնչափ:  <b>ՀԱԻԱՍԱՐԱԶՍՓՈՒԹԻՒՆ</b>, Տ. Ձուգաչափութիւն:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՊԱՏԻՒ</b>, ան. Պատուով իրար հաւասար:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՊԱՏՈՒՆԹԻՒՆ</b>, գ. Հաւասարապատիւ լինելը:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՊԱՐԳԵՒ</b>, ան. Հաւասարապէս պարզեւոր:  <b>ՀԱԻԱՍԱՐԱՊԵՍ</b>, մկ. Հաւասար չա-</p>
---	---

փող՝ քանակով:  
**ՀԱՒԱՍԱՐԱՍԷՐ**, ած. Հաւասարութիւն սիրող:  
**ՀԱՒԱՍԱՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. Հաւասարասէր լինելը:  
**ՀԱՒԱՍԱՐԱՍՐՈՒՆ** } ած. Հաւասարարունքներ ունեցող: (Երկրաչ.) (Եռանկիւնի), որի երկու կողմերը հաւասար են միմեանց:  
**ՀԱՒԱՍԱՐԱՎԱՆԿ**, ած. (Քրկն.) Հաւասար վանկեր ունեցող (բառ):  
**ՀԱՒԱՍԱՐԱՍԵՍ**, ած. Հաւասար նայող:  
**ՀԱՒԱՍԱՐԱՍԻՊ**, ած. Միեւնոյն տիպի, զուգաստիպ:  
**ՀԱՒԱՍԱՐԵԼ**, չբ. Հաւասարուել:  
**ՀԱՒԱՍԱՐԸՆԿԱԼ**, ած. Հաւասարապէս ընդունող:  
**ՀԱՒԱՍԱՐԻՉ**, ած. գ. Հաւասարեցնող:  
**ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Հաւասար լինելը: Միաբանութիւն, մտերմութիւն:  
**ՀԱՒԱՍԱՐՈՒՄ**, գ. Հաւասարուելը:  
**ՀԱՒԱՍԱՐՈՒԵԼ**, Տ. Հաւասարել:  
**ՀԱՒԱՍԿԻՉԲ**, գ. Սկզբնահաւ:  
**ՀԱՒԱՍՏԱԲԱՆԵԼ**, նբ. Հաւաստի կերպով՝ ճշմարտապէս ասել՝ պատմել:  
**ՀԱՒԱՍՏԱԳԻՐ**, գ. Գրութիւն, որով մի պաշտօնական անձ կ'ատեան հաւաստում է այս կ'այն իրողութիւնը:  
**ՀԱՒԱՍՏԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. Հաւաստի՛ի, Աւելի հաւաստի:  
**ՀԱՒԱՍՏԱԳՐԵԼ**, բ. Վկայագրել:  
**ՀԱՒԱՍՏԱՆՇԵԼ**, բ. Հաւաստել, հաստատել:  
**ՀԱՒԱՍՏԵԱՒ**, մկ. Հաւաստի կերպով:  
**ՀԱՒԱՍՏԵԼ**, նբ. Վաւերացնել, ճշմարիտը հաստատել:  
**ՀԱՒԱՍՏԻ**, ած. Հաւատարու արժանի, ճիշտ, ստոյգ:  
**ՀԱՒԱՍՏԻԱՅՈՒՄ**, գ. Հաւաստիացնելը:  
**ՀԱՒԱՍՏԻ**, ած. Ստոյգ, ճիշտ:  
**ՀԱՒԱՍՏԻԱՆԱԼ**, բ. Հաւաստի դառնալ:

**ՀԱՒԱՍՏԻԱՊԷՍ**, մկ. Հաւաստի՝ ճիշտ հաստատուած կերպով:  
**ՀԱՒԱՍՏԻՈՒԹԻՒՆ**, գ. Հաւաստի՝ ստոյգ լինելը:  
**ՀԱՒԱՍՏԻՔ**, գ. Ստուգութիւն, անվերէպ ճշտութիւն:  
**ՀԱՒԱՍՏՈՒՄ**, գ. Հաւաստելը, հաւաստուելը:  
**ՀԱՒԱՎԱՃԱՌ**, Տ. Թոյնավաճառ:  
**ՀԱՒԱՏ**, գ. Հաւատալը, իբրեւ ճշմարտութիւն ընդունելը մի բան: (Կրօն.) Յատկապէս՝ իբրեւ ճշմարտութիւն ընդունելը կրօնական դաւանանքը: Վստահութիւն դէպի մարդիկ:  
**ՀԱՒԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) Հաւաստի դաւանութիւնը պարունակող գրուածք:  
**ՀԱՒԱՏԱԴԻՐ**, ած. Իր հաւատի համար վկայութիւն տուող:  
**ՀԱՒԱՏԱԴՐՈՒԺ**, Տ. Ուխտադրուծ:  
**ՀԱՒԱՏԱԼ**, չբ. Իբրեւ ճշմարտութիւն՝ իրողութիւն ընդունել: Վստահ լինել: Համոզուել:  
**ՀԱՒԱՏԱԼԻ**, ած. Ինչ բանի կարելի է հաւատալ:  
**ՀԱՒԱՏԱԼԻՑ**, ած. Հաւատով լի:  
**ՀԱՒԱՏԱԼԻՔ**, գ. (Կրօն.) Ինչ որ հաւատի առարկան է կազմում:  
**ՀԱՒԱՏԱՆԴԻՐ**, ած. Հաւատը փնտրող, հաւատը քննող:  
**ՀԱՒԱՏԱԿԻՑ**, ած. Հաւատով ընկեր:  
**ՀԱՒԱՏԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. Հաւատակից լինելը:  
**ՀԱՒԱՏԱՍՔ**, գ. (Եկեղ.) Հաւատի Նիկիական հանգանակը:  
**ՀԱՒԱՏԱՆԱՍՄԿ**, գ. Հաւատի վերաբերեալ գիտելիքները պարունակող գրութիւն նամակ:  
**ՀԱՒԱՏԱՆՈՒԷՐ**, ած. Հաւատին նուիրում:  
**ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ**, ած. գ. (Եկեղ.) Հաւատի վերաբերեալ գիտելիքները պատ-

մող:

**ՀԱԻՄՏԱՄԱՀՄԱՆ**, ան. (Կրօն.) Հա-  
ւատք սահմանող:

**ՀԱԻՄՏԱՄԷՐ**, ան. (Կրօն.) Հաւատք սի-  
րող, կրօնասէր, ջերմեռանդ:

**ՀԱԻՄՏԱՎԱՃԱՌ**, ան. գ. (Կրօն.) Հա-  
ւատք վաճառող, շահի համար հաւատն  
ուրացող:

**ՀԱԻՄՏԱՏԵԱՅ**, ան. Հաւատն ատող:

**ՀԱԻՄՏԱՐԻՄ**, ան. Որին կարելի է հա-  
ւատալ, վստահելի: Ստոյգ, հաւաստի,  
ճիշտ:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հաւա-  
տարիւմ ստոյգ գրութիւն:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԲԱՐ**, մկ. Հաւատարիւմ  
կերպով:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԳԻՐ**, գ. (Իրարբ.) Պաշտօ-  
նական՝ նոտարական թուղթ: Նորա-  
նըշանակ դեսպանի վաւերագիր:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. Հաւա-  
տարիւմի:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ**, ան. Հաւատար-  
մագրով հաստատուած:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԹՈՒՂԹ**, Տ. Հաւատար-  
մագիր:

**ՀԱԻՄՏԱՐՄԱԿԱՆ**, ան. Հաւատարմու-  
թիւն արտայայտող:

**ՀԱԻՄՏԱՐՄԱՆԱԼ**, չբ. Հաւատարիւմ՝  
վստահելի դառնալ:

**ՀԱԻՄՏԱՐՄԱՏԱՐ**, գ. (Իրարբ.) Նա՝ որին  
տրուած է հաւատարմագիր:

**ՀԱԻՄՏԱՐՄԱՏՈՒ**, գ. (Իրարբ.) Նա որ  
տալիս է հաւատարմագիր:

**ՀԱԻՄՏԱՐՄՈՒԹԻՒՆ**, գ. Հաւատարիւմ  
լինելը:

**ՀԱԻՄՏԱՐՄՈՒՅԻ**, գ. Հավատարիւմ կին:

**ՀԱԻՄՏԱՐՄՕՐԷՆ**, Տ. Հաւատարմաբար:

**ՀԱԻՄՏԱՅԱԼ**, անց. դերբ. Հաւատալի,  
ան. գ. Հաւատացած:

**ՀԱԻՄՏԱՅՈՒՑԻՉ**, ան. Նա որ հաւա-  
տացնում է:

**ՀԱԻՄՏԱԻՈՐ**, ան. գ. (Եկեղ.) Կուսակը-

բօն կին: (Իրարբ.) Նա որ կտակով ժա-  
ռանգութիւն է ստացել, բայց պարտա-  
ւորուած է այդ ժառանգութիւնը ամբող-  
ջապէս կմ մեծ մասամբ փոխանցել  
ուրիշի անուն: Իր հաւատացածին  
նուիրեալ:

**ՀԱԻՄՏԱՓՈՒՄ**, ան. (Կրօն.) Հաւատք  
փոխող:

**ՀԱԻՄՏԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ**, գ. Հաւատա-  
փոխ լինելը:

**ՀԱԻՄՏԱՔՆԱԿԱՆ**, ան. Հաւատաքնն-  
նութեանը վերաբերող:

**ՀԱԻՄՏԱՔՆԻՉ**, ան. գ. Հաւատի գործը  
քննող (անձ):

**ՀԱԻՄՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ**, գ. Միջնադար-  
եան կաթողիկէ կրօնական ատեանի  
դատավարութիւն՝ որով Հերետիկոս մը  
կը հարցաքննէին եւ կը պատժէին:

**ՀԱԻՄՏԳԻՐ**, Տ. Հաւատարմագիր:

**ՀԱԻՄՏՈՐՄՈՒԹԻՒՆ**, գ. Որսալը դէպի  
մի այլ հաւատ:

**ՀԱԻՄՏՈՒՅԻ**, գ. Հաւատացեալ կին:

**ՀԱԻՄՏՈՒՐԱՅ**, ան. Իր հաւատն ուրա-  
ցած, ուրացեալ:

**ՀԱԻՄՏՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ**, գ. Հաւատու-  
րաց լինելը:

**ՀԱԻՄՏՇԵԱՅ**, Տ. Առհաւատչեալ:

**ՀԱԻՄՏՇԵՔ**, գ. (Իրարբ.) Մի մասն այն  
գումարի, որ վճարուելու է ըստ պայմա-  
նագրի:

**ՀԱԻՄՏՏԱՐ**, Տ. Հաւատարմատար:

**ՀԱԻՄՏՔ**, գրաբ. յոգն. ուղղ. Հաւատի:

**ՀԱԻԱՐԱՄ**, ան. գ. Հաւերը արածեցնող:

**ՀԱԻԱՔ**, ան. մկ. Հաւաքուած, մէկ տեղ  
ժողովուած

**ՀԱԻԱՔ**, գ. (Բուս.) Ռեհանի մի տեսակ:

**ՀԱԻԱՔԱԲԱՆ**, ան. Հաւաքաբանու-  
թեամբ խօսող կմ գրող:

**ՀԱԻԱՔԱԲԱՆԱԿԱՆ**, ան. Հաւաքաբա-  
նութեան յատուկ:

**ՀԱԻԱՔԱԲԱՆԵԼ**, նբ. Հաւաքաբանու-  
թիւն անել:

<p><b>ՀԱՒԱՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. (Տրամ.) Տրամաբանական ապացուցման ձև:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԲԱՐ</b>, մկ. Հաւաքական կերպով, խմբովին:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԳՆԵԼ</b>, բ. Մեծ քանակութեամբ գնել:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԳՆՈՐԴ</b>, գ. Մեծագնորդ:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԳՐԵԼ</b>, բ. Նոր ուժեր հաւաքել:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԳՐՈՒՄ</b>, գ. Մի տեղ հաւաքելը: ՀԱՎԱՔԱԾՈՅ } Տ. Ժողովածոյ, Ժողովածու: ՀԱՎԱՔԱԾՈՒ }</p> <p><b>ՀԱՒԱՔԱԿԱԶՄ</b>, գ. Զինուած ուժերի կազմը:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԿԱՆ</b>, ած. Հկր. Անհատական: (Քրկն.) Այն գոյական անունը, որ եզակի ձեւով արտայայտում է շատ միատեսակ առարկաների խումբ: Խմբական, հասարակական:</p> <p><b>ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւաքական լինելը:</p> <p><b>ՀԱՒԱՔԱՊԱՏԿԵՐ</b>, գ. Հաւաքական պատկեր, նկարագիր:</p> <p><b>ՀԱՒԱՔԱՊԷՄ</b>, Տ. Հաւաքաբար:</p> <p><b>ՀԱՒԱՔԱՏԵՂ(Ի)</b>, գ. Տեղ, ուր հաւաքուում են, ժողովատեղ:</p> <p><b>ՀԱՒԱՔԱՏՈՒՆ</b>, գ. Տուն, որտեղ հաւաքուում են:</p> <p><b>ՀԱՒԱՔԱՐԱՆ</b>, գ. Հաւաքատեղ, հաւաքատուն:</p> <p><b>ՀԱՒԱՔԵԼ</b>, նբ. Յիրուցան եղած իրերը մէկտեղ բերել: Ժողովել:</p> <p><b>ՀԱՒԱՔԵԼԻ</b>, ած. Ինչ որ պէտք է կմ կարելի է հաւաքել:</p> <p><b>ՀԱՒԱՔԻՉ</b>, ած. գ. Նա որ հաւաքում է, հաւաքող: Ժողովող:</p> <p><b>ՀԱՒԱՔՈՅԹ</b>, գ. Հաւաքածու, ժողովածու: Մի տեղ հաւաքուելը (ժամանցի համար):</p> <p><b>ՀԱՒԱՔՈՏԵԼ</b>, նբ. Բոլորը հաւաքել:</p> <p><b>ՀԱՒԱՔՈՒՄ</b>, գ. Յրուած իրերը մէկ տեղ բերելը՝ խմբելը: Հաւաքածոյ կազմելը:</p>	<p><b>ՀԱՒԱՔՉՈՒԹԻՒՆ</b>, գ. Հարկերի հաւաքիչ լինելը:</p> <p><b>ՀԱՒԲԱԿ</b>, գ. Տան կողքին բաց բակ:</p> <p><b>ՀԱՒԵԼԱՃ</b>, գ. Լրացուցիչ, յաւելեալ աճ:</p> <p><b>ՀԱՒԵՂԷՆ</b>, ած. գ. Ընտանի թոչունների հաւաքական անուն:</p> <p><b>ՀԱՒԷԶ</b>, գ. Պղպեղ, մանաւանդ կարմիր պղպեղ:</p> <p><b>ՀԱՒԹԱՂ</b>, ած. Հաւերը թաղող:</p> <p><b>ՀԱՒԹԱՌ</b>, գ. Հաւերի թառելու ժամանակը:</p> <p><b>ՀԱՒԻԿ</b>, գ. Փոքր հաւ, սիրուն հաւ:</p> <p><b>ՀԱՒԻՍՍՈՅ</b>, գ. Հաւախօս:</p> <p><b>ՀԱՒԿԵՌԱՍ</b>, գ. Կեռասի վայրի տեսակներից մէկը:</p> <p><b>ՀԱՒԿԹԱԶԵՒ</b>, ծ. Հաւկթի ձեւ ունեցող:</p> <p><b>ՀԱՒԿԹԱՎԱՃԱՌ</b>, ած. գ. Հաւկիթ վաճառող:</p> <p><b>ՀԱՒԿԻԹ</b>, գ. Հաւի ձու: Թեթեւամիտ:</p> <p><b>ՀԱՒԿԻԹՆԱԼ</b>, չբ. Հաւկիթ դառնալ:</p> <p><b>ՀԱՒԿԻԹՉՈՒՐ</b>, գ. Մի տեսակ կերակուր, որ պատրաստում են ջրի մէջ ձու ջարդելով</p> <p><b>ՀԱՒԿՈՒԼ</b>, գ. (Կենդ.) Որսկան բազէի մի տեսակ:</p> <p><b>ՀԱՒԿՈՒՐ</b>, գ. (Ախտաբ.) Աչքի տկարութիւն՝ գիշերը չտեսնելու:</p> <p><b>ՀԱՒԿՈՒՐՈՒԹԻՒՆ</b>, Տ. Հաւկուր:</p> <p><b>ՀԱՒԿՏԵՆԻ</b>, գ. Անորոշ տեսակի լեռնային թուփ:</p> <p><b>ՀԱՒԶԱԳ</b>, գ. Հաւի ձագ: Ճուտ:</p> <p><b>ՀԱՒԶՈՒԿ</b>, գ. (Կենդ.) Վերտաւոր ձկներից մէկը՝ պատկանող ձուկ՝ թոչունի թելերի նման լողարաններով:</p> <p><b>ՀԱՒ-ՃԻԻ</b>, գ. Հաւ եւ ընդհանրապէս թելաւոր:</p> <p><b>ՀԱՒՆՈՅ</b>, գ. Փոքր շէնք, որտեղ հաւերը ձու են ածում:</p> <p><b>ՀԱՒՈՐԻԿ</b>, գ. Հաւ, թոչուն, հաւ ու ձիւ:</p> <p><b>ՀԱՒՈՐՄԱԿ</b>, գ. (Կենդ.) Որսկան շների մի տեսակը:</p> <p><b>ՀԱՒՈՐՄՈՒԹԻՒՆ</b>, Տ. Թոչնորսութիւն:</p>
--	---

<p><b>ՀԱՒՈՒԹԻՒՆ</b>, գ. Հաւ լինելը, հաւի յատկութիւնը, բնութիւնը:</p> <p><b>ՀԱՒՈՒԿ</b>, գ. (Փաղաքը.), Փոքրիկ հաւ:</p> <p><b>ՀԱՒՈՒԿԹԱԾ</b>, գ. (Ծածկ.) Հաւկիթ, ձու:</p> <p><b>ՀԱՒՈՒՐ</b>, մկ. Մի կարճ ժամանակ, փոքր ինչ:</p> <p><b>ՀԱՒՏՈՒՆ</b>, գ. Հաւի բնակութեան տեղ:</p> <p><b>ՀԱՒՐ</b>, գ. (Բուս.) Մպիտակ կաղամախի:</p> <p><b>ՀԱՒՐՈՋ</b>, գ. Կաւէ կմ յախճապակէ աման:</p> <p><b>ՀԱՒՓԱԼ</b>, գ. (Կենդ.) Վայրի կմ վայրատուն աղանի:</p> <p><b>ՀԱՒՔ</b>, գ. Երկնային թռչուն:</p> <p><b>ՀԱՒՔԱՇ</b>, գ. Հաւի կուրծքի վրայի երկ՝ ճիւղ՝ եղանաձէ ոսկորը:</p> <p><b>ՀԱՒՔՏՈՒԿ</b>, գ. Հաւաքոտելը, ժողովելը:</p> <p><b>ՀԱՒՕՐԵՆՔ</b>, գ. Հաւեղէն, թռչնեղէն, որեւիցէ թռչուն, հաւք:</p> <p><b>ՀԱՓ</b>, Միջ. որ արտայայտուում է արագ շարժում:</p> <p><b>ՀԱՓԱՓԵԼ</b> նր. Յանկարծ իլել, յափըշտակել:</p> <p><b>ՀԱՓԱՓՈՒՄ</b>, գ. Հափափելը, յափշտակելը:</p> <p><b>ՀԱՓԵԼ</b>, (Մանկ.), նր. Հափ անել, արագապէս յանկարծ ուտել:</p> <p><b>ՀԱՓԻ</b>, Յանկարծ աներեւութանայ:</p> <p><b>ՀԱՓՀԱՓ</b>, գ. Բերանը բաց ու խուփ անել:</p> <p><b>ՀԱՓՈՒՌ</b>, գ. Ափ, բուռ:</p> <p><b>ՀԱՓՈՒՍԵՁ</b>, գ. Ափի՝ բռի մէջը:</p> <p><b>ՀԱՓՈՒԵԼ</b>, նր. Յափշտակել:</p> <p><b>ՀԵԳԱՐԱՆ</b>, գ. Ընթերցանութիւն սովորելու առաջին դասագիրք: Այբբենարան:</p> <p><b>ՀԵԳԵԼ</b>, նր. Հնչիւնը հնչիւնի հետ կապելով վանկ կազմել:</p> <p><b>ՀԵԳԵՄՈՆ</b>,</p> <p><b>ՀԵԳԵՄՈՆՐԻԴԵՄ</b>, գ. Առաջնորդ, կուսակալ:</p> <p><b>ՀԵԳԵՎԱՐ</b>, մկ. Հեզելով:</p> <p><b>ՀԵԳՆԱԲԱՐ</b>, ած. Հեզնելով խօսող:</p>	<p><b>ՀԵԳՆԱԲԱՆԵԼ</b>, բ. Հեզնելով խօսել:</p> <p><b>ՀԵԳՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, Տ. Հեզնութիւն:</p> <p><b>ՀԵԳՆԱԽԱՈՆ</b>, ած. Հեզնանքով խառն:</p> <p><b>ՀԵԳՆԱԿԱՆ</b>, ած. Հեզնութիւն՝ ծաղրանք պարունակող:</p> <p><b>ՀԵԳՆԱՀՈՒՆՉ</b>, ած. Հեզնաբար հնչող:</p> <p><b>ՀԵԳՆԱԶԱՅՆ</b>, ած. մկ. Հեզնական՝ ծաղրական ձայնով:</p> <p><b>ՀԵԳՆԱՆՔ</b>, գ. Հեզնական խօսք: Ծաղրանք:</p> <p><b>ՀԵԳՆԱՍԷՐ</b>, ած. Հեզնել եւ հեզնութիւն սիրող:</p> <p><b>ՀԵԳՆԵԼ</b>, նր. Հեզնութիւն անել: Ծաղրել:</p> <p><b>ՀԵԳՆԻՉ</b>, ած. գ. Նա որ հեզնում է, հեզնող:</p> <p><b>ՀԵԳՆՈՏ</b>, ած. Հեզնող: Ծաղրական:</p> <p><b>ՀԵԳՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Խօսք, որ արտաքին իմաստին հակառակ նշանակութեամբ է հասկացուում:</p> <p><b>ՀԵԳՆՕՐԵՆ</b>, մկ. Հեզնելով:</p> <p><b>ՀԵՁ</b>, ած. Մեղմ ու հանդարտ բնատրութեան տէր: Խոնարհ:</p> <p><b>ՀԵՁԱԲԱՆ</b>, ած. Հեզաբար խօսող:</p> <p><b>ՀԵՁԱԲԱՐԲԱՈ</b>, ած. Հեզութեամբ խօսող: Խոնարհօրէն:</p> <p><b>ՀԵՁԱԲԱՐՈՑ</b>, ած. Հեզ բնատրութեան տէր:</p> <p><b>ՀԵՁԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեզաբարոյ լինելը:</p> <p><b>ՀԵՁԱԲԱՐ</b>, մկ. Հեզութեամբ: Խոնարհութեամբ:</p> <p><b>ՀԵՁԱԳՆԱՑ</b>, ած. Հեզութեամբ գնացող, հանդարտաբայլ:</p> <p><b>ՀԵՁԱԳՈՅՆ</b>, բաղդ. աստ. Աւելի հեզ:</p> <p><b>ՀԵՁԱԴԷՄ</b>, ած. Հեզ դէմքով:</p> <p><b>ՀԵՁԱԽՕՍ</b>, ած. Հեզութեամբ կմ հեզ՝ խոնարհ ձայնով խօսող:</p> <p><b>ՀԵՁԱՀԱՍԲՈՅՐ</b>, ած. Հեզ եւ համբոյր, քաղցր ու մեղմ:</p> <p><b>ՀԵՁԱՀԱՅԵԱՑ</b>, ած. Հեզ՝ մեղմ՝ քաղցր նայուածք ունեցող:</p> <p><b>ՀԵՁԱՀՈԳԻ</b>,</p>
---	--

**ՀԵԶԱՄԻՏ**, ան. Հոգով՝ մտքով հեզ, հեզաբարոյ:  
**ՀԵԶԱՆԱԶ**, ան. Հեզ նազանք ունեցող:  
**ՀԵԶԱՆԱԶՈՒԹԻՒՆ**, գ. Հեզանազ լինելը:  
**ՀԵԶԱՆԱԼ**, չբ. Հեզ դառնալ, մեղմանալ:  
**ՀԵԶԱՆՈՅ**, գ. Հեզերի տեղ:  
**ՀԵԶԱՇԱՐԺ**, ան. մկ. Մեղմ՝ հանդարտ շարժուածքով:  
**ՀԵԶԱՄԱՀ**, ան. Մեղմ՝ հանդարտ սահող գնացող:  
**ՀԵԶԱՄԱՂԱՐԹ**, ան. Որի սաղարթը՝ տերեւները մեղմօրէն շարժուում են հովից:  
**ՀԵԶԱՔԱՅԼ**, S. Հեզագնաց:  
**ՀԵԶԻԿ**, ան. մկ. (Փաղաքշ.) Հեզ, մեղմ ու անուշ:  
**ՀԵԶՈՒԹԻՒՆ**, գ. Հեզ լինելը:  
**ՀԵԶՕՐԵՆ**, մկ. Հեզութեամբ:  
**ՀԵԹԱԼ**, չբ. Յոգնածութիւնից արագ-արագ շունչ քաշել:  
**ՀԵԹԱՆՈՍ**, Կոսպաշտ. Փոխ. Անօրէն:  
**ՀԵԹԱՆՈՍԱԲԱՐ**, մկ. Հեթանոսի պէս:  
**ՀԵԹԱՆՈՍԱԲԱՐՈՅ**, ան. Հեթանոսի բարք ու սովորութիւններ ունեցող:  
**ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ**, ան. Հեթանոսին եւ հեթանոսութեան յատուկ:  
**ՀԵԹԱՆՈՍԱԿԻՐ**, ան. Ինչ որ իր մէջ կրում է հեթանոսը:  
**ՀԵԹԱՆՈՍԱՄԻՏ**, ան. Հեթանոսի նման մտածող:  
**ՀԵԹԱՆՈՍԱՆԱԼ**, բ. Հեթանոս դառնալ:  
**ՀԵԹԱՆՈՍՈՒԹԻՒՆ**, գ. Կոսպաշտութիւն:  
**ՀԵԹԱՆՈՍՈՒՇԻ**, գ. Հեթանոս կին:  
**ՀԵԹԵԹԱԼ**, չբ. Յոգնածութիւնից արագ-արագ ու կցկտուր շունչ քաշել:  
**ՀԵԼԻԲՈՎՏԱ** } գ. (Բուս.) Հաց. համեմ:  
**ՀԵԼԻԲՈՎՐԱԿ** }  
**ՀԵԼԼԵՆ**, գ. Դասական ժամանակի յոյն:  
**ՀԵԼԼԵՆԱԲԱՆ**, ան. գ. Դասական յունարէնի հմուտ մասնագէտ:  
**ՀԵԼԼԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հելլենական

լեզուին յատուկ արտայայտութիւն:  
**ՀԵԼԼԵՆԱԳԷՏ**, ան. գ. Հելլեներէնի հմուտ մասնագէտ:  
**ՀԵԼԼԵՆԱԳԻՐ**, ան. Հին հելլենական տառերով գրուած:  
**ՀԵԼԼԵՆԱԽՕՍ**, ան. Հելլեներէն խօսող:  
**ՀԵԼԼԵՆԱԿԱՆ**, ան. Հելլեններին յատուկ, վերաբերեալ:  
**ՀԵԼԼԵՆԱՄԷՐ**, ան. գ. Հելլեններին, հելլենական լեզուն՝ քաղաքակրթութիւնը սիրող:  
**ՀԵԼԼԵՆԱՄԻՐԱԿԱՆ**, ան. Հելլենասէրին եւ հելլենասիրութեան յատուկ:  
**ՀԵԼԼԵՆԱՄԻՐՈՒԹԻՒՆ**, գ. Հելլենասէր լինելը:  
**ՀԵԼԼԵՆԱՏԻ**, S. Հելլեն:  
**ՀԵԼԼԵՆՈՒՇԻ**, գ. Հելլեն (իզական սեռի):  
**ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾԵԼ**, բ. Հելուսով գործել:  
**ՀԵՇ**, գ. Հեծեծանք:  
**ՀԵՇԱԿԱՆ**, ան. Հեծեծանք արտայայտող, հառաչական: Լալահառաչ:  
**ՀԵՇԱՆ**, գ. Գերան, առաստաղի մարդակ:  
**ՀԵՇԱՆԱԿԱԼ**, գ. Հաստ գերան, որ պահում է մարդակները:  
**ՀԵՇԱՆԱՀԵՐՁ**, ան. Գերանը ձեղքող՝ կտրող:  
**ՀԵՇԱՆԱՅՈՒ**, գ. Գերանացու, մարդկացու:  
**ՀԵՇԱՆԵԼԻ** } գ. Հեծանելու կենդանի  
**ՀԵՇԱՆԵԼԻՔ** }  
 (ձի, ջորի եւ այլն):  
**ՀԵՇԱՆԻ**, գ. Տեղափոխութեան սարած էրկու՝ մէկը միւսի յետեւից դարսած անիւներով:  
**ՀԵՇԱՆԻԱԿԱՆԳԱՆՈ**, գ. Կանգառ հեծանիւների համար:  
**ՀԵՇԱՆԻԱԴՊՈՅ**, գ. Հեծանուորդների մարզադպրոց:  
**ՀԵՇԱՆԻԱՎԱԶՔ**, գ. (Մարզ.) Հեծանուորդների մրցարշաւ:  
**ՀԵՇԱՆԻՈՐ**, գ. Հեծանիւ քշող անձ:



<p><b>ՀԵԾԵԱԼ</b>, ան. գ. <i>Հեծած, հեծելագորք:</i></p> <p><b>1. ՀԵԾԵԼ</b>, չբ. <i>Վիշտը արտայայտել հառաչանքներով: Ողբալ, հեկեկալ:</i></p> <p><b>2. ՀԵԾԵԼ</b>, գ. <i>Ձիատր գորք, հեծելագոր:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱԳՈՒՆՆԵՐ</b>, գ. (Ռազմ.) <i>Հեծեալների ձիատր գորքի գունդ:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱԶՆ</b>, ան. <i>Հեծեալների տոհմից:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱԶՕՐ</b> } գ. (Ռազմ.) <i>Ձիատր</i>  <b>ՀԵԾԵԼԱԶՕՐՔ</b> } <i>գորք:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱՄՈՒՄԲ</b>, գ. <i>Հեծեալների ձիատրների խումբ:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱԿ</b>, գ. (Ռազմ.) <i>Հեծելագորքի ամեն մի զինուորը:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱՊԵՏ</b>, գ. (Ռազմ.) <i>Հեծելագորի պետ:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱՎԱՇՏ</b>, գ. (Ռազմ.) <i>Հեծելագորքի վաշտ:</i></p> <p><b>ՀԵԾԵԼԱՎԱՐԺ</b>, գ. <i>Նա որ վարժեցնում սովորեցնում է կանոնատր ձի հեծնել:</i></p> <p><b>ՀԵԾԵԼՈՒՈՐ</b>, գ. <i>Ձինուոր:</i></p> <p><b>ՀԵԾԵՏԱԳԻՆ</b>, ան. մկ. <i>Հեծեծանքով լի, հեծեծանքով: Ողբագին, լալագին:</i></p> <p><b>ՀԵԾԵՏԱԿԱՆ</b>, ան. <i>Հեծեծանք արտայայտող: Հեկեկանք:</i></p> <p><b>ՀԵԾԵՏԱՆՔ</b>, գ. <i>Վշտից հառաչելը: Ողբ:</i></p> <p><b>ՀԵԾԵՏԵԼ</b>, չբ. <i>Վշտից հառաչանքներ արձակել: Ողբալ:</i></p> <p><b>ՀԵՇԿԱՆ</b>, ան. <i>Հեծնելու յարմար:</i></p> <p><b>ՀԵՇԿԼՏԱԼ</b>, նբ. <i>Ընդհատ-ընդհատ շունչ քաշել լացի ժամանակ: Հեծեծել: Հեկեկալ:</i></p> <p><b>ՀԵՇԿԼՏԱՆՔ</b>, գ. <i>Հեծկլտալը, հեծկլտալու ձայնը: Հեկեկանք:</i></p> <p><b>ՀԵՇԿԼՏՈՑ</b>, գ. <i>Հեծկլտալը:</i></p> <p><b>ՀԵՇՆԵԼ</b>, նբ. <i>Ձիու, ուղտի, իշու եւն վրայ նստել:</i></p> <p><b>ՀԵՇՆԵԼԻՔ</b>, ան. <i>Հեծնելու յարմար, հեծկան:</i></p> <p><b>ՀԵՇՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Վշտայլից հառաչանք, հեծեծանք: Ողբ:</i></p> <p><b>1. ՀԵՇՈՒԿ</b>, գ. <i>Մարդու յետոյքը, նստա-</i></p>	<p><i>տեղ</i></p> <p><b>2. ՀԵՇՈՒԿ</b>, ան. <i>Հեծած: Ձի նստած:</i></p> <p><b>ՀԵՇՅՆԵԼ</b>, անց. <i>ձեւ Հեծնելի:</i></p> <p><b>ՀԵԿԵԿ</b>, Տ. <i>Հեկեկանք, Հեկեկոց:</i></p> <p><b>ՀԵԿԵԿԱԳԻՆ</b>, ան. <i>Հեկեկացող, հեկեկալով: Լալագին:</i></p> <p><b>ՀԵԿԵԿԱԼ</b>, չբ. <i>Ընդհատ-ընդհատ շունչ քաշելով լալ:</i></p> <p><b>ՀԵԿԵԿԱՆՔ</b>, գ. Տ. <i>Հեկեկոց: Լացի ձայն:</i></p> <p><b>ՀԵԿԵԿՈՑ</b>, գ. <i>Հեկեկալու՝ հեծկլտալու ձայն:</i></p> <p><b>ՀԵԿՋԱՄԵՏՐ</b>, Տ. <i>Վեցաչափ:</i></p> <p><b>ՀԵԿՏԱՐ</b>, գ. <i>Մետրական համակարգով՝ գետնի մակերեսային չափ:</i></p> <p><b>ՀԵԿՏՈՒԹՐ</b>, գ. <i>Մետրական համակարգի չափ:</i></p> <p><b>ՀԵԿՏՈՄԵՏՐ</b>, գ. <i>Մետրական համակարգի մեջ՝ երկարութեան չափ:</i></p> <p><b>1. ՀԵՆ</b>, արմ. <i>Հեղուի:</i></p> <p><b>2. ՀԵՆ</b>, Տ. <i>Հեղք:</i></p> <p><b>3. ՀԵՆ</b>, գ. <i>Անգամ:</i></p> <p><b>ՀԵՐԱԿԱՆ</b>, Տ. <i>Ինֆուզորիա: Հողաթափիկ միաբջիջ կենդանի:</i></p> <p><b>ՀԵՐԱՆԻԹ</b>, գ. <i>Հեղուկ նիւթ:</i></p> <p><b>ՀԵՐԳ</b>, ան. <i>Ծոյլ, պղերգ, անփոյթ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, փխկ. <i>Հեզնաբանութիւն:</i></p> <p><b>ՀԵՐԳԱԲԱՐ</b>, մկ. <i>Ծուլութեամբ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱԹՈՒԶ</b>, ան. <i>Թռչելու մեջ ծոյլ՝ դանդաղ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱԼ</b>, չբ. <i>Ծուլանալ, դանդաղել:</i></p> <p><b>ՀԵՐԳԱԼՈՒԲ</b>, ան. <i>Լսելու մեջ ծոյլ՝ անփոյթ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱՄԻՏ</b>, ան. <i>Մտքով ծոյլ: Թուլամիտ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱՆԱԼ</b>, չբ. <i>Հեղգ դառնալ, ծուլանալ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱՄԻՐՏ</b>, ան. <i>Սրտով հեղգ, դանդաղ:</i></p> <p><b>ՀԵՐԳԱՑՈՒՑԻԶ</b>, ան. <i>Ծուլացնող:</i></p> <p><b>ՀԵՐԳՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հեղգի յատկութիւնը:</i></p> <p><b>ՀԵՐԵՆ</b>, գ. <i>Վարարած գետի կմ յորդ</i></p>
---	--

<p>անձրեւաջրի արագ ու կատաղի հոսանք: Մեծ յորդուքիւն:</p> <p><b>ՀԵՂԵՂԱԲԱՐ</b>, մկ. Հեղեղի պէս:</p> <p><b>ՀԵՂԵՂԱԳՆԱՑ</b>, ած. Հեղեղի նման գնացող:</p> <p><b>ՀԵՂԵՂԱԹԱՓ</b>, ած. (փխբ.) Ուժգին, հեղեղի թափ ունեցող:</p> <p><b>ՀԵՂԵՂԱԽԱՌՆ</b>, ած. Հետը հեղեղ խառնըուած:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՇՈՒՓ</b>, ած. Հեղեղով կմ հեղեղի նման ծփացող:</p> <p><b>ՀԵՂԵՂԱԿԱՆ</b>, ած. Հեղեղին յատուկ, հեղեղող:</p> <p><b>ՀԵՂԵՂԱԿՈՇ</b>, ած. Հեղեղից ծեծուած ջարդուած:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՄԱՇ</b>, ած. Հեղեղով մածուած: Թանձրացած:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՆՄԱՆ</b>, ած. մկ. Հեղեղի նման: Տեղատարափ:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՋՈՒԻ</b>, գ. Հեղեղի ջուր:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՄԱՍ</b>, ած. Հեղեղով սաստող պատճող:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՎԱՅՐ</b>, գ. Հեղեղի (անցնելու) տեղ:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՏ</b>, գ. Հեղեղի փորած անցք:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՏԱՅԻՆ</b>, ած. Հեղեղատին վերաբերող:</p> <p><b>ՀԵՂԵՂԱՏԱՐ</b>, ած. Հեղեղից տարուած թշուած:</p> <p><b>ՀԵՂԵՂԵԼ</b>, նբ. Գետինը ողողել, ջրով ծածկել:</p> <p><b>ՀԵՂԵՂՈՒՄ</b>, գ. Հեղեղելը:</p> <p><b>ՀԵՂԵՂՈՐԷՆ</b>, մկ. Հեղեղի նման:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿ</b>, գ. Առաջնորդ, վարիչ: Գիրք շարադրող: Գիրք գրող:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԱԲԱՐ</b>, մկ. Իբրեւ հեղինակաւոր անձ:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԱԳԻՐ</b>, ած. Հեղինակի կողմից գրուած:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԱՋՐԿԵԼ</b>, բ. 1. Հեղինակային իրատունքից զրկել: 2. Պատուազրկել:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԱԿԱՆ</b>, ած. Հեղինակին յա-</p>	<p>տուկ, վերաբերեալ:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԱՌՈՐ</b>, ած. Հեղինակութիւնը վայելող:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեղինակաւոր լինելը:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿԵԼ</b>, նբ. Յօրինել, շարադրել:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեղինակ սկզբնապատճառ լինելը:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿՈՒՅԻ</b>, գ. Կին հեղինակ:</p> <p><b>ՀԵՂԻՆԱԿՕՐԷՆ</b>, Տ. Հեղինակաբար:</p> <p><b>ՀԵՂԻՔ</b>, գ. Բերք, բոյս:</p> <p><b>ՀԵՂԻԻ</b>, ած. Ինչ որ թափելու է:</p> <p><b>ՀԵՂԶ</b>, արմ. Հեղձնուլ ՚ի:</p> <p><b>ՀԵՂՁԱԿ</b>, գ. Մի կտոր կմ այլ նիւթ, որ նուագարանի լարերի վրայ ձգելով մեղմացնում են ձայնը:</p> <p><b>ՀԵՂՁԱՄԱՆ</b>, Տ. Խեղդամահ:</p> <p><b>ՀԵՂՁԱՄՂՈՒԿ</b>, ած. Խեղդուած ու մղձկած, շնչասպառ եղած:</p> <p><b>ՀԵՂՁԱՆԱԽԱՆՁ</b>, ած. Նախանձից խեղդուող:</p> <p><b>ՀԵՂՁՈՒԿ</b>, Տ. Խեղդուկ:</p> <p><b>ՀԵՂՁՈՒՑԻԿ</b>, ած. Խեղդուած, խեղդամահ եղած:</p> <p><b>ՀԵՂՁՈՒՑԻՉ</b>, ած. Նա որ խեղդում է խեղդող:</p> <p><b>ՀԵՂՈՅՄ</b>, գ. Գամ, բեւեռ, մեխ:</p> <p><b>ՀԵՂՈՒԼ</b>, Տ. Թափել, Թափուել, Վաթել:</p> <p><b>ՀԵՂՈՒԿ</b>, ած. Հեշտ թափուող, լոյծ:</p> <p><b>ՀԵՂՈՒԿԱՆԱԼ</b>, չբ. Հեղուկ դառնալ:</p> <p><b>ՀԵՂՈՒԿԱՉԱՓ</b>, գ. (Ֆիզ.) Փոքր գործիք:</p> <p><b>ՀԵՂՈՒԿԱՑՈՒՄ</b>, գ. Հեղուկանայր, հեղուկացնելը:</p> <p><b>ՀԵՂՈՒԿԵՂԷՆ</b>, ած. գ. Ինչ որ հեղուկ է:</p> <p><b>ՀԵՂՈՒԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեղուկ լինելը:</p> <p><b>ՀԵՂՈՒՄ</b>, գ. Թափելը: Հոսում:</p> <p><b>ՀԵՂՈՒՄԵԼ</b>, նբ. Բեւեռել, մեխել:</p> <p><b>ՀԵՂՈՒՍՈՒՄ</b>, գ. Միացնելը, բեւեռելը:</p> <p><b>ՀԵՂՈՒՄՇ</b>, գ. Թափուածք:</p> <p><b>ՀԵՃՈՒԿՔ</b>, գ. Մէկին հակառակ՝ նրան զայրացնելու կմ արհամարհելու համար կատարուած թշնամական գործ:</p>
--	---

<p> <b>ՀԵՄ</b>, մկ. շղկ. <i>Հիմա, դէ հիմա:</i>  <b>ՀԵՆԱԿԵՐՏՈՒԱԾՔ</b>, գ. <i>Հենակառոյց:</i>  <b>ՀԵՆԱԿ ՇԱԻՂԱՅ</b>, ճանապարհի հետք:  <b>ՀԵՆԱՀԱՐԹԱԿ</b>, գ. <i>Հենուելու հարթակ:</i>  <b>ՀԵՆԱՀՐԱՊԱՐԱԿ</b>, գ. <i>Գործողութիւններ ծաւալելու յենակետային վայր:</i>  <b>ՀԵՆԱՆԻՇ</b>, <i>Հրետանիում. Տեղանքի իրական կամ պայմանական կէտ, որն օգտագործուում է նշանակործման համար:</i>  <b>ՀԵՆԱՉԱՓ</b>, <i>Գործիք, որը հնարատրութիւն է տալիս չափելու մինչեւ առարկան եղած հեռավորութիւնը:</i>  <b>ՀԵՆԱՉԱՓՈՒԹԻՒՆ</b>, <i>Հեռատրութեան չափում տարբեր արհեստագիտական միջոցներով:</i>  <b>ՀԵՆԸ</b>, մկ. <i>Վաղորդ, շատո՛նց:</i>  <b>ՀԵՆԹԻ</b>, ած. <i>Շատ սեւ դէմքով:</i>  <b>ՀԵՆՆԵՏԻԿՈՆ</b>, ած. (Եկեղ.) <i>Միաբանական (թուղթ):</i>  <b>ՀԵՆՔ</b>, գ. <i>Հինելը, հինելու գործողութիւնը: Կտաւի երկարութեամբ ձգուած թել, առէջ:</i>  <b>ՀԵՆՔԱԳՈՐԾ</b>, ած. գ. <i>Հենքը հիւսող (անձ):</i>  <b>ՀԵՆՔԱԹԵԼ</b>, գ. <i>Հենքի թել:</i>  <b>ՀԵՆՔԱՅԻՆ</b>, ած. <i>Հենքին վերաբերող:</i>  <b>ՀԵՆՔԱՊԱՍԱՌ</b>, ած. մկ. <i>Լերդապատառ, հեւիհեւ:</i>  <b>ՀԵՇՏ</b>, ած. <i>Ախորժելի, հաճելի: Թեթեւ: Հկր. Դժուար: մկ. Դիւրին կերպով:</i>  <b>ՀԵՇՏԱԲԱՆ</b>, Տ. <i>Քաղցրաբան:</i>  <b>ՀԵՇՏԱԲԱՐ</b>, մկ. <i>Ախորժանքով հաճութեամբ:</i>  <b>ՀԵՇՏԱԲՈՅՐ</b>, ած. <i>Ախորժարոյր:</i>  <b>ՀԵՇՏԱԳԻՆ</b>, Տ. <i>Հեշտալի: Ախորժելի:</i>  <b>ՀԵՇՏԱԳԻՐ</b>, գ. <i>Դիւրութեամբ ստեղծագործող:</i>  <b>ՀԵՇՏԱԳՈՅՆ</b>, Բաղդ. <i>աստ. Հեշտ՛ի:</i>  <b>ՀԵՇՏԱԳՐԳԻՌ</b>, ած. <i>Հեշտ գրգռուող, դիւրագրգիռ:</i>  <b>ՀԵՇՏԱՂԱՐԱՆ</b>, գ. <i>Սպիտակեղէնի եւ</i> </p>	<p> <i>նման բաների պահարան:</i>  <b>ՀԵՇՏԱՁԵՐՄ ԼԻՆԵԼ</b>, <i>Հեշտութեամբ՝ դիւրաւ ազատուել:</i>  <b>ՀԵՇՏԱՁՄԱՅԼ</b>, ած. <i>Շատ սքանչելի, շատ ախորժելի:</i>  <b>ՀԵՇՏԱԼԻ</b> } ած. <i>Շատ ախորժելի՝ ցանկալի:</i>  <b>ՀԵՇՏԱԼԻՐ</b> }  <b>ՀԵՇՏԱԼՈՅԾ</b>, ած. <i>Հեշտութեամբ լուծուող՝ քայքայուող:</i>  <b>ՀԵՇՏԱԼՈՒՐ</b>, ած. <i>Հեշտութեամբ՝ ախորժելով լսող: Հաճոյքով լսուող:</i>  <b>ՀԵՇՏԱԼՐՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հեշտութեամբ լսելը:</i>  <b>ՀԵՇՏԱՆՏՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Մարմնական ցանկութիւն:</i>  <b>ՀԵՇՏԱՆՕՍ</b>, ած. <i>Քաղցրախօս:</i>  <b>ՀԵՇՏԱՆՕՍՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հեշտախօս լինելը:</i>  <b>ՀԵՇՏԱԾԻՆ</b>, ած. <i>Հեշտութեամբ՝ դիւրաւ ծնող:</i>  <b>ՀԵՇՏԱԿԱՍ</b>, ած. <i>Ախորժելի, ցանկալի:</i>  <b>ՀԵՇՏԱԿԻԹ</b>, ած. <i>Հեշտ կյոռուող:</i>  <b>ՀԵՇՏԱԿԻՐ</b>, ած. <i>Ցանկալի:</i>  <b>ՀԵՇՏԱԿԻՑ</b>, ած. <i>Ուրիշի հեշտութեան՝ հաճոյքների՝ ուրախութեան ընկեր:</i>  <b>ՀԵՇՏԱՀԱՍԲՈՅՐ</b>, ած. մկ. <i>Հեշտ, դիւրին. դիւրաւ:</i>  <b>ՀԵՇՏԱՀԱՇԻՒ</b>, ած. <i>Ինչ որ հեշտ է հաշուում:</i>  <b>ՀԵՇՏԱՄԱՐՍ</b>, ած. <i>Հեշտ մարսուող, դիւրամարս:</i>  <b>ՀԵՇՏԱՄԻՏ</b>, ած. <i>Խնդամիտ:</i>  <b>ՀԵՇՏԱՄՈՆ</b>, ած. <i>Չափազանց հեշտասէր:</i>  <b>ՀԵՇՏԱՄՈՆՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հեշտամոլ լինելը:</i>  <b>ՀԵՇՏԱՍԱԼ</b>, չբ. <i>Հեշտութիւն վայելել, փափկանալ:</i>  <b>ՀԵՇՏԱՆՔ</b>, գ. <i>Հեշտանալը: Զգայական վայելք:</i>  <b>ՀԵՇՏԱՇՓՈԹ</b>, ած. <i>Հեշտութիւնից՝ ցան-</i> </p>
---	--

<p>կուրսինից շփոթուող:  <b>ՀԵՇՏԱՊԱՏԻՐ</b>, ան. Հեշտութեամբ պատրրուող խարուող:  <b>ՀԵՇՏԱՊԷՍ</b>, մկ. Հեշտաբար:  <b>ՀԵՇՏԱՊՐՄՈՒԿ ԱՆԵԼ</b>, Կիսատ-պռատ անել հեշտ պրծնելու համար:  <b>ՀԵՇՏԱՍԱՀ</b>, ան. Հեշտութեամբ սահող:  <b>ՀԵՇՏԱՍԷՐ</b>, ան. Ցանկասեր, վաւաշոտ:  <b>ՀԵՇՏԱՍԻՐԱԲԱՐ</b>, մկ. Հեշտասերի նման:  <b>ՀԵՇՏԱՍԻՐԱԿԱՆ</b>, ան. Հեշտասերին եւ հեշտասիրութեան յատուկ:  <b>ՀԵՇՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեշտասեր լինելը:  <b>ՀԵՇՏԱՍՈՒՆ</b>, ան. Փափկութեան մէջ սնուցանող:  <b>ՀԵՇՏԱՎԱՅՐ</b>, գ. Հեշտալի վայր, անդորր տեղ:  <b>ՀԵՇՏԱՎԱՍՏԱԿ</b>, ան. Աշխատանքը հեշտ կերպով կատարող: Դիրին աշխատանքով կատարող:  <b>ՀԵՇՏԱՐԱՐ</b>, ան. Ձուարթացնող, փափկացնող, հաճոյք պատճառող:  <b>ՀԵՇՏԱՑՈՂՈՒԹԻՒՆ</b>, գ. Տ. Հեշտութիւն, Հեշտախտութիւն:  <b>ՀԵՇՏԱՑՈՒՑԻՉ</b>, ան. Նա որ հեշտացնում է, հաճելի դարձնող:  <b>ՀԵՇՏԱԻՔՏ</b>, ան. Հեշտալից, հաճոյքով լի, ախորժելի:  <b>ՀԵՇՏԱՔԱՅԼ</b>, ան. Ախորժելի տեսք ունեցող, աչքի համար հաճելի:  <b>ՀԵՇՏԵՓԵԱՑ</b>, ան. Հեշտ եփուող:  <b>ՀԵՇՏԸԿԱՆ</b>, ան. Հաճոյքով ընդունուող:  <b>ՀԵՇՏԻ</b>, ան. Ախորժելի, անդորր:  <b>ՀԵՇՏՈՂՈՐ</b>, ան. Հեշտ ոլորուող:  <b>ՀԵՇՏՈՑ</b>, գ. Հեշտութեան փափկութեան տեղ: Բզական սեռական գործարան:  <b>ՀԵՇՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեշտ ախորժելի՝ հաճելի լինելը:  <b>ՀԵՇՏՊԱՇՏԱԿ</b>, գ. Կամաւոր ծառայ:  <b>ՀԵՇՏՐԱՆ</b>, ան. Դուրան, հարթ, տափարակ:</p>	<p><b>ՀԵՇՏՕՐԷՆ</b>, մկ. Հեշտաբար:  <b>ՀԵՇՏՕՐՕՐ</b>, ան. Ձմայլեցուցիչ օրօրող:  <b>ՀԵՊՈՒԱԼ</b>, չբ. Մաստիկ հեւալ:  <b>ՀԵՋՈՒՆ</b>, գ. (Արար.-թրք.) Թղաչափ բարակ ողորկ պողպատեայ միլ: Հաստ ասեղ:  <b>1. ՀԵՌ</b>, գ. Հակառակութիւն, կագ, կռիւ:  <b>2. ՀԵՌ</b>, ան. Նախանձոտ:  <b>3. ՀԵՌ</b>, գ. Ցաւ:  <b>ՀԵՌԱԲՇՇԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեռաւար բժշկութիւն:  <b>ՀԵՌԱԲՆԱԿ</b>, ան. Հեռու տեղ բնակող:  <b>ՀԵՌԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեռաբնակ լինելը:  <b>ՀԵՌԱԳԻՐ</b>, գ. Մարք, որով երկու իրարից հեռու գտնուած կայարաններ, որոնք իրար հետ միացած են մետաղեայ լարով, իրար հետ հաղորդակցում են էլեկտրական հոսանքի միջոցով: Անթել հեռագիր, Հաղորդակցութեան միջոց առանց հեռագրալարերի: Հեռագրով հաղորդուած լուր:  <b>ՀԵՌԱԳՆԱՑ</b>, ան. Գնալու համար հեռու, հեռաւոր:  <b>ՀԵՌԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ</b>, գ. Հեռագնաց՝ հեռաւոր լինելը:  <b>ՀԵՌԱԳՈՅՆ</b>, բաղդ. աստ. Հեռի՛ն, Աւելի հեռու:  <b>ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ</b>, գ. Հեռագրով հաղորդուած լուր:  <b>ՀԵՌԱԳՐԱԹԵԼ</b> } գ. Մետաղեայ թել:  <b>ՀԵՌԱԳՐԱԼԱՐ</b> }  <b>ՀԵՌԱԳՐԱԿԱՅԱՆ</b>, գ. Կայարան, որ տեղից հեռագիր են ուղարկում եւ որտեղ հեռագիր են ստանում:  <b>ՀԵՌԱԳՐԱԿԱՆ</b>, ան. Հեռագրի եւ հեռագրութեան յատուկ:  <b>ՀԵՌԱԳՐԱՁՈՂ</b>, գ. Հեռագրասին:  <b>ՀԵՌԱԳՐԱՄԻՆ</b>, գ. Միւն, որի վրայ կապուում է հեռագրալարը:  <b>ՀԵՌԱԳՐԱՎԱՐ</b>, գ. Նամակատան աշ-</p>
--	--

խատակից, որը հեռագրեր է ստանում եւ ուղարկում:

**ՀԵՌԱԳՐՍՏՈՒՆ**, գ. Հիմնարկ քաղաքում կմ գիւղում, որ ընդունում է հեռագիրներ՝ փոխադրելու համար եւ ըստանում է ուրիշ տեղերից հեռագիրներ ու հասցնում հասցեատերերին:

**ՀԵՌԱԳՐԵԼ**, նբ. Հեռագրով հաղորդել:

**ՀԵՌԱԳՐԻՉ**, գ. Հեռագրատան պաշտօնեայ:

**ՀԵՌԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. Հեռագիրներ շինելն ու գործածելը:

**ՀԵՌԱԴԻՏԱԿ**, գ. Հեռուն դիտելու սարք:

**ՀԵՌԱԴԻՏԱԿԱՅԻՆ**, ած. Հեռադիտակով կատարուող:

**ՀԵՌԱԴԻՐ**, ած. Հեռու դրուած:

**ՀԵՌԱԶՆԱԳ**, գ. Հեռախօսով զանգելու ծառայութիւն:

**ՀԵՌԱԶՆԱԿ**, ած. Հեռու խփող:

**ՀԵՌԱԶԳԱՅ**, ած. Հեռուն զգացող:

**ՀԵՌԱԶԳԱԼ**, ած. Հեռուն զգալ:

**ՀԵՌԱԶԳԱՑՈՒԹԻՒՆ**, գ. Հեռագգայ լինելը:

**ՀԵՌԱԹՓՄԱՆՅՈՂԱԿԱՆ**, ած. Հեռուն թափանցող:

**ՀԵՌԱԹՈՒՉ**, ած. Հեռուներ թռչելու կարող:

**ՀԵՌԱԹՈՒՉՈՒԹԻՒՆ**, Հեռաւորութիւն, որն անցնում է թռչող սարքը թռիչքի սկզբից մինչեւ աւարտը:

**ՀԵՌԱԽՕՍ**, գ. Չայնասարք:

**ՀԵՌԱԽՕՍԱԶԱՆԳԵԼ**, չբ. Հեռախօսով զանգել:

**ՀԵՌԱԽՕՍԱԿԱՆ**, ած. Հեռախօսի վերաբերեալ:

**ՀԵՌԱԽՕՍԱՀԱՐՑՈՒՄ**, գ. Հեռախօսով հարցում կատարելը:

**ՀԵՌԱԽՕՍԱՏԷՐ**, գ. Հեռախօսի տէր:

**ՀԵՌԱԽՕՍԵԼ**, նբ. Հեռախօսով մի բան ասել:

**ՀԵՌԱԽՕՍՈՒԹԻՒՆ**, գ. Հեռախօսներ շինելն ու գործածելը:

**ՀԵՌԱԿԱՅ** } ած. Հեռու ընկած: Հկո. Մօ-  
**ՀԵՌԱԿԱՅ** } տակայ, մերձակայ: Հեռու գտնուող:  
**ՀԵՌԱԿԱՅԵԼ**, չբ. Իբրեւ հեռակայ ուսանել:

**ՀԵՌԱԿԱՊ**, գ. Հեռուների հետ տարուող հաղորդակայ՝ հեռահաղորդակայ:

**ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ**, գ. Կառավարում հեռու տարածութիւնից:

**ՀԵՌԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. Հեռակայ լինելը:

**ՀԵՌԱԿԷՏ**, գ. (Սստղաբ.) Ամենահեռաւոր կէտը, որտեղ գտնուում է լուսինը:

**ՀԵՌԱՀԱԼԱՍ**, ած. Հեռուն հալածող կմ հալածում:

**ՀԵՌԱՀԱՂՈՂԱԿՑՈՒՄ**, գ. Հեռուների հետ տարուող հաղորդակցութիւն՝ հեռահաղորդակցութիւն:

**ՀԵՌԱՀԱՅԵԱՅ**, ած. Հեռուն նայող:

**ՀԵՌԱՀԱՇՈՒԱՐԿ**, գ. Հեռու զնացող՝ ապագան հաշուի առնող:

**ՀԵՌԱՀՄԱՅ**, ած. Հեռուից հմայող:

**ՀԵՌԱՀՄԱՅ...Ն**, Տ. Հեռախօս...

**ՀԵՌԱՀՄԱՅԵԼ**, նբ. Հեռաձայնով խօսել:

**ՀԵՌԱՀԳԵԼ**, նբ. Հեռու ձգել, հեռացնել:

**ՀԵՌԱՀԳՈՒԹԻՒՆ**, գ. Հեռու ձգելը՝ արձակելը:

**ՀԵՌԱՀԳ**, ած. Հեռու ձգող՝ արձակող:

**ՀԵՌԱՄՆԱՅ**, գ. Հեռուում մնացած:

**ՀԵՌԱՆԱԼ**, չբ. Շարժուել այնպիսի ուղղութեամբ, որ տարածութիւնը իր եւ շարժման սկզբնակէտի միջեւ հետզհետէ աւելանայ: Անջատուել:

**ՀԵՌԱՆԿԱՐ**, ած. 1. Հեռուն նկարող:  
 2. Հեռատես:

**ՀԵՌԱՆԿԱՐ**, գ. Առարկաները նկարելը հարթ մակարդակի վրայ այնպէս՝ ինչպէս նրանք պատկերանում են աչքին՝ տարածութեան մէջ:

**ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ**, ած. Հեռանկարին վերաբերող:

**ՀԵՌԱՆԿԱՐԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. Հեռա-

նըկարային լինելը:  
**ՀԵՌԱՇԱՐ**, ան. Իրարից հեռու ցան-  
 ուած շարուած:  
**ՀԵՌԱՌԻՍՈՒՑՈՒՄ**, գ. Ուսուցում, որը  
 կատարուում է հեռուստացոյցի եւ ժա-  
 մանակակից տեխնոլոգիաների միջո-  
 ցով:  
**ՀԵՌԱՉԱՓ**, գ. Գործիք, որով չափում են  
 տարածությունը դիտողի եւ մի առար-  
 կայի միջեւ:  
**ՀԵՌԱՉԱՓԱԿԱՆ**, ան. Հեռաչափու-  
 թեանը վերաբերող:  
**ՀԵՌԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. Հեռաւորութի-  
 նը չափելը:  
**ՀԵՌԱՊԱՏԿԵՐ**, Տ. Հեռանկար:  
**ՀԵՌԱՊԱՏՃԷՆ**, գ. Ֆաբր: Գրութիւն մը  
 հեռաւոր վայր հաղորդելու միջոց:  
**ՀԵՌԱՍՏԱՆ**, գ. Հեռաւոր տեղ, հեռուն:  
**ՀԵՌԱՍՏԱՆԱՂԷՏ**, ան. Հեռուից դիտող  
 նայող(արծիւ):  
**ՀԵՌԱՍՓՈՒՆ**, նր. Հեռու տարածել, ցու-  
 ցադրել:  
**ՀԵՌԱՏԵՍ**, ան. Հեռուն տեսնող, հեռա-  
 ւոր առարկաները տեսնող:  
**ՀԵՌԱՏԵՍԻԼ**, գ. Հեռուստացոյց:  
**ՀԵՌԱՏԵՍՈՒԹԻՒՆ**, գ. Հեռատես լի-  
 նելը:  
**ՀԵՌԱՐՉԱԿ**, ան. Հեռուն ընկած:  
**ՀԵՌԱՅՈՅՑ**, Տ. Հեռադիտակ:  
**ՀԵՌԱՅՈՒՄ**, գ. Հեռանայը, հեռացնելը:  
**ՀԵՌԱԻՈՐ**, ան. Հեռու այն տեղից, որ-  
 տեղ խօսողը գտնուում է: կմ որի մասին  
 խօսուում է: Գալիք: Ազգականութեամբ  
 հեռու, օտար: Հկր. Մերձաւոր:  
**ՀԵՌԱԻՈՐԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. Հեռա-  
 ւոր'ի:  
**ՀԵՌԱԻՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Հեռաւոր լինելը:  
**ՀԵՌԵԼ**, չբ. Հեռ գալ, կսկծել:  
**ՀԵՌԻ**, Տ. Հեռու:  
**ՀԵՌՈՒ**, ան. Հեռաւոր: Հկր. Մօտ: միջ.  
 Չայնարկութիւն մի բանից հեռանալու:  
**1. ՀԵՌՈՒԹԻՒՆ**, գ. Ոխ, գրգռութիւն:

**2. ՀԵՌՈՒԹԻՒՆ**, գ. Հեռու լինելը, հե-  
 ռաւորութիւն, հեռուութիւն:  
**ՀԵՌՈՒՍՏ**, Ի **ՀԵՌՈՒՍՏ**, մկ. Հեռուից:  
**ՀԵՌՈՒՍՏԱՍՊԱՐԷՋ**, գ. Հեռուստա-  
 տեսութեան գործունէութեան ոլորտ,  
 հեռուստադաշտ:  
**ՀԵՌՈՒՍՏԱԳՈՐԾ**, գ. Հեռուստատե-  
 սային նախագիծ՝ աշխատանք:  
**ՀԵՌՈՒՍՏԱՂԱՇՏ**, գ. Հեռուստատեսու-  
 թեան գործունէութեան ոլորտ, հեռու-  
 տասապարէզ:  
**ՀԵՌՈՒՍՏԱԶԱՆԳՈՒՄԾ**, գ. Հեռուստա-  
 դիտողների խումբ:  
**ՀԵՌՈՒՍՏԱԷՋ**, գ. Հեռուստատեսային  
 հաղորդման մաս:  
**ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՑԱԺԱՍ**, գ. Հեռու-  
 տատեսային հաղորդման վերնագիր:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԺՈՂՈՎՈՒՐՆ**, գ.  
 Հեռուստահաղորդում կազմակերպող-  
 ները եւ անցկացնողները:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ.  
 Հեռուստատեսային լրագրութիւն:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՀԱՂՈՂԱՎԱ-  
 ՐՈՒՅԻ**, գ. Կին հեռուստահաղորդա-  
 վար:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՄՇԱԿՈՅԾ**, գ. Հե-  
 ռուստահաղորդումների, հեռուստա-  
 ծրրագրերի ստեղծման մշակոյթ:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԻՐԱՍՏՈՒՄ**, գ.  
 Իրադարձութիւնների հիման վրայ  
 նկարահանուած հեռուստատեսային  
 պատմութիւն:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԽՈՐՀՈՒՐՆ**, գ. Հե-  
 ռուստատեսային խորհուրդ:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՀԱՐՑԱԶՐՈՅՑ**, գ.  
 Հեռուստատեսային հարցազրոյց:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՆԱԽԱԳԻԾ**, գ. Հե-  
 ռուստահաղորդումների նախագիծ,  
 հաղորդաշարի ծրագիր:  
**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՊԱՏՈՒՄ**, գ. Հե-  
 ռուստատեսային իրապատում հաղոր-  
 դում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԲԱՆ**, գ. Հեռուստատեսային գործի տեսարան:  
**ՀԵՄԿԵԼ**, նբ. Ճխտելի: Թխմելի:  
**ՀԵՍՁՈՒՐ**, գ. Խնոր հունցելու համար օուր:  
**ՀԵՍՏԵԼ**, չբ. Ստամբակել, գլուխ բարձրացնել: Ըմբոստանալ:  
**ՀԵՍՏՈՒԹԻՒՆ**, գ. Հեստ՝ ստամբակ՝ խեռ լինելը: Ըմբոստ:  
**ՀԵՏ**, գ. Սկզբնական նշ. ոտ, ոտք: Յետ, յետոյ:  
**ՀԵՏԱԳԱՅ**, ած. Հետեւող, յետեւից եկող:  
**ՀԵՏԱԳԾՈՒՄ**, գ. Հետագիծ թողնելը:  
**ՀԵՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ**, գ. Ուտքով գնալը:  
**ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ**, ած. Հետազոտութեան՝ ստուգման յատուկ:  
**ՀԵՏԱԶՕՏԱՆԱԽԱԳՕՍԱՅԻՆ**, ած. Նախագծային եւ հետազոտական:  
**ՀԵՏԱԶՕՏԵԼ**, նբ. Մի տեղ գնալ կլմ մտնել: Նման. Քննել:  
**ՀԵՏԱԶՕՏԻՉ**, ած. Նա որ հետազոտում է:  
**ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ**, գ. Հետազօտելը:  
**ՀԵՏԱԶՕՏՈՒՄ**, գ. Հետազօտելը:  
**ՀԵՏԱՌՈՅՁ**, ած. Հետքը խուզարկող:  
**ՀԵՏԱՌՈՒԶԱԿԱՆ**, ած. Հետախոյզին եւ հետախուզութեան վերաբերեալ:  
**ՀԵՏԱՌՈՒԶԱՎԱՇՏ**, գ. Հետախուզական վաշտ:  
**ՀԵՏԱՌՈՒԶԵԼ**, նբ. Հետախուզութիւն կատարել:  
**ՀԵՏԱՌՈՒԶՈՒԹԻՒՆ**, գ. Մէկի հետքերը խուզարկելը: 2. (Ռազմ.) Թշնամու զօրքի՝ դիրքերի եւն մասին տեղեկութիւններ հաւաքելը լրտեսների, գերիների եւն միջոցով:  
**ՀԵՏԱՌՈՒԶՈՒՄ**, գ. Հետախուզելը:  
**ՀԵՏԱԿՈՐՈՅՍ**, ած. Հետքը կորցնող:  
**ՀԵՏԱԿՈՐՈՒՍՏ**, գ. Մի բանի հետքը կորցնել տալը:  
**ՀԵՏԱՀԱՆ**, ած. Հետքով գնացող:  
**ՀԵՏԱՀԱՆՈՒՎՆԵՐ**, գ. (Կենդ.) Թաղանթաթելերի կարգին պատկանող մի-

ջատների ցեղ:  
**ՀԵՏԱՀԱՍ**, ած. Յետեւից հասնող:  
**ՀԵՏԱՍՈՒՏ**, ած. Ուրիշի գնացած ճանապարհի հետքը մտնող:  
**ՀԵՏԱՄՏԵԼ**, չբ. Հետամուտ լինել: Միտքը դնել:  
**ՀԵՏԱՄՏԻԿ**, ած. Հետամուտ:  
**ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆ**, **ՀԵՏԱՄՏՈՒՄ** } գ. Հետամուտ լինելը:  
**ՀԵՏԱՆԿԱՆԱԿԱՆ**, ած. Անկախացմանը յաջորդող:  
**ՀԵՏԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Անկախութեանը յաջորդող ժամանակահատուածը:  
**ՀԵՏԱՊԻՆ**, ած. Հետապնդող:  
**ՀԵՏԱՊՆԵԼ**, նբ. (Ռազմ.) Շտապով գնալ հետքով, հալածել:  
**ՀԵՏԱՊՆՈՒՄ**, գ. Հետապնդելը, փախչողին հալածելը:  
**ՀԵՏԱՄԵՐՈՒՄ**, գ. Հեռուոր նախնիների բնորոշ գծերը ձեռք բերելը:  
**ՀԵՏԱՐԱՇ**, մկ. Լրտեսելու՝ դիտելու համար հետամտելով:  
**ՀԵՏԱՔՆԻՆ**, Տ. Հետազօտիչ: Հետաքրքրիչ:  
**ՀԵՏԱՔՐՔԻՐ**, ած. Մէկի հետքը քրքրող: Հետաքրքրական:  
**ՀԵՏԱՔՐՔՐԱԲԱՐ**, մկ. Հետաքրքրուելով:  
**ՀԵՏԱՔՐՔՐԱԽԱՈՆ**, ած. Հետաքրքրութեամբ խառն:  
**ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ**, ած. Հետաքրքրութիւն շարժող:  
**ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հետաքրքրական լինելը:  
**ՀԵՏԱՔՐՔՐԱՍՈՆ**, ած. Չափազանց հետաքրքրիչ:  
**ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ**, ած. Հետաքրքրութիւնը շարժող՝ գրգռող:  
**ՀԵՏԱՔՐՔՐԵԼ**, նբ. Հետաքրքիր դարձնել: Շահագրգռուած լինել:  
**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ**, գ. Իմանալու փա-

<p>փագ:</p> <p><b>ՀԵՏԵԻ</b>, Տ. Հետ:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Այնպիսի խօսք, որի մէջ մի նախադասութիւն հետեւեցում է նախորդ նախադասութիւնից:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԶՕՐՔ</b>, Տ. Հետեւակագօր(ք):</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿ</b>, ած. գ. Ոտով գնացող: Հկր. Ձիատր, Հեծեալ: Հկր. Ձիով, սայլով:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿԱԳԼԱՑ</b>, ած. Ոտքով գնացող, հետեւակ:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿԱԳՈՒՆԴ</b>, ած. Հետեւակ զինուորներին խմբում:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿԱԶՕՐՔ</b>, գ. Հետեւակ գօրք:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿԱՆՈՒՄԲ</b>, գ. Ոտքով գնացող մարդկանց խումբ:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿԱՍԱՐՏ</b>, ած. Հետեւակ կռուող:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿԱՍԱՐՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հետեւակամարտ լինելը:</p> <p><b>ՀԵՏԵԻԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Հետեւակ լինելը:</p> <p><b>ՀԵՏԵԻԱՆՔ</b>, գ. Ինչ որ հետեւում է մի բանի:</p> <p><b>ՀԵՏԵԻԵԱԼ</b>, ած. Ինչ որ անմիջապէս յաջորդում է խօսքին:</p> <p><b>ՀԵՏԵԻԵԼ</b>, չբ. Գնալ, ընթանալ: Գնալ մէկի ճանապարհով: Նախընթաց մի բանից բխել իբրեւ եզրակացութիւն:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂ</b>, գ. Նա որ հետեւում է:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂԱԲԱՐ</b>, մկ. Հետեւողական կերպով:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂԱԿԱՆ</b>, ած. Ինչ որ հետեւում է մի բանի իբրեւ բնական հետեւանք:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հետեւողական լինելը:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂԱԿԱՆՕՐԷՆ</b>, Տ. Հետեւողաբար:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ</b>, գ. Հետեւող լինելը:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՂԴ</b>, գ. Մէկի հետ միասին կմ յետեւից գնացող: (Տրամ.) Կրճատ հաւաքաբանութեան երկրորդ անդամը, այսինքն եզրակացութիւնը:</p>	<p><b>ՀԵՏԵԻՈՒԹԻՒՆ</b>, գ. Եզրակացութիւն:</p> <p><b>ՀԵՏԵԻՈՒՄ</b>, գ. Տ. Հետեւութիւն:</p> <p><b>ՀԵՏՁԻՆԱՂԱԴԱՐԵԱՆ</b>, ած. Ձինաղաղարին յաջորդող:</p> <p><b>ՀԵՏՁԷՏԷ</b>, մկ. Իրար հետքով, մէկը միւսի յետեւից:</p> <p><b>ՀԵՏ ԸՆԴ ՀԵՏ</b>, մկ. Հետքը հետքին, անմիջապէս յետեւից:</p> <p><b>ՀԵՏԸԼԹԱՑ</b>, ած. Յետեւից կմ հետքով ընթացող:</p> <p><b>ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ</b>, ած. Ընտրութիւններին յաջորդող:</p> <ol style="list-style-type: none"> <li><b>1. ՀԵՏԻ</b>, ած. Ոտքով գնացող, հետեւակ:</li> <li><b>2. ՀԵՏԻ</b>, նախորդ. Յետեւից, յետոյ:</li> <li><b>3. ՀԵՏԻ</b>, ած. Հետը եղող: մկ. Յաջորդող:</li> <li><b>4. ՀԵՏԻ</b>, նախորդ. Համար:</li> <li><b>5. ՀԵՏԻ</b>, մկ. Անգամ, հետ:</li> </ol> <p><b>ՀԵՏԻԿ</b>, գ. Երկայն ճտքերով կօշիկ, ճիգ-մէ, մոյլ:</p> <p><b>ՀԵՏԻՈՏ</b>, ած. Ոտքով գնացող, հետեւակ: } մկ. Լոյսը բացուելուն  <b>ՀԵՏԸՈՒՍՈՒՆ</b> } պէս:</p> <p><b>ՀԵՏԻԱԶ</b>, գ. Հետքի որոնում:</p> <p><b>ՀԵՏԿԱՆՉՈՒԵԼ</b>, բ. Հետ կանչուելը:</p> <p><b>ՀԵՏԿԱՌՈՒՑՈՒՍԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Կառուցումը բանութեանը յաջորդող:</p> <p><b>ՀԵՏԿԵՐՈՒԽՈՒՄԱՅԻՆ</b>, ած. Խումհարային:</p> <p><b>ՀԵՏԿՈՐՈՅՍ</b>, ած. Հետքը կորցնող կմ կորցրած:</p> <p><b>ՀԵՏՀԵՏՈՒՆ</b>, Տ. Հետը հետին:</p> <p><b>ՀԵՏՎՐԱՑ</b>, մկ. Նոյն հետքով, հետքը քշելով:</p> <p><b>ՀԵՏՔ</b>, գ. Ոտքը կոխած տեղում մնացած դրոշմը: Նման. Մարմնի վրայ բիծ: Փոխ. Ուղղութիւն:</p> <p><b>ՀԵՐԱԳԱՆԳՈՒՐ</b>, ած. Մազերը գանգուրող: Գանգրահեր:</p> <p><b>ՀԵՐԱԳՈՐԾ</b>, ած. Մազեր գործող, մազեր բուսցնող:</p> <p><b>ՀԵՐԱԹԱՓ</b>, ած. Մազերը թափած:</p>
---	---



<p><b>ՀԵՐԱԹԱՓՈՒԹԻՒՆ</b>, գ. Մազերի թափ- ուելը: <b>ՀԵՐԱՆԼԻՉ</b>, գ. Մազը պոկող: <b>ՀԵՐԱՆՈՒԻ</b>, ած. Գզգոմած մազերով: <b>ՀԵՐԱԿԱՆ</b>, ած. գ. Մետաղեայ քորոց, որ կանայք գցում են մազերի մէջ: <b>ՀԵՐԱԿԱՆԻ ԲՁԷՁ</b>, գ. (Կենդ.) Բզէզներից ամենամեծը: <b>ՀԵՐԱԿՏՐՈՒԹԻՒՆ</b>, գ. (Եկեղ.) Մազերը կտրելը՝ իբրև նշան կղերականության կմ աշխարհից հրաժարուելու: <b>ՀԵՐԱՀԱՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Մազերին խփե- լով կախարդութիւն անելու մի տեսակ: <b>ՀԵՐԱՊԱՆՏ</b>, ած. Պանծալի մազեր ունեցող, վարսազեղ: <b>ՀԵՐԱՏ</b>, ած. Մազ չունեցող: <b>ՀԵՐԱՏԵԱՆ</b>, ած. Մազերը թափած: <b>ՀԵՐԱՏՈՒԿ</b>, ած. Անամօթ, անպատկառ կին, լկտի: <b>ՀԵՐԱՏՈՒԿԵԱՆ</b>, ած. Չկարմրած: <b>ՀԵՐԱՏՈՒՄԵԱՆ</b>, ած. Անամօթ, լկտի դարձած: <b>ՀԵՐԱՂԱԿ</b>, ած. մկ. Մազերն արձա- կած: <b>ՀԵՐԱԻՈՐ</b>, ած. Մազեր ունեցող: <b>ՀԵՐԱԻՈՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Մազեր ունե- նայր: <b>ՀԵՐԱՔԱՐՇ</b>, ած. մկ. Մազերից քարշ տրուած: <b>ՀԵՐԵՏԻԿՈՍ</b>, գ. (Եկեղ.) Նա որ եկեղե- ցու ընդունած դաւանութեան հակառակ դաւանութիւն էր ընդունում: <b>ՀԵՐԵՏԻԿՈՍԱԲԱՐ</b>, մկ. (Եկեղ.) Հերե- տիկոսի նման: <b>ՀԵՐԵՏԻԿՈՍԱԿԱՆ</b>, ած. Հերետիկոսին յատուկ: <b>ՀԵՐԵՏԻԿՈՍԱՊԵՏ</b>, գ. (Եկեղ.) Գլխատր կմ մեծ հերետիկոս: <b>ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹԻՒՆ</b>, գ. (Եկեղ.) Հերե- տիկոս լինելը: <b>ՀԵՐԷՆԵՏԷՐ</b>, ած. (Եկեղ.) Թերեւս՝ խոր- հրդաւոր շարական:</p>	<p><b>ՀԵՐԹ</b>, գ. Կարգ, դասաւորութիւն: <b>ՀԵՐԹԱԿԱՆ</b>, ած. Նա որ իր հերթում է գտնուում տուեալ գործը կատարելու համար: <b>ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հերթակալ լինելը: <b>ՀԵՐԹԱԿԱՆ</b>, ած. Հերթը ցոյց տուող: Հերթի մէջ մտցրած: <b>ՀԵՐԹԱՊԱՀ</b>, Տ. Հերթակալ: <b>ՀԵՐԹԱՊԱՀԱԿԱՆ</b>, ած. Հերթապահու- թեանը վերաբերող: <b>ՀԵՐԹԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Գործի հերթը փոխուելը: <b>ՀԵՐԹԻՆ</b>, մկ. Երբ հերթը գայ, հերթով: <b>ՀԵՐԻՄԱՅ</b>, գ. Յորենի կմ ընտիր գարու կորկոտից ու մսից պատրաստուած կերակուր: <b>ՀԵՐԻՒՆ</b>, գ. Երկաթէ պարզ գործիք սուր ծայրով: ՀԵՐԻՒՆԱԿԵՐՊ } ած. Հերինի նման: ՀԵՐԻՒՆԱՁԵՒ } <b>ՀԵՐԻՔ</b>, մկ. Բաւական է: <b>ՀԵՐԻՔԱՆԱՆ</b>, <b>ՀԵՐԻՔԵՆ</b>, չբ. Հերիք լինել, բաւական լինել: <b>ՀԵՐԿ</b>, գ. Գութանով կմ արօրով հողը փորելու, ցանելու համար: <b>ՀԵՐԿԱԳՈՐՇ</b>, գ. Հերկ անող: <b>ՀԵՐԿԱԳՈՐՇԵՆ</b>, Տ. Հերկել: <b>ՀԵՐԿԱՐԱՐ</b>, գ. Հերկ անող, հերկող: <b>ՀԵՐԿԵՆ</b>, նբ. Գութանով կմ արօրով հողը փորել ցանելու համար: <b>ՀԵՐԿՈՅ</b>, գ. Հերկելու ժամանակը: <b>ՀԵՐՀԵՐ</b>, գ. Երկաթէ սանր: <b>ՀԵՐՁ</b>, ած. Հերձուած, ճեղքուած: <b>ՀԵՐՁԱՆԵՁՈՒ</b>, ած. Ճեղքուած՝ երկճիւղ լեզու ունեցող: <b>ՀԵՐՁԱՕԻՆ</b>, ած. Հերձածնութեան միջո- ցով բազմացող: <b>ՀԵՐՁԱՕՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Ստորին գործա- րանատր մարմինների բազմանալու եղանակը:</p>
---	---

**ՀԵՐՁԱԿԱՆ**, ան. Հերձանելու յատուկ:  
**ՀԵՐՁԱԿՏՈՒՑ**, ան. Որի կտուցը լայն ճեղքուած է:  
**ՀԵՐՁԱՄԱՀ**, ան. (Կրօն.) Պատառուած օրերի մէջ հերձամահ եղած:  
**ՀԵՐՁԱՆԵԼԻ**, ան. Ինչ որ կարելի է հերձանել՝ ճղել՝ ճեղքել:  
**ՀԵՐՁԱՍԵՐ**, ան. Հերձուածք կմ հերձուածողութիւն սիրող:  
**ՀԵՐՁԱՏԵԼ**, նբ. Ճեղքճեղքել:  
**ՀԵՐՁԱՄԱՆ**, գ. Անդամահատութիւն կատարելու սրահ:  
**ՀԵՐՁԱՔԱՐ**, գ. (Հանք.) Թերթաքարի տեսակը:  
**ՀԵՐՁԻԿ**, ան. Հերձանող, պատառող:  
**ՀԵՐՁԻՔ**, գ. Յաւելեալ չարախօսութիւն:  
**ՀԵՐՁՈՏՈՒԿՆԵՐ**, գ. (Կենդ.) Ամենամանր խեցեմորթների կարգ:  
**1. ՀԵՐՁՈՒԱՍՏ**, գ. Պառակտում: (Եկեղ.) Մասնաւորապէս՝ պառակտում եկեղեցու մէջ՝ դաւանական կմ ծիսական տարածայնութեան պատճառով: (Եկեղ.) Հերետիկոսութիւն, եկեղեցու ընդունած դաւանութեան հակառակ դաւանութիւն: Աղանդ:  
**2. ՀԵՐՁՈՒԱՍՏ**, ան. Հակառակ, անհաշտ:  
**ՀԵՐՁՈՒԱՍՏԱԿԱՆ**, ան. (Եկեղ.) Հերձուած պարունակող:  
**ՀԵՐՁՈՒԱՍՏՈՂ**, ան. գ. (Եկեղ.) Եկեղեցու միութիւնից պառակտուած՝ բաժանուած մարդ կմ խումբ: :  
**ՀԵՐՁՈՒԱՍՏՈՂԱԿԱՆ**, ան. (Եկեղ.) Հերձուածողին յատուկ:  
**ՀԵՐՁՈՒԱՍՏՈՂԱՊԵՏ**, գ. (Եկեղ.) Հերձուածողների պետ:  
**ՀԵՐՁՈՒԱՍՏՈՂԱՐԱՐ**, ան. (Եկեղ.) Հերձուածող դարձնող, մոլորեցնող:  
**ՀԵՐՁՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) Հերձուած:  
**ՀԵՐՁՈՒՄ**, գ. Ճեղքելը:  
**ՀԵՐՄԱՅՐՈՂԻՏ**, ան. գ. (Յուն.) Անհատ, որ ունի միաժամանակ թէ՞ արական եւ թէ՞ իգական սեռական գործարաններ:

**ՀԵՐՈՂԼԻՖ**, գ. (Յուն.) Հին եգիպտացիների մեհենական եւ պետական գրութեան ձեւը:  
**ՀԵՐՈՍ**, գ. Անուն, որով Հին Յունաստանում կոչում էին երեւելի մարդկանց:  
**ՀԵՐՈՍԱԲԱՐ**, մկ. Հերոսի նման:  
**ՀԵՐՈՍԱԿԱՆ**, ան. Հերոսին յատուկ:  
**ՀԵՐՈՍԱՍԱՐՏ**, գ. Հերոսի պատերազմ:  
**ՀԵՐՈՍԱՆԱԼ**, բ. Հերոս դասնալ:  
**ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ**, գ. Հերոսների կմ հերոսութիւնների մասին պատմող:  
**ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ**, գ. Հերոսին յատուկ գործ:  
**ՀԵՐՈՍՈՒԿԻՆ**, գ. Հերոս-կին:  
**ՀԵՐՈՒ**, գ. Անցեալ տարի:  
**ՀԵՐՔԵԼ**, նբ. Վանել, հեռացնել: Ժխտել:  
**ՀԵՐՔԵԼԻ**, ան. Ինչ որ կարելի է հերքել:  
**ՀԵՐՔՄԱԳԻՐ**, գ. Հերքման գիր: Ժխտողագիր:  
**ՀԵՐՔՈՂԱԿԱՆ**, ան. Հերքում պարունակող:  
**ՀԵՐՔՈՒՄ**, գ. Հերքելը: Ժխտելը:  
**ՀԵՑ**, գ. Անիւի շրջանակը:  
**ՀԵՒԱԼ**, չբ. Յոգնածութիւնից ուժգին եւ արագ-արագ շունչ քաշել:  
**ՀԵՒԱՆ**, գ. Անիւի շրջանակի կմ հեցի վեց կտորներից ամէն մէկը:  
**ՀԵՒ Ի ՀԵՒ**, մկ. Հեւալով:  
**ՀԵՒՀԵՒԱԼ**, չբ. Յաճախ հեւալ:  
**ՀԵՒՔ**, գ. Արագ-արագ եւ ուժգին շնչառութիւն:  
**ՀԵՓԵՍՏԵԱՆ**, ան. Հեփեսոսի:  
**ՀԵՔԵԱԹ**, Տ. Հէքեաթ:  
**ՀԵՔԵԱԹԱՊԱՏՈՒՄ**, գ. Ոչ իրական դէպքերի հիստուածք:  
**ՀԶՕՐ**, ան. Շատ զօրաւոր, շատ ուժեղ:  
**ՀԶՕՐԱԲԱՐ**, մկ. Հզօրի պէս:  
**ՀԶՕՐԱԲԱՐՈՑ**, ան. Հզօր բարքով:  
**ՀԶՕՐԱԳԻՆ**, ան. մկ. Ուժեղ, ուժեղ կերպով:  
**ՀԶՕՐԱԳՈՅՆ**, բաղդ. աստ. Հզօր՝ի, Աւելի հզօր:

**ՀԶՕՐԱԶԳՈՒ**, ան. Ուժեղ կերպով ազդող:  
**ՀԶՕՐԱԶՕՐ**, ան. Շատ (չափազանց) հզոր:  
**ՀԶՕՐԱԹՄՓ**, ան. մկ. Հզոր թափ ունեցող:  
**ՀԶՕՐԱԶԱՅՆ**, ան. Հզոր՝ ուժեղ ձայն ունեցող:  
**ՀԶՕՐԱՄԻՏ**, ան. Հզոր մտքի տեր:  
**ՀԶՕՐԱՆԱԼ**, չբ. Հզոր՝ զորաւոր դառնալ:  
**ՀԶՕՐԱՊԷՍ**, Տ. Հզորաբար:  
**ՀԶՕՐԱՅՈՒՄ**, գ. Հզորացնելը:  
**ՀԶՕՐՈՒԹԻՒՆ**, գ. Հզոր զորաւոր լինելը:  
**ՀԷԳ**, ան. Խեղճ, ողորմելի:  
**ՀԷՃ**, գ. (Կրօն.) Մահմետականների ուխտագնացութիւնը:  
**ՀԷՍՈԳԼՈՔԻՆ**, գ. (Յուն.) (Կազմ.) Արեան գնդիկները կարմիր ներկող հաստատուն բիւրեղական նիւթ:  
**ՀԷՆ**, գ. Ծովի աւազ:  
**ՀԷՔԵԱԹ**, գ. Ժողովրդական բանահիւսութեան մի տեսակ: Նման. Ստայոյ պատմութիւն:  
**ՀԸՄ**, միջ. Զարմանքի բացազանչութիւն:  
**ՀԻԱԶԱՐՀՈՒՐ**, ան. Հիացած կմ ապշած ու զարհուրած:  
**ՀԻԱԶՄԱՅԼ**, ան. Հիացմունքից գնայլած:  
**ՀԻԱՀՐԱՇ**, ան. Հրաշափառ:  
**ՀԻԱՆԱԼ**, չբ. Զմայլմունքից կմ զարմանքից ապշել:  
**ՀԻԱՆԱԼԻ**, ան. Ինչ որ հիացնում է:  
**ՀԻԱԶՔԼԱՂ**, ան. Հիանալի եւ չքնաղ:  
**ՀԻԱՍԱՐՍՈՒՌ**, ան. Հիացմունքից սարսառած:  
**ՀԻԱՍԹՄՓ**, ան. Հիասթափուած: Յուսախար:  
**ՀԻԱՍԹՄՓԵԼ**,  
**ՀԻԱՍԹՄՓՈՒԵԼ**, չբ. Հիացմունքից սթափուել: Յուսախարի:  
**ՀԻԱՍԹՄՓՈՒԹԻՒՆ**, գ. Հիասթափելը:

**ՀԻԱՍՔԱՆՉ**, ան. Հիանալի եւ սքանչելի:  
**ՀԻԱՅԱԿԱՆ**, ան. Հիացմունք արտայայտող:  
**ՀԻԱՅՈՒՄ**, գ. Հիանալը, սքանչանալը:  
**ՀԻԱՅՍՈՒՆՔ**, գ. Տ. Հիացում:  
**ՀԻԱՅՈՒՑԻՉ**, ան. Ինչ որ հիացնում է:  
**ՀԻԱՅՔ**, գ. Հիանալի բան:  
**ՀԻԴՐՈՄԿՈՊ**, գ. (Յուն.) (Ֆիզ.) Սարած, որ մօտաւոր ճշտութեամբ ցոյց է տալիս օդի խոնաւութեան աստիճանը:  
**ՀԻԼ**, գ. Պտուղ համեմային բոյսի:  
**ՀԻՄԱՅ**, մկ. Այժմ, ներկայումս:  
**ՀԻՄԱԿՈՒՀԻՄԱՅ**, մկ. Առ այժմ:  
**ՀԻՄԻ**, Տ. Հիմակ, Հիմա:  
**ՀԻՄՆ**, գ. Կառոյցի մը խարխիւր, յենարան: Պատի ներքեւի շարուածքը: Փոխ. Պատճառ:  
**ՀԻՄՆԱԳԻԾ**, գ. Հիմնական գիծ:  
**ՀԻՄՆԱԴԻՐ**, ան. գ. Հիմք դնող, հիմնող:  
**ՀԻՄՆԱԴՐԱԿԱՆ**, ան. Հիմնադրին յատուկ:  
**ՀԻՄՆԱԴՐԱՄ**, գ. Հիմնական դրամագրութիւ: Հանրային նպատակով հաւաքուող նուիրական միջոցները համակարգող մարմին:  
**ՀԻՄՆԱԴՐԵԼ**, նբ. Հիմը դնել, հիմնարկել:  
**ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ**, գ. Հիմնում, հիմնարկում:  
**ՀԻՄՆԱԵՁՐ**, գ. Հիմքի եզր:  
**ՀԻՄՆԱԿԱԶՄԻՉ**, գ. Հիմքը կազմող:  
**ՀԻՄՆԱԿԱՆ**, ան. Հիմքը կազմող:  
**ՀԻՄՆԱԿԱՍԱՐԵԼ**, բ. Հիմնովին կատարել:  
**ՀԻՄՆԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ**, գ. Հիմնաւոր կարգաւորում:  
**ՀԻՄՆԱՀԱՐՑ**, գ. Գլխաւոր հարց:  
**ՀԻՄՆԱՅԱՏԱԿ**, ան. մկ. Մինչեւ հիմքը՝ ամբողջութեամբ յատակը:  
**ՀԻՄՆԱՆԱԼ**, չբ. Հիմնուել. հիմնաւորուել:  
**ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ**, գ. Հիմնովին նո-

<p><i>ընդերում:</i>  <b>ՀԻՄՆԱՇԱՐԺ</b>, ան. մկ. <i>Հիմքից շարժում</i> ան:  <b>ՀԻՄՆԱՐԺԷՔ</b>, գ. <i>Հիմնական արժեք</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿ</b>, գ. <i>Հիմնարկություն</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿԵԼ</b>, նր. <i>Հիմք դնել</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿԷՔ</b>, գ. <i>Շենքի կմ հիմնարկի հիմքը դնելը</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հիմք ձգելը</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿ</b>, ան. <i>Հիմք ունեցող</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿԱԳՈՅՆ</b>, բաղդ. աստ. <i>Աւելի հիմնատր</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿԱՊԷՍ</b>, մկ. <i>Հիմնատր կերպով</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հիմնատր լինելը</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿՈՒՄ</b>, գ. <i>Հիմնատրելը</i>:  <b>ՀԻՄՆԱՓՈՐ</b>, ան. գ. <i>Հիմքը փորոթ</i>:  <b>ՀԻՄՆԱՔԱՐ</b>, գ. <i>Հիմքի քար</i>:  <b>ՀԻՄՆԵԼ</b>, նր. <i>Հիմք ձգել շէնք կառուցելու համար</i>:  <b>ՀԻՄՆԱՊԻՆ</b>, մկ. <i>Հիմքով միասին, հիմքով հանդերձ</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿ</b>, ան. <i>Սկզբունքները որոշող</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿ</b>, գ. <i>Հիմնական ուղի</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿ</b>, գ. <i>Հիմնելը</i>:  <b>ՀԻՄՆԱՐԿ</b>, S. <i>Հիմք</i>:  <b>ՀԻՄՔ</b>, գ. <i>Պատի շարունակի ներքեի խաւր: Ներքնաշէնք: Պատճառ, շարժանիք</i>:  <b>ՀԻՄՔԱՅՆՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Հիմքային լինելը</i>:  <b>1. ՀԻՆ</b>, ան. <i>Ժամանակով մեզանից հեռու: Վաղեմի, նախկին</i>:  <b>2. ՀԻՆ</b>, <i>Բացազանչություն</i>:  <b>ՀԻՆԱԲԱՐ</b>, մկ. <i>Աւագակի պէս</i>:  <b>ՀԻՆԱՍ</b>, ան. գ. <i>Կտաւի կմ կապերտի հենքի թել</i>:  <b>ՀԻՆԱՍԱՐԿ</b>, գ. (Բուս.) <i>Հինածաղիկների կարգին պատկանող բոյս</i>:  <b>ՀԻՆԱՎԱՆ</b>, ան. <i>Հէնի յատուկ</i>:  <b>ՀԻՆԱՇԱՐԿ</b>, ան. <i>Հէնի նման զարկող</i>:</p>	<p><b>ՀԻՆԱՅ</b>, գ. (Բուս.) <i>Եզիպտոսում եւ Արաբիայում դեղին-կարմիր բուսնող բոյս մազ ներկելու համար</i>:  <b>ՀԻՆԱՅԱԳՈՅՆ</b>, ան. <i>Հինայի գոյն ունեցող</i>:  <b>ՀԻՆԱՅԵԼ</b>, նր. <i>Հինայ քել</i>:  <b>ՀԻՆԱՎԱՆԿ</b>, ան. <i>Հնուց աւանդուած</i>:  <b>ՀԻՆԱՎՈՒՐՅ</b>, ան. <i>Օրերով հին</i>:  <b>ՀԻՆԳ</b>, թւ. ան. <i>Չորս վրան աւելացրած մէկ</i>:  <b>ՀԻՆԳԱՎԱՍԱՐ</b>, ան. <i>Հինգ կատար՝ գազաթ ունեցող</i>:  <b>ՀԻՆԳԱՍՄԱՆԱԿ</b>, ան. <i>Հինգ ամանակ ունեցող</i>:  <b>ՀԻՆԳԱՍՄԵԱԿ</b>, գ. <i>Հինգ տարուայ շրջան</i>:  <b>ՀԻՆԳԱՍՄԵԱՆ</b>, ան. <i>Հինգ տարի տեւող</i>:  <b>ՀԻՆԳԱՍՄԵԱՅ</b>, ան. <i>Հինգ ամիս տեւող</i>:  <b>ՀԻՆԳԱՆԿԻՒՆ</b>, գ. (Երկրաչափական ձեւ):  <b>ՀԻՆԳԵՐՈՐԿ</b>, ան. <i>Չորսից յետոյ եկողը</i>:  <b>ՀԻՆԳԵՐՈՐԿԱՎԱՆ</b>, S. <i>Հինգերորդ</i>:  <b>ՀԻՆԳԵՐՈՐԿԵԼ</b>, նր. <i>Հինգերորդ անգամ ասել</i>:  <b>ՀԻՆԳԵՉՈՒՅԱՆ</b>, ան. <i>Հինգ լեզուներ պարունակող</i>:  <b>ՀԻՆԳՉԱՉԱՐԱՎԱՆ</b>, ան. <i>Ամէն մէկին հինգ հազար</i>:  <b>ՀԻՆԳՉԱՉԱՐԵԱՆ</b>, ան. <i>Հինգ հազարից բաղկացած</i>:  <b>ՀԻՆԳՉԱՐԻՐԵԱԿ</b>, գ. (Տոմար.) <i>Տոմարական շրջան 532 տարուայ</i>:  <b>ՀԻՆԳՄԱՍԵԱՅ</b> } ան. <i>Հինգ մասից բաղկացած</i>:  <b>ՀԻՆԳՄԱՍԵԱՆ</b> }  <b>ՀԻՆԳՅԱՐԿԱՆԻ</b>, ան. <i>Հինգ յարկ ունեցող</i>:  <b>ՀԻՆԳՇԱԲԹԻ</b>, ան. գ. <i>Շարքաթուայ հինգերորդ օրը</i>:  <b>ՀԻՆԳՍՐԱՇԵԱՆ</b>, ան. <i>Հինգ սրահ ունեցող</i>:  <b>ՀԻՆԳՕՐԵԱՅ</b>, ան. <i>Հինգ օր տեւող</i>:  <b>ՀԻՆԿ</b>, գ. (Բուս.) <i>Եղերդի տեսակ</i>:</p>
--	---

<p><b>ՀԻՆԵԼ</b>, նբ. <i>Գործուածքի ատէջքի թելերը ձգել: Փխբ. Հիւսել:</i>  <b>ՀԻՆՈՒԱԾ</b> } Գ. <i>Հինուած թելը, հենք:</i>  <b>ՀԻՆՈՒԱԾՔ</b> }  <b>ՀԻՆՈՒԹԵԼ</b>, Գ. <i>Հենքի թել:</i>  <b>ՀԻՆՈՒԿ</b>, ւծ. <i>Հնացած:</i>  <b>ՀԻՆՈՒՄԱՇ</b>, ւծ. <i>Հնացած ու մաշուած:</i>  <b>ՀԻՆՔՈՒԹԵԼ</b>, Գ. <i>Հենքի թել:</i>  <b>ՀԻՆՕՐԵԱՅ</b>, ւծ. <i>Օրերն անցած, ծերացած:</i>  <b>ՀԻՐԻԿ</b>, Գ. <i>Անորոշ տեսակի անուշահոտ եւ գունազեղ ծաղիկ: (Բուս.)</i>  <i>Թրատերեւների կարգին պատկանող բոյս:</i>  <b>ՀԻՒԱՆ</b>, ւծ. <i>Որի առողջութիւնը խանգարուած է:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԲԱՐ</b>, մկ. <i>Հիւանդի նման:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԲԵՐ</b>, ւծ. <i>Հիւանդութիւն՝ վատառողջութիւն բերող:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԳԻՆ</b>, ւծ. մկ. <i>Ծանր հիւանդ դրութեամբ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՄԱՍ</b>, ւծ. <i>Հիւանդին խնամող:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԿԱՆ</b>, ւծ. <i>Հիւանդից կախուէլ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԶԱՅՆ</b>, ւծ. մկ. <i>Հիւանդի ձայնով, թոյլ ձայնով:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՄԻՏ</b>, ւծ. <i>Մտքով հիւանդ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՄԱԼ</b>, չբ. <i>Հիւանդ դառնալ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՄԱՐ</b>, Գ. <i>Նաւ, որ ծառայում է հիւանդներ ընդունելու եւ խնամելու իբրեւ հիւանդանոց:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՄԱՆՑ</b>, Գ. <i>Հիմնարկ, որի մէջ ընդունում են հիւանդներին, բժշկում ու խնամում:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՆՑԱՅԻՆ</b>, ւծ. <i>Հիւանդանոցին յատուկ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՊԱՀ</b>, ւծ. Գ. <i>Հիւանդին պահող՝ խնամող:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ</b>, Գ. <i>Հիւանդապահ լինելը:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՊԱՀՈՒԿ</b>, Գ. <i>Հիւանդապահ կին:</i></p>	<p><b>ՀԻՒԱՆՂԱՏԵՂ</b>, Գ. <i>Հիւանդի տեղը:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՏԵՍ</b>, Գ. <i>Նա որ գնում է հիւանդին տեսութեան:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՏԵՐ</b>, Գ. <i>Հիւանդի տեղը:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՏՈՒՆ</b>, Գ. <i>Հիւանդանոց:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՐԱՆ</b>, Գ. <i>Այն տեղը, ուր գտնուում են հիւանդները:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՐԱՐ</b>, ւծ. <i>Հիւանդութիւն պատճառող:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԿԵԿ</b>, ւծ. <i>Հիւանդ, փոխ. խեղճուկ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԿԱԼ</b>, ւծ. Գ. <i>Տանը հիւանդին պահող:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱԿԱՆ</b>, ւծ. <i>Հիւանդոտ:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՆՑ</b>, ւծ. <i>Հիւանդանալու տրամադիր:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՆՑԻՒՆ</b>, Գ. <i>Հիւանդ լինելը:</i>  <b>ՀԻՒԱՆՂԱՆԿ</b>, Գ. <i>Փոքրիկ հիւանդ: ւծ. Հիւանդոտ, հիւանդկախ:</i>  <b>ՀԻԹ</b>, Գ. <i>Տարր, նիւթ: Հեղուկ նիւթ:</i>  <b>ՀԻԹԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ</b>, Գ. (բժշկ.): <i>Բուժում հիւթերի միջոցով:</i>  <b>ՀԻԹԱԼԻ</b> } ւծ. <i>Հիւթով լիքք:</i>  <b>ՀԻԹԱԼԻՅ</b> }  <b>ՀԻԹԱԻՈՐ</b>, ւծ. <i>Հիւթեղ:</i>  <b>ՀԻԹԵՂ</b>, ւծ. <i>Հիւթոտ:</i>  <b>ՀԻԹԵՂՈՒԹԻՒՆ</b>, Գ. <i>Հիւթեղ՝ հիւթալի լինելը:</i>  <b>ՀԻԹՈՑ</b>, ւծ. <i>Հիւթ ունեցող:</i>  <b>ՀԻԹՄԱՆՑ</b>, Գ. (Ախտաբ.) <i>Թոքերու ախտ կլ հիւանդութիւն:</i>  <b>ՀԻԹՄԱՆՑԱԿԱՆ</b>, ւծ. <i>Հիւժախտին յատուկ:</i>  <b>ՀԻԹՄԱՆՑԱԻՈՐ</b>, ւծ. <i>Հիւժախտով հիւանդ:</i>  <b>ՀԻԹՄԱՆՔ</b>, Գ. (Ախտաբ.) <i>Ծայրայեղ նիհարութիւն:</i>  <b>ՀԻԹՅԵԼ</b>, նբ. <i>Հալումաշ անել:</i>  <b>ՀԻԹԻԼ</b>, բ. (Արեւմտ.) <i>Հիւժուել:</i>  <b>ՀԻԹՈՒՄ</b>, Գ. <i>Հալումաշ լինելը:</i>  <b>ՀԻՐ</b>, Գ. <i>Թէթեւ տուն պահապանների համար: Տնակ, խրճիթ:</i></p>
---	---

<p><b>ՀԻՒՂԱԿ</b>, գ. Փոքր հիւղ:</p> <p><b>ՀԻՒՂԱԻԱՆ</b>, գ. Հիւղաշէն աւան:</p> <p><b>ՀԻՒՂՈՍ</b>, գ. (Կենդ.) Փոքրիկ կենդանի:</p> <p><b>ՀԻՒՆ</b>, գ. ւ գրի անունը:</p> <p><b>ՀԻՒՆԱԳՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Ուղղագրական ձեւ:</p> <p><b>ՀԻՒՆԱՍՈՒՄՆԻԹԻՒՆ</b>, գ. Հինագրութիւն:</p> <p><b>ՀԻՒՊԱՏՈՍ</b>, գ. Հին Հռոմում՝ բարձրագոյն պաշտօնէայ: Ներկայումս՝ մի պետութեան կողմից նշանակուած պաշտօնէայ օտար պետութեան մէջ:</p> <p><b>ՀԻՒՊԱՏՈՍԱԿԱՆ</b>, ած. Հիւպատոսին յատուկ, վերաբերեալ:</p> <p><b>ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ</b>, գ. Հիւպատոսի պաշտօնատունը:</p> <p><b>ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ</b>, գ. Հիւպատոսի աստիճանը:</p> <p><b>ՀԻՒՊԱՐՔՈՍ</b>, գ. Գլխաւոր իշխան:</p> <p><b>ՀԻՒՍ</b>, գ. Գլխի մագերի հիւսուածք, հիւսուած մագ:</p> <p><b>ՀԻՒՍ</b>, գ. Լեռնէ թաւալող ձիւնակոյտ:</p> <p><b>ՀԻՒՍԱԶԱՐ</b>, գ. Հիւսուած գարդ:</p> <p><b>ՀԻՒՍԱԾՈՑ</b>, ած. Հիւսած:</p> <p><b>ՀԻՒՍԱԿ</b>, գ. Մագերի հիւս:</p> <p><b>ՀԻՒՍԱՇՂԹԱՑ</b>, գ. Հիւսելու միջոցով կազմուած շղթայ:</p> <p><b>ՀԻՒՍԵԼ</b>, նբ. Մի քանի թել կմ չուան կմ երիզ են իրար միջով կմ տակով-վրայով անցկացնելով միացնել, կցել:</p> <p><b>ՀԻՒՍԵԼԻՔ</b>, գ. Հիւսելու բան:</p> <p><b>ՀԻՒՍԻՍ</b>, գ. Հորիզոնի չորս գլխաւոր կողմերից մէկը: Երկրագունդի վերեւի կողմը:</p> <p><b>ՀԻՒՍԻՍԱՐԱՆԱԿ</b>, ած. Հիւսիսում բնակող:</p> <p><b>ՀԻՒՍԻՍԱԿՈՂՄ</b>  <b>ՀԻՒՍԻՍԱԿՈՂՄՆ</b> } գ. Հիւսիսային կողմը:</p> <p><b>ՀԻՒՍԻՍԱՀԱՅԵԱՑ</b>, ած. Դէպի հիւսիս նայող:</p> <p><b>ՀԻՒՍԻՍԱՅԻՆ</b>, ած. Հիւսիսում գտնուող:</p>	<p><b>ՀԻՒՍԻՍԱՇՈՒՆ</b>, ած. Հիւսիսից շնչող:</p> <p><b>ՀԻՒՍԻՍԱՓՈՅԼ</b>, գ. (Օդերեւ.) Գեղեցիկ լուսեղէն երեւոյթ:</p> <p><b>ՀԻՒՍԿԵԼ</b>, նբ. Հիւսակներ շինել մազերից:</p> <p><b>ՀԻՒՍԿԵՆ</b>, ած. Հիւսուած:</p> <p><b>ՀԻՒՍՆ</b>, գ. Արհեստաւոր: Ատախցագործ:</p> <p><b>ՀԻՒՍՆԱԿԱՆ</b>, ած. Հիւսնին եւ հիւսնութեան յատուկ:</p> <p><b>ՀԻՒՍՆԵԼ</b>, նբ. Հիւսնութիւն անել:</p> <p><b>ՀԻՒՍՆՈՑ</b>, գ. Արհեստանոց:</p> <p><b>ՀԻՒՍՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հիւսն լինելը:</p> <p><b>ՀԻՍՈՒՍԾԱՐԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Կազմախօսութեան մասը:</p> <p><b>ՀԻՒՐ</b>, գ. Ուղեւոր, օտարական: Այցելու:</p> <p><b>ՀԻՒՐԱՐԱՐ</b>, մկ. Հիւրի՝ հրաւիրեալի պէս:</p> <p><b>ՀԻՒՐԱՐԱՐ</b>, ած. Հիւրի դէմ դաւադրութիւն սարքող:</p> <p><b>ՀԻՒՐԱՆԱՐ</b>, գ. Դերասանի կմ դերասանական խմբի որպէս հիւր գնացած խաղ:</p> <p><b>ՀԻՒՐԱՍԵԾԱՐ</b>, ած. Հիւրին մեծարող:</p> <p><b>ՀԻՒՐԱՍԵԾԱՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հիւրամեծար լինելը:</p> <p><b>ՀԻՒՐԱՍԵՐԺ</b>, ած. Նա որ մերժում է հիւր ընդունել:</p> <p><b>ՀԻՒՐԱՆՈՑ</b>, գ. Հիւր ընդունելու կահաւորուած տուն:</p> <p><b>ՀԻՒՐԱՆՈՑԱԳՐՔՈՅԿ</b>, գ. Հիւրանոցում առկայ գրքոյկ:</p> <p><b>ՀԻՒՐԱՆՈՑԱՅԻՆ</b>, ած. Հիւրանոցին վերաբերող:</p> <p><b>ՀԻՒՐԱՆՈՑԱՏԻՐԱՅԻՆ</b>, ած. Հիւրանոցատիրոջը յատուկ:</p> <p><b>ՀԻՒՐԱՍԵՂԱՆ</b>, գ. Սեղան՝ հացկերոյթ՝ հիւրերի համար:</p> <p><b>ՀԻՒՐԱՍԵՆԵԱԿ</b>, գ. Բնակարանում զարդարուն սենեակ, որտեղ ընդունում են հիւրերին:</p> <p><b>ՀԻՐԱՍԷՐ</b>, ած. Հիւր սիրող:</p>
---	--

**ՀԻՐԱՍԻՐԵԼ**, նբ. Հիրասիրություն ցոյց տայ:

**ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. Հիրասեր լինելը:

**ՀԻՐԱՍՊԱՆ**, ած. Հիրին սպաննող:

**ՀԻՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հիրասպան լինելը:

**ՀԻՐԱՍՐԱՀ**, S. Հիրասենեակ:

**ՀԻՐԱՎԱՅԵԼՈՒՉ**, ած. Հիրին վայել:

**ՀԻՐԱՏԵԱՑ**, ած. Հիրեր ատող:

**ՀԻՐԱՏԵՑՈՒԹԻՒՆ**, գ. Հիրատեաց լինելը:

**ՀԻՐԱՏՈՒՆ**, գ. Վանքերին կից տուն, որտեղ իջեւանում են ուղեւորները կմ ուխտատուները:

**ՀԻՐԱՓԱՆ**, ած. Հիրերից փախչող:

**ՀԻՐՈՆՎԱՆ**, ած. Հիր ընդունող:

**ՀԻՐՈՆՎԱՆԵԼ**, նբ. Հիրին ընդունել:

**ՀԻՐՈՆՎԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հիրընկալ լինելը:

**ՀԻՐՈՆՎԱՆՈՒԶԻ**, գ. Հիրընկալ կին:

**ՀԼՈՒ**, ած. Լաւ լսող, հեգ: Հնազանդ:

**ՀԼՈՒԹԻՒՆ**, գ. Հլու լսող:

**ՀԼՈՒՔԱՇԱՐ**, գ. Հուլունքների շար:

**ՀՇՇԵԼ**, նբ. Անձայն խօսել, փսփսալ:

**ՀՄԱԿԵՐ**, ած. Միար հում-հում ուտող:

**ՀՄԱԿԵՐՈՒԹԻՒՆ**, գ. Հումակեր լինելը:

**ՀՄԱՑ**, գ. (Մնտ.) Աղօթած՝ կախարդական աղօթքներով պատրաստուած առարկայ: Կախարդող առարկայ կմ անձ:

**ՀՄԱՅԱԹԱՓ**, ած. (Մնտ.) Հմայքից ազատող, հմայքի զօրութիւնը ոչնչացնող:

**ՀՄԱՅԱԿԱՆ**, ած. (Մնտ.) Հմայքի կմ հմայութեան յատուկ:

**ՀՄԱՅԱՆՔ**, գ. Հմայելը: Հրապուրելը:

**ՀՄԱՅԵԱԿ**, գ. (Մնտ.) Կախարդութիւն պարունակող գիր:

**ՀՄԱՅԵԼ**, նբ. (Մնտ.) Հմայութեան միջոցով մէկին բախտատրութիւն գուշակել: Դիւթել: Հրապուրել:

**ՀՄԱՅԻՉ**, ած. Հմայող, թովող:

**ՀՄԱՅՈՒԹԻՒՆ**, գ. Կախարդական աղօթք:

**ՀՄԱՅՔ**, գ. Հմայութիւն անելը:

**ՀՄՈՏ**, ած. Լաւ չեփուած:

**ՀՄՈՒԹԻՒՆ**, գ. Հում լինելը:

**ՀՄՈՒՏ**, ած. Լաւ խոր մտած գործի մէջ: Բանիմաց, գիտակ:

**ՀՄՏԱԲԱՐ**, մկ. Հմուտ կերպով:

**ՀՄՏԱԼԻ** } ած. Հմտութեամբ լի:  
**ՀՄՏԱԼԻՅ** }

**ՀՄՏԱՆԱԼ**, չբ. Հմուտ դառնալ:

**ՀՄՏԱՄԵՐ**, ած. Հմտութիւն սիրող:

**ՀՄՏԱՎԱՐԾՈՒԹԻՒՆ**, գ. Վարժութիւն եւ հմտութիւն:

**ՀՄՏԱՅՈՒԹԻՉ**, ած. Նա որ հմտացնում է:

**ՀՄՏՈՒԹԻՒՆ**, գ. Հմուտ լինելը:

**ՀՆԱԲԱՆ**, գ. Հնութիւններով զբաղուող:

**ՀՆԱԲԱՆԱԿԱՆ**, ած. Հնաբանութիւն պարունակող:

**ՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Լեզուի մէջ հին բառեր կմ հին քերականական ձեւեր գործածելը:

**ՀՆԱԲՆԻԿ**, ած. գ. Հին բնակիչ, նախաբնակիչ:

**ՀՆԱԲՈՅՐ**, ած. Որից հնութիւն է բուրում:

**ՀՆԱԳԱԶԱՆ**, գ. (Կենդ.) Այժմ անհետացած՝ բրածոյ թանձրամարմին կաթնասուն գազան:

**ՀՆԱԳԷՏ**, ած. գ. Հնագիտութեամբ պարապող:

**ՀՆԱԳԻՏԱԿ**, ած. գ. Հնութիւնները գիտցող, հնագէտ:

**ՀՆԱԳԻՏԱԿԱՆ**, ած. Հնագիտութեան վերաբերեալ:

**ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ. Գիտութիւն, որ պարապում է հին մշակոյթի արտադրութիւնների ուսումնասիրութեամբ:

**ՀՆԱԳԻՐ**, ած. Հնութիւնների մասին գրող:

**ՀՆԱԳԼՈՒԻՆ**, ած. Հին գլխի տեր:

<p><b>ՀՆԱԳՈՅՆ</b>, բաղդ աստ. Աւելի հին եւ ամենահին:</p> <p><b>ՀՆԱԳԻՏԱԿԱՆ</b>, ւծ. Հնագիտութեանը վերաբերող:</p> <p><b>ՀՆԱԳՐԱՎԱՃԱՌ</b>, գ. Հին գրքեր վաճառող:</p> <p><b>ՀՆԱԴԱՐԱՆ</b>, գ. Հնութիւններ պահպանելու տեղ:</p> <p><b>ՀՆԱԴԱՐԵԱՆ</b>, ւծ. Հին դարերին պատկանող:</p> <p><b>ՀՆԱԴԻՐ</b>, ւծ. Հնուց դրուած սահմանուած:</p> <p><b>ՀՆԱԴՐԱՄ</b>, գ. Հին դրամ:</p> <p><b>ՀՆԱԶԱՆԴ</b>, ւծ. Նա որ ենթարկուում է ուրիշի հրամանին: Հկո. Անհնազանդ:</p> <p><b>ՀՆԱԶԱՆԴԵԼ</b>, ջբ. Հնազանդ լինել, ուրիշի հրամանին կմ կամքին ենթարկուել:</p> <p><b>ՀՆԱԶԱՆԴԵՑՈՒՑԻՉ</b>, ւծ. Հնազանդեցնող: Կամքին ենթարկեցնել:</p> <p><b>ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնազանդ լինելը: Հպատակութիւն:</p> <p><b>ՀՆԱԶԱՆԴՈՐԷՆ</b>, մկ. Հնազանդութեամբ, հնազանդելով:</p> <p><b>ՀՆԱԶԳԵՍՏ</b>, ւծ. Հին զգեստ հագած:</p> <p><b>ՀՆԱՌՈՅՁ</b>, ւծ. գ. Հնութիւնները, հին արուեստի արտադրութիւնները քննող:</p> <p><b>ՀՆԱՌՈՒՋԱԿԱՆ</b>, ւծ. Հնախոյզին յատուկ:</p> <p><b>ՀՆԱՌՈՒՋՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնախոյզ լինելը:</p> <p><b>ՀՆԱՌՕՍ</b>, ւծ. գ. Հին անցքերի մասին խօսող:</p> <p><b>ՀՆԱՌՕՍԱԿԱՆ</b>, ւծ. Հնախօսին յատուկ:</p> <p><b>ՀՆԱՌՕՍՈՒԹԻՒՆ</b>, գ. Հին անցքերի պատմութիւն:</p> <p><b>ՀՆԱՐԷՄ</b>, ւծ. գ. (Եկեղ.) Եկեղեցական հին ձէսերին հետեւող:</p> <p><b>ՀՆԱՐՈՅ</b>, ւծ. Հին, շատ հին:</p> <p><b>ՀՆԱԿԱՐԿԱՏ</b>, ւծ. Հին շորեր կարկատող: Հին կօշիկներ նորոգող:</p> <p><b>ՀՆԱԿԱՐԿԱՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնակարկատ լինելը:</p>	<p><b>ՀՆԱԿԵՆՑԱՂ</b>, ւծ. Հին կենցաղին հետեւող:</p> <p><b>ՀՆԱՀԱԻԱՏ</b>, Տ. Հնածէս:</p> <p><b>ՀՆԱՀԱԻԱՔ</b>, ւծ. գ. Հնութիւններ հաւաքող:</p> <p><b>ՀՆԱՁԵԻ</b>, ւծ. Հին ձեւի:</p> <p><b>ՀՆԱՄԱՇ</b>, ւծ. Հնութիւնից մաշուած:</p> <p><b>ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆ</b>, գ. Հնէաբան-մարդաբան:</p> <p><b>ՀՆԱՄԵԱՅ</b>, ւծ. Տարիքով հին:</p> <p><b>ՀՆԱՄՈԼ</b>, ւծ. Չափազանց հնասէր:</p> <p><b>ՀՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնամոլ լինելը:</p> <p><b>ՀՆԱՆԱԼ</b>, ջբ. Հին դառնալ: Արժէքը կորցնել: Գործածութիւնից դուրս ընկնել:</p> <p><b>ՀՆԱՇԷՆ</b>, ւծ. Վարուցուանից շինուած:</p> <p><b>ՀՆԱՎԱՃԱՌ</b>, ւծ. գ. Հին շորեր եւ նման բաներ վաճառող:</p> <p><b>ՀՆԱՐ</b>, գ. Միջոց, ճար:</p> <p><b>ՀՆԱՐԱԳԷՏ</b>, ւծ. Հնար կմ հնարք գիտցող:</p> <p><b>ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնարագէտ լինելը:</p> <p><b>ՀՆԱՐԱԳԻՏ</b>, ւծ. Հնարք գտնող:</p> <p><b>ՀՆԱՐԱԳՈՐԾ</b>, ւծ. Հնարագէտ:</p> <p><b>ՀՆԱՐԱԳՈՐԾԵԼ</b>, նբ. Հնարագիտութեամբ յօրինել:</p> <p><b>ՀՆԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնարագիտութեամբ ճարտարելը:</p> <p><b>ՀՆԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնարադիր լինելը:</p> <p><b>ՀՆԱՐԱՌՈՂ</b>, ւծ. Ճարտարամիտ:</p> <p><b>ՀՆԱՐԱԿԵՐՏ</b>, ւծ. Ինչ որ հնարաւոր է, կարելի:</p> <p><b>ՀՆԱՐԱՄԻՏ</b>, ւծ. Հնարագէտ:</p> <p><b>ՀՆԱՐԱՄՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնարամիտ լինելը:</p> <p><b>ՀՆԱՐԱՐՈՒԵՍՏ</b>, ւծ. Հնարամիտ:</p> <p><b>ՀՆԱՐԱԻՈՐ</b>, ւծ. Ճարտար: Կարելի:</p> <p><b>ՀՆԱՐԱԻՈՐԵԼ</b>, նբ. Կարելի դարձնել, միջոց ստեղծել:</p> <p><b>ՀՆԱՐԱԻՈՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնարաւոր</p>
---	---



<p>լինելը:  <b>ՀՆԱՐԵԼ</b>, նբ. Հնարաւորել, հնարք գըտնել:  <b>2. ՀՆԱՐԵԼ</b>, նբ. Հնարել: Հնարք գտնել:  <b>Գիւտ անել: Ստեղծել:</b>  <b>ՀՆԱՐԻՄԱՑ</b>, ած. Հնարքներ իմացող:  <b>ՀՆԱՐՈՎԻ</b>, ած. Հնարում:  <b>ՀՆԱՐՔ</b>, գ. Հնար: Ճարտարություն:  <b>ՀՆԱՐՔԱՇԱՏ</b>, ած. Հնարքներով հարուստ:  <b>ՀՆԱՑՈՒՑԻՉ</b>, ած. Հնացնող:  <b>ՀՆԱԻՄԱՆ</b>, գ. Հինէն աւանդում՝ հարուստ:  <b>ՀՆԳԱԳԼԽԵԱՆ</b>, ած. Հինգ գլուխ ունեցող:  <b>ՀՆԳԱԼԵՁՈՒ</b>, S. Հինգլեզումանի:  <b>ՀՆԳԱԿԻ</b>, մկ. Հինգ կերպ:  <b>ՀՆԳԱՀԱՏՈՐ</b>, ած. Հինգ հատորից բաղկացած:  <b>ՀՆԳԱՄԱՏԵԱՆ</b>, գ. (Կրօն.) Հին կտակարանի առաջին հինգ զիրքը:  <b>ՀՆԳԱՄԱՏՆԵԱՆ</b>, ած. Հինգ մատ ունեցող:  <b>ՀՆԳԱՄԱՐՏԻԿ</b>, ած. գ. Հինգ տեսակ կռիւ մղող:  <b>ՀՆԳԱՄԵԱԿ</b>, S. Հինգամեակ:  <b>ՀՆԳԱՆԿԻՒՆ(Ի)</b>, S. Հնգանկիւն(ի):  <b>ՀՆԳԱՊԱՏԻԿ</b>, ած. գ. Հինգ անդամ աւելի:  <b>ՀՆԳԱՊԱՏԿԵԼ</b>, նբ. Հինգ անգամ մեծացնել:  <b>ՀՆԳԱՊԱՏՈՒՄ</b>, գ. Հինգ մասից բաղկացած երկ:  <b>ՀՆԳԱՊԵՏ</b>, գ. Հինգ զինուորի պետ:  <b>ՀՆԳԱՈՒՋ</b>, ած. (Բուս.) Հինգ առէջք ունեցող:  <b>ՀՆԳԱՄԻՒՆ</b>, ած. Հինգ սիւն ունեցող:  <b>ՀՆԳԱՎԱՆԿ</b>, ած. Հինգ վանկ պարունակող:  <b>ՀՆԳԱՏ</b>, գ. (Կենդ.) Երկրամլուկների ցեղին պատկանող մկուկ:  <b>ՀՆԳԵԱԿ</b>, գ. Հինգ միատր պարունակող</p>	<p>ամբողջություն:  <b>ՀՆԳՆՈՑ</b>, ած. գ. Հինգ միություն պարունակող:  <b>ՀՆԳՈՏԱՆԻ</b>, ած. Հինգ ոտք ունեցող:  <b>ՀՆԳՕՐԵԱԿ</b>, գ. Մի ամբողջություն հինգ օրից բաղկացած:  <b>ՀՆԴԱԽՏ</b>, գ. Խոլերա: Աղիքային վարակիչ ախտ:  <b>ՀՆԴԱԽՏԱԿԱՆ</b>, ած. Հնդախտին վերաբերող:  <b>ՀՆԴԱԽՏԱԿԵՐՊ</b>, ած. Հնդախտի նման:  <b>ՀՆԴԱԽՏԱԻՈՐ</b>, ած. Խոլերայով հիւանդ: Սուր վարակիչ ստամոքսաաղիքային հիւանդություն:  <b>ՀՆԴԱԻՈՐ</b>, ած. Հունդ ունեցող:  <b>ՀՆԴԵՐՈՊԱԲԱՆԱԿԱՆ</b>, ած. Հնդերոպաբանությանը վերաբերող:  <b>ՀՆԴԵՐՈՊԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Պատմահամեմատական լեզուաբանության մեթոդ:  <b>ՀՆԴԵՐՈՊԱԿԱՆ</b>, S. Հնդիկ եւ երոպական խումբին վերաբերող:  <b>ՀՆԻԿ</b>, ած. գ. Հնդկաստանի բնիկ:  <b>ՀՆԻԿԱԲԱԿ</b>, ած. Հնդկաստանում բնակող:  <b>ՀՆԻԿԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ</b>, S. Հնդկաեւրոպական:  <b>ՀՆԻԿԱ-ԵՐՈՊԱԿԱՆ</b>, ած. Հնդկաստանից մինչեւ Արեւմտեան Եւրոպա տարածում:  <b>ՀՆԻԿԱԹՈՒՋ</b>, գ. (Բուս.) Տասկաթուղ հնդիկ: Արեւելեան Հնդկաստան աճող հսկայ թզենի:  <b>ՀՆԻԿԱԿԱՆ</b>, ած. Հնդիկներին եւ Հնդկաստանին յատուկ:  <b>ՀՆԻԿԱՀԱՑ</b>, գ. Հնդկաստանում բնակող հայ:  <b>ՀՆԻԿԱՀԱԻ</b>, գ. (Կենդ.) Բուն հաւերի ցեղին պատկանող ընտանի թռչուն:  <b>ՀՆԻԿԱՆՇԻ</b>, գ. (Բուս.) Մանուշակագգիների կարգին պատկանող ծառ:  <b>ՀՆԻԿԱՍՏԱՆՑԻ</b>, ած. գ. Հնդկաստա-</p>
---	---

<p>նում բնակող:</p> <p><b>ՀՆԴԱՐՄԱԻ</b>, գ. (Բուս.) Թիթեռնածաղիկների կարգին պատկանող մեծ ու գեղեցիկ ծառ:</p> <p><b>ՀՆԴԱՑԻ</b>, Տ. Հնդիկ:</p> <p><b>ՀՆԴԱՑՈՐԵՆ</b>, գ. (Բուս.) Մատիտեղների կարգին պատկանող հացահատիկի բոյս:</p> <p><b>ՀՆԴԵՂԷԳ</b>, գ. (Բուս.) Հնդկաստանի եղէգ:</p> <p><b>ՀՆԴԵՐԵՆ</b>, մկ. ած. գ. Հնդիկների լեզուով, լեզու:</p> <p><b>ՀՆԴԸՆԿՈՅՁ</b>, գ. (Բուս.) Արմաւենիների կարգին պատկանող հսկայական ծառ:</p> <p><b>ՀՆԿՈՒՉԻ</b>, գ. Իգական սեռի հնդիկ:</p> <p><b>ՀՆԷԱԲԱՆ</b>, ած. գ. Հնէաբանութեամբ պարասպող: Հնադարեան առարկաներու գիտակ:</p> <p><b>ՀՆԷԱԲԱՆԱԿԱՆ</b>, ած. Հնէաբանութեան յատուկ:</p> <p><b>ՀՆԷԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Գիտութիւն, որ ուսումնասիրում է հին էակները (բրածոյ կենդանիները):</p> <p><b>ՀՆԿԵԿ</b>, ած. Մի քիչ հին:</p> <p><b>ՀՆՀՆԱԼ</b>, չբ. Մորմոքել:</p> <p><b>ՀՆՀՆՈՒՔ</b>, գ. Հնհնայլը:</p> <p><b>ՀՆՁԱՆ</b>, գ. Այգիներում գետնի մէջ փորած եւ մաքուր շինած աւազան: Խաղող ճնշելու խոշոր տաշտ:</p> <p><b>ՀՆՁԱՆԱՀԱՐ</b>, ած. գ. Հնձանը կոխող:</p> <p><b>ՀՆՁԱՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնձան կոխելը:</p> <p><b>ՀՆՁԱՎԱՐՁ</b>, գ. Հնձելու վարձ:</p> <p><b>ՀՆՁԱՍԵՂ</b>, գ. Հնձելու տեղ:</p> <p><b>ՀՆՁԵԼ</b>, նբ. Հացահատիկի բոյսը՝ արտը արմատի մօտից սրաբերան գործիքով (գերանդիով, մանգաղով եւն) կտրել:</p> <p><b>ՀՆՁՈՂ</b>, գ. Բանտոր կմ մշակ:</p> <p><b>ՀՆՁՈՒՈՐ</b>, ած. գ. Հունձ անող բանտոր:</p> <p><b>ՀՆՁՈՒՈՐՈՒՉԻ</b>, գ. Քաղտորուհի:</p> <p><b>ՀՆՃԱՐՔԵԼ</b>, նբ. Գիւտ անել: Հնարել:</p>	<p><b>ՀՆՈՏԻ</b>, ած. գ. Հնացած՝ հնամաշ զգեստ:</p> <p><b>ՀՆՈՑ</b>, գ. Մեծ խարոյկ, մեծ կրակ:</p> <p><b>ՀՆՈՑԱՁԵՒ</b>, ած. Հնոցի նման:</p> <p><b>ՀՆՈՑԱՊԱՆ</b>, գ. Նա որ հսկում է հնոցի վրայ:</p> <p><b>ՀՆՈՑԱՐԱՆ</b>, գ. Հնոցի տեղ:</p> <p><b>ՀՆՈՑ-ԲՆՈՑ</b>, մկ. Հնուց ի վեր:</p> <p><b>ՀՆՈՑԵՐԱՆ</b>, գ. Հնոցաբերան:</p> <p><b>ՀՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հին լինելը:</p> <p><b>ՀՆՈՒԿ</b>, գ. Հնացած բոյս:</p> <p><b>ՀՆՈՒՑ</b>, մկ. Հին ժամանակից ի վեր, վաղուց ի վեր:</p> <p><b>ՀՆՉԱԿ</b>, գ. Փոքր զանգակ:</p> <p><b>ՀՆՉԱԿԱԶՍ</b>, գ. (լեզվբ.) Հնչիւնական կազմ:</p> <p><b>ՀՆՉԱԿԱՆ</b>, ած. Հնչիւն ունեցող: Հնչական օրէնք, Լեզուագիտական օրէնք:</p> <p><b>ՀՆՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնչական լինելը:</p> <p><b>ՀՆՉԱԿԵԱՆ</b>, ած. «Հնչակ» լրագրի ծրագրին կողմնակից:</p> <p><b>ՀՆՉԱԿԻՑ</b>, գ. Համահունչ:</p> <p><b>ՀՆՉԱԿՑՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնչիւնով նման լինելը:</p> <p><b>ՀՆՉԱՉԱՓ</b>, գ. Չայնաչափ (գործիք):</p> <p><b>ՀՆՉԱՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնչիւնի վիճակագրութիւն:</p> <p><b>ՀՆՉԱՔԱՐ</b>, գ. (Հանք.) Պինդ քարի մի տեսակ:</p> <p><b>ՀՆՉԵԼ</b>, չբ. Չայն՝ հնչիւն հանել:</p> <p><b>ՀՆՉԵԼԻ</b>, ած. Ինչ որ կարելի է հնչել:</p> <p><b>ՀՆՉԵՂՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնչեղ լինելը:</p> <p><b>ՀՆՉԻՒՆ</b>, գ. (Ֆիզ.) Այն զգայութիւնը, որ ստանում է մեր լսելիքը առարկաների արագ տատանումից: Մարդկային լեզուի ամէն մի ձայնը:</p> <p><b>ՀՆՉԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հնչողակաւորութիւն, հնչողունակութիւն:</p> <p><b>ՀՆՉԻՆԱՐՉԱԿԻՉ</b>, գ. Բարձր ձայն արձակող սարք:</p> <p><b>ՀՆՉՍՈՒՆՔ</b>, գ. Հնչում:</p> <p><b>ՀՆՉՈՂԱԿԱՆ</b>, Տ. Հնչական:</p>
--	---

<p><b>ՀՆՉՈՒՄ</b>, գ. Հնչեղը:  <b>ՀՆՉՈՒՆ</b>, ած. Հնչոդ: Չայն հանոդ:  <b>ՀՆՏԱՑՈՒ</b>, ած. Հնդացու, սերմացու:  <b>ՀՈԲ</b>, գ. Փոսիկ:  <b>ՀՈԳ</b>, գ. Վիշտ, տրսմություն: Խնամք:  <b>ՀՈԳԱԲԱՐՁ</b>, ած. գ. Մի բանի հոգը կմ հոգսը իր վրայ վերցնող:  <b>ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ</b>, ած. Հոգաբարձու- ներին կմ հոգաբարձութեան յատուկ:  <b>ՀՈԳԱԲԱՐՁԵԼ</b>, չբ. Հոգաբարձ խնամա- կալ լինել:  <b>ՀՈԳԱԲԱՐՁՈՒ</b>, ած. գ. Հոգ խնամք տա- նող, խնամատար: Պաշտօնեայ, որին յանձնուում է որոշ վարչական գործերի վարումը որոշ շրջանում:  <b>ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ</b>, գ. Հոգաբարձու լինելը:  <b>ՀՈԳԱԲԱՐՁՕՐԷՆ</b>, մկ. Բրբեւ հոգաբար- ձու:  <b>ՀՈԳԱԼ</b>, չբ. Մտածմունքի մեջ ընկնել:  <b>Մի բանի հոգսը քաշել:</b>  <b>ՀՈԳԱՄԾԵԼ</b>, նբ. Հոգ տանել:  <b>ՀՈԳԱՄՈՒ</b>, ած. Հոգածող:  <b>ՀՈԳԱՄՈՒԹԻՒՆ</b>, գ. Խնամակալություն:  <b>ՀՈԳԱՉՍՓ</b>, ած. Հոգով չափ, ամբողջ հոգով:  <b>ՀՈԳԱՏԱՐ</b>, ած. Հոգ տանող:  <b>ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Հոգատար լի- նելը:  <b>ՀՈԳԱՅՈՂԱԿԱՆ</b>, ած. Հոգացողու- թեամբ եղած:  <b>ՀՈԳԵԱԿ</b>, գ. (Փաղաքը.) Հոգու չափ սիրելի:  <b>ՀՈԳԵԲԱԺԻՆ</b>, գ. (Եկեղ.) Տուրք, որ նրն- ջեցեալի տերերը տալիս են մայրավան- քին կմ քահանային:  <b>ՀՈԳԵԲԱՆ</b>, ած. գ. Նա որ զբաղուում է հոգեբանութեամբ:  <b>ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ</b>, ած. Հոգեբանութեան յատուկ:  <b>ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Գիտություն: Հո- գեկան վիճակ: Հոգեկան վիճակի ու-</p>	<p>տումնասիրություն:  <b>ՀՈԳԵԲԱՆՕՐԷՆ</b>, մկ. Հոգեբանական տեսակետից:  <b>ՀՈԳԵԲՈՒՆ</b>, ած. (Կրօն.) Մ. Հոգուց բխած:  <b>ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ</b>, գ. (Եկեղ.) Մ. Հոգու զայստեան տօնը:  <b>ՀՈԳԵԳԷՇ</b>, ած. գ. (Մտտ.) Մեռած մար- դու ուրուականը:  <b>ՀՈԳԵԳՈՒՄԱՐ</b>, ած. (Կրօն.) Հոգով կմ Մ. Հոգով գումարուած:  <b>ՀՈԳԵԳՐԱԻ</b>, ած. Հոգին գրաւող:  <b>ՀՈԳԵԳՐԳԻՈ</b>, ած. Հոգին գրգռող:  <b>ՀՈԳԵԴԱՐՁ</b>, ած. գ. Հոգին յետ դառնալը:  <b>ՀՈԳԵԴԱԻ</b>, ած. Հոգու դաւաղողը:  <b>ՀՈԳԵԴՐՍԵԻՈՐՈՒՄ</b>, գ. Հոգեկանի՝ աշխարհապատկերման՝ աշխարհըն- կալման դրսևորում:  <b>ՀՈԳԵԶԱԻԱԿ</b>, Տ. Հոգեորդի:  <b>ՀՈԳԵԶԳԱՄ</b>, ած. Հոգով զգածուած:  <b>ՀՈԳԵԶԳԱՅԱԿԱՆ</b>, ած. Հոգեկան եւ զգայական:  <b>ՀՈԳԵԶԳԵՍՏԵԱԼ</b>, ած. Վերակենդանա- ցած:  <b>ՀՈԳԵԶՄԱՅԼ</b>, ած. Հոգին զմայլեցնող:  <b>ՀՈԳԵԶՄԱՅԼՈՒԹԻՒՆ</b>, գ. Հոգու զմայ- լելը:  <b>ՀՈԳԵԶՈՒԱՐՃ</b>, ած. Հոգին զուարճաց- նող:  <b>ՀՈԳԵԶՈՒԴԿ</b>, ած. Հոգի չունեցող:  <b>ՀՈԳԵԶՐԱՆ</b>, ած. Հոգին զրահաւորող՝ պաշտպանող:  <b>ՀՈԳԵԹԱԹԱՆ</b>, ած. Հոգու խորքից ե- կող, բխող:  <b>ՀՈԳԵԹԱՍ</b>, գ. Ննջեցեալի յիշատակին խմուած բաժակը:  <b>ՀՈԳԵԹԱՓԱՆՑ</b>, ած. Հոգու խորքը թա- փանցող:  <b>ՀՈԳԵԹՐԹԻՈ</b>, ած. Հոգին թրթռացնող:  <b>ՀՈԳԵԹՈՒՆԴ</b>, ած. Հոգին թունդ հանող:  <b>ՀՈԳԵԺԱՌԱՆԳ</b>, գ. Հոգեորդի:  <b>ՀՈԳԵԼԻ</b>, ած. (Եկեղ.) Մ. Հոգով լցուած:</p>
---	--

**ՀՈԳԵԼՈՅՍ**, ան. (Եկեղ.) *Լուսահոգի:*  
**ՀՈԳԵՆԱՂԱՅ**, ան. (Եկեղ.) *Ս. Հոգուց շարժուած՝ առաջացած:*  
**ՀՈԳԵՆԱՆՁ**, ան. *Հոգին խանձող:*  
**ՀՈԳԵՆԱՌՆ**, ան. (Եկեղ.) *Որի մէջ խառն է Ս. Հոգու շնորհը:*  
**ՀՈԳԵՆԱՌՆՈՒԱԾՔ**, գ. *Հոգեկերտուածք:*  
**ՀՈԳԵՆԱՌՆՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Ս. Հոգու հետ հաղորդութիւն՝ մասնակցութիւն:*  
**ՀՈԳԵՆՈՑՈՒԱԾՔ**, *Անձնային նշանակալիութիւն ունեցող որեւէ իրավիճակ, որը մարդու հոգեկանի վրայ գործում է ախտածին բնոյթի ազդեցութիւն:*  
**ՀՈԳԵՆՈՑՈՒՄ**, գ. *Հոգեպէս խոցուելը, հոգեկան հարուած:*  
**ՀՈԳԵՆՕՍՈՒԹԻՒՆ**, գ. *Կեղծ գիտութիւն բարի եւ չար ոգիների:*  
**ՀՈԳԵՍԱՐԱԻ**, գ. *Հոգեղէնի ծարաւ:*  
**ՀՈԳԵԿԱՆ**, ան. *Հոգուն յատուկ:*  
**ՀՈԳԵԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգի ունենալը:*  
**ՀՈԳԵԿԵՆՏՐՈՆ**, գ. *Հոգեկան գործունէութիւնը ղեկավարող կենտրոն:*  
**ՀՈԳԵԿՈՐՈՅՍ** } ան. *Հոգին կորցնող:*  
**ՀՈԳԵԿՈՐՈՒՄՍ** }  
**ՀՈԳԵԿՈՒՆ**, ան. (Կրօն.) *Հոգիներ կլանող:*  
**ՀՈԳԵԿՐԹԻՉ**, ան. *Հոգին կրթող, դաստիարակող:*  
**ՀՈԳԵԿՐԹՈՒՄ**, գ. *Հոգին կրթելը՝ դաստիարակելը:*  
**ՀՈԳԵՀԱՅՐ**, գ. *Նա որ ունի հոգեորդի:*  
**ՀՈԳԵՀԱՆ**, ան. 1, *Նա որ շուտով պէտք է հոգին աւանդէ:* 2, *Հոգին հանող:*  
**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**, գ. (Եկեղ.) *Վախճանուածի կրօնական արարողութիւն:*  
**ՀՈԳԵՀԱՏՈՐ**, ան. *Հոգու հատոր, ամենասիրելի:*  
**ՀՈԳԵՀԱՐԱՉԱՍ**, ան. *Հոգով շատ մօտ, մտերիմ:*

**ՀՈԳԵՀԱՐԱՉԱՏՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեկցութիւն:*  
**ՀՈԳԵՀԱՅ**, գ. (Եկեղ.) *Հոգու հաց, ճաշ, որ ննջեցեալի տէրերը թաղումից յետոյ տալիս են յուղարկատրներին եւ աղքատներին:*  
**ՀՈԳԵՀՄԱՅ**, ան. *Հոգին հմայող:*  
**ՀՈԳԵՀՆՉՈՂ**, ան. (Կրօն.) *Ս. Հոգուց հնչող՝ խօսող:*  
**ՀՈԳԵՂԷՆ**, ան. (Եկեղ.) *Անմարմին:*  
**ՀՈԳԵՃԱՇ**, (Եկեղ.) *Տ. Հոգեհաց:*  
**ՀՈԳԵՄԱՇ**, ան. *Հոգին մաշող:*  
**ՀՈԳԵՄԱՍՆՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Ս. Հոգու մասնակցութիւն:*  
**ՀՈԳԵՄԱՐՏ**, ան. (Եկեղ.) *Ս. Հոգու դէմ մարտնչող:*  
**ՀՈԳԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Քրիստոնէական եկեղեցու մէջ ծագած հերետիկոսութիւններից մէկը:*  
**ՀՈԳԵՍՈՒՆ**, ան. (Կրօն.), *Որի մէջ թափանցել է Ս. Հոգին:*  
**ՀՈԳԵՅՈՅՁ**, ան. *Հոգին յուզող, յուզիչ:*  
**ՀՈԳԵՆԻԹ**, ան. *Հոգեղէն:*  
**ՀՈԳԵՆԿԱՐԱԳԻՐ**, գ. *Հոգեկերտուածք:*  
**ՀՈԳԵՆՈՐՈԳ**, ան. *Հոգին նորոգող:*  
**ՀՈԳԵՇԱՀ**, ան. *Հոգի շահող:*  
**ՀՈԳԵՇԱՀՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեշահ լինելը:*  
**ՀՈԳԵՇՆՈՐՀ**, ան. (Եկեղ.) *Ս. Հոգուց շնորհուած:*  
**ՀՈԳԵՊԱՀԻԿ**, ան. գ. *Փոքր ինչ կերակուր՝ կեանքը պահպանելու համար:*  
**ՀՈԳԵՊԱՀՈՒՍՏ**, գ. *Ինչ որ մարդ պահում է նեղ օրուայ՝ ծայրայեղ կարիքի համար:*  
**ՀՈԳԵՊԱՇՏ**, ան. գ. *Հոգիներ պաշտող:*  
**ՀՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ**, գ. *Հոգեպաշտ լինելը:*  
**ՀՈԳԵՊԱՐԱՐ**, ան. *Հոգին պարարող:*  
**ՀՈԳԵՊԷՍ**, մկ. *Հոգով սրտանց:*  
**ՀՈԳԵՍԱՐՍՈՒՌ**, ան. *Հոգին սարսուեցնող:*

**ՀՈԳԵՍԷՐ**, ան. Հոգի կմ իր հոգին սիրող:  
**ՀՈԳԵՍՈՒՆ**, ան. Հոգին սնուցող:  
**ՀՈԳԵՍՊԱՆ**, ան. Հոգին սպանող:  
**ՀՈԳԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հոգին սպաննելը:  
**ՀՈԳԵՍՓՈՓ**, ան. Հոգին սփռվող՝ մխիթարող:  
**ՀՈԳԵՎԱՐՔ**, ան. Նա, որ վերջին շունչը պետք է արձակի:  
**ՀՈԳԵՎԱՐԵԼ**, չբ. Հոգին աւանդել:  
**ՀՈԳԵՎԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Հոգեվարք լինելը:  
**ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ**, գ. Հոգեվերլուծության մեթոդներով բուժող հոգեբույժ:  
**ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ**, ան. Հոգեվերլուծությանը բնորոշ:  
**ՀՈԳԵՎԻՃԱԿ**, գ. Հոգեկան վիճակ:  
**ՀՈԳԵՏԱՆՁ**, ան. Հոգին տանջող:  
**ՀՈԳԵՏԵՆՉ**, ան. Փափագելի, տենչալի:  
**ՀՈԳԵՏԵՍ**, ան. Հոգով տեսնող:  
**ՀՈԳԵՏՈՉՈՐ**, ան. Հոգին տոչորող:  
**ՀՈԳԵՒՈՐ**, ան. Հոգի բանական հոգի ունեցող:  
**ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ**, ան. Հոգետր, հոգեկան: գ. Հոգետր պաշտօնեայ:  
**ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հոգետրականների դասը:  
**ՀՈԳԵՒՈՐԱՊԷՍ**, մկ. Հոգետր կերպով:  
**ՀՈԳԵՒՈՐԵԼ**, նբ. Հոգի տալ:  
**ՀՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Հոգետր լինելը:  
**ՀՈԳԵՅՈՒՆՅ**, ան. Հոգին ցնցող, մեծագոր:  
**ՀՈԳԵՓՈՆՈՒԹԻՒՆ**, գ. Հոգիների տեղափոխություն:  
**ՀՈԳԷԱՈ**, ան. գ. Հոգին առնող:  
**ՀՈԳԻ**, գ. Ոգի, շնչին: Շունչ, շնչառություն: Անհատ, անձ: Մարդու ներքին խորհուրդը, խիղճ:  
**ՀՈԳՈՅ**, գ. (Եկեղ.) Կարճ աղօթք:  
**ՀՈԳՈՅ-ՄԵՐՈՅ ԼԻՆԵԼ**, Տ. Հոգոց հանգուցեղոց լինելը:

**ՀՈԳՍ**, գ. Խնամք: Մտմտուք: Մտահոգություն:  
**ՀՈԳՍԱԽԱՈՆ**, ան. Հոգսի հետ խառն:  
**ՀՈԳՍԱՑԱՎ**, ան. Հոգան ու ցար:  
**ՀՈԼ**, գ. Փոքր փայտե խաղալիք:  
**ՀՈԼԱԹԵԻ**, ան. մկ. Թեւերը՝ բազուկները մերկ:  
**ՀՈԼԱՆԻ**, ան. մկ. Մերկացած ձեռքերով:  
**ՀՈԼԱՉԵԻ**, ան. Հոլի ձեռ ունեցող:  
**ՀՈԼԻԿ**, գ. Փոքրիկ հիւղ ժամանակաոր բնակության համար:  
**ՀՈԼԱՆԴԱԿԱՆ**, ան. Հոլանդիային կմ հոլանդացուն յատուկ:  
**ՀՈԼԱՆԴԱՑԻ**, գ. Հոլանդիայի բնակիչ:  
**ՀՈԼԱՆԴԵՐԵՆ**, մկ. ան. գ. Հոլանդական լեզու:  
**ՀՈԼՈՎ**, գ. Թաւարում, ինքն իրար վրայ պտոյտ գալը: (Քրկն.) Գոյականների, ածականների, դերանունների եւ դերբայների կրած ամէն մի փոփոխությունը հոլովման ժամանակ:  
**ՀՈԼՈՎԱԲԱՆ**, ան. Առատափուս, բազմաբան:  
**ՀՈԼՈՎԱԿ**, գ. Տեսաժապաւէնի հատուած, տեսահոլովակ:  
**ՀՈԼՈՎԱԿԱՆ**, ան. Հոլովման՝ թաւաման վերաբերեալ:  
**ՀՈԼՈՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հոլովական լինելը:  
**ՀՈԼՈՎԱԿԵՐՏ**, ան. գ. (Քրկն.) Մասնիկ, որ որոշ հոլով է կազմում:  
**ՀՈԼՈՎԱՆԻՇ**, գ. Հոլով կազմող վերջաւորություն:  
**ՀՈԼՈՎԱՌՈՒ**, Տ. Խնդրառու:  
**ՀՈԼՈՎԱՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ**, գ. (դիպվ.) Հոլովների քանակը:  
**ՀՈԼՈՎԵԼ**, նբ. Թաւալել, զլորել, զլտորտել: (Քրկն.) Բառը վերջաւորություններով փոփոխել:  
**ՀՈԼՈՎԻՉ**, ան. գ. Նա որ հոլովում՝ թաւալում է: (Քրկն.) Չայնաւոր գիր:  
**ՀՈԼՈՎՈՒՄ**, գ. Հոլովելը:

<p><b>ՀՈՒՕ-ՀՈՒՕ</b>, միջ. Շունը կանչելու ձայն:  <b>զ.</b> (Մանկ.) Շուն:  <b>ՀՈՄ</b>, ած. Խիտ առ խիտ դիզուած: Մեղմ:  <b>ՀՈՍԱՆԻԻԹ</b>, ած. Թանձր:  <b>ՀՈՍԱՐԱՐ</b>, ած. Խիտ, թանձր:  <b>ՀՈՍՈՒԹԻԻՆ</b>, գ. Հոծ խիտ թանձր լինելը:  <b>ՀՈՎՏԵՄԲԵՐ</b>, գ. Տարուայ տասներորդ ամիսը:  <b>ՀՈՎՏԵՄԲԵՐԵԱՆ</b>, ած. Հոկտեմբերին յատուկ:  <b>ՀՈՂ</b>, գ. Փուխը փռչեման նիւթ: Գերեզման, դամբարան: Կալուած:  <b>ՀՈՂԱԲԱԺԱՆ</b>, ած. Հողը բաժանող:  <b>ՀՈՂԱԲԱԺԻՆ</b>, գ. Հողի կտոր:  <b>ՀՈՂԱԲԵՐՔ</b>, գ. Հողի բերք:  <b>ՀՈՂԱԲԵՐ</b>, գ. Հողը բերելը:  <b>ՀՈՂԱԲՈՒՐ</b>, գ. Հողի բլուր:  <b>ՀՈՂԱԲՈՒՍԱԿԱՆ</b>, ած. Հողային եւ բուսական:  <b>ՀՈՂԱԳԷՏ</b>, ած. գ. Հողագիտութեան մասնագետ:  <b>ՀՈՂԱԳԻՏԱԿԱՆ</b>, ած. Հողագիտութեան վերաբերեալ:  <b>ՀՈՂԱԳԻՏՈՒԹԻՆ</b>, գ. Հողի յատկութիւնների գիտութիւն:  <b>ՀՈՂԱԳՈՅՆ</b>, ած. Հողի գոյն ունեցող:  <b>ՀՈՂԱԳՈՐԾ</b>, Տ. Երկրագործ:  <b>ՀՈՂԱԳՈՒՆԷՆ</b>, Տ. Երկրագունդ:  <b>ՀՈՂԱԴԱՍ</b>, գ. Գերեզմանի տեղի համար տրուող դրամը:  <b>ՀՈՂԱԶԷՆ</b>, ած. Հողով զինուած:  <b>ՀՈՂԱԹՍԻԱԼ</b>, ած. Հողի մէջ թաւալուող:  <b>ՀՈՂԱԹՍՓ</b>, գ. Հողից ոտքը գերծ պահող, կոշիկ:  <b>ՀՈՂԱԹՍՓԱՒՈՐ</b>, ած. Հողաթափ ունեցող:  <b>ՀՈՂԱԹՈՒՄԲ</b>, գ. Հողի թումբ:  <b>ՀՈՂԱԽԱՌՆ</b>, ած. Որի մէջ հող կայ խառնուած:  <b>ՀՈՂԱՍՏԱԾԿ</b>, ած. Հոգով ծածկած:</p>	<p><b>ՀՈՂԱՍՏԱԾԿՈՅԹ</b>, գ. Հողային ծածկոյթ:  <b>ՀՈՂԱՍԻՆ</b>, ած. գ. (Կրօն.) Հողից ծնած:  <b>Մարդ:</b>  <b>ՀՈՂԱԿԱԶՍ</b>, ած. Հող կազմող:  <b>ՀՈՂԱԿԱԼ</b>, գ. Հողատէր:  <b>ՀՈՂԱԿԵՐ</b>, ած. Հող ուտող:  <b>ՀՈՂԱԿԵՐՏ</b>, ած. Տ. Հողաշէն: Հողակառոյց:  <b>ՀՈՂԱԿԻՑ</b>, ած. Նոյն հողում՝ վայրում՝ տարածքում ապրող:  <b>ՀՈՂԱԿՈՅՏ</b>, ած. Կուտակուած հողով գոյացած:  <b>ՀՈՂԱԿՈՇՏ</b>, գ. Հողի կոշտ:  <b>ՀՈՂԱԿՏՈՐ</b>, գ. Հողի կտոր:  <b>ՀՈՂԱՀԱՍ</b>, ած. Հողի համ ունեցող:  <b>ՀՈՂԱՀԱՐԿ</b>, գ. Հողի վրայ դրուած պետական հարկ:  <b>ՀՈՂԱՀՄԱՅ</b>, գ. (Մնտ.) Հողով գուշակութիւն անող կախարդ:  <b>ՀՈՂԱՄՍԻՆ</b>, գ. (Կենդ.) Խորասոյճների ցեղին պատկանող ջրային թռչուն:  <b>ՀՈՂԱՄՍՍ</b>, գ. Հողի որոշակի մասը, հողակտոր:  <b>ՀՈՂԱՄՇԱԿ</b>, ած. Հողը մշակող:  <b>ՀՈՂԱՄՇԱԿՈՒՄ</b>, գ. Հողի մշակելը:  <b>ՀՈՂԱՅԻՆ</b>, ած. Հողին յատուկ, վերաբերեալ:  <b>ՀՈՂԱՆԱԼ</b>, չք. Հող դառնալ:  <b>ՀՈՂԱՆԻԹ</b>, ած. Որի նիւթը հող է, հողեղէն:  <b>ՀՈՂԱՆԿԱՐ</b>, գ. Նկարի տեսակ, որն արուում է հողաշերտի վրայ:  <b>ՀՈՂԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ</b>, գ. Նկարչութիւն, որն արուում է որոշակի հողաշերտի վրայ:  <b>ՀՈՂԱՆՄԱՆ</b>, ած. Հողի նման:  <b>ՀՈՂԱՆՑՈՒՄ</b>, գ. Հատորդալարերով ելեկտրական սարքերի հողին միացման ձեւ:  <b>ՀՈՂԱՇԷՆ</b>, ած. Հողից շինած:  <b>ՀՈՂԱՉԱՓ</b>, գ. Մասնագետ, որ չափում է հողի մակերեսը եւ զօագրում է:</p>
---	---

**ՀՈՂԱՉԱՓԱԿԱՆ**, ան. Հողաչափությունների յատուկ:  
**ՀՈՂԱՉԱՓԵԼ**, նբ. Հողաչափություն կատարել:  
**ՀՈՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. Գիտություն հողի մակերևույթը չափելու եւ գծագրելու:  
**ՀՈՂԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Հայրենի հողը պահելը, պաշտպանելը:  
**ՀՈՂԱՊԱՇՏԱՍՈՒՆՔ**, գ. Հողի պաշտամունք:  
**ՀՈՂԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ**, գ. Հողը պաշտելը:  
**ՀՈՂԱՊԱՏ**, գ. Հողաշեն պատ:  
**ՀՈՂԱՊԱՏՆԷՇ**, գ. Հողից շինած պատնեշ:  
**ՀՈՂԱՍԷՐ**, ան. Հող սիրող:  
**ՀՈՂԱՍՏԵՂԾ**, ան. (Կրօն.) Հողից քստեղծում:  
**ՀՈՂԱՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ**, գ. Հողային (օգտագործելի) տարածություն:  
**ՀՈՂԱՏՆԱԿ**, գ. Հողից շինուած տնակ:  
**ՀՈՂԱՏՈՒՐՔ**, գ. Հողային տուրք:  
**ՀՈՂԱՏԵՄԱԿ**, ան. Հողի նման:  
**ՀՈՂԱՏԷՐ**, գ. Հողի տերը, կալուածատեր:  
**ՀՈՂԱՏԻՐԱԿԱՆ**, ան. Հողատերերին յատուկ:  
**ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ**, գ. Հողատեր լինելը:  
**ՀՈՂԱՐՈՒԵՍՏ**, գ. Հողի շերտի վրայ արուող գեղանկարչութեան ձեւ:  
**ՀՈՂԵԼ**, նբ. Հող ածել:  
**ՀՈՂԵՂԷՆ**, ան. Հողից շինած:  
**ՀՈՂՄ**,  
**ՀՈՂՄՆ**, գ. Օղ, որ աւելի կմ պակաս արագութեամբ տեղափոխուում է մի տեղից ուրիշ տեղ. քամի:  
**ՀՈՂՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ**, գ. Քամու հողմի միջոցով էլեկտրաուժանիւթ ստացող կայան:  
**ՀՈՂՄԱԲԵԿ**, ան. Հողմից բեկում:  
**ՀՈՂՄԱԲԵՐ**, ան. Հողմ բերող:  
**ՀՈՂՄԱԳԱԼԱՐ**, ան. Հողմից գալար-

ուող: Հով:  
**ՀՈՂՄԱԳԻՐ**, գ. Հողմաչափի տեսակ:  
**ՀՈՂՄԱԼԻՑ**, ան. Հողմով լցում:  
**ՀՈՂՄԱԽԱՌՆ**, ան. Որի հետ խառն է հողմ: Հովախառն:  
**ՀՈՂՄԱԾԻՆ**, ան. Հողմ ծնող:  
**ՀՈՂՄԱԿԱՅԱՆ**, գ. Քամու ուժով աշխատող կայան:  
**ՀՈՂՄԱԿՈՇՈՒԹԻՒՆ**, գ. Հողմակոծ լինելը:  
**ՀՈՂՄԱԿՈՂՄ**, գ. Նաւի այն կողմը, որ դարձած է դէպի հողմը:  
**ՀՈՂՄԱՀԱՅԵԱՑ**, ան. Դէպի այն կողմը նայող, որտեղից գալիս են հողմերը ուժեղ քամիները:  
**ՀՈՂՄԱՀԱՐ**, ան. Հողմից զարկում, հողմակոծ:  
**ՀՈՂՄԱՀԱՐԵԼ**, նբ. Հողմով զարնել:  
**ՀՈՂՄԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Հողմահարելը:  
**ՀՈՂՄԱՀՄԱՅՈՒԹԻՒՆ**, գ. (Սնտ.) Հողմահմայ լինելը:  
**ՀՈՂՄԱՉԱՅՆ**, ան. Հողմի ձայն ունեցող:  
**ՀՈՂՄԱՂԱՑ**, գ. Աղօրիք, որ աշխատում է հողմի ուժով:  
**ՀՈՂՄԱՄԱՂ**, ան. Բնչ որ հողմը մի տեղ հոսել է՝ իբրեւ մաղելով:  
**ՀՈՂՄԱՅՈՑՁ**, ան. Հողմից յուզում:  
**ՀՈՂՄԱՆՄԱՆ**, ան. մկ. Հողմի նման:  
**ՀՈՂՄԱՇԱՐԺ**, ան. Հողմից շարժուող:  
**ՀՈՂՄԱՉԱՓ**, գ. Փոքրիկ թեւաւոր գործիք, որ քամուց ինքն իր վրայ շուտ է գալիս եւ ցոյց է տալիս հողմի սաստկութիւնը եւ արագութիւնը:  
**ՀՈՂՄԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. Հողմի սաստկութիւնն ու արագութիւնը հողմաչափով չափելը:  
**ՀՈՂՄԱՊԱԿԻ**, գ. Հողմը արգելող ապակի:  
**ՀՈՂՄԱՎԱՐ**, ան. մկ. Հողմից քշում:  
**ՀՈՂՄԱՎԱՐՆ**, գ. (Բուս.) Հրանունկներից եղին պատկանող պատաղիճ բոյս:  
**ՀՈՂՄԱՐԳԵԼ**, ան. գ. Հողմը արգելող:

**ՀՈՂՄԱՑՈՅՑ**, գ. Քամու ուղղութիւնը ցոյց տուող սարք շէնքերի գլխին:  
**ՀՈՂՄԱՑՐԻԻ**, ած. Հողմից ցրուած:  
**ՀՈՂՄԱՓՍՅՑ**, գ. (Բուս.) Մեկոնների կարգին պատկանող տունկ:  
**ՀՈՂՄԸՆԴԷՄ**, ած. մկ. Հողմի ուղղութեան դէմ:  
**ՀՈՂՈՏ**, ած. Որտեղ հող շատ կայ:  
**ՀՈՂՈՏԵԼ**, նբ. Հողով կեղտոտել:  
**ՀՈՂՎԱՐ**, գ. Մէկ տան համար բաւական վարելահող ունեցող:  
**ՀՈՂՎԵՐՔ**, գ. (Եկեղ.) Հող, որ ննջեցեալի տէրը երեք անգամ վերցնում է բոռով եւ քահանայի օրհնելուց յետոյ ածում է գերեզմանի մէջ դագաղի վրայ, որից յետոյ հողում են գերեզմանը:  
**ՀՈՍԱԶԱՅՍ**, ած. Նոյն ձայնը՝ նոյն հնչիւնը ունեցող:  
**ՀՈՍԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. Հումաձայն լինելը:  
**ՀՈՍԱՄԻԱՌՈՐԵԼ**, նբ. Ձուգամիատրել:  
**ՀՈՍԱՆԻ**, գ. Օտար կնոջ տարփատր: Միրելկան:  
**ՀՈՍԱՆԻՇ**, ած. (Բառ) որ հնչիւնով տարբեր է ուրիշ բառից, բայց նշանակութեամբ շատ նման է նրան:  
**ՀՈՍԱՆՈՒՇԻ**, գ. Ամուսնացած կին, որ օտար տղամարդու հետ սիրային յարաբերութեան մէջ է:  
**ՀՈՍԵՐԱԿԱՆ**, ած. Հոմերոսին յատուկ:  
**ՀՈՍԵՐԱՆԱԼ**, չբ. Հոմերոս դառնալ:  
**ՀՈՅ**, գ. Հ գրի անունը:  
**ՀՈՅԱԿԱՊ**, ած. Մեծութեամբ, շքեղութեամբ եւ այլ դրական յատկութիւններով երեւակայութեան վրայ ազդող, ահագին, շքեղ:  
**ՀՈՅԱԿԱՊՈՒԹԻՒՆ**, գ. Հոյակապ լինելը:  
**ՀՈՅԱԿԵՐՏ**, Տ. Հոյաշէն: Շքեղ:  
**ՀՈՅԱՇԵՆ**, ած. Հոյակապ շքեղ կերպով շինուած:  
**ՀՈՅԱՏԵՄԻԼ**, ած. Փառահեղ տեսք ունե-

ցող:  
**ՀՈՅՁ**, գ. Մածուցիկ սննդարար նիւթ:  
**ՀՈՅԼ**, գ. Խումբ, բազմութիւն:  
**1. ՀՈՆ**, գ. Հոնի ծառի պտուղը:  
**2. ՀՈՆ**, **ՀՈՆԿԷ**, **ՀՈՆԿԻՑ**, **ՀՈՆՏԵՂ**, **ՀՈՒՆԱ**, Տ. Հոս...  
**3. ՀՈՆ**, **ՀՈՆԵՐ**, գ. Ասիական ծագումով թափառական ցեղ:  
**ՀՈՆԵՆԻ** } գ. (Բուս.) Ձողալենիների կարգին պատկանող փոքր ծառ:  
**ՀՈՒՆԱՀՈՈՍԵԱԿԱՆ**, ած. Յոյն եւ հռոմէացիներին պատկանող:  
**ՀՈՆԱՐԱՐ**, գ. Աշխատավարձ: Գրելավարձ, խաղավարձ: Վարձատրութեան ձեւ:  
**ՀՈՌ**, ած. մկ. Ազատ՝ հանգիստ մեծացած ու սոնքացած:  
**ՀՈՌԱՆԱԼ**, չբ. Հոր դառնալ: Ազատ ապրելով անպէտքանալ:  
**ՀՈՌՈՍ**, ած. գ. Հոմայեցի, լատինացի:  
**ՀՈՌՈՒԹԻՒՆ**, գ. Հոր լինելը  
**ՀՈՍ**, **ՀՈՂ**, **ՀՈՆ**, (արեւմտ. լեզուով), մկ. Տ. Այստեղ, այդտեղ, այնտեղ:  
**ՀՈՍԱԿԱՆ**, ած. Հոսանուտ: Հոսող:  
**ՀՈՍԱՆԱԶՍՓ**, ած. Հոսանքը՝ հոսանքի ոյժը:  
**ՀՈՍԱՆԻԹ**, գ. Հոսող նիւթ:  
**ՀՈՍԱՆՈՒՏ**, ած. գ. Հոսող:  
**ՀՈՍԱՆՔ**, գ. Հոսելը, վազելը:  
**ՀՈՍԱՆՔԱՓՈՒՆԱՐԿԻՉ**, գ. Հոսանքը փոխարկող սարք:  
**ՀՈՍԵԼ**, չբ. Որոշ ուղղութեամբ գնալ:  
**ՀՈՍՀՈՍ**, ած. գ. Ծաղրական անուն, որով արեւելահայ գրական շրջանները կոչում էին պոլսահայերին:  
**ՀՈՍՀՈՍՈՒԹԻՒՆ**, գ. Հոսոսի յատկութիւն, թեթեւալիկութիւն:  
**ՀՈՍՈՒՄ**, գ. Հոսելը:  
**ՀՈՍՈՒՆ**, ած. Հոսող:  
**ՀՈՎ**, ած. Ձով: Նման. Պաղ, սառն:  
**ՀՈՎԱՀԱՐԵԼ**, նբ. Օղբ շարժելով հով



առաջացնել:  
**ՀՈՎԱՀԱՐՈՒՄ**, գ. Հովահարելը:  
**ՀՈՎԱՅԻՆ**, ած. Հով, գով:  
**ՀՈՎԱՆԱՆ**, չբ. Օղի տաքությունը բարե-  
 խառնուել:  
**ՀՈՎԱՆԱՍԵՐ**, ած. Հովանի՝ շուք սի-  
 րոդ:  
**ՀՈՎԱՆԱԻՈՐ**, գ. Հովանի ունեցող: 2. գ.  
 Հեռատեսիլային եւ այլն հաղորդման  
 նիւթական օժանդակող:  
**ՀՈՎԱՆԱԻՈՐԵԱՆ**, ած. Հովանաւոր-  
 ութիւն:  
**ՀՈՎԱՆԱԻՈՐԵԱԼՈՒԻՅԻ**, գ. Հովանա-  
 ւորեալ կին:  
**ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Խնամա-  
 կարություն, պաշտպանություն:  
**ՀՈՎԱՆԻ**, գ. Ինչ որ հովություն է բերում:  
 Տաղաւար: Փոխ. Հովանաւոր:  
**ՀՈՎԱՆՈՑ**, գ. Ձով պահելու ձեռքում  
 կրելի փոքրիկ յարմարանք:  
**ՀՈՎԱՆՈՑԱԿԵՐՊ**, ած. Հովանոցի  
 նման:  
**ՀՈՎԱՆՈՑԱԻՈՐՆԵՐ**, ած. գ. (Բուս.)  
 Աստղածաղիկների դասին պատկանող  
 բոյների կարգ՝ խողովակաձեւ  
 ուղղաձիգ ցօղուններով:  
**ՀՈՎԱՍՈՒՆ**, ած. Հով տեղերում  
 սնուած:  
**ՀՈՎԵՎՈՒԻՅԻ**, գ. Հովեկ կին՝ աղջիկ:  
**ՀՈՎԻԿ-ՍՈՎԻԿ**, ած. Հով բերող:  
**ՀՈՎԻՏ**, գ. Երկու լեռների միջեւ  
 բացուած դաշտավայր:  
**ՀՈՎԿՈՒՆ**, ած. Քամի կուլ տուող:  
**ՀՈՎՀԱՐ**, գ. Ձեռքի փոքրիկ գործիք:  
**ՀՈՎՀԱՐԵՆ**, նբ. Հովհարով հով փչել:  
**ՀՈՎՈՑ**, գ. Հով տեղ, ամառանոց:  
**ՀՈՎՈՒԱՊԵՏ**, գ. (Եկեղ.) Քրիստոնէա-  
 կան եկեղեցու հովիւների պէտ:  
**ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ**, ած. (Եկեղ.) Հով-  
 ուսպետին յատուկ:  
**ՀՈՎՈՒԱՊԵՏՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) Հով-  
 ուսպետ լինելը:

**ՀՈՎՈՒՍՓՈՂ**, գ. (Բուս.) Ջղախտի տե-  
 սակներից մէկը:  
**ՀՈՎՈՒԵՆ**, նբ. Հովուությունն անել:  
**ՀՈՎՈՒԵՐԳԱԿԱՆ**, ած. Հովուերգություն  
 պարունակող:  
**ՀՈՎՈՒԵՐԳՈՒ**, ած. գ. Հովուերգություն  
 գրող:  
**ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ**, գ. Բանաստեղ-  
 ծութեան ճիւղ:  
**ՀՈՎՈՒՏ**, ած. Որտեղ հով է:  
**ՀՈՎՍԻՐՏ**, Տ. Մասնասիրտ:  
**ՀՈՎՏԱԶԵՒ**, ած. մկ. Հովտի ձեւ ունեցող:  
**ՀՈՎՏԱՅԻՆ**, ած. Հովտին յատուկ, վերա-  
 բերեալ:  
**ՀՈՎՏԱՆՄԱՆ**, ած. Հովտաձեւ:  
**ՀՈՎՏԱՇՈՒՇԱՆ**, գ. (Բուս.) Ծնեբեկագ-  
 գիների կարգին պատկանող բոյս:  
**ՀՈՎՏՈՒՆ**, գ. Բաղնիքներում լողա-  
 նալու բաժանմունքին կից սենեակը:  
**ՀՈՏ**, գ. Այն զգայությունը, որ մարդ  
 ստանում է հոտոտելիքով:  
**ՀՈՏԱԶԵՐՄԵՆ**, բ. Տիւր հոտերը չէզո-  
 քացնել՝ վերացնել:  
**ՀՈՏԱԶԵՐՄԻՉ**, գ. Վատ հոտերը վերաց-  
 նող, հոտազրկիչ:  
**ՀՈՏԱՄ**, ած. Նեխած:  
**ՀՈՏԱՄԱԲԵՐԱՆ**, ած. Որի բերանը  
 հոտած է:  
**ՀՈՏԱՉԱՓ**, գ. (Ֆիզ.) Գործիք, որով  
 չափում են մի առարկայի արձակած  
 հոտի քանակությունը:  
**ՀՈՏԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. Հոտը չափելու  
 գործողություն:  
**ՀՈՏԱՌՈՒ**, ած. Հոտ առնող:  
**ՀՈՏԱՌՈՒԹԻՒՆ**, գ. Հոտ առնելու  
 ընդունակություն:  
**ՀՈՏԱՐՉԱԿ**, ած. Հոտ արձակող:  
**ՀՈՏԱԻԷՏ**, ած. Լաւ հոտ, բոյր ունեցող:  
**ՀՈՏԱԻԷՏԵՆ**, նբ. Հոտաւէտ դարձնել:  
**ՀՈՏԱԻՈՐ**, ած. Հոտ ունեցող:  
**ՀՈՏԵՆ**, չբ. Նեխուելուց վատ հոտ ար-  
 ձակել:

<p><b>ՃՈՃԱԹՈՌ</b>, գ. Ճոճուող աթոռ:</p> <p><b>ՃՈՃԱՋԻ</b>, գ. Այստեղ՝ մանկան խաղալիքի անուանում:</p> <p><b>ՃՈՃԱՆԱԿ</b>, Տ. Ճոճանակ:</p> <p><b>1. ՃՈՆ</b>, Տ. Հաճար:</p> <p><b>2. ՃՈՆ</b>, գ. Կաշուց զանազան իրեր կարող, կաշուց կմ մորթից գլխարկ կարող:</p> <p><b>ՃՈՆԸՏԻՐ</b>, ան. (Եկեղ.) Ճոն Բարսեղի ընտրած՝ կարգաւորած:</p> <p><b>ՃՈՇ</b>, գ. Բամբասանք, չարախօսութիւն:</p> <p><b>ՃՈՇԱԼ</b>, նբ. Բամբասել:</p> <p><b>ՃՈՇՔ</b>, գ. Բամբասանք:</p> <p><b>ՃՈՊԱՆ</b>, գ. Մազից, կանեփից, փոկից ոլորած չուան, թոկ:</p> <p><b>ՃՈՊԱՆԱՋԻԳ</b>, ան. գ. Ճոպան ձգող:</p> <p><b>ՃՈՊԱՆԱԲՈՐ</b>, ան. Ճոպան ունեցող:</p> <p><b>ՃՈՊԱՆՈՒԴԻ</b>, գ. Փոխադրամիջոց ճոպաններով:</p> <p><b>1. ՃՈՌ</b>, գ. Ապականուած՝ փչացած ջուր:</p> <p><b>2. ՃՈՌ</b>, գ. Ճակնդեղի ցօղունը առանց տերեւի:</p> <p><b>ՃՈՌԲԱԶՈՒԿ</b>, գ. Ճակնդեղի բոյսը:</p> <p><b>ՃՈՌԲԵՐԱՆ</b>, ան. Բերանը ծուռ:</p> <p><b>ՃՈՌԵԼ</b>, նբ. Ծոել:</p> <p><b>ՃՈՌԹԵԼ</b>, Տ. Ճաթեցնել:</p> <p><b>ՃՈՌՈՍ</b>, ան. Փքուն, ուռուցիկ:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԲԱՆ</b>, ան. Ճոռոմ լեզուով խօսող:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԲԱՆԱԿԱՆ</b>, ան. Ճոռոմաբանին յատուկ:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԲԱՆԵԼ</b>, չբ. Ճոռոմ լեզուով խօսել կմ գրել:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Արուեստական՝ փքուն՝ ուռուցիկ լեզու:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԲԱՆԸ</b>, մկ. Ճոռոմ կերպով:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԲՈՅՐ</b>, ան. Ճոռոմութիւն բուրոող:</p> <p><b>ՃՈՌՈՍԱԽՕՍ</b>, Տ. Ճոռոմարան:</p> <p><b>ՃՈՌՈՍՈՒԹԻՒՆ</b>, գ. Ճոռոմ խօսուածք:</p> <p><b>ՃՈՌՏՈՒԿ</b>, ան. Ծորթուած:</p> <p><b>ՃՈՐՃՈՓ</b>, ան. մկ. Ամբողջ փունջով,</p>	<p>ողկուզածէ (պտուղների մասին):</p> <p><b>ՃՈՐՈՏԵԼ</b>, նբ. Կոտորել:</p> <p><b>ՃՈՐՏ</b>, գ. Մպասաւոր, ծառայ, փոքրաւոր: Փողով գնուած անազատ մարդ: Իրաւագուրկ եւ անազատ գիւղացի:</p> <p><b>ՃՈՐՏԱԿԱՆ</b>, ան. Ճորտին յատուկ:</p> <p><b>ՃՈՐՏԱՏԷՐ</b>, ան. Ճորտի տէր, ճորտեր ունեցող:</p> <p><b>ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ</b>, ան. Ճորտատիրութեանը յատուկ:</p> <p><b>ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Ճորտեր ունենալու դրութիւն՝ համակարգ:</p> <p><b>ՃՈՐՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Ճորտ լինելը:</p> <p><b>ՃՈՒԱԼ</b>, բ. Ճչալ, հեկեկալ:</p> <p><b>ՃՈՒԹ</b>, գ. Ողկոյգ:</p> <p><b>ՃՈՒԼՏԻԿ</b>, գ. Եռանկիւնաձէ կարճ կոր: Մրտի կողքի եռանկիւնաձէ կտորը:</p> <p><b>ՃՈՒԿԻ</b>, գ. Ոտքի ոլոքը կմ կոճղը, կոռեր:</p> <p><b>ՃՈՒՃՈՒ</b>, գ. (Մանկ.) Հաւ, հաւի ձագր:</p> <p><b>ՃՈՒՄ</b>, գ. (Ախտ.) Մարմնի որեւէ մասի ջլի ձգուելն ու տեղաշարժ լինելը:</p> <p><b>ՃՈՒՄՃՈՒՄ</b>, գ. Անորոշ տեսակի բոյս:</p> <p><b>1. ՃՈՒՌ</b>, գ. Այծի մի տեսակ:</p> <p><b>2. ՃՈՒՌ</b>, գ. Ոսկեգօծուած եւ դրոշմաւոր արծաթ:</p> <p><b>3. ՃՈՒՌ</b>, գ. Մարդու ոտքը:</p> <p><b>ՃՈՒՌԱԿ</b>, գ. Որձ բազէ: (Կենդ.) Բազէների ցեղին պատկանող թռչուն:</p> <p><b>ՃՈՒՌՃԻԿ</b>, գ. Անթեւ բաճկոն կանանց եւ երեխաների:</p> <p><b>1. ՃՈՒՏ</b>, գ. Հաւի ձագ: Ուրիշ անասունների ձագ: Մարդու գաւակ:</p> <p><b>2. ՃՈՒՏ</b>, գ. Կանանց գլխի զարդ:</p> <p><b>ՃՈՒՏԻԿ</b>, գ. (վիաղաք.) Փոքր ճուտ, երեխայ:</p> <p><b>ՃՉԵԼ</b>, չբ. Ճիչ բարձրացնել:</p> <p><b>ՃՉԻՒՆ</b>, գ. Ճիչ, աղաղակ, վայնասուն:</p> <p><b>ՃՉՈՅ</b>, գ. Ճչելը: Ճիչ, աղաղակ:</p> <p><b>ՃՉՈՒՆ</b>, ան. Ծարունակ ճչող:</p> <p><b>ՃՊԵԼ</b>, նբ. Աչքերը թարթել:</p>
--	---



**ՃՊՃՊՈՑ**, գ. *Աչքերը արագ թարթելը, ճպճպացնելը:*  
**ՃՊՈՒՌ** } գ. (Կենդ.) *Կիսաթելերի ճՊՈՒՌՆ* }  
*կարգին պատկանող միջատ: Ճռճռան միջատ:*  
**ՃՊՈՒՌ**, գ. *Աչքի աղտ:*  
**ՃՊՊԱԼ**, չբ. *Աչքերը ճպռուել:*  
**ՃՊՈՍԿԱԼԵԼ**, չբ. *Ճիպռով՝ աչքի աղտով բռնուել:*  
**ՃՊՈՌՑ**, ած. *Ճիպռով բռնուած:*  
**ՃՊՈՌՑԵԼ**, չբ. *Աչքերի վրայ ճիպռ՝ աղտ առաջանալ:*  
**ՃՊՈՌՑՈՒԹԻՒՆ**, գ. *Ճպռոտ լինելը:*  
**ՃՈՒՐԻՍՏԱՆ**, ած. (Կրօն.) *Օռու՝ մոլար դաւանութիւն ունեցող:*  
**ՃՈՒՆՑԱՌՈՒԹԻՒՆ**, Տ. *Ճռցաւ, Իշխաւ:*  
**ՃՈՒՔԱՂ**, գ. *Ճիռերը՝ այգին քաղելուց յետոյ մնացած մանր ողկոյզներ քաղող:* *Ընդհանրապէս՝ բերքի վերջին մնացորդները հաւաքելը:*  
**ՃՈՒԵԼՈՒԹԻՒՆ**, գ. *Ճռելի լինելը:*  
**ՃՈՉՍՕՐՈՒԹԻՒՆ**, Տ. *Բախիտ, Ռախիտ:*  
**ՃՈՉԵԼ**, չբ. *Նուագ, վտիտ տեսք ունենալ:* *Նհիարանալ:*  
**ՃՈՒԿ**, Տ. *Ճռեկ, Ճպռուն:* *Բարակ վագող ջուր:*  
**ՃՈՒՃՈՒՌ**, գ. *Փորոտիք:*  
**ՃՈՒՃՈՒՍԼ**, չբ. *Ճրք-ճրք ձայն հանել:* *Հիւանդի տնքալը:*  
**ՃՈՒՃՈՒՍԼԻ**, մկ. *Ճռճռալով:*  
**ՃՈՒՃՈՒՍԼ**, ած. *Ճռճռացող:* *Փոխ. Պարծենկոտ:*  
**ՃՈՒՃՈՒՑՆԵԼ**, բ. *Ճռճռալու ձայն հանել տալ:*  
**ՃՈՒՃՈՌՑ**, գ. *Ճռճռալու ձայնը:*  
**ՃՈՒՇՈՒԿ**, գ. (Բուս.) *Մի տեսակ լեռնային բոյս:*  
**1. ՃՈՒՇՈՒԿ**, գ. *Անորոշ տեսակի բոյս:*  
**2. ՃՈՒՇՈՒԿ**, գ. *Օճառի պէս փրփրող խոտ:*  
**ՃՈՒՉԱԼ**, չբ. *Մուր՝ անախորժ ձայն*

*հանել (սայլ, դուռ):*  
**ՃՈՒՉԻՒՆ**, գ. *Ճռնչելը:*  
**ՃՈՒՌՈՂ**, գ. *Ճռուողելու ձայնը:*  
**ՃՈՒՌՈՂԵԼ**, չբ. *Փոքր թռչունների ծլվլալ:*  
**ՃՈՒՌՈՂԻՒՆ** } *Ճռուողելը, ճռուողելու ձայնը:*  
**ՃՈՒՌՈՂՈՒՄ** }  
**ՃՈՒՍԼԻ**, մկ. *Ճռոտալով:*  
**ՃՈՒՍԱՆ**, գ. *Ճռոտացող:*  
**ՃՈՒՌՈՑ**, գ. *Ճռոտալու ձայն:*  
**ՃՈՒՎՈՌՑ**, գ. *Ճռվոտալու ձայն:*  
**ՃՍՏՃՍՍԱԼ**, չբ. *Ընդհատ-ընդհատ սուր ու բարակ ձայն հանել:*  
**ՃՍՏԻԿ**, ած. *Ճարպիկ:*  
**ՃԿՃԿԱԼ**, չբ. *Աղաղակել, պոռպոռալ, գոռուլ-գոչուլ բարձրացնել:*  
**ՃՈՒՍԼ**, չբ. *Ճիչ արձակել, ճչալ, ճղալ:*  
**ՃՈՒՌՈՑ**, գ. *Ճռուալու ձայն:*  
**ՃՏԱՀԱՆԵԼ**, չբ. *Ճուտեր հանել, բազմանալ:*  
**ՃՏԵԼ**, նբ. *Մի աչքը խփել եւ միւս աչքով սուր նայել:*  
**ՃՏԼՕԶ**, գ. *Փոքրիկ արաղաղ:*  
**ՃՏՊՏԱԼ**, չբ. *Երեխաների թոթովել:*  
**ՃՏՊՏՈՑ**, գ. *Ճտպտալու ձայնը:*  
**ՃՏՔԱՍՏԱԼ**, ած. *Կոշիկի ճտքերը ծայած:*  
**ՃՐԱԳ**, գ. *Ընդհանրապէս՝ լոյսի որեւէ արուեստական աղբիւր:* *Մոմ: Փոխ. Օնողների միակ գաւակը: (Օածկ.) Մատնիչ:*  
**ՃՐԱԳԱԳՈՐԾ**, ած. գ. *Ճրագներ պատրաստող արհեստաւոր:*  
**ՃՐԱԳԱԶԱՐ**, ած. *Ճրագներով զարդարուած:*  
**ՃՐԱԳԱԼՈՅՑ**, գ. *Ճրագներ վառելը:* *(Եկեղ.) Եկեղեցիներում ծննդեան եւ զատիկի նախատօնակներին բազմաթիւ ճրագներ ու ջահեր վառելը, պայծառ լուսավառութիւն:*  
**ՃՐԱԳԱՆՈՑ**, գ. *Մակարոյժ բոյս:*  
**ՃՐԱԳԱԿԱԼ**, գ. *Ինչ որ ճրագը պահոււ*

է, ինչի վրայ ճրագը դրուում է:

**ՃՐԱԳԱՎԻՐ**, ան. Ձեռքում ճրագ կրող:

**ՃՐԱԳԱՁԵՒ**, ան. Կանթեղի նման կտուց ունեցող:

**ՃՐԱԳԱՆՑՈՒՄ**, գ. ճրագն անցնելու՝ հանգցնելու ժամանակը, զիշեր՝ երբ ճրագները հանգցնում են քնելիս:

**ՃՐԱԳԱՎԱՃԱՌ**, ան. գ. ճրագներ վաճառող:

**ՃՐԱԳԱՎԱՌ**, ան. ճրագներ վառուած:

**ՃՐԱԳԱԻՈՐ**, ան. Ձեռքին ճրագ ունեցող՝ ճրագ բռնած:

**ՃՐԱԳՎԱԼ**, գ. ճրագակալ:

**ՃՐԱԳՈՒ**, գ. Որոճող անասունների

փորի ճարպը:

**ՃՐԱԳՎԱՌ**, գ. ճրագ վառելը:

**ՃՐԱԳՎԱՌՈՅ** } գ. Երեկոյեան այն ճրագվառուիւք }  
**ՃՐԱԳՎԱՌՈՒԼՔ** } գ. Երեկոյեան այն ճրագները վառել:

**ՃՐԹԵԼ**, նբ. Սուտ հնարել, սարքել, մոզոնել:

**ՃՓՆԻ**, գ. (Բուս.) Ձիթաբերների կարգին պատկանող սաստիկ թունաւոր ծառ:

**ՃՕԼ**, գ. Ոչխարների հոտ:

**ՃՕԼՕՐԻԿ**, Տ. Ճլորթի:

1. **ՃՕՃ**, գ. Ճօճում, ճօճալը:

2. **ՃՕՃ**, գ. Մի տեսակ պար:

3. **ՃՕՃ**, ան. Դիւրաթէք:

**ՃՕՃԱԹՈՒ**, գ. Երկար նստարանով այրոռ:

**ՃՕՃԱԺԱՄԱՅՈՅՅ**, գ. Ճօճանակաւոր ժամացոյց:

**ՃՕՃԱՆԱԿ**, գ. Ճօճուող զաւագան:

**ՃՕՃԱՆԱԿԱԻՈՐ**, ան. Ճօճանակ ունեցող:

**ՃՕՃԵԼ**, նբ. Տարուբերել, տատանել, ծածանել:

**ՃՕՃԿՏԱՆ**, ան. Ճօճկտացող, նագելով քայլող:

**ՃՕՃՈՒՄ**, գ. Ճօճելը:

**ՃՕՃՈՒՆ**, ան. Ճօճուող, ճօճացող:

**ՃՕՃՔ**, գ. Երեխայի անկողին:

**ՃՕՇԱԼ**, չբ. Բամբասել, նախատել:

**ՃՕՇԱՆՔ**, գ. Բամբասանք:

**ՃՕՇԻՐ**, **ՃԱԻՇԻՐ**, գ. (Բուս.) Սպէղանի նման տունկ:

## Մ, մ

**Մ, մ, մեն**, գ. Հայերէն այբուբենի քսաներորդ տառը եւ տասնհինգերորդ բաղաձայնը: Երկու հարիր, երկուհարիրերորդ: Թուայնական երկուհարիրի համարժէք:

**Մ՛** (շեշտով), Արեւմտահայ բարբառներում եւ գրական լեզուի մէջ երբեմն, ձայնաւորով սկսուող բայերից առաջ սղուած ձեւով գործ է ածուում փխկ. մի արգելականի: Ատանկ բան մ'սեր, մ'ըներ:

**ՄԱԳԱՂԱԹ**, գ. Հորթի, զառան եւն կաշի,

որ յատուկ մշակութեամբ պատրաստում են՝ վրան գրելու կմ տպելու համար:

**ՄԱԳԱՂԱԹԱԲՈՅՐ**, ան. Մագաղաթի հոտ ունեցող:

**ՄԱԳԱՂԱԹԱԳԱԼԱՐ**, գ. Գալարածեւ փաթաթուած մագաղաթ:

**ՄԱԳԱՂԱԹԵԱՅ**, ան. գ. Մագաղաթից պատրաստուած:

**ՄԱԳԱՐԻԿՈՆ**, գ. (Բուս.) Ճանապարհների վրայ եւ անմշակ տեղերում բուսնող բոյս:

**ՄԱԳԻԼ**, գ. Հաւի՝ թռչունի եղունգ: Ճանկ:

**ՄԱԳԻԼԱԽՈՐ**, անծ. Մագիլ ունեցող:

**ՄԱԳԻՍՏՐՈՍ**, գ. 1. Բիւզանդիայում՝ կայսերական պալատի աւագ աստիճանաւոր: 2. Կրթական աստիճան:

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ**, անծ. Մագիստրոսին յատուկ:

**ՄԱԳԻՍՏՐՈՍՈՒԹԻՒՆ**, գ. Մագիստրոս լինելը:

**ՄԱԳԼԵԼ**, նբ. Մագլցիլ:

**ՄԱԳԼՅՈՂ**, անծ. Նա որ մագլցում է:

**ՄԱԳԼՅԻ**, մկ. Մագլցելով:

**ՄԱԳՆԷՋԻԱ**, գ. (Քիմ.) Մպիտակ՝ թէթե՛ կակուղ՝ անհամ եւ անհոտ բաղկացութիւն թթուածնից եւ մագնէզիոնից:

**ՄԱԳՆԷՋԻՈՆ**, գ. (Քիմ.) Պարզ մետաղական մարմին:

**ՄԱԳՆԵՏՈՒ**, Ներքին այրման շարժիչների մէջ էլեկտրամագնիսական սարած:

**ՄԱԳՆԻՍ }** գ. (Հանք.) Երկաթական սէտրակ հանք:

**ՄԱԳՆԻՍԱԳՈՒԹԻՒՆ**, գ. Երկրի մագնիսական դաշտի փոփոխութիւնների գրանցումը:

**ՄԱԳՆԻՍԱՂԱՇՏ**, գ. (Ֆիզ.) Մագնիսական դաշտ:

**ՄԱԳՆԻՍԱԶԵՐՄԵԼ**, բ. Մագնիսականութիւնից գրկել: Փխբ. Բ չիք դարձնել:

**ՄԱԳՆԻՍԱԿԱՆ**, անծ. Մագնիսի վերաբերեալ: Երկրագնդի վրայ երկու կէտ, մէկը Հիւս. Սառուցեալ ովկիանոսում, Մէ՛լվիլ՝ կղզու մօտ, միւսը Հարաւային Սառուցեալ ովկիանոսում:

**ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. (Ֆիզ.) Մի քանի մարմինների այն յատկութիւնը, որ նրանք դէպի իրենց են ձգում այլ մարմիններ: Բնագիտութեան այն մասը,

որ ուսումնասիրում է մագնիսի երեւոյթները:

**ՄԱԳՆԻՍԱՆԱԼ**, չբ. Մագնիս դառնալ:

**ՄԱԳՆԻՍԱՉԱՓ**, գ. (Ֆիզ.) Գործիք, որով ճշտութեամբ չափում են մագնիսական սլաքի ամենափոքր փոփոխութիւնները:

**ՄԱԳՆԻՍԱՉԱՓԱԿԱՆ**, անծ. Մագնիսաչափութեան վերաբերող:

**ՄԱԳՆԻՍԱՉԱՓՈՒԹԻՒՆ**, գ. Մագնիսական դաշտի լարուածութեան չափումը:

**ՄԱԳՆԻՍԱՍԼԱՔ**, գ. Մագնիսական սլաք:

**ՄԱԳՆԻՍԱՑՈՒՄ**, գ. Մագնիսանալը եւ մագնիսացնելը:

**ՄԱԳՆԻՍԵԼ**, նբ. Կենդանական մագնիսականութեան ենթարկել:

**ՄԱԳՆԻՍՈՂ**, գ. Այն անձը, որ մագնիսում է, հիպնոզի է ենթարկում՝ իր կամքը պարտադրելով:

**ՄԱԳՆՈՒԻՄ**, գ. (Բուս.) Գեղեցիկ ծառ:

**ՄԱԳՈՒԳ }** գ. Մակուկաձէ փոքրիկ սարած ոստայնանկի, որի մէջ զետեղում են թելով մաստրան եւ որը հենքի միջով աջ ու ձախ շրջեցնելով գործում են կտաւը:

**ՄԱԴԵՊԱԼԱՍ, ՄԱԴԱՊԱԼԱՍ**, գ. Մպիտակ բամբակէ գործուածք:

**ՄԱԴԻԱՆ**, գ. Մատակ ձի, սարակ:

**ՄԱԶ**, գ. Մարդու գլխի վրայ բուսնող թելանման եղջերային առաձգական նիւթը, որ ծածկում է գլուխը, հեր, վարս: Ընդհանրապէս՝ շատ նուրբ՝ փոքր՝ մագանման նիւթ:

**ՄԱԶԱԲԵՐ**, անծ. Մազ բերող: Մազ աճեցնող:

**ՄԱԶԱԳՈՐԾ**, անծ. Մազից գործուած: Մազ գործող:

**ՄԱԶԱԶՈՒԴ**, անծ. Մազից գրկուած:

**ՄԱԶԱԹԱՓՈՒՄ**, գ. Մազաթափութիւն:

**ՄԱԶԱԽԻԼ**, գ. անծ. Մազ պոկող (գոր-

<p>ծիք):</p> <p><b>ՄԱԶԱԾԱՅՐ</b>, գ. Մազի ծայր:</p> <p><b>ՄԱԶԱԿԱԼ</b>, գ. Ծամակալ, վարսակալ:</p> <p><b>ՄԱԶԱԿԱԼԵԼ</b>, նբ. Մազով ծածկուիլ:</p> <p><b>ՄԱԶԱԿԱՊ</b>, գ. Մազերի կապ՝ փունջ, մազափունջ:</p> <p><b>ՄԱԶԱՅԻՆ</b>, ան. Մազի նման նուրբ:</p> <p><b>ՄԱԶԱՆՄԱՆ</b>, ան. Մազի նման:</p> <p><b>ՄԱԶԱՆՕԹ</b>, գ. Նուրբ՝ մազանման խոդովակներ բոյսերի եւ կենդանիների մէջ:</p> <p><b>ՄԱԶԱՇԱՐԺ</b>, ան. Մազը շարժող:</p> <p><b>ՄԱԶԱՉԱՓ</b>, ան. Մազի չափ, ամենափոքր, ամենաքիչ:</p> <p><b>ՄԱԶԱՊՈՒԴՄ</b>, ան. մկ. Հազիւ հազ փտանգից ազատուած:</p> <p><b>ՄԱԶԱԻՈՐ</b>, ան. Առատ ու երկայն մազեր ունեցող:</p> <p><b>ՄԱԶԻԶԱԿԱՆ</b>, ան. Մազեզն, գրադաշտական:</p> <p><b>ՄԱԶԻԶԱԿԱՆՈՒԹԻՆ</b>, գ. Մազդեզական կմ գրադաշտական կրօնը:</p> <p><b>ՄԱԶԻԶՆ</b>, ան. Ահուրա-Մազդայի (կմ պարսկական Արամազդի) պաշտամունքն ունեցող:</p> <p><b>ՄԱԶԵԿԱՄԱՍ</b>, գ. Պարեգօտ:</p> <p><b>ՄԱԶԵՂ</b>, ան. Մազը շատ:</p> <p><b>ՄԱԶԵՂԵՆ</b>, ան. Մազից շինած, գործուած:</p> <p><b>ՄԱԶԵՐԱԿԱՅԻՆ</b>, ան. Մազի նման բարակ երկայն:</p> <p><b>ՄԱԶԷ</b>, ան. Մազեայ:</p> <p><b>ՄԱԶԹԱՓ</b>, ան. Մազերը թափած, ճաղատ:</p> <p><b>ՄԱԶԻԿԱԾԱԾԿ</b>, ան. Մազիկներով ծածկուած:</p> <p><b>ՄԱԶԿԱՊ</b>, գ. Մազերը կապելու երիզ՝ ժապաւեն:</p> <p><b>ՄԱԶԿԱՐՕՏ</b>, ան. Մազի կարօտ:</p> <p><b>ՄԱԶՄԱՆ</b>, գ. Մազ մանող:</p> <p><b>ՄԱԶՄԱՆՈՒԹԻՆ</b>, գ. Մազ մանելը, մազմանի արհեստը:</p>	<p><b>ՄԱԶՄՉՈՒԿ</b>, գ. (Բուս.) Բարակ՝ մազանման թելեր:</p> <p><b>ՄԱԶՈՏ</b>, ան. Մազ ունեցող:</p> <p><b>ՄԱԶՈՒԹ</b>, գ. Քարիւղի թանձր մնացորդ:</p> <p><b>ՄԱԶՈՒԹՈՏ</b>, ան. Մազութ վրան քրսուած:</p> <p><b>ՄԱԶՏԱՔ</b>, գ. Քաղցրահոտ փխրուն խէժ:</p> <p><b>ՄԱԶՔԱՇ</b>, գ. Փոքրիկ ունելիք, որով հատ-հատ մազերը քաշում պոկում են:</p> <p><b>ՄԱԹ</b>, ան. Ջարմացած, հիացած, ապշած:</p> <p><b>ՄԱԹ</b>, գ. Շախմատի խաղում այնպիսի յարձակում (շախ) հակառակորդի թագաւորի վրայ, որից ոչ մի միջոց չկայ պաշտպանուելու:</p> <p><b>ՄԱԹԵՄԱՏԻԿԱ</b>, գ. Գիտութիւն, որ ուսումնասիրում է այն քանակների յատկութիւնները, որոնք կարող են հաշուուել: Թուաբանութիւն:</p> <p><b>ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ</b>, ան. Մաթեմատիկային յատուկ:</p> <p><b>ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ</b>, գ. Մաթեմատիկայի մասնագէտ: Թուաբանագէտ:</p> <p><b>ՄԱԹԵՄԱՏԻԿՕՐԷՆ</b>, մկ. Մաթեմատիկայի միջոցով:</p> <p><b>ՄԱԹԻՆ</b>, գ. Մանր ոջիլ:</p> <p><b>ՄԱԹՈՒՋԵՆԻ</b>, գ. (Բուս.) Մշտադալար գեղեցկատերեւ թուփ:</p> <p><b>ՄԱԺ</b>, գ. Շփելը:</p> <p><b>ՄԱԺԱԺՈՐ</b>, ան. Հիւանդոտ:</p> <p><b>ՄԱԺԵԼ</b>, նբ. Ձեռքերով շփել, տորել, մերսել:</p> <p><b>ՄԱԺՄԺԵԼ</b>, նբ. Մի քանի անգամ կմ զանազան տեղեր մաժել:</p> <p>ՄԱԺՈՂ } գ. Մարդ կմ կին, որի մասնաստի          ՄԱԺՈՒՇԻ } գ. Մարդ կմ արհեստն է մաժել հիւանդներին բժշկական նպատակով:</p> <p><b>ՄԱԺՈՐ</b>, ան. (Երած.) Երոպական երաժշտութեան մէջ այն զամման, որի մէջ երրորդից չորրորդ եւ եօթներորդից ութերորդ սասիճանները կիսաձայն են:</p>
--	--

**ՄԱԼ**, ան. գ. Մալաձ, կռտած:  
**ՄԱԼԱԶ**, ան. Անչափահաս (մարդ), որի մօրուքը դեռ չի բուսել:  
**ՄԱԼԱԿԱՆ**, գ. Ռուս աղանդաւորութեան մի աղանդի հետեւորդ:  
**ՄԱԼԱԿԱՆԵԼ**, նբ. Խառնել, բոլորը իրարու խառնել:  
**ՄԱԼԱՅԱՑԻՆԵՐ**, Մալայեան կղզիների հիմնական բնակչութիւնը:  
**ՄԱԼԱՆՉ**, գ. Մանտերքի վրայից հանած գգած բուրդը կիսալուսնի ձեւով:  
**ՄԱԼԱՇՕ**, գ. (Բուս.) Ծնեքակ:  
**ՄԱԼԱՉԱՅ** } ան. գ. Տանձի մի տեսակ:  
**ՄԱԼԱՉԻ** }  
**ՄԱԼԱՉԵՆԻ**, գ. Մալաչի տանձի ծառը:  
**ՄԱԼԵԼ**, նբ. Ճմլել: Մանրել:  
**ՄԱԼԷԶ**, գ. Ջրախառն ալիւր:  
**ՄԱԽ**, ան. Թանձրամիտ, հաստազլուխ:  
**ՄԱԽԱԶ**, ան. Անառակ, ցոփ:  
**ՄԱԽԱԶՈՒԹԻՒՆ**, գ. Մախազ լինելը:  
**ՄԱԽԱԼ**, նբ. Նախանձիլ:  
**ՄԱԽԱՂ**, գ. Փոքր տոպրակ:  
**ՄԱԽԱՆՔ**, գ. Չար նախանձ:  
**ՄԱԽԻԶՍ**, գ. (Փիլիս.) Յետադիմական գաղափարական հոսանք:  
**ՄԱԽՐԻ**, գ. (Բուս.) Կոնաբերների կարգին պատկանող բարձր ծառ: Եղեւնու մի տեսակ:  
**ՄԱԾԱԿԱՆ**, ան. Մածան, մածուցիկ:  
**ՄԱԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Մածական՝ կպչուն լինելը:  
**ՄԱԾԱՆԵԼ**, S. Մածուցանել: Կպցնել:  
**ՄԱԾԻԿ**, գ. Կպչող նիւթ:  
**ՄԱԾԿԵԼ**, բ. Մածիկ քսել:  
**ՄԱԾԱԲՐՈՇ**, գ. Ջրով բացած եւ մէջը հաց բրդած մածուն:  
**ՄԱԾԱԹԱՆ**, գ. Մածնի թան:  
**ՄԱԾԱԿԱՄԱՐԱԳ**, գ. Մածնով խառն կարագ:  
**ՄԱԾԱՇԱՄ**, ան. Մածնի համ ունեցող:  
**ՄԱԾԱՇՈՒ**, գ. Մածնի եւ շոռի խառնուրդ:

**ՄԱԾՆԱՊԱՆ**, գ. Մածուն շինող:  
**ՄԱԾՆԱՊՈՒՐ**, գ. Մածնով ապուր:  
**ՄԱԾՆԱՄԵՐ**, գ. Մածնի երեսի սերը:  
**ՄԱԾՆԱՎԱՃԱՌ**, ան. գ. Մածուն ծախող:  
**ՄԱԾՆԱՏՈՒՆ**, գ. Խանութ, որտեղ մածուն եւ այլ կաթնեղէններ են ծախում:  
**ՄԱԾՆԱՔՄԱԿ**, գ. Մածնի քսակ:  
**ՄԱԾՆԻ**, գ. (Բուս.) Տորոնագգիների կարգին պատկանող բոյսերի ցեղ:  
**ՄԱԾՆԻ ԾԱՂԻԿ**, գ. (Բուս.) Ջամբիւղաւորների կարգին պատկանող խոտ:  
**ՄԱԾՆՈՒԼ**, չբ. Կպչել, փակչել:  
**ՄԱԾՈՒԿ**, գ. Թանձրացրած, խմորանրման զանգուածային նիւթ, որ օգտագործուում է գեղարարութեան մէջ:  
**ՄԱԾՈՒՆ**, ան. գ. Մածուած՝ խմորուած՝ կպած կաթ:  
**ՄԱԾՈՒՆ-ԾԱՆԵՍ**, գ. Երեխաների խաղ:  
**ՄԱԾՈՒՑԻԿ**, ան. Մածուող՝ կպչող:  
**ՄԱԾՈՒՑԻՉ**, ան. Մածուցանող:  
**ՄԱԿ**, նախոր. մկ. Վրայ:  
**ՄԱԿԱԲԱԺԱՆՈՒՄ**, գ. Վերաբաժանում:  
**ՄԱԿԱԲԵՐԱԿԱՆ**, ան. Մակաբերութեան յատուկ, վերաբերող:  
**ՄԱԿԱԲԵՐԵԼ**, նբ. Եզրակացութիւն հանել մի բանից:  
**ՄԱԿԱԲԵՐՈՒԹԻՒՆ**, գ. Եզրակացութիւն հանելը:  
**ՄԱԿԱԲՈՅՑ**, ան. գ. Բոյս կմ կենդանի, որ ապրում է ուրիշ բոյսի կմ կենդանու վրայ:  
**ՄԱԿԱԲՈՒՇԱԿԱՆ**, ան. Մակաբոյծին եւ մակաբուծութեան յատուկ:  
**ՄԱԿԱԲՈՒՇՈՒԹԻՒՆ**, գ. Մակաբոյծ լինելը:  
**ՄԱԿԱԲՈՅՍ**, ան. գ. Մակաբոյծ բոյս:  
**ՄԱԿԱԳԱԻԹ**, ան. Վրան գաւիթ ունեցող:  
**ՄԱԿԱԳԻՇ**, ան. Մակազրուած:

**ՄԱԿԱԳՐԱԿԱՆ**, ան. Մակագրություններ էրած:

**ՄԱԿԱԳՐԵԼ**, նր. Գրուածքի վրայ վերնագիր դնել:

**ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. Վերնագիր դնելը:

**ՄԱԿԱՂԵՂ**, գ. (Բժշկ.) Դեղի փոշի, պարզ կմ խառն նիւթերից:

**ՄԱԿԱՂՈՒԹԻՒՆ**, գ. Մականուանելը:

**ՄԱԿԱԼՈՒՄԻՆ**, ան. Լուսնից վեր գտնուող:

**ՄԱԿԱՍՏԱԿԱՆ**, ան. Վրայ բերող: Ինդուկտի:

**ՄԱԿԱՍԾԵԼ**, նր. Վրայ բերել, աւելացնել:

**ՄԱԿԱՍՏՈՒԹԻՒՆ**, գ. Վրայ բերելը, վրայ ածելը. հետեւանք:

**ՄԱԿԱԿԱՆՈՅՑ**, ան. Վրան կառուցուած:

**ՄԱԿԱԿԵՏ**, գ. Ստորակէտի նման նշան, որ դրուում է գրի վերելը: Սղուած ձայնաւորի տեղում:

**ՄԱԿԱԿՈՉՈՒԹԻՒՆ**, գ. Մականունով կանչելը:

**ՄԱԿԱՂԱՏԵՂ(Ի)**, գ. Ոչխարների համար փակ տեղ, փարսիս:

**ՄԱԿԱՂԵԼ**, չր. Ոչխարների մի տեղ հաւաքուելը, պատկերու համար:

**ՄԱԿԱՍՏԱՍՏԱԿԱՆ**, ան. Խոհական, մտածողական: Մտացածին:

**ՄԱԿԱՍՏԱՍՏՈՒԹԻՒՆ**, գ. Խորհրդածություն:

**ՄԱԿԱՅԵԼ**, նր. Վրայ բերել:

**ՄԱԿԱՆ**, գ. Յուպ, գաւազան: Բշխանություն:

**ՄԱԿԱՆԱԲԱՐ**, մկ. Մականի նման:

**ՄԱԿԱՆԱԽԱՂ**, գ. Մականներով խաղ:

**ՄԱԿԱՆԱԿԻՐ**, ան. Մական կրող: Մականաւոր:

**ՄԱԿԱՆԱԽՈՐ**, ան. Մական կրող:

**ՄԱԿԱՆԵԼ**, նր. Մականով հարուածել, գաւազանով խփել:

**ՄԱԿԱՆՈՒՄԱՆԵԼ**, նր. Մականուն դնել:

**ՄԱԿԱՆՈՒՆ**, գ. Վերադիր անուն: Ըն-

տանիքի անուն:

**ՄԱԿԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ**, գ. Վերադիր անունով, մականունով կոչել:

**ՄԱԿԱՍՏՈՒԹԻՒՆ**, գ. Մակասելը, ասածի վրայ մի բան աւելացնելը:

**ՄԱԿԱՎԻՃԱԿ**, գ. Որին վիճակուել է ամբողջ ժառանգությունը:

**ՄԱԿԱՏԵՍՈՒՉ**, գ. Վերատեսուչ:

**ՄԱԿԱՐ**, գ. Աղջիկ առեւանգելու գնացող երիտասարդին ուղեկցող ազատ ընկերներից ամէն մէկը: Ընդհանրապէս՝ հարսանիքի հրաւիրուած բոլոր հիւրերը:

**ՄԱԿԱՐԴ**, գ. Մի փոքր քանակութեամբ մածուն, որ խառնում են տաքացած կաթի մէջ, որի հետեւանքով կաթը լերդանում՝ մածուում է, մածուն է դառնում:

**ՄԱԿԱՐԱԿ**, ան. Երեսը հարթ տախտակ:

**ՄԱԿԱՐԱԿԵԼ**, նր. Հարթ-հաւասար դարձնել:

**ՄԱԿԱՐԱՆԱԼ**, չր. Մակարդուել:

**ՄԱԿԱՐԵԼ**, նր. Կաթի մէջ մակարդ խառնել:

**ՄԱԿԱՐՈՒՄ**, գ. Մակարդելը, մակարդուելը:

**ՄԱԿԱՑԱԿԱՆ**, ան. Գիտական, ուսումնական:

**ՄԱԿԱՑՈՒ**, ան. Ուսած, հմուտ:

**ՄԱԿԱՑՈՒՑԱԿԱՆ**, ան. Յոյց տուող:

**ՄԱԿԱԻԵԼԻ**, մկ. Աւելի եւս:

**ՄԱԿԲԱՑ**, գ. (Քրկն.) Բայի վրայ դրուող (բար):

**ՄԱԿԲԱՑԱԲԱՐ**, Տ. Մակբայօրէն:

**ՄԱԿԲԱՑԱԿԱԶՄ**, ան. Մակբայից կազմուած: Մակբայակերտ:

**ՄԱԿԲԱՑԱԿԱՆ**, ան. Մակբային յատուկ:

**ՄԱԿԲԱՑԱԿԵՐՏ**, ան. Մակբայ կազմող:

**ՄԱԿԲԱՑԱՆԱԼ**, չր. Մակբայ դառնալ:

**ՄԱԿԲԱՑՈՒՆԱԿ**, ան. Մակբայ ունեցող:

**ՄԱԿԱՅՅՈՐԷՆ**, մկ. Բբրեւ մակբայ:

**ՄԱԿԱԲԱՇԽ**, ած. գ. (Քրկն.) Բառ՝ որ նշանակում է ամէն մէկի վրայ բաշխում կը բաշխող:

**ՄԱԿԱՂԵԼ**, նբ. Ոչխարները հաւաքել հանգստավայր: Տարածել, փռուել:

**ՄԱԿԻՐ**, գ. (Քրկն.) Գոյականի վրայ դրուած բառ: Վերադիր:

**ՄԱԿԻՐԱՆՇԵՂ**, ած. (դիպվ.): Մակդիրի առատութեամբ հեղձող՝ ճնշող:

**ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ**, ած. Մակեղոնիային յատուկ, վերաբերեալ:

**ՄԱԿԵՂՈՆԱՅԻ**, ած. Մակեղոնիայում ծնուած:

**ՄԱԿԵՈՍԱԿԻՆԻ**, ած. Կրկին եռանկիւնի:

**ՄԱԿԵՐԵՍ**, գ. Մակերեւոյթ: (Երկրաչ.) Մակերեւոյթ:

**ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ**, S. Մակերեւոյթային: Թերեւ:

**ՄԱԿԵՐԵՍԱՅՆՕՐԷՆ**, մկ. Մակերեսային կերպով:

**ՄԱԿԵՐԵՍԱԶՍ**, գ. (Մսնգ.) Առարկայի մակերեսը չափելու գործիք:

**ՄԱԿԵՐԵՆՈՅԹ**, գ. Առարկայի արտաքին երեսը ըստ լայնութեան եւ երկարութեան:

**ՄԱԿԵՐԵՆՈՒԹԱԲԱՐ**, մկ. Վերիվերոյ, երեսանց:

**ՄԱԿԵՐԵՆՈՒԹԱՆՈՐ**, ած. Մակերեւոյթից խորը:

**ՄԱԿԵՐԵՆՈՒԹԱԿԱՆ**, ած. Մակերեւոյթին յատուկ, վերաբերեալ: (Փոխ.) Վերիվերոյ:

**ՄԱԿԵՐԵՆՈՒԹԻՆ**, S. Մակերեւոյթ:

**ՄԱԿԸԹԱՑՈՒԹԻՆ**, գ. Ծովի ջրերի պարբերաբար բարձրանալը:

**ՄԱԿԸԹՐԱԿ**, յոգն. գ. Ընթրիքի վրայ ընթրիք:

**ՄԱԿԻ**, գ. (Կենդ.) Կիսակապիկների գեղին պատկանող կենդանի:

**ՄԱԿՆԻՇ**, գ. Ապրանքի՝ արտադրութեան մը գործարանային նշանը:

**ՄԱԿՆԻՇԱՒՈՐՈՒՄ**, գ. Ապրանքի որակի, բաղադրութեան, պահպանման եւ այլ կարգի տեղեկութիւններ պարունակող նշում:

**ՄԱԿՆՇՈՒԵԼ**, բ. Մակնշման ենթակայ տեղեկութիւններով օժտել:

**ՄԱԿՇԱՂԱՊԵԼ**, նբ. Մի բառ միւսի հետ կապել:

**ՄԱԿՈՅԿ**, գ. Նեղ՝ երկայն փոքր նաւակ:

**ՄԱԿՈՒԿԱԶԵԻ**, ած. Մակոյկի ձեւ ունեցող:

**ՄԱԿՈՒԿԱՃԵՄ**, գ. Մակոյկով ձեւելը՝ զբօսանք կատարելը:

**ՄԱԿՈՒԿԱՎԱՐ**, ած. գ. Մակոյկը վարող:

**ՄԱԿՊԵՏԱԿԱՆ**, ած. Վերին պետական, զերագոյն:

**ՄԱԿՍԱՍԿՈՒԹԻՆ**, գ. Աւելի սաստկութիւն:

**ՄԱԿՍՏԵՂԾ**, ած. Մի բանի վրայ ստեղծուած:

**ՄԱԿՏԱՌ**, S. Վերտառութիւն:

**ՄԱԿՏԱՌՈՒԹԻՆ**, S. Վերտառութիւն:

**ՄԱԿՏԱՐԱԾ**, ած. Վերից վար տարածուած:

**ՄԱԿՏՐԱՅ**, գ. Հացի խմոր շաղախելու տաշտ:

**ՄԱՀ**, գ. Կեանքի բոլոր գործունէութիւնների վերջնական դադարումը գործարանաւոր մարմնի մէջ: Սպանութիւն, կոտորած: Տանջանք, տագնապ:

**ՄԱՀԱԲԵՐ**, ած. Մահ բերող:

**ՄԱՀԱԲԵՐԵԼ**, չբ. Մահուան դուռը հասնել:

**ՄԱՀԱԲԼՈՒՐ**, գ. Մահուան բլուր, գերեզմանի վրայ կուտում հող:

**ՄԱՀԱԲՈՅԾ**, ած. Մահադիմ:

**ՄԱՀԱԲՈՅՐ**, ած. Մահահոտ:

**ՄԱՀԱԳԻՆ**, ած. Մահուան պէս տանջալի:

**ՄԱՀԱԳԻՐ**, գ. Մահուան վճիռ պարու-

նակող գրություն:

**ՄԱՀԱԳՈՅԺ**, գ. Մահուան մասին գոյժ, բօթաբեր լուր:

**ՄԱՀԱԳՈՆԻ**, գ. (Բուս.) Կիտրոնազգիների կարգին պատկանող բարձր ծառ:

**ՄԱՀԱԳՈՐԾ**, ան. Մահ գործող:

**ՄԱՀԱԳՈՒՇԱԿ**, ան. Մահ գուշակող:

**ՄԱՀԱԴԱԻ**, գ. Մահուան դաւ լարելը:

**ՄԱՀԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ**, գ. Վերակենդանություն:

**ՄԱՀԱԴԵՂ**, գ. Մահուան դեղ, թոյն:

**ՄԱՀԱԴԷՄ**, ան. Մեռելի դեմք ունեցող:

**ՄԱՀԱԴՐՈՇՄ**, ան. Մահուան դրոշմը կրող:

**ՄԱՀԱԶԱԳ**, գ. Զանգահարություն մէկի մահուան առթիւ:

**ՄԱՀԱԶԳ**, գ. Ազդարարություն՝ յայտարարություն մահուան մասին:

**ՄԱՀԱԶԵԿՈՅՑ**, ան. Մահը տեղեկացնող:

**ՄԱՀԱԶԷՆ**, գ. Մահուան զէնք, սպանութեան գործիք:

**ՄԱՀԱԹԱՔՈՅՑ**, ան. Իր մէջ մահ պարունակող:

**ՄԱՀԱԹՄԲԻՐ**, գ. Մահուան թմրություն, մահուան քուն:

**ՄԱՀԱԹՈՅՆ**, գ. Մահադեղ:

**ՄԱՀԱԼԻ**, ան. Մահով լցուած:

**ՄԱՀԱԼԻ**, գ. (Կենդ.) Մերիտոսների ցեղին պատկանող փոքր թռչուն:

**ՄԱՀԱԼՈՅՑ**, ան. Մահը լուծող, մահը վերացնող:

**ՄԱՀԱԾԻՆ**, ան. Մահ ծնող:

**ՄԱՀԱԾՈՒ**, ան. Մահաբեր:

**ՄԱՀԱԿ**, գ. Ձեռքի հաստ՝ պինդ գաւազան, կոպալ:

**ՄԱՀԱԿԱՆ**, ան. Մահին յատուկ:

**ՄԱՀԱԿԱՊ**, ան. Մահը կապած:

**ՄԱՀԱԿԱՒՈՐ**, ան. Մահակ ունեցող:

**ՄԱՀԱԿԵՐՊ**, ան. Մահի կերպ:

**ՄԱՀԱԿԵՐՊԱՐԱՆ**, ան. Մահի կերպարանք ունեցող:

**ՄԱՀԱԿԻՐ**, ան. Մահ կրող:

**ՄԱՀԱԿԻՑ**, ան. Մահին մասնակից:

**ՄԱՀԱԿՈՐՁ**, ան. Մահից կորզուած:

**ՄԱՀԱԿՈՒԼ**, ան. Մահից կլանուած:

**ՄԱՀԱԿՈՒՆՉ**, ան. Մահ կոնչացող, չարագուշակ:

**ՄԱՀԱՀԱՄԲՈՅՐ**, ան. Մահի հետ մտերիմ:

**ՄԱՀԱՀԱՆԳՈՅՆ**, ան. Մահի նման:

**ՄԱՀԱՀԱՐՈՒԱԾ**, գ. Մահացու հարուած:

**ՄԱՀԱՀՈՏ**, ան. Ինչից որ մահուան հոտ է գալիս:

**ՄԱՀԱԶԱՅՆ**, ան. Մահ բերող ձայն:

**ՄԱՀԱԶԻԳ**, ան. Դէպի մահը ձգող:

**ՄԱՀԱՄԱՏՈՅՑ**, ան. Մահ մատուցանող:

**ՄԱՀԱՄԵՐՁ**, ան. Որի մահը մօտեցել է:

**ՄԱՀԱՄՈՒՑ**, ան. Ուր մտնում են մահից յետոյ: Դէպի մահ մտնող:

**ՄԱՀԱՆԱԼ**, չք. Մահուան ենթարկուել, մեռնել:

**ՄԱՀԱՇԵՈՒԿ**, ան. Մահուան մասին շշուկ պարունակող:

**ՄԱՀԱՇԵՈՒՋ**, ան. Մահ շնջացող:

**ՄԱՀԱՇՈՒՆՉ**, ան. Նա որ մահ է շնչում: Մահուան շունչ ունեցող:

**ՄԱՀԱՊԱՏԻԺ**, գ. Դատարանի որոշած մահուան պատիժ:

**ՄԱՀԱՊԱՐՑ**, ան. Մահուան դատապարտուած:

**ՄԱՀԱՊԱՐՑԱԿԱՆ**, ան. Մահապարտին յատուկ:

**ՄԱՀԱՊԱՐՑԵԼ**, նք. Մահուան դատապարտել:

**ՄԱՀԱՊԱՐՑՈՒԹԻՒՆ**, գ. Մահապարտ լինելը:

**ՄԱՀԱՌԻԹ**, ան. Մահուան առիթ եղող:

**ՄԱՀԱՄԱՍՏ**, ան. Մահուան սաստ պարունակող:

**ՄԱՀԱՄԱՐՍՈՒՌ**, ան. Մահի նման սարսուռ պարունակող:



**ՄԱՀԱՍԿԻԶՔ**, գ. Մահուան սկիզբ եղող:  
**ՄԱՀԱՍՏԱՆ**, գ. Մպանդանոց, մահուան երկիր:  
**ՄԱՀԱՍՏՈՒԵՐ**, ան. Մահուան ստուերի մէջ եղող:  
**ՄԱՀԱՍՓԻՒՌ**, ան. Մահ սփռող:  
**ՄԱՀԱՎՃԻՌ**, գ. Մահուան դատավճիռ:  
**ՄԱՀԱՏԱՐ**, ան. Դէպի մահ տանող:  
**ՄԱՀԱՏԱՐԱԾ**, ան. Մահ սփռող՝ տարածող:  
**ՄԱՀԱՏԱՐԱՓ**, ան. Չանգուածային մահ պատճառող:  
**ՄԱՀԱՏՈՒ**, ան. Մահ տուող:  
**ՄԱՀԱՐԱՐ**, ան. Մահ առաջացնող:  
**ՄԱՀԱՐՁԱՆ**, գ. Գերեզմանի վրայ կանգնեցրած արձան:  
**ՄԱՀԱՑԱՆ**, ան. Մահ ցանող:  
**ՄԱՀԱՑՈՒ**, ան. Մահ բերող, մահացնող:  
**ՄԱՀԱՑՈՒԹԻՒՆ**, գ. Մահացու՝ մահկանացու լինելը:  
**ՄԱՀԱՑՈՒՑԱԿ**, գ. Համառօտ կենսագրական տեղեկութիւն նոր մեռած մարդու մասին:  
**ՄԱՀԱՑՈՒՑԻՉ**, ան. Մահացնող, սպաննող:  
**ՄԱՀԱՓՈՂՁ**, գ. Մպանութեան կմ անձնասպանութեան փորձ:  
**ՄԱՀԱՔՈՒՆ**, գ. Մահուան քուն, վերջին քուն:  
**ՄԱՀԱՔՐՏԻՆՔ**, գ. Մահուան քրտինք:  
**ՄԱՀԴԱՆԱԿ**, գ. (Բուս.) Երկու ոտնաչափ բարձր, հաստ որձայրվ բոյս:  
**ՄԱՀԵՐԳ**, գ. Տխուր երգ: Թաղմանական քայլերգ:  
**ՄԱՀԵՐԳԱԿ**, ան. Մահը երգող:  
**ՄԱՀԸՆԿԱՆ**, ան. Մահ ընդունող:  
**ՄԱՀԻԿ**, գ. Եղջերաձէլ լուսին: Օսմանեան պետութեան զինանշանը:  
**ՄԱՀԻՃ**, գ. Անկողին:  
**ՄԱՀԻՃԱԶԵՒ**, ան. Մահճի ձէլ ունեցող:  
**ՄԱՀԿԱԲԱՐ**, մկ. Մահկի պէս:  
**ՄԱՀԿԱՅԻՆ**, ան. Մահկի ձէլով:

**ՄԱՀԿԱՆԱՑՈՒ**, ան. Նա որ ենթակայ է մահուան: գ. Մարդ:  
**ՄԱՀԿԱՆԱՑՈՒԹԻՒՆ**, գ. Մահկանացու լինելը:  
**ՄԱՀՃԱԲԱՐՁ**, ան. Անկողիններ կրող, իր մէջ անկողիններ ունեցող:  
**ՄԱՀՃԱԿԱՆ**, ան. 1. Անկողնում ընկած: 2. գ. Անկողնի այն մասը, որ մահիճը կը պարունակէ:  
**ՄԱՀՄԵՏԱԿԱՆ**, ան. Մահմետի քարոզած՝ վարդապետած:  
**ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՆԱՆ**, չք. Մահմետական դառնալ:  
**ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ**, գ. Մահմետականանալը:  
**ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Մահմետական կրօն:  
**ՄԱՀՈՏ**, ան. Որտեղ մահ շատ է պատահում, մահաբեր:  
**ՄԱՀՈՒԹԻՒՆ**, գ. Մահկանացու լինելը:  
**ՄԱՀՈՒՉԱՓ**, մկ. Մինչեւ մահ:  
**ՄԱՀՈՒՂ**, գ. Բաւական հաստ բրդի գործուածք:  
**ՄԱՀՏԱՐԱԺԱՍ**, գ. Տարածում՝ ժամանակից դուրս՝ յանկարծական մահ:  
**ՄԱՀՏԵՍԻ**, Երուսաղէմ ուխտի գնացած, հաջի:  
**ՄԱՀՐԵԼ**, նք. Կնոջը ժառանգութիւն՝ բաժին թողնել:  
**ՄԱՂ**, գ. Չարից, բարակ մետաղալարից կմ արբէշումից հիւսած ցանց: Նման. Մեղուների գործած բջիջ: Չտող գործիք:  
**ՄԱՂԱԲԱՆ**, ան. գ. Մաղը բախելով հմայութիւն անող:  
**ՄԱՂԱԳԼՈՒԻՆ**, գ. Մաղի զլուխը:  
**ՄԱՂԱԳՈՐԾ**, ան. գ. Մաղ գործող, մաղ շինող:  
**ՄԱՂԱԳՈՐԾԱՐԱՆ**, գ. Մաղ շինելու գործարան:  
**ՄԱՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. Մաղագործ լինելը:  
**ՄԱՂԱԴԱՆՈՍ**, Տե՛ս Կարոս: Ազատգեղ:

**ՄԱՂԱԼ**, գ. Անաստունների մակադելը:  
 Այն տեղը, ուր ոչխարը մակադում է:  
**ՄԱՂԱՍ**, գ. (Կազմախ.) Սպիտակ՝ մա-  
 ծուցիկ՝ թելի պէս ձգուող հիւթ: Ծննդա-  
 բերութիւնից յետոյ ծննդական գործա-  
 րանից հոսող հիւթ:  
**ՄԱՂԱՍԱԹՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Լորձա-  
 թորութիւն:  
**ՄԱՂԱՍԱԼԻՑ**, ան. Մաղասով լցուած:  
**ՄԱՂԱՍԱՀՈՍ**, ան. Մաղաս հոսեցնող,  
 արտադրող:  
**ՄԱՂԱՍԱՅԻՆ**, ան. Մաղասին յատուկ:  
**ՄԱՂԱՍԱԲՈՐ**, ան. Մաղաս ունեցող:  
**ՄԱՂԱՏԵՍԱԿ**, ան. Մաղի տեսակ:  
**ՄԱՂԱՐԱՆ**, գ. Որտեղ մաղում են  
 ալիւրը, ցորենը:  
**ՄԱՂԵԼ**, նբ. Ալիւրը կմ ընդէդէնը մաղի  
 մէջ ածելով մաղը շարժել:  
**ՄԱՂԹ**, գ. Մաղթանք:  
**ՄԱՂԹԱԿԱՆ**, ան. Մաղթողական:  
**ՄԱՂԹԱՆՈՒՍԳ**, գ. Հանդիսանուագ:  
**ՄԱՂԹԱՆՔ**, գ. Աղաչանք, միջնորդու-  
 թիւն, աղերսանք: (Կրօն.) Եկեղեցական  
 հանդէս:  
**ՄԱՂԹԵԼ**, նբ. Աղաչել, միջնորդել:  
**ՄԱՂԹՈՂԱԿԱՆ**, ան. Մաղթանք՝ աղա-  
 չանք՝ խնդրուածք պարունակող:  
**ՄԱՂԻԿ-ՄԱՂԻԿ**, մկ. Մանր կաթիլ-  
 ներով:  
**ՄԱՂԻՍԱԶ**, գ. Հայ Արշակունի թագաւոր-  
 ների թիկնապահ զօրքի պետը:  
**ՄԱՂԻՍԱԶՈՒԹԻՒՆ**, գ. Մաղխազի պաշ-  
 տօնը:  
**ՄԱՂԾԱԿ ԱՆԵԼ**, Մաղի պէս ծակծկել:  
**ՄԱՂԶ**, գ. (Կազմախ.) Մածուցիկ դառն  
 հիւթ, կանսչ-դեղնագոյն, որ գոյանում է  
 լեարդում:  
**ՄԱՂԶԱԳՈՅՆ**, ան. Մաղձի գոյն ունե-  
 ցող:  
**ՄԱՂԶԱՐԵՂ**, գ. Դեղ, որ առաջ է բերում  
 աւելորդ մաղձի փսխում:  
**ՄԱՂԶԱԼԻՑ**, ան. Մաղձով լցուած:

**ՄԱՂԶԱԽԱՌՆ**, ան. Մաղձի հետ խառն-  
 ուած:  
**ՄԱՂԶԱՀԱՍ**, ան. Մաղձի համ ունեցող:  
**ՄԱՂԶԱՄԱԿԱՐԴԱԿ**, ան. Մաղձով  
 մակարդում:  
**ՄԱՂԶԱՅԻՆ**, ան. Մաղձին յատուկ:  
**ՄԱՂԶԱՊԱՐԿ**, Տ. Մաղձափամփուշտ:  
 Լեղապարկ:  
**ՄԱՂԶԱՏԱՐ**, ան. Մաղձը իր մէջ տա-  
 նող՝ կրող:  
**ՄԱՂԶԱՏԵՆՆ**, գ. Լեղապարկի բորբո-  
 քումից առաջացած տենդ:  
**ՄԱՂԶԱՏԵՍԱԿ**, ան. Մաղձի տեսակ,  
 մաղձի նմանող:  
**ՄԱՂԶԱՐՄԱՏ**, գ. (Բուս.) Մանուշակի  
 մի տեսակը:  
**ՄԱՂԶԱՓԱՍՓՈՒՇՏ**, գ. (Կազմախ.)  
 Փամփուշտ լեցումի մէջ: Մաշկապարկ,  
 լեղապարկ:  
**ՄԱՂԶԱՔԱՐ**, գ. (Ախտ.) Մաղձի քարա-  
 ցած մրուր:  
**ՄԱՂԶՐԱԿԱՆ**, ան. Մաղձը պարու-  
 նակող:  
**ՄԱՂԶՈՏ**, ան. Մաղձ պարունակող:  
**ՄԱՂԶՈՏ**, ան. Իւրոտ՝ կեղտոտ բուրդ:  
**ՄԱՂԶՈՏԱԲԱՐ**, մկ. Մաղձոտ կերպով:  
**ՄԱՂԶՈՏԵԼ**, չբ. Մաղձոտ դառնալ,  
 զայրանալ:  
**ՄԱՂԶՈՏՈՒԹԻՒՆ**, գ. Մաղձոտ լինելը,  
 դաժանութիւն, զայրացկոտութիւն:  
**ՄԱՂՄԱՂ**, գ. Մարմանդ կրակ:  
**ՄԱՂՄԱՂԵԼ**, (կրկն. Մաղելի), նբ. Շատ  
 կմ երկար մաղել:  
**ՄԱՂՄՂԵԼ**, չբ. Բարակ անձրեւ գալ:  
**ՄԱՂՈՑ**, գ. Մաղելու գործիք:  
**ՄԱՃԱԿԱԼՈՒԹԻՒՆ**, գ. Մաճկալ լի-  
 նելը:  
**ՄԱՃԱՌ**, գ. Ձկան մի տեսակ:  
**ՄԱՃԱՌ**, գ. Թթու դրած բազկի (կար-  
 միր) տակ:  
**ՄԱՃԱՍ**, գ. Ձարկերակ, բազկերակ:  
**ՄԱՃԱՐ**, գ. Երբ նոր նստած գինի:

**ՄԱՃԵՂԲԱՅՐ**, գ. Գուրթանի մաճին դըր-  
 ուած փոքր մաճը:  
**ՄԱՃԿԱԼ**, գ. Մաճը բռնող:  
**ՄԱՃԿԱԼԵՂԲԱՅՐ**, գ. Մաճկալին ըն-  
 կերակցող անձը:  
**ՄԱՃԿԱԼՈՒԹԻՒՆ**, գ. Մաճկալի գրադ-  
 մունքը: Մաճկալ լինելը:  
**ՄԱՄ**, գ. Մեծ մայր:  
**ՄԱՄԱ**, գ. Մայրիկ:  
**ՄԱՄԱՍՄԱԿ**, ան. Կեղծաւոր, քսու:  
**ՄԱՄԱՑ**, գ. Մարտուած կերակուրի  
 սննդարար մասը:  
**ՄԱՄԻԿ**, գ. Մամ, մեծ մայր:  
**ՄԱՄԻՐԱՆ**, գ. (Բուս.) Փոքր ծիծեռնա-  
 խոտ:  
**ՄԱՍԼԱԳԻՐ**, գ. (Տպգր.) Գրքի սեղմ  
 անունը, որ դրուած է ամէն մի մամուլի  
 առաջին երեսին:  
**ՄԱՍԼԱԿ**, գ. Փոքր մամուլ: Սեղմակ:  
**ՄԱՍԼԻՉ**, գ. ան. Մամլող գործիք, սարք:  
**ՄԱՄՆԱԳՈՑՆ**, ան. Մամուլի գոյն ու-  
 նեցող:  
**ՄԱՄՆԻ**, գ. (Բուս.) Կորիզապտուղների  
 կարգին պատկանող թուփ:  
**ՄԱՄՆՈՒՏ**, գ. Որտեղ մամխի թփեր  
 շատ են բուսած:  
**ՄԱՄՇԵԼ**, նբ. Ցած ձայնով եւ անհաս-  
 կանալի կերպով խօսել, խօսածը  
 չկարողանալ հասկացնել:  
**ՄԱՄՈՒԱՅ**, գ. Հարստութիւնը մարմ-  
 նացնող կուրք:  
**ՄԱՄՈՒԱՊԱՇՏ**, Մամոնայ պաշտող:  
**ՄԱՄՈՒՏ**, գ. (Կենդ.) Փղերի այժմ անհե-  
 տացած ցեղ, բրդոտ մարմնով:  
**ՄԱՄՈՒԼ**, գ. Զանազան համակարգի՝  
 ձեռքով կմ գործիքական ոյժով բանող  
 սարք: Այժմ տպագրական մամուլները:  
 Տպագրական մամուլով գրքեր  
 տպագրելը, տպագրութիւն: Լրագրու-  
 թիւն:  
**ՄԱՄՈՒԻՆ**, գ. Մամխի թփի պտուղը:  
**1. ՄԱՄՈՒԿ**, S. Սարդ:

**2. ՄԱՄՈՒԿ**, գ. Անորոշ տեսակի խոտ:  
**ՄԱՄՈՒՌ**, գ. (Բուս.) Գաղտնաբեղուն  
 բոյսերի հատուածին պատկանող ստո-  
 բին բոյսերի դաս:  
**ՄԱՄՈՒԱԳԱՆԳՈՒՐ**, ան. (բնաս.) Մա-  
 մուրի պէս գանգուր:  
**ՄԱՄՈՒԱԳՈՅՆ**, ան. Մամուրի գոյնի:  
**ՄԱՄՈՒԱԼՈՒ**, գ. (Բուս.) Իսլանդական  
 քարաքոս, ուղղաձիգ, թփաձեւ, մուգ  
 կանաչ կմ գորշ գոյնով, որ բուսնում է  
 հիւսիսային երկրներում:  
**ՄԱՄՈՒԱԿԱԼԵԼ**, չբ. Վրան մամուր  
 կապել:  
**ՄԱՄՈՒԱԿԵՐ**, ան. Մամուր ուտող:  
**ՄԱՄՈՒԱԿԵՐՊ**, ան. Մամուրի նմանող:  
**ՄԱՄՈՒԱՊԱՏ**, ան. Մամուրով  
 պատուած, մամուրակալած:  
**ՄԱՄՈՒԱՄԵՐ**, ան. Մամուր սիրող:  
**ՄԱՄՈՒՈՏ**, ան. Որտեղ մամուր շատ  
 կայ:  
**ՄԱՄՈՒՈՐ**, գ. (Կենդ.) Ծովերի մէջ ապ-  
 բող մի տեսակ շատ փոքր որդ:  
**ՄԱՄՈՒՌՏ**, գ. Մամուրով ծածկուած  
 տեղ:  
**ՄԱՅԵԼ**, չբ. Գառների եւ ոչխարների  
 բա-  
 նաչել:  
**ՄԱՅՐ**, գ. Կին, որ երեխայ է ծնել: Հկր.  
 Հայր: (Տպար.) Մետաղեայ կաղապար:  
 Պատճառ:  
**ՄԱՅՐԱԱՂՈԹՔ**, գ. Մայրական աղօթք:  
**ՄԱՅՐԱԲԱՐ**, մկ. Մօր նման, ինչպէս  
 մայր:  
**ՄԱՅՐԱԲԱՐԲԱՌ**, ան. Մայրենի լեզ-  
 ուով խօսող:  
**ՄԱՅՐԱԳԻՐ**, գ. Զուակ որդեգրած՝ իբր  
 մայր ճանաչած կին:  
**ՄԱՅՐԱԳՈՐՈՎ** } ան. Մայրական գո-  
**ՄԱՅՐԱԳՈՒԹ** } րով՝ մայրական գուրգուրանք ունեցող:  
**ՄԱՅՐԱՆԱՄ**, ան. Մօր նման խնամող:  
**ՄԱՅՐԱԾԻՆ**, ան. Մօրից, մահկանացու

<p>կնոջից ծնած:  <b>ՄԱՅՐԱԿԱՆ</b>, ան. Մօրը յատուկ, վերաբերեալ:  <b>ՄԱՅՐԱԿԵՐՏ</b>, ան. Մայր կմ մայրի փայտից շինած:  <b>ՄԱՅՐԱՀԱԻ</b>, գ. (Կենդ.) Բուն հաւերի կարգին պատկանող թռչուն:  <b>ՄԱՅՐԱՀՈՂ</b>, գ. Երկրի հիմնական մասը, մայր հողը:  <b>ՄԱՅՐԱՄԱՍԾ</b>, ան. Գետնի վրայ կպած:  <b>ՄԱՅՐԱՄԱՀԻԿ</b>, ան. Մայրը մեռած:  <b>ՄԱՅՐԱՍՈՒՏ</b>, գ. 1. Արեգակի մայր մտնելը: 2. Վախճան, գոյութեան վերջին շրջան:  <b>ՄԱՅՐԱՆԱԼ</b>, չբ. Մայր դառնալ, զուակ ծնել:  <b>ՄԱՅՐԱՊԵՏ</b>, գ. (Եկեղ.) Գլխաւոր մայր, կուսանաց վանքի մեծաւորուհին:  <b>ՄԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ</b>, ան. Մայրապետին վերաբերող:  <b>ՄԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Մայրապետ լինելը:  <b>ՄԱՅՐԱՍԵՐ</b>, ան. Իր մօրը սիրող:  <b>ՄԱՅՐԱՍԻՐՏ</b>, ան. Մօր նման սիրտ ունեցող:  <b>ՄԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Մայրասէր լինելը:  <b>ՄԱՅՐԱՍՊԱՆ</b>, ան. գ. Իր մօրն սպանող:  <b>ՄԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Մայրասպան լինելը:  <b>ՄԱՅՐԱՎԱՆԵՅԻ</b>, ան. Մայրավանքի միաբան:  <b>ՄԱՅՐԱՎԱՆՔ</b>, գ. Գլխաւոր վանք:  <b>ՄԱՅՐԱՍԱՏ</b>, գ. Մօր մայրը:  <b>ՄԱՅՐԱՑՆԵԼ</b>, գ. Մայր դարձնել:  <b>ՄԱՅՐԱՔԱՂԱՔ</b>, գ. Մայր կմ գլխաւոր քաղաք: Պետութեան այն քաղաքը, որտեղ գտնուում է այդ պետութեան կենտրոնական իշխանութիւնը:  <b>ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ</b>, ան. Մայրաքաղաքին յատուկ:</p>	<p><b>ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ</b>, գ. Մայրաքաղաքացի լինելը:  <b>ՄԱՅՐԵՀԱԻ</b>, գ. (Կենդ.) Մայրահաւերի ցեղին պատկանող թռչուն:  <b>ՄԱՅՐԵՆԻ</b>, ան. Մօրը յատուկ:  <b>ՄԱՅՐԻ</b>, գ. (Բուս.) Եղեւնիների կարգին պատկանող ծառ:  <b>ՄԱՅՐԻԿ</b>, գ. Մայր, սիրելի մայր:  <b>ՄԱՅՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Նախնական ժամանակի տոհմային կարգ:  <b>ՄԱՅՐՀԱՇԻԻ</b>, Տ. Մայր մատեան:  <b>ՄԱՅՐՈՒՂԱՄԵՐՁ</b>, ան. Մայրուղուն մօտիկ:  <b>ՄԱՅՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Մայր լինելը:  <b>ՄԱՅՐՐՈՒՆԱԿ</b>, ան. Մայրական:  <b>ՄԱՆ</b>, գ. Պտոյտ: Շրջան:  <b>ՄԱՆԱՆԱԳՈՐՑ</b>, գ. Մանուածք կատարող:  <b>ՄԱՆԱՆԱԳՈՐՑԱԿԱՆ</b>, ան. Մանուածագործին վերաբերող:  <b>ՄԱՆԱՅ</b>, գ. Փորձանք, դժբախտութիւն:  <b>ՄԱՆԱՍՅ</b>, գ. 1. (Բուս.) Շաքարանման նիւթ: 2. Ուտելու շատ քիչ քանակութիւն:  <b>ՄԱՆԱՆԵԽ</b> } գ. (Բուս.) Խաչաբերների կարգին պատկանող բոյս:  <b>ՄԱՆԱՎՈՒՃ</b>, գ. Բեւեկնի ծառի պտուղը:  <b>ՄԱՆԱՐԱՆ</b>, գ. Գործարան, որտեղ թել են մանուս:  <b>ՄԱՆԱԻԱՆՆ</b>, մկ. շղ. Համեմատութիւնների մէջ՝ ցոյց է տալիս վերջինի առաւելութիւնը: Յատկապէս:  <b>ՄԱՆԳԱՂ</b>, գ. Կեռ, սրաբերան երկայթէ գործիք: Խոտը հնձելու համար:  <b>ՄԱՆԳԱՂԱԲԵՐԱՆ</b>, գ. Մանգաղի բերանը:  <b>ՄԱՆԳԱՂԱՁԵԻ</b>, ան. Մանգաղի ձեւ ունեցող, կեռ:  <b>ՄԱՆԳԱՂ(Ա)ԻՈՐ</b>, ան. Մանգաղ ունեցող:  <b>ՄԱՆԳԱՂԱՔԱՂ</b>, ան. Մանգաղով քա-</p>
---	--

<p>դած: Հկո. Գերանդուարադ:  <b>ՄԱՆԳԱՂԵԼ</b>, նբ. Մանգաղով հնձել:  <b>ՄԱՆԳԱՆԷՉ</b>, (Հանք.) Պարզ մետաղա-  կան մարմին:  <b>ՄԱՆԳԱՌ</b>, գ. Խնորեղէն ուտելիք:  <b>ՄԱՆԴԱԼ</b>, գ. Անորոշ տեսակի բոյս:  <b>1. ՄԱՆԴԱՐԻՆ</b>, գ. Կայսերական Չի-  նաստանում՝ բարձր պետական պաշ-  տօնեայ:  <b>2. ՄԱՆԴԱՐԻՆ</b>, գ. Նարնջի մի տեսակը:  <b>ՄԱՆԵԿԱՁԵԻ</b>, ան. Մանեկի ձեռ ունե-  ցող:  <b>ՄԱՆԵԿԱՁԵԻՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանեկաձեռ  լինելը:  <b>ՄԱՆԵԿԱԽՈՐ</b>, ան. Մանեակ ունեցող:  <b>ՄԱՆԷԹ</b>, գ. Ռուսական դրամ:  <b>ՄԱՆԷԹԱՆՈՅ</b>, ան. Մի մանեթ արժեցող:  <b>1. ՄԱՆԻ</b>, գ. Անորոշ տեսակի թուփ:  <b>2. ՄԱՆԻ</b>, գ. Հայկական ամիսների  տասնվեցերորդ օրը:  <b>ՄԱՆԻՔԵՂ</b>, գ. (Բուս.) Բաժակաբերների  կարգին պատկանող ծառ:  <b>ՄԱՆԻՔԵՑԻ</b>, ան. գ. Մանի աղանդա-  ւորին հետեւող:  <b>ՄԱՆԻՔԷՍԿԱՆ</b>, ան. Մանիի աղանդի  վերաբերեալ:  <b>ՄԱՆԾԱԻԵԼ</b>, ան. Ապուշ, դմբօ:  <b>ՄԱՆԿ</b>, գ. Խորամանկություն, նենգու-  թիւն:  <b>ՄԱՆԿԱԲԱՆ</b>, ան. գ. Մանկաբանու-  թեան մասնագէտ:  <b>ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ</b>, ան. Մանկաբանու-  թեան յատուկ:  <b>ՄԱՆԿԱԲԱՐ</b>, մկ. Մանուկի՝ երեխայի  պէս:  <b>ՄԱՆԿԱԲԱՐՉ</b>, ան. գ. Ծննդաբեր կի-  ներու բժիշկ: Դայեակ:  <b>ՄԱՆԿԱԲԱՐՉԱԿԱՆ</b>, ան. Մանկաբար-  ձին եւ մանկաբարձութեան յատուկ:  <b>ՄԱՆԿԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանկաբար-  ձ լինելը:</p>	<p><b>ՄԱՆԿԱԲԱՐՉՈՒՇԻ</b>, գ. Մանկաբարձ  կին:  <b>ՄԱՆԿԱԲԱՐՈՅ</b>, ան. Մանկական բարք  ու բնատրոթիւն ունեցող:  <b>ՄԱՆԿԱԲԱՐՈՅԱԿԱՆ</b>, ան. Մանկական  բարքին յատուկ:  <b>ՄԱՆԿԱԲԱՐՔ</b>, գ. Մանկական բարք:  <b>ՄԱՆԿԱԲՈՅԾ</b>, ան. Երեխայ սնուցանող:  <b>ՄԱՆԿԱԳՈՂ</b>, ան. Երեխայ գողացող:  <b>ՄԱՆԿԱԴԵՍՔ</b>, գ. Երեխայի դէմք:  <b>ՄԱՆԿԱԾՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Երեխաներ  ծնելը:  <b>ՄԱՆԿԱԾՈՒ</b>, ան. գ. Մանուկին ման  ածող:  <b>ՄԱՆԿԱԿԱՆ</b>, ան. Մանուկին՝ երեխա-  յին յատուկ, վերաբերեալ, տղայական:  <b>ՄԱՆԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանկական  լինելը:  <b>ՄԱՆԿԱԿՈՏՈՐ</b>, ան. Երեխաներին կո-  տորող:  <b>ՄԱՆԿԱԿՈՐՈՅՍ</b>, ան. Երեխային կոր-  ցրած:  <b>ՄԱՆԿԱԿԻԹՈՒԹԻՒՆ</b>, S. Մանկավար-  ժութիւն:  <b>ՄԱՆԿԱՀԱՍԱԿ</b>, ան. Մանկական հա-  սակ ունեցող:  <b>ՄԱՆԿԱՀՐԱՊԱՐԱԿ</b>, գ. Դաստիարակ-  չական հաստատութիւն՝ նախապրո-  ցական եւ դպրոցական հասակի երե-  խա-  ների համար:  <b>ՄԱՆԿԱՄԱՐԴ</b>, ան. Երիտասարդ, դե-  ռատի:  <b>ՄԱՆԿԱՄԻՏ</b>, ան. Տղայամիտ, երեխա-  յամիտ:  <b>ՄԱՆԿԱՄՍՈՒՐ</b>, գ. Հիմնարկ, որի մէջ  ծծկեր եւ նախադպրոցական տարիքի  երեխաներն ստանում են սնունդ եւ  խնամք:  <b>ՄԱՆԿԱՄՏԱԿԱՆ</b>, ան. Մանկամիտին  յատուկ:</p>
---	---

**ՄԱՆԿԱՍՏՈՒԹԻՒՆ**, գ. Մանկավիտ լինելը:  
**ՄԱՆԿԱՆԱԼ**, չբ. Մանկություն ստանալ:  
**ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ**, գ. Երեխաների պարտեզ:  
**ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՇԻ**, գ. Մանկապարտեզի վարիչ կին:  
**ՄԱՆԿԱՍԷՐ**, ած. (Բր) Երեխաներ սիրող:  
**ՄԱՆԿԱՍԻՐԱԲԱՐ**, մկ. Մանկասերի նման:  
**ՄԱՆԿԱՍԻՐԱԿԱՆ**, ած. Մանկասերին վերաբերող:  
**ՄԱՆԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ**, գ. Մանկասեր լինելը:  
**ՄԱՆԿԱՍՈՒԳ**, ած. Մանկան նման սզացող:  
**ՄԱՆԿԱՍՊԱՆ**, ած. Երեխաներ սպանող:  
**ՄԱՆԿԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Մանուկներ սպանելը:  
**ՄԱՆԿԱՎԱՐԺ**, ած. գ. Երեխաներին վարժեցնող, դաստիարակող:  
**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ**, ած. Մանկավարժին ու մանկավարժության յատուկ:  
**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՑ**, գ. Դպրոց կմ դպրոցի բաժանունը, որտեղ սովորեցնում են մանկավարժություն:  
**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ**, գ. Երեխաներին վարժեցնելը, կրթելը:  
**ՄԱՆԿԱՎԱՐԺՕՐԷՆ**, մկ. Մանկավարժական կանոնների համաձայն:  
**ՄԱՆԿԱՎԱՐԻ**, մկ. Մանկան նման:  
**ՄԱՆԿԱՍԱԾ**, ած. Փոքր երեխաներին խնամող:  
**ՄԱՆԿԱՍԱԾՈՒԹԻՒՆ**, գ. Մանկատած լինելը:  
**ՄԱՆԿԱՍԻ**, ած. Մանկահասակ, դեռահասակ:  
**ՄԱՆԿԱՍԷՐ**, ած. Երեխայ ունեցող:  
**ՄԱՆԿԵՐԱՍ**, գ. Երեխաների խումբ:  
**ՄԱՆԿԻԿ**, գ. Շատ փոքր երեխայ:

**ՄԱՆԿԼԱԻ**, գ. Ծեծելու գործիք, լախտ, զաւազան:  
**ՄԱՆԿԼԱԻԿ**, գ. 1. Ազնուական տոհմից երիտասարդ, սպասաւորում էր իշխանաւորներին եւ ուղեկցում էր նրանց շքերթի: 2. Փխբ. Մէկի տրամադրութեան տակ գտնուող երիտասարդ: Կէջեփոկով զինուած սպասաւոր: Կամակատար, խամաճիկ:  
**ՄԱՆԿՈՒՆԱԿ**, ած. Մանկավիտ:  
**ՄԱՆԿՈՒԹ**, մկ. Մանկութեան ժամանակ:  
**ՄԱՆԿՈՒԹԻՒՆ**, գ. Մանուկ՝ երեխայ լինելը:  
**ՄԱՆԿՈՒՐՏՈՒՆ**, բ. Մանկուրտ դարձուել, մանկուրտացուել, բռնի կերպով յիշողութիւնից զրկուել:  
**ՄԱՆԿՏԻ**, գ. Մանուկների՝ երեխաների խումբ:  
**ՄԱՆՁՐԵՆ**, չբ. Այրուել:  
**ՄԱՆՇՈՒՐ**, գ. Հրովարտակ:  
**ՄԱՆՈՂԱԿ**, գ. Մարդ:  
**ՄԱՆՈՒԱԾ**, գ. Մանելը՝ մանուելը:  
**ՄԱՆՈՒԱԾԱՊԱՏ**, ած. Մանուման եկող, պտոյտներ անող:  
**ՄԱՆՈՒԱԾՔ**, գ. Մանուածի յատկութիւնը:  
**ՄԱՆՈՒԿ**, գ. Երեխայ:  
**ՄԱՆՈՒՇԱԿ**, գ. (Բուս.) Սեռական անուն:  
**ՄԱՆՈՒՇԱԿԱՂՈՏ**, ած. Մանուշակի հոտ ունեցող:  
**ՄԱՆՐ**, ած. Փոքր ծաւալ ունեցող: Հկր. Խոշոր: Մանրամասն:  
**ՄԱՆՐԱԲԵԿՈՐ**, գ. Մանր բեկոր:  
**ՄԱՆՐԱԲՁԻՁ**, ած. Մանր բջիջներ ունեցող:  
**ՄԱՆՐԱԲՈՒՐ**, ած. Կարճ բրդով:  
**ՄԱՆՐԱԳԻՐ**, ած. Մանր գրերով զորուած:  
**ՄԱՆՐԱԳՈՅՆ**, ած. Աւելի մանր:  
**ՄԱՆՐԱԳՈՐԾ**, գ. Ճարտարարուեստ

<p>գործ:</p> <p><b>ՄԱՆՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանրագործելը:</p> <p><b>ՄԱՆՐԱԴՐՈՒՄ</b>, գ. (Բուս.) Դդումի մի տեսակ:</p> <p><b>ՄԱՆՐԱԴՊ</b>, գ. Փոքր, աննշան դեպք:</p> <p><b>ՄԱՆՐԱԴԵՏ</b> } գ. (Ֆիզ.) Տեսաբանական գործիք: Մանրացոյց աչքին անտեսանելի: Բջիջի, իրի ցոյց տուող գործիք:</p> <p><b>ՄԱՆՐԱԴԻՏԱԿԱՑԻՆ</b>, ած. Մանրադիտակին յատուկ, վերաբերելալ:</p> <p><b>ՄԱՆՐԱԴՐԱՄ</b>, գ. Մանր դրամ:</p> <p><b>ՄԱՆՐԱԶԻՆ</b>, ած. Մանր՝ նուրբ զննութեամբ կատարուող, մանրամասն:</p> <p><b>ՄԱՆՐԱԹԵԼ</b>, գ. (Բուս.) Տ. Առէջ:</p> <p><b>ՄԱՆՐԱԼՈՒՐ</b>, գ. Մանր լուր:</p> <p><b>ՄԱՆՐԱԽԱՆՈՒԹ</b>, գ. 1. Մանր իրերի վաճառքի խանութ: 2. Փոքր խանութ, կրպակ:</p> <p><b>ՄԱՆՐԱԽԻՃ</b>, գ. Մանր խիճ:</p> <p><b>ՄԱՆՐԱԽԱՄ</b>, ած. Խնամքով՝ մանրութեան հաշուառումով:</p> <p><b>ՄԱՆՐԱԽՆՆԻՐ</b>, ած. Մանրութեան, չնչին բաների կարեւորութիւն տուող:</p> <p><b>ՄԱՆՐԱԾԱԽՍ</b>, ած. գ. Մանր-մունր իրեր ծախող:</p> <p><b>ՄԱՆՐԱԾԱԿ</b>, ած. Մանր ծակեր ունեցող:</p> <p><b>ՄԱՆՐԱԾԱԿԻԿ</b>, ած. Մանր ծաղիկներ ունեցող:</p> <p><b>ՄԱՆՐԱԿԵՐՏ</b>, ած. գ. Փոքր չափերով շինուածք:</p> <p><b>ՄԱՆՐԱԿԾՈՒ</b>, ած. Մանր խայթուածքներ պատճառող:</p> <p><b>ՄԱՆՐԱԿՆՃԻՈՒ</b>, ած. Մանր կնճիռներով:</p> <p><b>ՄԱՆՐԱԿՈՐԻՉ</b>, ած. Մանր կորիզ ունեցող:</p> <p><b>ՄԱՆՐԱԿՐԿԻՏ</b>, ած. մկ. Մանր՝ մանրամասն կրկտող՝ քննող:</p>	<p><b>ՄԱՆՐԱԿՐԿՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանրակրկիտ լինելը:</p> <p><b>ՄԱՆՐԱՀԱՄԱԿ</b>, ած. Տարիքով փոքր (երեխայ):</p> <p><b>ՄԱՆՐԱՀԱՄԿ</b>, ած. Փոքր՝ մանր հասկեր ունեցող:</p> <p><b>ՄԱՆՐԱՀԱՏ</b>, ած. Մանր հատիկներ (կաթիլներ) ունեցող:</p> <p><b>ՄԱՆՐԱՅԱՏԱԿ</b>, գ. Մանր ողորկ տախտակներից յատակ (պարկետ):</p> <p><b>ՄԱՆՐԱՀԻՒՍԱԾ</b>, ած. Մանր մատերից հիւսած:</p> <p><b>ՄԱՆՐԱԶԱՅՆ</b>, գ. (Ֆիզ.) Գործիք, որ ուժեղացնում է նուազ ձայնը:</p> <p><b>ՄԱՆՐԱԶԱԽԱՐ</b>, գ. Մանր կոտորած ձաւար:</p> <p><b>ՄԱՆՐԱՃՃԻ</b>, գ. Մանր ճիճու:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՂ</b>, ած. Մանր մաղած, բարակ:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՍՆ</b>, ած. Մանր մատերից՝ կտորներից յօրինուած:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՍՆԱԲԱՐ</b>, մկ. Մանրամասն կերպով:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՍՆԵԼ</b>, նբ. Մանրամասն խօսել:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանրամասն լինելը:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՍՆՕՐԵՆ</b>, Տ. Մանրամասնաբար:</p> <p><b>ՄԱՆՐԱՄԱՐՄԻՆ</b>, ած. Փոքրամարմին:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԱԼ</b>, բ. Փոքրանալ, մանր դանալ:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԱԽՇ</b>, ած. Մանր նախշեր ունեցող:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԿԱՏ</b>, ած. Մանրախնդիր:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԿԱՐ</b>, գ. Փոքր դիրքով նկար:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԿԱՐԱԶԱՐԴ</b>, ած. Մանրանկարներով զարդարուած:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ</b>, գ. Մանրանկարներ նկարող:</p> <p><b>ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ</b>, գ. Մանրա-</p>
--	---

նըկարներով ձեռագիրները նկարա-  
գարդելու արուեստը:  
**ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒՂԻ**, գ. Կին մանրա-  
նըկարիչ:  
**ՄԱՆՐԱՇԱՂ**, ած. Մանր կաթիլներով  
տեղացող:  
**ՄԱՆՐԱՇԵՐՏ**, ած. Մանր շերտեր ունե-  
ցող:  
**ՄԱՆՐԱՇԽԱՐՀ**, գ. Աշխարհ փոքր չա-  
փով:  
**ՄԱՆՐԱՈՒԼՈՒՆՔ**, գ. Մանր ուլունք:  
**ՄԱՆՐԱՉԱՓ**, գ. Գործիք, որով չափում  
են շատ փոքր տարածությունները:  
**ՄԱՆՐԱՊԱՍՏԱՈՒ**, ած. գ. Փոքր պաս-  
տառ ունեցող:  
**ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ**, ած. մկ. Մանրա-  
մասն պատմող:  
**ՄԱՆՐԱՊԱՐ**, գ. Երոպական ճաշակով  
մի պար:  
**ՄԱՆՐԱՊՃԵՂ**, ած. Մանր պճեղներ ու-  
նեցող:  
**ՄԱՆՐԱՊՏՈՒՂ**, ած. Մանր պտուղներ  
ունեցող:  
**ՄԱՆՐԱՌԵՏՐԱԿԱՆ**, ած. գ. Մանրա-  
ծախս առետուրին վերաբերող, մանր  
առետրով զբաղուող անձ:  
**ՄԱՆՐԱՍԵՐՄ**, ած. Մանր սերմեր ունե-  
ցող:  
**ՄԱՆՐԱՎԱՃԱՈՒ**, ած. գ. Մանր քանա-  
կույթեամբ ծախող:  
**ՄԱՆՐԱՎԱՃԱՈՒԹԻՒՆ**, գ. Մանրա-  
վաճառ լինելը:  
**ՄԱՆՐԱՎԱՐՈՒՆԳ**, գ. (Բուս.) Վարուն-  
գի մի տեսակը:  
**ՄԱՆՐԱՎԷՊ**, գ. Փոքր վեպ՝ պատմ-  
ուածք:  
**ՄԱՆՐԱՏԱՈՒ**, ած. Մանր տառերով տպ-  
ուած:  
**ՄԱՆՐԱՏԵՐԵԻ**, ած. Մանր տերեւ ունե-  
ցող:  
**ՄԱՆՐԱՅՈՅՑ**, գ. Մանրադիտակ:  
**ՄԱՆՐԱՅՕՂ**, ած. Մանր՝ բարակ ցող:

**ՄԱՆՐԱՔԱՅԼ**, մկ. Փոքր՝ մանր քայլե-  
րով:  
**ՄԱՆՐԱՔԱՅԼԵԼ**, բ. Մանր քայլերով  
քայլել:  
**ՄԱՆՐԱՔԱՅԼՈՂ**, գ. Մանր քայլերով  
քայլող:  
**ՄԱՆՐԱՔԱՆԴԱԿ**, ած. Մանր՝ նուրբ  
զծերով քանդակուած:  
**ՄԱՆՐԱՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ.  
Մանրաքանդակի արուեստ:  
**ՄԱՆՐԱՔԻՍ**, ած. Մանր քիստեր ունե-  
ցող:  
**ՄԱՆՐԱՔԻՆ**, Մանրագին:  
**ՄԱՆՐԵԼ**, նբ. Մանր դարձնել, մանր  
կտորների վերածել:  
**ՄԱՆՐԵԼԻ**, ած. Ինչ որ կարելի է կմ  
պէտք է մանրել:  
**ՄԱՆՐՈԳԻ**, ած. Մանր հոգի ունեցող:  
**ՄԱՆՐԿԵԿ**, ած. Մի քիչ աւելի մանր:  
**ՄԱՆՐՄԱՆ**, ած. Մանրուած, ջարդուած:  
**ՄԱՆՐԵԿԿՐՈՂ**, գ. (Արեւմտ.) Վայրկ-  
եան, երկվայրկեան:  
**ՄԱՆՐԵ**, գ. Միկրոբ: Մակաւայթի բջի-  
ջով ախտավարակ մարմին:  
**ՄԱՆՐԵԱԲԱՆ**, գ. Մանրէաբանութեան  
մասնագէտ:  
**ՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Կենսաբա-  
նութեան բաժին:  
**ՄԱՆՐԵԱԶԵՐՄԵԼ**, բ. Մանրէները ոչըն-  
չացնել:  
**ՄԱՆՐՈՆ**, գ. Մանրուք:  
**ՄԱՆՐՈԶԻԼ**, գ. Մանր ոջիլ:  
**ՄԱՆՐՈՒԱԾՈՅ**, ած. Մանրած:  
**ՄԱՆՐՈՒԹԻՒՆ**, գ. Մանր լինելը:  
**ՄԱՆՐՈՒՔ**, գ. Մանր դրամ: Չնչին բան:  
**ՄԱՆՐՈՒՔԱՅԻՆ**, ած. Մանրուք պա-  
րունակող:  
**ՄԱՇ**, գ. (Բուս.) Թիթեռնաձաղիկների  
կարգին պատկանող՝ պատատուող ծո-  
վագոյն կանաչ բոյս:  
**ՄԱՇ**, գ. Մաշուած լինելը:  
**ՄԱՇԱԾՈՅ**, ած. Մաշուող:



**ՄԱՇԱԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ**, Մարքի, գործիքի դիմացկունությունը մաշման նկատմամբ:  
**ՄԱՇԱՌ**, գ. Սղոց:  
**ՄԱՇԱՌԵԼ**, նբ. Մաշառով սղոցել:  
**ՄԱՇԵԼ**, նբ. Երկար գործունեությամբ հնացնել: Սպառել, ուտել, ծախել:  
**ՄԱՇԻԿ**, գ. Սուր քթով, բարձր կրունկով ոտնաման:  
**ՄԱՇԻԿԱՒՈՐ**, ած. Մաշիկ հագած:  
**ՄԱՇԽ**, գ. (Բուս.) Անորոշ տեսակի բանջար:  
**ՄԱՇ**, գ. Կենդանիների մորթ, կաշի:  
**ՄԱՇԿ**, գ. Մարդու մորթ:  
**ՄԱՇԿԱԲԱՆ**, գ. (Բժշկ.) Մաշկային հիւանդություններ բուժող բժիշկ:  
**ՄԱՇԿԱԲԱՑԺ**, գ. Մաշկային հիւանդությունների բժիշկ:  
**ՄԱՇԿԱԳԷՏ**, գ. Մաշկաբան:  
**ՄԱՇԿԱԳՈՐԾ**, ած. Մաշկից շինում՝ պատրաստում:  
**ՄԱՇԿԱԿԱՐ**, գ. Մաշիկ կարող:  
**ՄԱՇԿԱԿԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Մաշկակար լինելը:  
**ՄԱՇԿԱՀԱՆ**, ած. Մաշկը հանած:  
**ՄԱՇԿԱՀԱՆԴԵՐՁ**, ած. Մաշկեղէն զգեստ հագած:  
**ՄԱՇԿԱՅԻՆ**, ած. Մաշկին յատուկ:  
**ՄԱՇԿԱՊԱՏ**, ած. Մաշկով պատած:  
**ՄԱՇԿԱՎԱՃԱՌ**, գ. Մաշկ վաճառող:  
**ՄԱՇԿԵԱԿ**, գ. Մաշկից, մանաւանդ ոչխարի մորթից կարած զգեստ:  
**ՄԱՇԿԵԼ**, նբ. Կենդանիների մորթը վրայից հանել, քերթել: Փոխ. Պլտկել:  
**ՄԱՇԿԵՂԷՆ**, ած. Մաշկից պատրաստած:  
**ՄԱՇՄԳԻ**, գ. Շագանակի ծառը եւ նրա փայտը:  
**ՄԱՇՈՒԱԾՈՒԹԻՒՆ**, գ. Մաշում՝ հնացած լինելը:  
**ՄԱՇՈՒԱԾՔ**, գ. Մաշելու կմ մաշուելու կերպը:

**ՄԱՇՈՒԿ**, ած. Մաշում՝ հնացած:  
**ՄԱՇՏԵԼ**, չբ. Մազերը թափուել: Քերծել:  
**ՄԱՇՏՈՑ**, գ. Հաւանօրէն՝ մազերը քերելու՝ քերծելու, մաշտելու գործիք:  
**ՄԱՇՏՈՑ**, գ. (Եկեղ.) Հայոց եկեղեցու ծխարան:  
**ՄԱՇՏՈՑԱՊԱՏՈՒՄ**, գ. Մաշտոցի մասին երկեր:  
**ՄԱՌԻՁԷՐ**, գ. Կատարելագործում համակարգի հրազէն գործիք (ատրճանակ կմ հրացան):  
**ՄԱՋԱՌ** } գ. Ֆին-ուգորեան ցեղին  
**ՄԱՋԱՌԱՑԻ** } գ. պատկանող ժողովուրդ:  
**1. ՄԱՌ**, գ. Տուցամատի վրայ բացում վերք:  
**2. ՄԱՌ**, գ. Գինու կմ քացախի մայրը: Երեսը ծածկող խաւ:  
**3. ՄԱՌ**, գ. (Կազմախ.) Նուրբ եւ մաճուցիկ հիւսումը:  
**ՄԱՌԱԽԼԱՂԷՄ**, ած. Մոայլ, մոայլում:  
**ՄԱՌԱԽԼԱԾԱԾԿ**, ած. Մառախուղով ծածկում:  
**ՄԱՌԱԽԼԱՄԱԾ**, ած. Մշուշապատ, միզամած:  
**ՄԱՌԱԽԼԱՁԵԻ**, ած. Մառախուղի ձեւով:  
**ՄԱՌԱԽԼԱՊԱՏ**, ած. Մառախուղով պատած:  
**ՄԱՌԱԽԼԱՊԱՏ**, ած. Միզամած:  
**ՄԱՌԱԽԼԱՅԻՆ**, ած. Մառախուղով պատած:  
**ՄԱՌԱԽԼԱՊԱՏԵԼ**, չբ. Մառախլապատ լինել:  
**ՄԱՌԱԽՈՒՂ**, գ. Փոխ. Մշուշ, մէգ:  
**ՄԱՌԱՆ**, գ. Նկուղ, որտեղ գինի են պահում:  
**ՄԱՌԱՆԱՊԱՆ** } գ. Մառանի վերակացու, գինու պահեստի կառավարիչ:  
**ՄԱՌԵՆ**, գ. Հրատ մոլորակը:  
**ՄԱՌ-ՄՈՒՌԸ ԿԱԽԵԼ**, Մոռութները

կախել. *Քիթը կախել:*

**ՄԱՌՆ**, գ. (Հանք.) *Կուսիստան կրաքար:*

**ՄԱՍ**, գ. *Մի ամբողջի որելե կտոր՝*

*նրանից բաժանուած կմ չբաժանուած:*

*Գրուածքի կմ ճառի որելե հատուած:*

*Բաժանմունք: (Եկեղ.) Հաղորդութիւն:*

*Օրհնուած հաց:*

**ՄԱՍ**, գ. *Փափուկ կաշուց կիսակօշիկ*

*առանց կրնկի:*

**ՄԱՍԱՍԲ**, ւծ. մկ. *Մասնակի, մի մա-*

*սով:*

**ՄԱՍԻՆ**, Նխոր. *Վերաբերմամբ:*

**ՄԱՍՆԱԲԱԺԻՆ**, գ. *Մաս, բաժին:*

**ՄԱՍՆԱԲԱՐ**, մկ. *Մասամբ:*

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐԱՋՏՈՒՄ**,

*Մարդու պիտանիութեան որոշումն*

*ըստ գիտականօրէն սահմանուած չա-*

*փանիշների:*

**ՄԱՍՆԱԳԻՏ**, ւծ. գ. *Նա որ նուիրուած է*

*մի առարկայի կմ առարկայի մի ճիւղի*

*մանրամասն ուսումնասիրութեան:*

**ՄԱՍՆԱԳԻՏԱԲԱՐ**, մկ. *Իբրեւ մասնա-*

*գէտ:*

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**, ւծ. *Մասնագէտին*

*եւ մասնագիտութեան յատուկ:*

**ՄԱՍՆԱԳԻՏԱՆԱԼ**, չք. *Մասնագէտ*

*դառնալ:*

**ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒԱԾՈՒԹԻՒՆ**, գ.

*Մասնագիտացուած լինելը:*

**ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ**, գ. *Մասնագիտա-*

*նալը, մասնագիտութեան մէջ խորա-*

*նալը:*

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**, գ. *Մասնագէտ*

*լինելը:*

**ՄԱՍՆԱԳԻՏՕՐԵՆ**, Տ. *Մասնագիտա-*

*բար:*

**ՄԱՍՆԱՂԵՊ**, գ. *Մասնաւոր դիպուած,*

*միջադէպ:*

**ՄԱՍՆԱԺՈՂՈՎ**, գ. *Մի ժողովի կողմից*

*ընտրուած սակաւաթիւ մարդկանց*

*խումբ՝ ժողով:*

**ՄԱՍՆԱԿԱՆ**, ւծ. *Անհատական, եզա-*

*կան:*

**ՄԱՍՆԱԿԻ**, ւծ. *Մի մասի վերաբերեալ,*

*մասնաւոր:*

**ՄԱՍՆԱԿԻՕՐԵՆ**, մկ. *Մասնակի կեր-*

*պով:*

**ՄԱՍՆԱԿԻՑ**, ւծ. գ. *Ուրիշի հետ միա-*

*սին մաս՝ բաժին ունեցող: Գործակից:*

**ՄԱՍՆԱԿՑԵԼ**, չք. *Մասնակից լինել:*

*Գործի ընկեր լինել:*

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Մասնակից*

*լինելը:*

**ՄԱՍՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆ**, գ. *Մասնաւոր*

*յատկութիւն:*

**ՄԱՍՆԱՃԻՂ**, գ. *Մի գիտութեան կմ*

*գործի առանձին ճիւղը:*

**ՄԱՍՆԱՇԵՆՔ**, գ. *Մասնագիտական*

*առանձին շէնք:*

**ՄԱՍՆԱՌՈՒ**, ւծ. *Մաս առնող:*

**ՄԱՍՆԱՎՃԱՐ**, գ. *Մաս-մաս վճարող*

*գումար ի հաշիւ պարտքի:*

**ՄԱՍՆԱՏԵԼ**, նք. *Մաս-մաս անել:*

*Կտրտել:*

**ՄԱՍՆԱՏԻՐԱԿԱՆ**, ւծ. *Մասնաւոր*

*անհատի սեփականութիւն կազմող:*

**ՄԱՍՆԱՏՈՒՓ**, գ. (Եկեղ.) *Փոքրիկ ար-*

*ծաթէ կմ ոսկէ տուփ, որի մէջ քահանան*

*պահում է հաղորդութեան մասը:*

**ՄԱՍՆԱԻՈՐ**, ւծ. *Մի մաս կազմող: Քիչ,*

*աննշան: Հկր. Պետական: Յատուկ:*

*Առանձնակի, կատարուող: Հկր. Պաշ-*

*տօնական: Առանձին մէկը:*

**ՄԱՍՆԱԻՈՐԱԲԱՐ**, մկ. *Մասնաւոր չա-*

*փով, մասամբ:*

**ՄԱՍՆԱԻՈՐԱՊԷՍ**, մկ. *Յատկապէս:*

**ՄԱՍՆԱԻՈՐԵԼ**, նք. *Ընդհանուրից իջնել*

*մասնաւորին:*

**ՄԱՍՆԵԼ**, նք. *Մաս-մաս բաժանել:*

**ՄԱՍՆԻԿ**, գ. *Փոքր մաս, փոքրիկ կտոր:*

*(Քրկն.) Փոքր բառ կմ բառամաս:*

**ՄԱՍՆԻԿԱԻՈՐ**, ւծ. *Մասնիկ ունեցող,*

*մասնիկներից կազմուած:*

**ՄԱՍՆԿԱԿԱՆ**, Տ. *Սովեկուլային: Մաս-*

նիկին վերաբերող:

**ՄԱՍՇՏԱԲ**, գ. Քարտէսի կմ յատակագծի վրայ գծի յարաբերությունը իրականի հետ: Չափանիշ, չափ, աստիճան:

**ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ**, ած. Մասշտաբին յատուկ:

**ՄԱՍՇՏԱԲԱՅՆՕՐԵՆ**, մկ. Մասշտաբային կերպով:

**ՄԱՍՇՏԱԲԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. Մասշտաբային լինելը:

**ՄԱՍՈՒՆՔ**, (Եկեղ.) գ. Մասեր, նշխարներ:

**ՄԱՍՈՒՐ**, գ. Մասրենիի կարմրատուն թթուաշ պտուղը:

**ՄԱՍՍԱԿՈՂՄ**, գ. Մասիսի կողմ:

**ՄԱՍՍԱԿ**, Ծամուն:

**ՄԱՍՍԱՍԵՐ**, գ. Խոշոր ասեղ, հերիւն:

**ՄԱՍՍԱՔԻ ՀԱՏ**, գ. (Բուս.) Փշոտ պատաղիճ թուփ:

**ՄԱՍՐԵՆԻ** } գ. (Բուս.) Վարդածաղիկների կարգին պատկանող վայրի փշոտ թուփ:

**ՄԱՍՓԱՐ**, գ. (Բուս.) Շումրայ, ծովային սամիթ:

**ՄԱՏ**,

**ՄԱՏՆ**, գ. Մարդու եւ մի քանի կենդանիների ձեռների եւ ոտների ծայրի շարժական մասերից ամէն մէկը: Երածըշտական եղանակ: Կողի ոսկորներից ամէն մէկը: Բոխիի ճիւղերը: Փոխ. Մասնակցութիւն:

**ՄԱՏԱԿ**, գ. Խոշոր կենդանիների էգը:

**ՄԱՏԱԿԱՆՈՒՄԲ**, գ. Մատակ ձիերի խումբ:

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**, գ. Նա, որ հայթայթում է որոշ մթերքներ: Ունեցուածքի խնամակալ:

**ՄԱՏԱԿԱՐԱՐԱԿԱՆ**, ած. Մատակարարին եւ մատակարարութեան յատուկ:

**ՄԱՏԱԿԱՐԱՐԱՊԵՏ**, գ. Մատակարարի

պետ:

**ՄԱՏԱԿԱՐԱՐԵՆ**, նբ. Իբրեւ մատակարար կերակուր հայթայթել: Տան կարիքները հոգալ:

**ՄԱՏԱԿԱՐԱՐԻՉ**, Տ. Մատակարար:

**ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Մատակարար լինելը:

**ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ**, գ. Մատակարարելը:

**ՄԱՏԱՂ**, ած. Մատղաշ, նորածին, փափուկ: (Եկեղ.) Կենդանի, որը մորթում են կրօնական ծիսակատարութեամբ: (Եկեղ.) Ձաւարէ կմ բրնձէ փլաւ, վրան մտով, որ եկեղեցու դրանը բաժանում են:

**ՄԱՏԱՂԱԲԱԺԻՆ**, գ. (Եկեղ.) Մատաղից մէկին տրուելու բաժին:

**ՄԱՏԱՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.)

Մատաղ բաժանելը:

**ՄԱՏԱՂԱԳԻՆ**, գ. (Եկեղ.) Մատաղի գին, մատաղ մորթելու համար գնուելիք անասունի փողը:

**ՄԱՏԱՂԱԾԻՆ**, ած. Նոր ծնած:

**ՄԱՏԱՂ(Ա)ՀԱՍ** } ած. Մատաղ հասկուկում եղող:

**ՄԱՏԱՂԱՄԻՍ**, գ. Մատաղի միս:

**ՄԱՏԱՂԱՋՈՒՐ**, գ. Մատաղի ջուրը, արգանակը:

**ՄԱՏԱՂԱՍՈՒՆ**, ած. Նորահաս, ջահել:

**ՄԱՏԱՂԱՏԻ**, ած. Մատաղ հասակով:

**ՄԱՏԱՂԱՏՈՒ**, գ. Մատաղ բաժանող (անձ):

**ՄԱՏԱՂԱՏՈՒՆ**, գ. (Եկեղ.) Այն տունը, որտեղ մատաղ են արել:

**ՄԱՏԱՂԱՑՈՒ**, ած. (Եկեղ.) Մատաղ անելու յարմար:

**ՄԱՏԱՂՈՐԹ**, ած. Մատաղ հորթ ունեցող, նոր հորթ բերած:

**ՄԱՏԱՂՈՒԹԻՒՆ**, գ. Մատաղ՝ մատղաշ լինելը:

**ՄԱՏԱՂՕՐԵԱՅ**, ած. մկ. Օրերով՝ տա-

**ՄԵՆԱԿՈՒԹԻՒՆ**, գ. Մենակ լինելը:  
**ՄԵՆԱԿՈՒԻ**, Տ. Մենամարտիկ:  
**ՄԵՆԱՁԱՅՆ**, ած. մկ. Միայն մի ձայնով երգուող:  
**ՄԵՆԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. Մենաձայն լինելը:  
**ՄԵՆԱՄԱՐՏ**, գ. Տ. Մենամարտութիւն:  
**ՄԵՆԱՄԱՐՏԵԼ**, չբ. Մենամարտութեամբ կրուել:  
**ՄԵՆԱՄԱՐՏԻԿ**, ած. գ. Մենամարտութեամբ կրուող, ըմբիշ, զօտեմարտող:  
**ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ**, գ. Երկու մարդու մէկ մէկի դէմ կրուելը:  
**ՄԵՆԱՄՈՒ**, ած. գ. Մենամոլութեամբ հիւանդ: Առանձին մնալու հիւանդութիւն:  
**ՄԵՆԱՄՈՒԹԻՒՆ**, գ. Հոգեկան հիւանդութեան տեսակ:

<p><b>ՄԵՆԱՆԱԼ</b>, չբ. Միայնանալ, առանձնանալ:</p> <p><b>ՄԵՆԱՆՈՒԱԳ</b>, գ. Մի նուագարանով նուագուած երաժշտութիւն: Առանձին նուագող:</p> <p><b>ՄԵՆԱՇԱՀ</b>, Տ. Մենավաճառ:</p> <p><b>ՄԵՆԱՇՆՈՐՀ</b>, Տ. Առանձնաշնորհութիւն:</p> <p><b>ՄԵՆԱՇՆՈՐՀՅԵԱԼ</b>, Տ. Առանձնաշնորհութիւն:</p> <p><b>ՄԵՆԱՊԱՐ</b>, գ. Առանձին կատարուող պար:</p> <p><b>ՄԵՆԱՊԱՅՔԱՐԱՅԻՆ</b>, ած. Մենապարքար ընդգրկող՝ պարունակող՝ ներկայացնող:</p> <p><b>ՄԵՆԱՄԷՐ</b>, ած. Միայնութիւն սիրող:</p> <p><b>ՄԵՆԱՄԻՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Մենասեր լինելը:</p> <p><b>ՄԵՆԱՄՍԱՆ</b>, գ. (Եկեղ.) Միայնակեացների բնակութեան տեղ:</p> <p><b>ՄԵՆԱՎԱՃԱՌ</b>, գ. Առանձին արտօնութիւն, որ շնորհուում է մի մարդու կմ մի ընկերութեան, որով միայն նա ստանում է իրաւունք որոշ ապրանքներ ծախելու տուեալ երկրում:</p> <p><b>ՄԵՆԱՎԱՃԱՌԱՎԱՆ</b>, ած. Մենավաճառին յատուկ:</p> <p><b>ՄԵՆԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ</b>, գ. Մենավաճառի համակարգ:</p> <p><b>ՄԵՆԱՏՆՏԵՍ</b>, ած. գ. Երկրագործ, որ իր սեփական տնտեսութիւնն ունի:</p> <p><b>ՄԵՆԱՐԱՆ</b>, գ. Մենակ ապրելու տեղ:</p> <p><b>ՄԵՆԱՐՈՐ</b>, ած. Միայնակեաց:</p> <p><b>ՄԵՆԱՐՈՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Մենաւոր լինելը, միայնակ կեանք վարելը:</p> <p><b>ՄԵՆԱՓԱԿՈՒԵԼ</b>, բ. Միայնակ փակուել:</p> <p><b>ՄԵՆԱՔԱՐ</b>, գ. Մի կտոր քարից շինուած իր. մոնոլիտ:</p> <p><b>ՄԵՆԵՐԳ</b>, գ. Մի ձայնով երգ: Առանձին երգելը:</p> <p><b>ՄԵՆԵՐԳԻՉ</b>, գ. Մեներգակ:</p>	<p><b>ՄԵՆԹՈՒՂ</b>, գ. Դաղձից հանած թափանցիկ բիրեղային նիւթ:</p> <p><b>ՄԵՆԻԿ</b>, մկ. Մենակ:</p> <p><b>ՄԵՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Միապետութիւն:</p> <p><b>ՄԵՆՇԵՒԻՉՍ</b>, գ. (Քաղ.) Մանր-քաղքենիական՝ հակադարձակական կուսակցութիւն:</p> <p><b>ՄԵՆՇԵՒԻԿ</b>, ած. Մենշեիկութեան հետեւող:</p> <p><b>ՄԵՆՈՒԿ</b>, Տ. Մենակ:</p> <p><b>ՄԵՌԱՄ</b>, ած. մկ. Նա որ մեռել է: Փոխ. Անկենդան:</p> <p><b>ՄԵՌԵԼ</b>, գ. Մեռած մարդու մարմին:</p> <p><b>1. ՄԵՌԵԼԱԳՈՅՆ</b>, բաղդ. աստ. Մեռելի, Աւելի քան մեռած:</p> <p><b>2. ՄԵՌԵԼԱԳՈՅՆ</b>, ած. Մեռելի գոյն ունեցող:</p> <p><b>ՄԵՌԵԼԱԶԳԵՍ</b>, ած. (Կրօն.) Մեռել՝ մահկանացու մարմին կրող:</p> <p><b>ՄԵՌԵԼԱԹԱՂ</b>, գ. Մեռելի թաղումը, յուղարկատրութիւն: Գերեզման փորող մեռել թաղող</p> <p><b>ՄԵՌԵԼԱԾԻՆ</b>, ած. (Երեխայ) որ ծրնուում է մեռած:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՎԱՐՔ</b>, գ. Մեռելը գերեզման տանող կառք:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՎԻՐ</b>, ած. Մեռելներ՝ դիակներ կրող:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՀԱՏՈՒԹԻՒՆ</b>, Տ. Դիահատութիւն: Դիահերձում:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՀԱՐՅՈՒԹԻՒՆ</b>, գ. Մեռելներին հարցնելը՝ խօսեցնող:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՀԱՐՅՈՒԿ</b>, գ. Մեռելահարցութեամբ զրաղուող: Գուշակ:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՀՈՏ</b>, գ. Նեխուող մեռելի հոտ:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՄԱՀԻՃ</b>, գ. Մեռեալի անկողին:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՃՃԻ</b>, գ. (Կենդ.) Սեւամարմին միջատների ցեղին պատկանող բզեզ:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՅԻՆ</b>, ած. Մեռելին յատուկ:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՇՈՒՆՉ</b>, ած. Որի շունչը՝ մեռնելով կղաղարի:</p>
--	---



<p><b>ՄԵՌԵԼԱԶՈՒՐ</b>, գ. Մեռելը լուալու ջուր:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՍՍԱՆ</b>, գ. Գերեզման:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՏԷՐ</b>, գ. Մեռելի տերը:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՏԻՊ</b>, ած. Մեռածի նման:</p> <p><b>ՄԵՌԵԼ(Ա)ՏՈՒՆ</b>, գ. Այն տունը, որտեղ գտնուում է մեռելը:</p> <p><b>ՄԵՌԵԼԱԽՈՐ</b>, գ. Մեռելի յուղարկատը:</p> <p><b>ՄԵՌԵԼԱՔՈՒՆ</b>, գ. Խոր քուն, մեռածի նման քնած լինելը:</p> <p><b>ՄԵՌԵԼ ԹԱԼԱՆՈՂ</b>, ած. գ. Չափազանց ժլատ ու ազան:</p> <p><b>ՄԵՌԵԼԿՈՒՍ</b>, գ. Հիւանդութիւն, որ իբրև թէ առաջ է գալիս մեռելներից կոխուելով:</p> <p><b>ՄԵՌԵԼՆՈՑ</b>, Տ. Գերեզմանատուն:</p> <p><b>ՄԵՌԵԼՈՏԻ</b>, գ. Մեռածի դիակը, գէշ, շաղիղ: Մատակ:</p> <p><b>ՄԵՌԵԼՈՑ</b>, գ. (Եկեղ.) Տարուայ հինգ տաղաւարների յաջորդող օրերը:</p> <p><b>ՄԵՌԵԼՈՒԹԻՒՆ</b>, գ. Մեռած լինելը:</p> <p><b>ՄԵՌԻՆԱՅ</b>, գ. (Բուս.) Ընծայտտի մի տեսակը:</p> <p><b>ՄԵՌՆԵԼ</b>, չբ. Ապրելուց դադարել: Հկո. Ծնուել:</p> <p><b>ՄԵՌՈՆ</b>, գ. (Եկեղ.) Օծելու սրբազան իւղ:</p> <p><b>ՄԵՌՈՆԱԿԻՐ</b>, ած. գ. (Եկեղ.) Պաշտօնեայ, որ եկեղեցական պաշտամունքի ժամանակ կրում է մեռն պարունակող անօթը:</p> <p><b>ՄԵՌՈՆԱՄԱՆ</b>, գ. (Եկեղ.) Մեռնը պահելու աման:</p> <p><b>ՄԵՌՈՆԱՇԻՇ</b>, գ. (Եկեղ.) Մեռնի շիշ:</p> <p><b>ՄԵՌՈՆԱԶՈՒՐ</b>, գ. (Եկեղ.) Ջուր, որի մէջ մեռն է խառնուած:</p> <p><b>ՄԵՌՈՆԵԼ</b>, նբ. (Եկեղ.) Կրան մեռն քսել:</p> <p><b>ՄԵՌՈՆԵՓԷՔ</b>, (Եկեղ.) Տ. Մեռնօրինէք:</p> <p><b>ՄԵՌՈՆՕՐՀՆԷՔ</b>, գ. (Եկեղ.) Մեռն օրինելու արարողութիւնը:</p> <p><b>ՄԵՍԵԼ</b>, չբ. Բորբոսնէլ, որդնտել:</p> <p><b>ՄԵՍԻԱ(Յ)</b>, գ. (Կրօն.) Ըստ հրէական</p>	<p>աւանդութեան փրկիչ:</p> <p><b>ՄԵՍԻԱԿԱՆ</b>, ած. (Կրօն.) Մեսիային յատուկ:</p> <p><b>ՄԵՍ-ՄԵՆԱԿ</b>, Տ. Միս-մենակ:</p> <p><b>ՄԵՍՐՈՊԵԱՆ</b>, ած. Մեսրոպ Մաշտոցին յատուկ:</p> <p><b>ՄԵՏԱԿՀԱԼԱԻ</b>, (ած), մկ. Միայն մի շապկով, շապկանց:</p> <p><b>ՄԵՏԱՂ</b>, գ. Մետաղ հանելու հանք: (Քիմ.) Քիմիական պարզ մարմին:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԲԱՆ</b>, ած. գ. Մետաղաբանութեան մասնագէտ:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԲԱՆԱԿԱՆ</b>, ած. Մետաղաբանութեան վերաբերեալ:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Հանքաբանութեան մի ճիւղը:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԲԵՐ</b>, ած. Մետաղ բերող:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԳՈՐԾ</b>, ած. գ. Մետաղագործութեամբ պարապող:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ</b>, ած. Մետաղագործութեան յատուկ:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԳՈՐԾԱՐԱՆ</b>, գ. Գործարան, որտեղ մետաղ են պատրաստում:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ</b>, գ. Մետաղի մետաղ պատրաստելու գործը:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԿԱՆ</b>, ած. Մետաղին յատուկ:</p> <p><b>ՄԵՏԱՂԱՀԱՆ</b>, ած. Հանքագործ:</p> <p><b>ՄԵՏԱՂԱՀԱՆՔ</b>, գ. Մետաղի հանք:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԿԵՐՊ</b>, ած. մկ. Մետաղի նրման:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԶՈՅԼ</b>, ած. Մետաղից ձուլում:</p> <p><b>ՄԵՏԱՂԱԶՈՒԼԱՐԱՆ</b>, գ. Գործարան, որտեղ մետաղներից զանազան առարկաներ են ձուլում:</p> <p><b>ՄԵՏԱՂԱՅԻՆ</b>, ած. Մետաղին յատուկ, մետաղական:</p> <p><b>ՄԵՏԱՂԱՆՄԱՆ</b>, ած. Մետաղի նմանող:</p> <p><b>ՄԵՏԱՂԱՇԷՆ</b>, ած. Մետաղից շինում:</p> <p><b>ՄԵՏԱՂԱՊԱՐԱՆ</b>, գ. Պարան, որ ոլորում է մետաղեայ լարերից:</p> <p><b>ՄԵՏԱՂԵԱՅ</b>, ած. Մետաղից շինած:</p>
---	--

**ՄԵՏԱՄԱՆ**, թ. անծ. *Տասնեւմէկ:*  
**ՄԵՏԱՄԱՆԱԺԱՍՈՐՊ**, անծ. *Տասնեւմէկ-երորդ ժամին:*  
**ՄԵՏԱՄԱՆԵՐՈՐՊ**, անծ. *Տասնեւմէկերորդ: փոխ. շատ ուշ, երբ արդէն ուշ է:*  
**ՄԵՏԱՔՍ**, գ. Նիւթ, որ ամենանուրբ թելի նման արտադրում է շերամի որդր:  
**ՄԵՏԱՔՍԱԲԵՐ**, անծ. *Մետաքս բերող:*  
**ՄԵՏԱՔՍԱԳՈՒԼՊԱՅ**, գ. *Մետաքսէ գուլպայ:*  
**ՄԵՏԱՔՍԱԳԻ**, գ. (Կենդ.) *Երգեցիկ թռչունն ճանճորսների ցեղից:*  
**ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾ**, անծ. գ. *Մետաքս գործող:*  
**ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾԱՐԱՆ**, գ. *Մետաքս շինելու գործարան:*  
**ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Մետաքսագործ լինելը:*  
**ՄԵՏԱՔՍԱԹԱԻՇ**, գ. *Թաւիշ, որ պատրաստուած է մետաքսից:*  
**ՄԵՏԱՔՍԱԹԵԼ**, գ. *Մետաքսից պատրաստուած թել:*  
**ՄԵՏԱՔՍԱՄԱՈՆ**, անծ. *Որի մէջ մետաքս կայ խառնուած:*  
**ՄԵՏԱՔՍԱՆՉԻՒՄ**, անծ. *Մետաքսից հիւսուած գործուած:*  
**ՄԵՏԱՔՍԱՌԷՋ**, անծ. *Մետաքսէ անէջնէրով:*  
**ՄԵՏԱՔՍԱՎԱՃԱՈ**, գ. *Մետաքս վաճառող:*  
**ՄԵՏԱՔՍԵԱՅ** } անծ. *Մետաքսից շինած:*  
**ՄԵՏԱՔՍԷ** }  
**ՄԵՏԱՔՍԵՂԷՆ**, անծ. *Մետաքսից շինուած պատրաստուած կտորեղէն:*  
**ՄԵՏՈՒԼՓԵԱՆ**, անծ. (Կրօն.) *Հրաշափառ, գերագոյն:*  
**ՄԵՏՐ**, գ. *Երկարութեան չափի միաւոր:*  
**ՄԵՏՐԱԿԱՆ**, անծ. *Մետրի վրայ հիմնուած:*  
**ՄԵՏՐՈՂՈՒԹՅՈՒՆ**, (Յուն.) *մայրաքաղաքացի, գ. (Եկեղ.) Մայրաքաղաքի արքեպիսկոպոս:*

**ՄԵՏՐԱՂՈՒԹՅԱԿԱՆ**, անծ. (Եկեղ.) *Մետրոպոլիտին յատուկ:*  
**ՄԵՏՐԱՂՈՒԹՅՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) *Մետրոպոլիտի պաշտօնն աստիճան:*  
**1. ՄԵՏՐԻԿԱ**, Տ. *Տաղաչափութիւն:*  
**2. ՄԵՏՐԻԿԱ**, գ. *Ծննդեան կմ մետրիկական վկայական:*  
**ՄԵՏՐՈՆՈՍ**, գ. *Ճօճանակի նման սարած:*  
**ՄԵՏՐՈՂՈՒ**, գ. (Յուն.) *Մայր երկիրը կմ պետութիւնը իր գաղութի նկատմամբ:*  
**ՄԵՐ**, դեր. *Մենք՝ի սեռ. հոլ.: Ստաց. դեր., որ ցոյց է տալիս ում պատկանելը:*  
**ՄԵՐԱԳՈՅԱԿ**, անծ. *Մեզ նման ստեղծուած:*  
**ՄԵՐԱԶԳԵԱՅ**, Տ. *Մերազնեայ:*  
**ՄԵՐԱԶՆԵԱՅ**, անծ. *Մեր ազգին պատկանող:*  
**ՄԵՐԱՆՈՆ**, անծ. *Մեր մտածելակերպով:*  
**ՄԵՐԱԿԵՐՂՈՒԹԻՒՆ**, գ. *Մերակերպ լինելը: Մեր կերպարանքին նման:*  
**ՄԵՐԱԿԵՐՂՈՒՄԱԿ**, անծ. *Մեր կերպարանքն ունեցող:*  
**ՄԵՐԱՅԻՆ**, անծ. *Մեզ յատուկ, մեզ վերաբերող:*  
**ՄԵՐԱՆ**, գ. *Մակարդ, թթխւոր:*  
**ՄԵՐԱՄԵՌ**, անծ. *Մեր սերնդից եղող, մեզանից սերուած:*  
**ՄԵՐԱՏԻՊ**, անծ. *Մեր տիպի, մեզ նման:*  
**ՄԵՐԱՏՈՂՄԱԿ**, անծ. *Մեր տոհմից:*  
**ՄԵՐԹ...ՄԵՐԹ...**, մկ. *Երբեմն (այսպէս)... միւս անգամ:*  
**ՄԵՐԹԱԿԱՆ**, Տ. *Մերժողական:*  
**ՄԵՐԹԵԼ**, նբ. *Հեռացնել իրենից, վանել, քշել: Բացասել: Հաւանութիւն չտալ:*  
**ՄԵՐԹԵԼԻ**, անծ. *Ինչ որ պէտք է կմ կարելի է մերժել:*  
**ՄԵՐԹԻՉ**, անծ. *Նա որ մերժում է, մերժող: Ժխտող:*  
**ՄԵՐԹՈՂԱԿԱՆ**, անծ. *Հեռացնող, վանող: Ժխտողական:*  
**ՄԵՐԹՈՒՄ**, գ. *Մերժելը: Ժխտում:*

<p><b>ՄԵՐԻՆՈՍ</b>, գ. <i>Բսպանիայի ոչխար:</i>  <b>ՄԵՐԻՆԱՂՂ</b>, գ. <i>Խաղողի նման մի վայրի թուփ:</i>  <b>ՄԵՐԿ</b>, ան. <i>Զգեստով չծածկուած: Բուսականությունից գուրկ: Զարդերից գուրկ: Բաց: Յայտնապէս:</i>  <b>ՄԵՐԿԱԲԱՐ</b>, մկ. <i>Մերկ կերպով:</i>  <b>ՄԵՐԿԱԳՈՅՆ</b>, բաղդ. աստ. <i>Մերկ'ի, աւելի մերկ:</i>  <b>ՄԵՐԿԱՍՏՈՈՒԿ</b>, ան. <i>Մերկությունը ծածկած:</i>  <b>ՄԵՐԿԱՎՈՒԻՐԾ</b>, ան. <i>Կուրծքը բաց:</i>  <b>ՄԵՐԿԱՎՈՒԻ</b>, ան. <i>Մերկ մարմնով եւ անզէն կռուելու յատկացրած:</i>  <b>ՄԵՐԿԱՍԱՐՄԻՆ</b>, ան. մկ. <i>Մերկ` անզէն մարմնով:</i>  <b>ՄԵՐԿԱՍԱՐՏ</b>, ան. <i>Մերկ մարմնով եւ անզէն կռուող` ըմբշական:</i>  <b>ՄԵՐԿԱՍԱՐՏԻԿ</b>, Տ. <i>Մերկամարտ:</i>  <b>ՄԵՐԿԱՍԱՐՏՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Մերկ ըմբիշների կրի:</i>  <b>ՄԵՐԿԱՍՐՑԱՆԱԿ</b>, ան. <i>Մերկ մարմնով մրցող:</i>  <b>ՄԵՐԿԱՆԱԼ</b>, նբ. <i>Հագուստը վրայից հանել:</i>  <b>ՄԵՐԿԱՆԱՍ</b>, ան. մկ. <i>Մերկ կմ մերկացած անդամներով:</i>  <b>ՄԵՐԿԱՊԱՏԵԱՆ</b>, ան. <i>Պատեանից հանած:</i>  <b>ՄԵՐԿԱՊԱՐ</b>, գ. <i>Մերկ պար:</i>  <b>ՄԵՐԿԱՊԱՐԱՆ</b>, ան. <i>Պարանոցը մերկացրած:</i>  <b>ՄԵՐԿԱՊԱՐԱՆՈՑ</b>, ան. մկ. <i>Պարանոցը բաց:</i>  <b>ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ</b>, գ. (Բուս.) <i>Տունկերի ընդարձակ խումբ:</i>  <b>ՄԵՐԿԱՎԵՐԱՐԿՈՒ</b>, ան. <i>Առանց վերարկուի կմ միայն մի վերարկու հագած:</i>  <b>ՄԵՐԿԱՍԱՐԸ</b>, ան. մկ. <i>Մերկանդամ:</i>  <b>ՄԵՐԿԱՍԻԳ</b>, ան. <i>Բազուկները մերկ:</i>  <b>ՄԵՐԿԱՍԻՏ</b>, ան. մկ. <i>Ծծերը մերկացրած:</i></p>	<p><b>ՄԵՐԿԱՑՈՒՄ</b>, գ. <i>Մերկանայր, մերկացնելը:</i>  <b>ՄԵՐԿԱՑՈՒՑԻՉ</b>, ան. <i>Նա որ մերկացնում է:</i>  <b>ՄԵՐԿԵԼ</b>, նբ. Տ. <i>Մերկացնել:</i>  <b>ՄԵՐԿԻԿ</b>, ան. <i>Մերկ, տկլոր:</i>  <b>ՄԵՐԿԻՄԱՍՏԱՍԷՐ</b>, <i>Մերկ կմ կիսամերկ իմաստասեր:</i>  <b>ՄԵՐԿՈՏ</b>, Տ. <i>Ոտաբոբիկ:</i>  <b>ՄԵՐԿՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Մերկ լինելը: Փոխ. Պարզություն, չվարագուրուած լինելը:</i>  <b>ՄԵՐՁ</b>, ան. <i>Մօտ եղած:</i>  <b>ՄԵՐՁԱԴՐՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Մօտը դնելը:</i>  <b>ՄԵՐՁԱԶԱԻԱԿ</b>, ան. <i>Իբրեւ զաւակ ուրիշին մերձաւոր:</i>  <b>ՄԵՐՁԱԺԱՍԱՆԱԿ</b>, ան. <i>Մօտ ժամանակի:</i>  <b>ՄԵՐՁԱԿԱՑ</b>, ան. <i>Մօտը` շուրջը երող: Մօտակայ, մօտ ժամանակներում լինելիք:</i>  <b>ՄԵՐՁԱԿԱՑՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Մերձակայ` մօտը լինելը:</i>  <b>ՄԵՐՁԱԿԱՑՔ</b>, Տ. <i>Շրջակայք:</i>  <b>ՄԵՐՁԱԿԷՏ</b>, Տ. <i>Արեւամերձություն:</i>  <b>ՄԵՐՁԱԿԻՑ</b>, ան. <i>Մերձակայ:</i>  <b>ՄԵՐՁԱԿՑՈՒԹԻՒՆ</b>, գ. <i>Մերձակից լինելը:</i>  <b>ՄԵՐՁԱՍԱՐՏ</b>, <i>Մարտ, որում կարող են կիրառել անզամ սուիներ եւ պարզագոյն զէնք:</i>  <b>ՄԵՐՁԱՍԵՐՄ</b>, ան. <i>Ցեղակից:</i>  <b>ՄԵՐՁԱՎԱՑՐ</b>, Տ. <i>Շրջակայք:</i>  <b>ՄԵՐՁԱՐԱՔՍԵԱՆ</b>, ան. <i>Արաքս գետի մօտ գտնուող:</i>  <b>ՄԵՐՁԱԻՈՐ</b>, ան. <i>Մերձակայ: Հկր. Հեռաւոր, բացակայ: ան. գ. Ազգական, բարեկամ:</i>  <b>ՄԵՐՁԱԻՈՐԱԲԱՐ</b>, մկ. <i>Իբրեւ մերձաւոր:</i>  <b>ՄԵՐՁԱԻՈՐԱԳԷՏ</b>, ան. <i>Մօտից գիտող:</i>  <b>ՄԵՐՁԱԻՈՐԱԳՈՅՆ</b>, բաղդ. աստ. <i>Մերձաւոր'ի, Աւելի մերձաւոր:</i></p>
--	--

**ՄԵՐՉԱԻՈՐԱՊԷՍ**, մկ. Մերձատրա-  
բար:  
**ՄԵՐՉԱԻՈՐԵԼ** } ՄԵՐՉԱՏՐ ղառ-  
**ՄԵՐՉԱԻՈՐՈՒԵԼ** } Բ. Մերձատր ղառ-  
 նայ, մտենայ:  
**ՄԵՐՉԱԻՈՐԻՉ**, ած. գ. Մտեցնող:  
**ՄԵՐՉԱԻՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Մերձատր  
 լինելը: Ազգականություն: Մեռական  
 յարաբերություն:  
**ՄԵՐՉԱԻՈՐՈՒՄ**, գ. Մերձատրություն,  
 սեռական յարաբերություն:  
**ՄԵՐՉԱԼԹԵԱՆ**, ած. Բայթիկ ծովի  
 մօտ գտնուող:  
**ՄԵՐՉԵՆԱԼ**, չբ. Տ. Մօտենայ: Կնոջ մօ-  
 տենայ:  
**ՄԵՐՉԵՆԱԼԻ**, ած. Որին կարելի է մեր-  
 ձենայ:  
**ՄԵՐՉԵՑՈՒՄ**, գ. Մերձենայը, մօտե-  
 նայը:  
**ՄԵՐՉԻՄԱՀ**, Տ. Մահամերձ:  
**ՄԵՐՉՈՒՍՏ**, Ի **ՄԵՐՉՈՒՍՏ**, մկ. Մօտի-  
 կից:  
**ՄԵՐՈՆՔ**, յոզն. գ. Մեր ունեցածները,  
 մերինները: Հմմտ. Ձերոնք, իմոնք:  
**ՄԵՐՈՎԻ**, ած. մկ. Ըստ մեր կամքի ե-  
 դած, կամատր:  
**ՄԵՐՈՎՍԱՆՆ**, մկ. Մենք էլ մեր կողմից,  
 մեր կարողացածի չափ:  
**ՄԵՐՈՑՔ**, գ. Կարծ մերելու գործողու-  
 թիւնը:  
**ՄԵՐՈՒՆԱԿ** } ած. Մեր ունեցածի  
**ՄԵՐՈՒՆԱԿԱՆ** } կմ մեր յատկութեան նման, մերակերպ:  
**ՄԵՐՈՒՆԱԿԵՐՊ**, ած. Մերակերպ :  
**ՄԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**, գ. Մերունակ  
 լինելը:  
**ՄԵՐՍԵԼ**, նբ. Տ. Մածել:  
**ՄԵՐՐՐԷԼ**, մկ. Մեր կարգով:  
**ՄԵՑ**, գ. Նեխություն, ապականություն:  
**ՄԵՑՈՑ**, ած. Ցեցերով լի:  
**ՄԵՑՈՑԵԼ**, չբ. Ցեցերով լցնել:  
**ՄԵՔԵՆԱԲԱՆ**, գ. Մեքենաբանութեան  
 մասնագետ:

**ՄԵՔԵՆԱԲԱՆԱԿԱՆ**, ած. Մեքենաբա-  
 նութեան յատուկ:  
**ՄԵՔԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Բնական գի-  
 տությունների մի կարևոր ճիւղը:  
**ՄԵՔԵՆԱԲԱՐ**, մկ. Մեքենական կեր-  
 պով:  
**ՄԵՔԵՆԱԳԷՏ**, Տ. Մեքենաբան:  
**ՄԵՔԵՆԱԳՈՐԾ**, ած. գ. Տ. Մեքենավար:  
**ՄԵՔԵՆԱԼԻՑ**, ած. Մեքենաներով լիքը:  
**ՄԵՔԵՆԱԻՂ**, գ. Մեքենայի յատուկ  
 իւղ:  
**ՄԵՔԵՆԱԿԱՆ**, ած. Մեքենաբանութեան  
 վերաբերեալ:  
**ՄԵՔԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Մեքենա-  
 կան լինելը:  
**ՄԵՔԵՆԱՅ**, գ. Պարզ կմ բարդ գործիք:  
 Գործիք, մարդկանց տանջելու, տանջա-  
 րան:  
**ՄԵՔԵՆԱՅԱԳՈՐԾ**, Տ. Մեքենագործ:  
**ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ**, ած. Ճարտար, խորա-  
 մանկ:  
**ՄԵՔԵՆԱՅԱՑՆԵԼ**, նբ. Ձեռքի աշխա-  
 տանքը մեքենական ոյժերով կատարել:  
**ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ**, գ. Մեքենայացնելը:  
**ՄԵՔԵՆԱՅԵԼ**, նբ. Հնարել, ջանալ:  
**ՄԵՔԵՆԱՅՈՒԹԻՒՆ**, գ. Հնարագիտու-  
 թիւն, ճարտարություն: Խորամանկու-  
 թիւն:  
**ՄԵՔԵՆԱՅՐՐԷԼ**, Տ. Մեքենաբար:  
**ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ**, ած. Մեքենաշի-  
 նութեան յատուկ:  
**ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹԻՒՆ**, գ. Մեքենաներ  
 շինելը:  
**ՄԵՔԵՆԱՊԷՍ**, Տ. Մեքենաբար:  
**ՄԵՔԵՆԱՎԱՐ**, գ. Մեքենան վարող, շո-  
 գեքարշը վարող: Ինքնաշարժավար:  
**ՄԵՔԵՆԱԻՈՐ**, ած. Մեքենայ ունեցող:  
**ՄՁԱԼ**, չբ. Թեթեւ կերպով ցաւել:  
**ՄՁԱՄՈՒԲՃԻ**, գ. (Բուս.) Մայիտակ ճա-  
 գովի նման մակաբոյս:  
**ՄՁԱՆՈՑ**, գ. Կտաւ կմ այլ նիւթ, որով  
 հեղուկը մզում են, քամիչ:

<p><b>ՄՋԱՆՔ</b>, գ. Մզեղը:</p> <p><b>ՄՋԵԼ</b>, նբ. Ճսկելով կմ ճնշելով միջի հեղուկը հանել, քամել:</p> <p><b>ՄՋԵՂ</b>, գ. Արմատի մազմզուկները:</p> <p><b>ՄՋԲՉ</b>, ած. գ. Այն ինչ մզում է:</p> <p><b>ՄՋԿԻԹ</b>, գ. (Եկեղ.) Մահմետականների աղթատեղի, մեսչիդ (արաբերեն):</p> <p><b>1. ՄՋՍՋԱԼ</b>, չբ. Դանդաղությամբ շարժուել: Ծանր խօսել:</p> <p><b>2. ՄՋՍՋԱԼ</b>, չբ. Ցաւից կմ ցրտից կըսկըծել, ցաւել:</p> <p><b>ՄՋՍՋՈՑ</b>, գ. Ցաւ, կսկիծ:</p> <p><b>ՄՋՍՈՒՁ</b>, ած. Խորամանկ, ծածկամիտ:</p> <p><b>1. ՄՋՈՒԿ</b>, գ. Աւելուկի բոյսը:</p> <p><b>2. ՄՋՈՒԿ</b>, գ. Մզում նիւթը:</p> <p><b>ՄՋՈՒԿԱՋՈՒՐ</b>, գ. Մզուկի՝ խաշած աւելուկի ջուրը:</p> <p><b>ՄՋՈՒԿԹԹՈՒ</b>, գ. Կերակուր:</p> <p><b>ՄՋՈՒՍ</b>, գ. Մզեղը:</p> <p><b>ՄՋՈՒՐ</b>, գ. (Եկեղ.) Մոմ:</p> <p><b>ՄԷԳ</b>, գ. Բարձր մտախուղ:</p> <p><b>ՄԷՁ</b>, գ. Հեղանիւթ: Երիկամունքի գտած արիւնի մնացած հեղուկը:</p> <p><b>ՄԷՁԵԼ</b>, չբ. Մտածմունքի մէջ ընկնել, մտմտալ, խոկալ:</p> <p><b>ՄԷԹՕՒՆ</b>, Տ. Մեթոդ:</p> <p><b>ՄԷԼ ԱՆԵԼ</b>, չբ. Կողմ պահել:</p> <p><b>ՄԷԿ</b>, թւ. ած. Բոլոր թուերից առաջինը: Որեւիցէ մարդ, մի ոք: Անգամ, մի անգամ:</p> <p><b>ՄԷԿԴԻ</b>, մկ. Մի կողմ, հեռացած: Մի կողմ թողած:</p> <p><b>ՄԷԿԷԼ</b>, ած. Մէկ այլ:</p> <p><b>ՄԷԿԷՆ Ի ՄԷԿ</b>, Տ. Մէկէն, Մէկի տակ:</p> <p><b>ՄԷԿԻԿ</b>, ած. Միակ:</p> <p><b>ՄԷԿԻԿ-ԵՐԿՈՒՔԻԿ</b>, մկ. Մէկ-մէկ, քիչ-քիչ:</p> <p><b>ՄԷԿՄԷԿԱՆԱԼ</b>, չբ. Ջոկ-ջոկ լինել:</p> <p><b>ՄԷԿՆՈՑ</b>, գ. Մէկ միատր պարունակող:</p> <p><b>ՄԷԿՏԵՂ</b>, մկ. Միասին:</p> <p><b>ՄԷԿՏԵՂԵԼ</b>, նբ. Մէկտեղ բերել:</p> <p><b>ՄԷՆ</b>, ած. Միայն մի, մէկ հատիկ: մկ.</p>	<p>Մենակ, միայնակ:</p> <p><b>ՄԷՁ</b>, գ. Առարկայի ներսի կողմը: Պտղի միջուկը: Կէս տեղը: Մէջ տեղը: Ցոյց է տալիս ժամանակի տեւողութիւն: Դէպի ներս:</p> <p><b>ՄԷՁԱՇԽԱՐՀ</b>, Տ. Միջնաշխարհ:</p> <p><b>ՄԷՁ ԱՌ ՄԷՁ</b>, Տ. Մէջէ մէջ, Մէջի տակ:</p> <p><b>ՄԷՁԱՓԱՅՏ</b>, ած. Մէջը փայտից:</p> <p><b>ՄԷՁԲԵՐԵԼ</b>, նբ. Ուրիշի խօսքի, գրքունածքի յիշատակել, վկայել, վկայակոչել:</p> <p><b>ՄԷՁԲԵՐՈՒՍ</b>, գ. Տ. Ուրիշի խօսքի, գրքեան քաղուածք, յիշատակութիւն::</p> <p><b>ՄԷՁԳԻՇԵՐ</b>, գ. Կէս-գիշեր:</p> <p><b>ՄԷՁԴԻՐ</b>, գ. Ինչ որ երկու առարկայի միջեւ՝ արանքը դրուում է զանազան նպատակներով:</p> <p><b>ՄԷՁԿԱՊ</b>, գ. Մէջքի կապ:</p> <p><b>ՄԷՁԿՈՅՍ</b>, գ. Միջի կողմը, ներսի դին:</p> <p><b>ՄԷՁԻՏԻԷ</b>, գ. Սուլթան Մէջիդի կտրած օսմանեան արծաթէ դրամ:</p> <p><b>ՄԷՁՈՒՂԻ</b>, գ. Ճանապարհի կմ փողոցի միջի մասը:</p> <p><b>ՄԷՁՏԵՂ</b>, գ. Մէջտեղը:</p> <p><b>ՄԷՁՔ</b>, գ. Մարդու մարմնի մէջտեղը: Ամբողջ կոնակը:</p> <p><b>ՄԷՁՔԱՆԱՌ</b>, ած. մկ. Մէջքը հետը խառն, մէջքովը հանդերձ:</p> <p><b>ՄԷՁՔԱԿՈՏՈՐ</b>, ած. Մէջքը կոտրած, ցաւած:</p> <p><b>ՄԷՁՔԱՑԱԻ</b>, գ. Մէջքի ցաւ:</p> <p><b>ՄԷՁՕՐ</b>, գ. Կէսօր:</p> <p><b>ՄԷՏ</b>, գ. Լծակաւոր կշեռքի լծակի միջավայրում եղած սուր եւ բարակ կէտը: ած. Միտում ծածկում: Փոխ. Տրամադրուած, յօժարամիտ:</p> <p><b>1. ՄԷՐ</b>, Տ. Մայր:</p> <p><b>2. ՄԷՐ</b>, Տ. Մակարդ:</p> <p><b>ՄԷՐԱՄԵՌ</b>, ած. Որի մայրը արժանի է մեռնելու:</p> <p><b>ՄԷՐԱՆ</b>, գ. Ամէն մէկը այն ձողիկներից, որոնց վրայ հիւսուում են կողովի ձի-</p>
---	---

<p>պոտնէրը:  <b>ՄԷՐԱՆ</b>, Տ. Մակարդ:  <b>ՄԷՐՈՒՆ</b>, գ. Գոճիներ ծնած խոզ, գոճե-  մայր:  <b>ՄԸ</b>, արեւմտահայ լեզուում գործածուող  մասնիկ, որ դրուում է գոյականից յետոյ  եւ ցոյց է տալիս անորոշութիւն: Մարդ  մը տեսայ:  <b>ՄԸՇ-ՄԸՇ</b>, Տ. Մո՛ւշ-մո՛ւշ, Մշիկ-  մշիկ:  <b>ՄԹԱԳԻՆ</b>, ան. Շատ մութ:  <b>ՄԹԱԳՆԵԼ</b>, չբ. Մթնել, խաւարել:  <b>ՄԹԱԳՆՈՒԹԻՒՆ</b> } գ. Մթագնելը:  <b>ՄԹԱԳՆՈՒՄ</b> }  <b>ՄԹԱԳՈՅՆ</b>, ան. Մութ գոյն ունեցող:  <b>ՄԹԱՄԱԾ</b>, ան. Մթութեամբ պատած:  <b>ՄԹԱՄԱԼ</b>, չբ. Տ. Մթագնել: Խաւարիլ:  <b>ՄԹԱՊԱՏ</b>, ան. Մթով պատած:  <b>ՄԹԱՍՈՅԶ</b>, ան. Մթութեան մէջ սուզ-  ուած:  <b>ՄԹԱՐՔ</b>, գ. Աչքի աղտոտութիւն, մութ,  խաւար:  <b>ՄԹԵՐԱԾ</b> } ան. գ. Ինչ որ մթերուած՝  <b>ՄԹԵՐԱԾՈՅ</b> }  համբարուած է. կոյտ, դէգ:  <b>ՄԹԵՐԱՅԻՆ</b>, ան. Մթերքին եւ մթերա-  նոցի վերաբերեալ:  <b>ՄԹԵՐԱՆՈՑ</b>, գ. Մթերքների պահեստ,  շտեմարան, ամբարանոց:  <b>ՄԹԵՐԱՊԱՀ</b>, ան. գ. Մթերքները պահ-  պանող:  <b>ՄԹԵՐԱՎԱՃԱՌ</b>, ան. գ. Մթերքներ վա-  ճառող:  <b>ՄԹԵՐԱՏԵՏԸ</b>, գ. Տետր, որի մէջ գրում  են մթերքների էլումուտքը:  <b>ՄԹԵՐԱՏՈՒ</b>, ան. Մթերքներ տուող՝  արտադրող:  <b>ՄԹԵՐԵԼ</b>, նբ. Մթերքներ հաւաքել, համ-  բարել:  <b>ՄԹԵՐՈՒՄ</b>, գ. Մթերելը:  <b>ՄԹԵՐՔ</b>, գ. Կենսամթերք:  <b>ՄԹԻԹ</b>, գ. Ոստայնանկի գործիք:  <b>ՄԹԻԼ</b>, գ. Վերմակ:</p>	<p><b>ՄԹԻՆ</b>, ան. Մութ:  <b>ՄԹՆԱԳԻՇԵՐ</b>, գ. Մութ ու լուռ զիշեր:  <b>ՄԹՆԱԳՈՅՆ</b>, ան. Մութ գոյն ունեցող:  <b>ՄԹՆԱԹԱԹԱՆ</b>, ան. մկ. Մութը կոխած:  <b>ՄԹՆԱԺԵՌ</b> }  <b>ՄԹՆԱԺՈՌ</b> } գ. Նոր մթնելու ժամանա-  կը, մթնադէմ:  <b>ՄԹՆԱԺՈՒԵԼ</b>, չբ. Մութը կոխել, սկսել  մթնել:  <b>ՄԹՆԱԿԵՐՊ</b>, ան. Մթագոյն:  <b>ՄԹՆԱԿՈՒՆ</b>, գ. Մութը կոխելու ժամա-  նակը:  <b>ՄԹՆԱՀԱԼԱԾ</b>, ան. Մութը հալածող:  <b>ՄԹՆԱՄԷՐ</b>, ան. Մթութիւն սիրող:  <b>ՄԹՆԱԻՈՒՆ</b>, ան. Մութ գոյնի:  <b>ՄԹՆԵԼ</b>, չբ. Մութն ընկնել: Մթութիւն  պատել:  <b>ՄԹՆԾԵԾ</b>, ան. Մթութեան մէջ ծեծուած:  <b>ՄԹՆՇԱՂ</b>, գ. Մութն ու լոյս:  <b>ՄԹՆՈԼՈՐ</b> } գ. Երկրագունդը շրջա-  <b>ՄԹՆՈԼՈՐՏ</b> } պատող օդը:  <b>ՄԹՆՈԼՈՐՍԱՅԻՆ</b>, ան. Մթնոլորտին  յատուկ:  <b>ՄԹՆՈՒՆ</b>, ան. մկ. Մութ տեղը մնա-  ցած:  <b>ՄԹՈՒԹԻՒՆ</b>, գ. Մութ լինելը:  <b>ՄԺԱԼ</b>, չբ. Թէթեւ անձրեւ գալ:  <b>ՄԺԵԼ</b>, նբ. Ալիւրի մէջ ջուրը ածելուց  յետոյ խառնել:  <b>ՄԺԵՂ</b>, գ. (Կենդ.) Փոքրիկ խայթուցաւոր  միջատ:  <b>ՄԺԵԽ</b>, գ. Խոտի, դարմանի մանրուք:  <b>ՄԺԵՂԱՄՊԱՆ</b>, ան. Մժեղ սպանող,  մժեղները ոչնչացնող:  <b>ՄԺԵՂԱՐԳԵԼ</b>, ան. գ. Մժեղների մուտքն  արգելող (յարմարանք):  <b>ՄԺԻԿ</b>, գ. Ընդհանրապէս փոքր միջատ:  <b>ՄժՂՈՒՔ</b>, գ. Քունը տանելիս թմրու-  թիւն, մրափ:  <b>ՄժՂԻԿ</b>,  <b>ՄժՂՈՒԿ</b>, գ. Մանր՝ փոքր մժեղ:  <b>1. ՄժՈՒԺ</b>, գ. Եփած եւ քացախի մէջ</p>
--	---

<p>պահած ոչխարի տոտիկներ:</p> <p><b>2. ՄԺՈՒԺ</b>, ան. Շփոթուած, շշմած, մտազբաղ:</p> <p><b>3. ՄԺՈՒԺ</b>, ան. Մանր, փոքրիկ:</p> <p><b>ՄԺՈՒԼ</b>, գ. Խօսակցութեամբ զրոյցներով ժամանակ անցկացնելը:</p> <p><b>ՄԺՈՒԼԵԼ</b>, չբ. Խօսակցութեամբ ժամանակ անցկացնել:</p> <p><b>1. ՄԻ</b>, թւ. ան. <i>S.</i> Մէկ: Ամէն մի: Մէկ-մէկ: Մի ուն:</p> <p><b>2. ՄԻ՛</b>, մկ. Արգելք արտայայտող բառ: Երբ արգելքը վերաբերում է մի քանի անձի՝ ժող. լեզուում յաճախ գործ է անուում մի՛ք:</p> <p><b>ՄԻԱԲԱՆ</b>, ան. Մէկ խօսքի, իրար հետ համաձայն: Միաբերան, միաբերութեան անդամ:</p> <p><b>ՄԻԱԲԱՆԱԲԱՐ</b>, մկ. Միաբան կերպով, միաբանութեամբ:</p> <p><b>ՄԻԱԲԱՆԱԿԱՆ</b>, ան. Միաբան համաձայն: Միաբանութեան պատկանող:</p> <p><b>ՄԻԱԲԱՆԱԿԵԱՑ</b>, ան. (Կրօն.) Միաբան՝ միասին ապրող (վանական):</p> <p><b>ՄԻԱԲԱՆԱԿՄՅՑ</b>, ան. (Կրօն.) Միեւնոյն միաբանութեան անդամ եղող:</p> <p><b>ՄԻԱԲԱՆԱՊԷՍ</b>, մկ. Միաբան կերպով:</p> <p><b>ՄԻԱԲԱՆԱՍԷՐ</b>, ան. Միաբանութիւն սիրող:</p> <p><b>ՄԻԱԲԱՆԵԼ</b>, նբ. <i>S.</i> Միաբանեցնել: չբ. Խօսքերը մէկ անել: Համերաշխ լինել:</p> <p><b>ՄԻԱԲԱՆՈՂ</b>, (Կրօն.), <i>S.</i> Ունիտոռ: Կայթողիկէ եկեղեցւոյ ճիւղ մը:</p> <p><b>ՄԻԱԲԱՆՅԹ</b>, ան. Բնոյթով իրար նման:</p> <p><b>ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Միաբան լինելը, համաձայնութիւն:</p> <p><b>ՄԻԱԲԱՆՈՒՀԻ</b>, գ. (Կրօն.) Կոյս-միաբան:</p> <p><b>ՄԻԱԲԱՇԽ</b>, ան. գ. (Հանր.) Հանրահաշուական քանակ:</p> <p><b>ՄԻԱԲԱՌԱՉ</b>, ան. մկ. Միասին բառաչելով:</p>	<p><b>ՄԻԱԲԱՐԲԱՌ</b>, ան. մկ. Մի լեզուով, միեւնոյն լեզուով:</p> <p><b>ՄԻԱԲԱՐՁԻ</b>, մկ. Մի բարձով:</p> <p><b>ՄԻԱԲԵԻԵՈՒՅԻՆ</b>, ան. (Ֆիզ.) (Ելեկտրական հաղորդիչ), որ մի բեւեռ ունի:</p> <p><b>ՄԻԱԲԵՐԱՆ</b>, ան. մկ. Մի բերանով:</p> <p><b>ՄԻԱԲԼԹԱԿ</b>, ան. (Բուս.) Մի բլթակ ունեցող:</p> <p><b>ՄԻԱԲՆԱԿ</b>, ան. Միասին մի տեղում բնակող: (Ածբ.) Նա, որ Քրիստոսի մէջ դաւանում է մի բնութիւն (միաւորուած երկու բնութիւնից): Հկր. Երկաբնակ:</p> <p><b>ՄԻԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. (Կրօն.) Միաբնակ լինելը:</p> <p><b>ՄԻԱԳԻՐ</b>, ան. Մի գրից կմ տառից բաղկացած (վանկ):</p> <p><b>ՄԻԱԳԼԽԱՆԻ</b>,  <b>ՄԻԱԳԼՈՒԻՍ</b>, ան. Մի գլուխ ունեցող:</p> <p><b>ՄԻԳՇՕՐԷՆ</b>, մկ. Միագիծ կերպով:</p> <p><b>ՄԻԳՄԲԷԹ</b>, ան. Մի գմբէթ ունեցող:</p> <p><b>ՄԻԱԳՈՅՆ</b>, ան. Մի գոյն ունեցող:</p> <p><b>ՄԻԱԳՈՒՄԱՐ</b>, ան. մկ. Միասին՝ մի տեղ գումարում:</p> <p><b>ՄԻԱԳՈՒՆՆ</b>, ան. մկ. Մի գունդ կազմած:</p> <p><b>ՄԻԱԴԱԽԱՆ</b>, ան. Միեւնոյն բանը դաւանող:</p> <p><b>ՄԻԱԴԷՍ</b>, ան. (Քրկն.) Մի դէմք ունեցող (բայ):</p> <p><b>ՄԻԱԴԻՄԻ</b>, ան. Միատեսակ: Հկր. Բազմադիմի:</p> <p><b>ՄԻԱԴՈՒԹԻՒՆ</b>, գ. Միասին դրում լինելը:</p> <p><b>ՄԻԱԶԳԻ</b>, ան. Միեւնոյն ազգից, համագգի:</p> <p><b>ՄԻԱԶՍ</b>, գ. Վնասակար գազեր:</p> <p><b>ՄԻԱԶՕՐ</b>, <i>S.</i> Համագոր:</p> <p><b>ՄԻԱԹԵԻ</b>, ան. Մի կմ մի գոյգ թել ունեցող: Հկր. Բազմաթել:</p> <p><b>ՄԻԱԹԵՐԹ</b>, ան. (Բուս.) Որի ծաղկա-</p>
---	--

պատեանը բաղկացած է միացած թերթերից:  
**ՄԻԱԹԻԻ**, ան. Միեւնոյն թուով:  
**ՄԻԱԺԱՍԱՆԱԿ**, ան. մկ. Միեւնոյն ժամանակում կատարուող:  
**ՄԻԱԺՈՒՄ**, ան. Օրական մէկ ժամ ուտող, ծով պահող:  
**ՄԻԱԼԱՐ**, ան. մկ. Շարունակաբար:  
**ՄԻԱԼԵԶՈՒ**, ան. Մի լեզու ունեցող:  
*Նոյն լեզուով:*  
**ՄԻԱԼՈՒԾ**, ան. մկ. Միասին լծուած:  
**ՄԻԱՄԱՌՆԵԼ**, նր. Իրար հետ խառնելով միատրել:  
**ՄԻԱՄՈՒՌ**, ան. մկ. Խոնուած:  
**ՄԻԱՄՈՒՐՁ**, ան. (Բուս.) (Բոյս), որի բույր փոշանօթները իրար հետ միացած մի խրճիկ են կազմում:  
**ՄԻԱՄՐՁԻԿ**, ան. (Բուս.) Մի խրճիկ կազմող:  
**ՄԻԱՄՕՍՔ**, ան. մկ. Խօսքերը մէկ արած:  
**ՄԻԱԾԱԼ**, ան. Մի անգամ ծալուած:  
**ՄԻԱԾԱԿ**, ան. Մի ծակ ունեցող:  
**ՄԻԱԾԱՐԻԿ**, ան. Որ միայն մի ծաղիկ է տալիս:  
**ՄԻԱԾԻԼ**, ան. (Բուս.) Գրոցի վրայ մի ծիլ ունեցող:  
**ՄԻԱԾԻՆ**, ան. գ. Մինուճար: (Կրօն.)  
*Յատկապէս՝ մակդիր Քրիստոսի:*  
**ՄԻԱԾԻՐ**, ան. Մի ծիր ունեցող:  
**ՄԻԱԾՆԱԷԶ**, ան. (Կրօն.) Որտեղ իջել է միածինը:  
**ՄԻԱԾՆՈՒՆՂ**, ան. Միասին ծնուած, ծննդակից:  
**ՄԻԱԿ**, գ. Առաջինը թուերի մէջ:  
**ՄԻԱԿԱՍ**, ան. մկ. Համակամ, կամակից:  
**ՄԻԱԿԱՆԻ**, ան. Մի աչք ունեցող:  
**ՄԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Միական լինելը, միութիւն, միատրութիւն:  
**ՄԻԱԿԱՌՈՅՑ**, ան. Միանման կառուցում:

**ՄԻԱԿԱՍԱՐ**, ան. Մի կատար ունեցող:  
**ՄԻԱԿԱՐԾԻՔ**, գ. Նոյն կարծիքն ունենալը:  
**ՄԻԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ**, գ. Համակարծիք լինելը:  
**ՄԻԱԿԵՂԵԻ**, ան. Մի կեղեւ ունեցող (ծառ):  
**ՄԻԱԿԵՆՑԱՂ**, ան. Միասին կեանք վարող՝ ապրող, կենակից:  
**ՄԻԱԿԵՐՊ**, ան. մկ. Մէկ կերպ, մէկ տեսակ:  
**ՄԻԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ**, գ. Միակերպ լինելը:  
**ՄԻԱԿԻՆ**, ան. Մի կին առնող:  
**ՄԻԱԿՆ**, Տ. Միականի:  
**ՄԻԱԿՆՈՑ**, գ. Մի աչքի ակնոց:  
**1. ՄԻԱԿՆՈՒԹԻՒՆ**, գ. Միականի լինելը:  
**2. ՄԻԱԿՆՈՒԹԻՒՆ**, գ. Միակին լինելը:  
**ՄԻԱԿՇԻՈ**, ան. Նոյն կշիռը ունեցող:  
**ՄԻԱԿՈՂՄԱՆԻ**, ան. մկ. Մի կողմ ունեցող:  
**ՄԻԱԿՈՂՄԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Միակողմանի լինելը:  
**ՄԻԱԿՈՅՍ**, Տ. Միակողմ:  
**ՄԻԱԿՏԻ**, ան. գ. Մի կուտ ունեցող, խաղողի մի տեսակը:  
**ՄԻԱԿՏՈՐ** } ան. Որ ամբողջապէս մի կտորից է:  
**ՄԻԱԿՏՈՐ** }  
**ՄԻԱԿՐՕՆ**, ան. Միեւնոյն կարգը՝ սովորութիւններն ունեցող:  
**ՄԻԱԿՑՈՐՂ**, ան. Իրար հետ կցորդուած միացած:  
**ՄԻԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. (Քրկն.) Երկու վանկի՝ աղուելով իրար կցուել ու մի վանկ կազմելը արտասանութեան մէջ:  
**ՄԻԱՀԱՍՈՒՌ**, ան. մկ. Բողոքը միասին մի տեղ խմբուած:  
**ՄԻԱՀԱՅՐ**, ան. Մի հորից:  
**ՄԻԱՀԱՆԴԵՐՁ**, ան. Մի զգեստ ունեցող:  
**ՄԻԱՀԱՌԱՉ**, ան. մկ. Միեւնոյն կմ միա-



<p>սին հառաչանքով:  <b>ՄԻԱՀԱՍՄԱԿ</b>, ան. Նոյն հասակի:  <b>ՄԻԱՀԱՍՈՐ</b>, ան. Մի հատորից բաղկացած: Հկր. Բազմահատոր:  <b>ՄԻԱՀԱՐԹ</b>, ան. մկ. Հարթ եւ հաւասար:  <b>ՄԻԱՀԱԻԱՆ</b>, ան. մկ. Ընդհանուր հաւանութեամբ եղած:  <b>ՄԻԱՀԱԻԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Միահաւան լինելը:  <b>ՄԻԱՀԱԻԱՍԱՐ</b>, ան. Բրար հաւասար:  <b>ՄԻԱՀԱԻԱՏ</b>, ան. Միենոյն հաւատի:  <b>ՄԻԱՀԱԻԱՔ</b>, ան. Միասին՝ մի տեղ հաւարում:  <b>ՄԻԱՀԵՇԱՆ</b>, ան. մկ. Նա որ մենակ կրում է հեծան՝ իշխանական գաւազան. բացարձակ միայեւ:  <b>ՄԻԱՀԵՇԱՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Ինքնակալութիւն:  <b>ՄԻԱՀՆՉԻՒՆ</b>, ան. Մի հնչիւն ունեցող:  <b>ՄԻԱԶԱՅՆ</b>, ան. մկ. Մէկ ձայնով, համաձայն: (Երած.) Եղանակ կմ նուագ: Հկր. Բազմաձայն, քառաձայն: (Քրկն.) Մէկ պարզ ձայն ունեցող: Հկր. Երկբարբառ:  <b>ՄԻԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Միաձայն լինելը:  <b>ՄԻԱՉԵԻ</b>, ան. Միենոյն ձեւն ունեցող:  <b>ՄԻԱՉԵԻՈՒԹԻՒՆ</b>, գ. Միաձեւ՝ միատեսակ լինելը:  <b>ՄԻԱՉԻ</b>, ան. Մէկ ձի ունեցող:  <b>ՄԻԱՉՈՅԼ</b>, ան. Չուլուածք: Միակամ:  <b>ՄԻԱՉՈՒԼՈՒՄ</b>, գ. Միաձուլելը:  <b>ՄԻԱՃԱԿԱՍ</b>, բ. Մէկ ճակատով:  <b>ՄԻԱՃԱՇԱԿ</b>, ան. Օրը մի անգամ ճաշակող՝ ուտող:  <b>ՄԻԱՄԱՆԱԿ</b>, ան. (Տաղաչ.) Մի ամանակ ունեցող:  <b>ՄԻԱՄԵԱՅ</b>, ան. Մէկ տարեկան:  <b>ՄԻԱՄԻՏ</b>, ան. մկ. Մէկ մտքի: Հկր. Երկմիտ:  <b>ՄԻԱՄՏՕՐԷՆ</b>, մկ. Միամիտ կերպով, միամտաբար:  <b>ՄԻԱՅԱՆԳ</b>, ան. (Ոտանաւոր), որի բո-</p>	<p>լոր տողերը միենոյն յանգն ունեն:  <b>ՄԻԱՅԱՐ</b>, ան. մկ. Մէկը միւսին յարած:  <b>ՄԻԱՅԱՐԵԼ</b>, նբ. Կցել:  <b>ՄԻԱՅԱՐԿ</b>, ան. Մի յարկ ունեցող:  <b>ՄԻԱՅՆ</b>, ան. մկ. Մենակ, առանձնացած: Ինքը մենակ: Լոկ, պարզ: Սակայն: Պայմանով որ:  <b>ՄԻԱՅՆԱԲԱՐ</b>, մկ. Մենակ դրութեամբ:  <b>ՄԻԱՅՆԱԳՈՐԾ</b>, ան. մկ. Մենակ գործող:  <b>ՄԻԱՅՆԱԿ</b>, ան. Մենակ, առանց օգնականի:  <b>ՄԻԱՅՆԱԿԵՐ</b>, ան. Մենակ ուտող:  <b>ՄԻԱՅՆԱԿԵԱՅ</b>, Տ. Մենակեաց:  <b>ՄԻԱՅՆԱԿԵՑԱԲԱՐ</b>, մկ. Իբրեւ միայնակեաց:  <b>ՄԻԱՅՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ</b>, Տ. Մենակեցութիւն:  <b>ՄԻԱՅՆԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Միայնակ լինելը:  <b>ՄԻԱՅՆԱՆԱԼ</b>, չբ. Մենակ ապրել:  <b>ՄԻԱՅՆԱՌՈՐ</b>, ան. Առանձին ապրող, զատուած:  <b>ՄԻԱՅՆԻԿ</b>, մկ. Միայնակ, մենակ, ջոկ:  <b>ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Միայն լինելը: Առանձնութիւն:  <b>ՄԻԱՅՐ</b>, ան. (Կին), որ միաժամանակ մի ամուսին ունի:  <b>ՄԻԱՅՕՂ</b>, ան. Մի յօղ ունեցող:  <b>ՄԻԱՆԱԼ</b>, չբ. Մէկ դառնալ, մէկտեղել: Զօղուել, կցուել: Միաբանել, դաշինքով կապուել: Համակարծիք լինել, Մէկտեղել: (Քիմ.) Իրար հետ բաղադրուելով մի նոր մարմին գոյացնել:  <b>ՄԻԱՆԳԱՄ</b> } մկ. Մէկ անգամ, առանց  <b>ՄԻԱՆԳԱՄ</b> } կրկնուելու:  <b>ՄԻԱՆԳԱՄԱՅՆ</b>, մկ. Մէկ անգամից, մի նուագում:  <b>ՄԻԱՆԻՄՏ</b>, ան. Մի նիստ ունեցող:  <b>ՄԻԱՆՁՆ</b>, ան. գ. Մենակեաց:  <b>ՄԻԱՆՁՆԱՆԱԼ</b>, չբ. Միանձն դառնալ:  <b>ՄԻԱՆՁՆԵԱՅ</b>, ան. Միայն մի անձով,</p>
---	--

մենակ:

**ՄԻԱՆՁՆՈՒԹԻՒՆ**, գ. Միանձն լինելը:

**ՄԻԱՆՁՆՈՒՂԻ**, ած. գ. Միանձն իգական սեռից: Մայրապետուհի:

**ՄԻԱՆՄԱՆ**, ած. Մէկը միւսին նման:

**ՄԻԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Միանման լինելը:

**ՄԻԱՆՇԱՆ**, ած. Միեւնոյն նշանը կրող:

**ՄԻԱՆՇԱՆԱԿՕՐԷՆ**, բ. Անվիճելիօրէն, անկասկած:

**ՄԻԱՆՈՒԱԳ**, ած. մկ. Մէկ անգամ կատարուող: Մէկ անգամից: Նոյն կերպ

**ՄԻԱՆՈՒՆ**, ած. Միայն մի անուն ունեցող:

**ՄԻԱՇԱԲԱԹ**, գ. Շաբաթ օրուան յաջորդող առաջին օրը:

**ՄԻԱՇԱՐ**, ած. մկ. Մէկ շարքով, յաջորդաբար:

**ՄԻԱՇԱՂՈՒԹԻՒՆ**, գ. Միաշունչ լինելը:

**ՄԻԱՇՈՒՐԹՆ**, ած. Միալեզու, մի լեզու ունեցող:

**ՄԻԱՋԱՓ**, ած. Միեւնոյն չափի:

**ՄԻԱՋԵԱՅ**, ած. Մի այլ ունեցող:

**ՄԻԱՊԱՂԱՂ**, ած. Մի զանգուած կազմող, միաձոյլ: Միակերպ, միօրինակ ձանձրացնող:

**ՄԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ**, գ. (Եկեղ.) Մի աստուած պաշտելը:

**ՄԻԱՊԱՏԵԱՆ**, ած. Մի պատեան ունեցող:

**ՄԻԱՊԱՍԻԿ**, ած. մկ. Մի անգամ վերցնում:

**ՄԻԱՊԱՍԻԻ**, ած. Միեւնոյն պատուին արժանի:

**ՄԻԱՊԱՍՍՈՒՃԱՆ**, ած. Միայն մի պատմութեան ունեցող:

**ՄԻԱՊԱՐ**, ած. մկ. Մի պար:

**ՄԻԱՊԱՐԵԳՕՏ**, ած. Մի պարեգօտ միայն ունեցող:

**ՄԻԱՊԵՏ**, ած. գ. Մի երկրի՝ պետութեան միակ պետ:

**ՄԻԱՊԵՏԱԿԱՆ**, ած. Միապետին յա-

տուկ: Միապետութեան յատուկ: Հկո. Հանրապետական:

**ՄԻԱՊԵՏԵԼ**, չբ. Միակ պետ լինել: Իբրեւ միապետ երկիրը կառավարել:

**ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ**, գ. Միակ պետ իշխան լինելը:

**ՄԻԱՊԵՏՕՐԷՆ**, մկ. Իբրեւ միապետ:

**ՄԻԱՊԷՍ**, մկ. Միեւնոյն կերպով:

**ՄԻԱՊԻՇ**, ած. Մի հայեացք ձգած:

**ՄԻԱԶԱՆ**, ած. մկ. Մի ջանքով:

**ՄԻ ԱՌ ԺԱՄԱՆԱԿ**, մկ. Առ ժամանակ, մի կարճ ժամանակով:

**ՄԻԱՍԱՅՐԻ**, ած. գ. Մի սուր բերան ունեցող:

**ՄԻԱՍԱՅՐԻԿ**, գ. Միասարի սուր:

**ՄԻԱՍԵՌԱԿԱՆ**, գ. (բժշկ.) Համասեռամու:

**ՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Համասեռամոլութիւն:

**ՄԻԱՍԵՐՄ**, ած. (Բուս.) Մի սերմ ունեցող (պտուղ):

**ՄԻԱՍԷՐ**, ած. Մի սիրով իրար հետ կապում:

**ՄԻԱՍԻՆ**, մկ. Մէկտեղ, մէկ տեղում: Միաժամանակ:

**ՄԻԱՍԻՐՏ**, ած. Մի սիրտ, մի հոգի եղած:

**ՄԻԱՍԻՒՆ**, ած. Մի սին ունեցող:

**ՄԻԱՍՍԲԱԿ**, ած. Ամէն մի ոտքի վրայ մի սմբակ ունեցող:

**ՄԻԱՍՆԱԲԱՐ**, մկ. Միասին:

**ՄԻԱՍՆԱԿԱՆ**, ած. Իրար հետ:

**ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Միասնական լինելը: Համախմբում:

**ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ**, գ. Միասին լինելը:

**ՄԻԱՍՆՈՒՆՂ**, ած. Միասին սնում, սննդակից:

**ՄԻԱՍՏԱՍՈՔՍ**, ած. Մի ստամոքս ունեցող:

**ՄԻԱՍՏԵՂՆ**, ած. Մի ստեղնօղորուն ունեցող: Յօղուն, դաշնակի մասը:

**ՄԻԱՍՏԻ**, ած. Մի ստինք՝ մի ծիծ ունե-

ցող:  
**ՄԻԱՍՏՈՒԱԾԵԱՆ**, ած. (Կրօն.) Մի աստուած ընդունող:  
**ՄԻԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ**, գ. (Կրօն.) Կրօն, վարդապետություն, որ դաւանում է միայն մի աստուածոյ:  
**ՄԻԱՍՐՏՈՒԹԻՒՆ**, գ. Միասիրտ՝ միաբան լինելը:  
**ՄԻԱՎԱՆԿ**, ած. Մի վանկից բաղկացած:  
**ՄԻԱՎԵՐԱՐԿՈՒ**, ած. Մի վերարկու ունեցող:  
**ՄԻԱՏԱՍ**, ած. Մի ատամ ունեցող:  
**ՄԻԱՏԱՐԱԶ**, ած. մկ. Միեւնոյն կերպի, միատեսակ: Նման հագուստով:  
**ՄԻԱՏԱՐ**, ած. Մի նիւթից բաղկացած:  
**ՄԻԱՏԱՐԱՊԷՍ**, մկ. Միատարր կերպով:  
**ՄԻԱՏԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Միատարր լինելը:  
**ՄԻԱՏԵՂ**, մկ. Միասին:  
**ՄԻԱՏԵՍԱԿ**, ած. մկ. Մի տեսակ:  
**ՄԻԱՏԵՍԱԿԱՐԱՐ**, ած. Միատեսակ դարձնող:  
**ՄԻԱՏԵՍԱԿՈՒԹԻՒՆ**, գ. Միատեսակ լինելը:  
**ՄԻԱՏԵՐԵՒ**, ած. Մի տերէւ ունեցող:  
**ՄԻԱՏՆՈՒԹԻՒՆ**, գ. Միատուն լինելը:  
**ՄԻԱՏՈՂՍ**, ած. Մի տոհմ կազմող:  
**ՄԻԱՏՈՒՆ**, ած. Միեւնոյն տնից եղող, տնակից, ընտանի:  
**ՄԻԱՐԱՐ**, ած. Տ. Ունիտոռ: Մէկ արարով:  
**ՄԻԱՐԱՐԱԿԱՆ**, Տ. Ունիտոռական:  
**ՄԻԱՐԱՐՈՒԱԾ**, ած. Մի արարուածից բաղկացած (թատրոնական գրուածք):  
**ՄԻԱՑԵԱՆ**, ած. Միացած: Միասին հաւաքուած: Կաթողիկէ եկեղեցականներու ճիւղը ուր միջնադարուն կառաքուէին այլադաւանները կաթողիկէ դարձնելու:  
**ՄԻԱՑԵՂ**, ած. Միեւնոյն ցեղից:

**ՄԻԱՑՈՒՄ**, գ. Միանայր:  
**ՄԻԱՑՈՒՑԻՉ**, ած. Նա որ միացնում է, միացնող:  
**ՄԻԱԻՈՐԱԲԱՐ**, մկ. Իբրեւ միատր:  
**ՄԻԱԻՈՐԵԼ**, Տ. Միացնել:  
**ՄԻԱԻՈՐԱԿԻՑ**, ած. Յարակից:  
**ՄԻԱԻՈՐԻՉ**, ած. Նա որ միատրում է:  
**ՄԻԱԻՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Միատր՝ եզական:  
**ՄԻԱԻՈՐՈՒՄ**, գ. Միատրելը: Կցելը: (Ռազմ.) Ջորքերի խումբ:  
**ՄԻԱՓԱԿ**, ած. Իրար հետ պինդ կապուած փակուած:  
**ՄԻԱՓԵՂԿԵԱՆ**, ած. (Կենդ.) Մի փեղկ ունեցող:  
**ՄԻԱՓՈՐ**, ած. Միեւնոյն փորից:  
**ՄԻԲԱՆԵՂԷՆ**, մկ. Միաբանութեամբ:  
**ՄԻԳԱԼԻՍ**, գ. (Կենդ.) Դաշտային մկան մեծութեան գիշակեր կենդանի:  
**ՄԻԳԱՆԱՈՆ**, ած. Որտեղ մէզ մշուշ կայ:  
**ՄԻԳԱՆԱԼ**, չբ. Պղտորել:  
**ՄԻԳԱՊԱՏ**, ած. Մէզով պատած, մանախլապատ:  
**ՄԻԳԱՊԱՏԵԼ**, նբ. Մէզով պատել:  
**ՄԻԳԱՊԱՏՈՒԹԻՒՆ**, գ. Միգապատ լինելը:  
**ՄԻՂՈՒՅԷ**, Տ. Մի՛ի տակ:  
**ՄԻԳՐԷՆ**, գ. (Յուն.-ֆրանս.) Նեարդային գլխացաւ, սովորաբար գլխի մի կողմում:  
**ՄԻՂԱՍԵԱՆ**, ած. Մի դասարանից բաղկացած:  
**ՄԻԵՂԵՆ**, ած. Միակ, պարզ, միայնակեաց, եզական:  
**ՄԻԵՂԷՆՈՒԹԻՒՆ**, գ. Միեղէն լինելը: Միօրինակ, միութիւն, եզականութիւն:  
**ՄԻԵՐԱՆԳ**, ած. Մի երանգ՝ գոյն ունեցող:  
**ՄԻՆԲԵՔ**, մկ. Երբեք թող չ...:  
**ՄԻԶ**, գ. Ոջի նման փոքր միջատ:  
**ՄԻԶԱԲԵՐ**, ած. Մէզ բերող, մէզը շա-

<p><i>տացնող:</i>  <b>ՄԻԶԱՏՈՐԱՆ</b>, գ. (Կազմախ.) Տ. Միզանցք:  <b>ՄԻԶԱՄԱՆ</b>, գ. Միզելու աման:  <b>ՄԻԶԱՆՑՔ</b>, գ. (Կազմախ.) Երկու թանթեայ խողովակներ:  <b>ՄԻԶԱՉԱՓ</b>, գ. Հեղուկաչափի մի տեսակը:  <b>ՄԻԶԱՊԱՐԿ</b>, գ. Միզափամփուշտ:  <b>ՄԻԶԱՐԱՆ</b>, գ. Միզելու համար փոքր շինուածք փողոցներում եւ հասարակական տեղերում:  <b>ՄԻԶԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ</b>, գ. (Ախտաբ.) Հիւանդութիւն: Միզելու դժուարութիւն:  <b>ՄԻԶԱՐՁԱԿ</b>, ան. Նա որ մէզը չի կարող պահել. շոան:  <b>ՄԻԶԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Հիւանդութիւն, որի ժամանակ մէզը շատ առատանում ու յաճախում է:  <b>ՄԻԶԱՓԱՍՓՈՒՇՏ</b>, գ. (Կազմախ.) Փամփուշտ, որի մէջ հետզհետէ հաւաքուում է մէզը երկկամունքներից: Միզապարկ:  <b>ՄԻԶԱՔՆՆՈՒԹԻՒՆ</b>, գ. Մէզի քննութիւն:  <b>ՄԻԶԵԼ</b>, նբ. Մէզը միզափամփուշտից բնական ճանապարհով դատարկել:  <b>ՄԻԶԵՑՆԵԼ</b>, Միզել տալ:  <b>ՄԻԶՆ</b>, գ. Բարակ մաշկ, թաղանթ:  <b>ՄԻԶՈՒԿ</b>, գ. Մէզը դուրս գալու խողովակ:  <b>ՄԻ ՀՍՏ ՄԻՈՋԷ</b>, Տ. Մի'ի տակ:  <b>ՄԻ՞ԹԷ</b>, մկ. Չլինի՞ թէ: Արդեօք:  <b>ՄԻԹՈՒՏՈՍ</b>, գ. Մի տեսակ ազդու դեղթափ թոյների դէմ:  <b>ՄԻԹԲ</b>, գ. (Յուն.) (Եկեղ.) Եպիսկոպոսական թագ: Խայթ: Խոյր:  <b>ՄԻԹԲԱԿԻՐ</b>, ան. Միթր կրող: Խոյրագիր:  <b>ՄԻԺԻԿ</b>, գ. Ճանճ:  <b>ՄԻԼ</b>, գ. Ճահճուտ:  <b>ՄԻԼԻԱՐԴ</b>, թւ. ան. Հազար միլիոն:  <b>ՄԻԼԻԱՐԿԱՏԷՐ</b>, ան. Միլիարդի կարող-</p>	<p><i>ութիւն ունեցող:</i>  <b>ՄԻԼԻԱՐԿԱՏԻՐՈՒՇԻ</b>, գ. Կին միլիարդատէր, նաեւ՝ միլիարդատիրոջ կին:  <b>ՄԻԼԻՄԵՏՐ</b>, գ. Մետրի մի հազարերորդ մասը:  <b>ՄԻԼԻՄԵՏՐԱՆՈՑ</b>, ան. Մէկ միլիմետր չափս ունեցող:  <b>ՄԻԼԻՈՆ</b>, թւ. ան. Հազար անգամ հազար:  <b>ՄԻԼԻՈՆԱՆՈՑ</b>, ան. Մի միլիոն արժեքող:  <b>ՄԻԼԻՈՆԱՉԱՓ</b>, ան. Մի միլիոնի չափ:  <b>ՄԻԼԻՈՆԱԽՈՐ</b>, ան. Միլիոններով հաշուուող: (Թուաբ.) Գրուած թուերի մէջ եօթներորդ թիւը:  <b>ՄԻԼԻՈՆԱՏԷՐ</b>, ան. գ. Միլիոնի տէր:  <b>ՄԻԼԻՈՆԵՐՈՐԴ</b>, ան. Ամբողջի միլիոն մասից մէկը:  <b>ՄԻՂԱՄԿԱՆԻ</b>, ան. Մի հասկ ունեցող:  <b>ՄԻՂԸ</b>, գ. (Կրօն) Զրադաշտական պարսիկների աստուածը:  <b>ՄԻՂՐԱԿԱՆ</b>, ան. Միհրին յատուկ:  <b>ՄԻՂՐԱՆԻԿ</b>, գ. Քաղցր տանձի մի տեսակ:  <b>ՄԻՂԵՌԱՆԻ</b>, ան. Մէկ ձեռք ունեցող:  <b>ՄԻՄԵԱՆՑ</b>, անձն. դեր. Մէկը միւսի, մէկը միւսին, իրար, իրարու:  <b>ՄԻՄԻԱՅՆ</b>, մկ. Միայն մի, միայն (սաստկացրած):  <b>ՄԻՄԻԿՐԻԱ</b>, գ. (Կենդան.) Մի քանի կենդանիների յատկութիւնը:  <b>ՄԻՅԱՐԿԱՆԻ</b>, Տ. Միայարկ:  <b>ՄԻՆԱԿ</b>, Տ. Մենակ: Առանձին:  <b>ՄԻՆԱԿՈՒԿ</b>, մկ. Մենակ:  <b>ՄԻՆԵԿ</b>, մկ. Մենակ, առանձին:  <b>ՄԻՆՈՎԱՑՈՒԼ</b> } գ. (Դիցաբ.) Խառնագազան, կէտը մարդ, կէտը ցուլ:  <b>ՄԻՆՈՐ</b>, ան. (Լատ.-իտալ.) (Երաժ.) Երոպական երաժշտութեան մէջ այն գամման, որի մէջ, բարձրանալիս, երկրորդից երրորդ եւ հինգերորդից</p>
--	--

վեցերորդ աստիճանները կիսաձայն են: Հկո. Մաժոր:

**ՄԻՆՉ**, նախդր. Յոյց է տալիս ժամանակի սահման: Յոյց է տալիս տեղի՝ տարածության սահման: Ժամանակ: Երբ, տակաւին, ատեն:

**ՄԻՆՉԴԵՆ**, մկ. Մինչ դեռ, այն ժամանակ որ դեռ, երբ դեռ: Երբոր հակառակը:

**ՄԻՆՉԵՒ**, Յոյց է տալիս ժամանակի սահման: Յոյց է տալիս տեղի՝ տարածության սահման: Դեռ որքան:

**ՄԻՆՉԳՆԱԺԱՍՍՅԻՆ**, ւձ. Մինչեւ ձգնաժամը եղած:

**ՄԻՆՉՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ**, ւձ. Յեղափոխությունից առաջ գոյություն ունեցող:

**ՄԻՇՏ**, մկ. Անհուն ժամանակ, առանց սկզբի, առանց վերջի: Շարունակ: Ամէն անգամ: Ընդ միշտ: Յաւերժ:

**ՄԻՇՏՆԱԹԱՅ**, ւձ. Միշտ ընթացող:

**ՄԻՈՏԱՆԻ**, ւձ. Մէկ ոտք ունեցող:

**ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ**, ւձ. Միութեան յատուկ:

**ՄԻՈՒԹԻՒՆ**, գ. Մէկ՝ միակ լինելը, եզական լինելը: Միացում, միաւորում: Հկո. Բաժանում: Դաշն, համաձայնություն:

**ՄԻՈՒԿԱՒՈՐ**, ւձ. Մի ունկ ունեցող:

**ՄԻՋԱԲԵԿՈՒԹԻՒՆ**, գ. Մէջքը կոտրուելը:

**ՄԻՋԱԳԱՐ**, ւձ. Միջուկը փտած:

**ՄԻՋԱԳԵՏ(Ե)ՑԻ**, ւձ. Միջագետքի բնակիչ:

**ՄԻՋԱԳԵՏՔ**, գ. Երկու գետերի մէջ ընկած երկիրներ:

**ՄԻՋԱԳԻԾ**, գ. Մէջտեղի կմ միջին զիծը:

**ՄԻՋԱԴԷՊ**, գ. Անկարեւոր, փոքր մի դէպք, որ տեղի է ունենում մի գործի ընթացքում:

**ՄԻՋԱԴԻՐ**, Տ. Մէջդիր:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**, ւձ. Ինչ որ վերաբերում է բոլոր ազգերին կմ մի քանի ազգերի:

**ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆ**, ւձ. Նա որ կողմնակից է միջազգայնութեան գաղափարին:

**ՄԻՋԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ**, գ. Ուսմունք, ըստ որի աշխատաւորները պէտք է իրար հետ կապուած լինին:

**ՄԻՋԱԹԱՂԱՆԹ**, գ. Մէջտեղի թաղանթ:

**ՄԻՋԱԹՈՒՄԲ**, գ. Մէջտեղի թումբ:

**ՄԻՋԱԽԱՂ**, գ. Պար կմ այլ թեթեւ զբօսանք թատերական ներկայացման գործողությունների միջեւ:

**ՄԻՋԱՄ**, ւձ. Մէջը լցրած:

**ՄԻՋԱՄԱՆՑ**, ւձ. (Քրկն.) (Բառ)՝ որ անանցական մասնիկը կրում է մէջտեղում:

**ՄԻՋԱՄԵՐ**, գ. Միջին ծերութեան հասած:

**ՄԻՋԱԿ**, ւձ. Երկու ծայրերի միջին տեղը բռնող: Մեծի եւ փոքրի միջին տեղը բռնող: Միջավայր:

**ՄԻՋԱԿԱԲԱՐ**, մկ. Միջակ կերպով:

**ՄԻՋԱԿԱԴԻՐ**, ւձ. Միջակ դիրք:

**ՄԻՋԱԿԱՍԱՐ**, գ. Չենիթ:

**ՄԻՋԱԿԱՅ**, ւձ. Մէջ տեղը գտնուող, միջին:

**ՄԻՋԱԿԱՆԱԼ**, չբ. Միջակ դառնալ:

**ՄԻՋԱԿԱՊ**, գ. Մէջքը գօտի կապելու բարձրություն գետնից:

**ՄԻՋԱԿԵՏ**, գ. Մէջտեղում գտնուած կէտ:

**ՄԻՋԱԿՈՏՈՐ**, ւձ. Մէջքը կոտրած, միջաբեկ:

**ՄԻՋԱԿՈՐ**, ւձ. Մէջտեղը կորացած՝ ներս ընկած:

**ՄԻՋԱԿՈՒԹԻՒՆ**, գ. Միջակ՝ չափաւոր լինելը: Առանձին առաւելություն չունեցող: (Քրկն.) Որակություն եւ ժամանակ նշանակող մակբայներ:

**ՄԻՋԱԿՏՈՒՐ**, ւձ. Մէջտեղից կմ մէջքից կտրուած:

**ՄԻՋԱՀԱՍԱԿ**, ւձ. Միջակ հասակ՝ բարձրություն ունեցող:

**ՄԻՋԱՀԱՍ,** *Ս. Միջասահման: Մեջտեղէն կտրուած:*

**ՄԻՋԱՀԱՏԵԼ,** *նր. Մեջտեղից կտրել:*

**ՄԻՋԱՀՈՎԻՏ,** *գ. Հովիտ երկու լեռների միջեւ:*

**ՄԻՋԱՍՍԱՏ,** *գ. Հինգ մատների միջինը:*

**ՄԻՋԱՍԲՈՒՄ,** *ած. Ամբոխի մեջ մտած:*

**ՄԻՋԱՍԽԵԼ,** *Ս. Միջամուխ լինել:*

**ՄԻՋԱՍՈՒԽ,** *ած. Մեջը մխուած, մեջը խրուած:*

**ՄԻՋԱՍՈՒՏ,** *ած. Մեջ մտնող:*

**ՄԻՋԱՍՍԱԳՐԱՅԻՆ,** *ած. Ամսագրերի միջեւ եղած:*

**ՄԻՋԱՍՏԵԼ,** *չբ. (Մի երկրի) մեջը մտնել:*

*Ուրիշների գործի, խօսքի մեջ մտնել:*

**ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆ,** *գ. Միջամտելը:*

**ՄԻՋԱՅԻՆ,** *ած. Մեջքի:*

**ՄԻՋԱՆԿԵԱԼ,** *ած. (Քերկ.) Մեջ ընկած՝ կողմնակի խօսք:*

**ՄԻՋԱՆՈՑ,** *գ. Կանանց ճակատի ոսկիների միջի մեծ ոսկին:*

**ՄԻՋԱՆՑԻԿ,** *ած. մկ. Միջովն անցնող: Միջանցիկ գնացք, (Երկաթ.), Որ անցնում է կայարանի մօտով:*

**ՄԻՋԱՆՑՔ,** *գ. Անցք՝ անցնելու տեղ երկու շինությունների կմ երկու պատերի միջեւ:*

**ՄԻՋԱՊԱՏ,** *գ. Միջի պատ:*

**ՄԻՋԱՊԱՏ,** *գ. Մեջքը պատելու՝ մեջքին կապելու շոր:*

**ՄԻՋԱՍԱՀՄԱՆ,** *գ. Միջին սահման, միջին կէտ, միջավայր:*

**ՄԻՋԱՎԱՅՐ,** *գ. Միջին տեղը, մեջտեղի տարածությունը: Նման. Մարդկային հասարակություն:*

**ՄԻՋԱՏ,** *գ. Միջատների դասին պատկանող կենդանի:*

**ՄԻՋԱՏԱԲԱՆ,** *գ. Միջատների մասնագէտ:*

**ՄԻՋԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ,** *գ. Կենդանաբանութեան ճիւղը:*

**ՄԻՋԱՏԱԿԵՐ,** *ած. Միջատներ ուտող:*

**ՄԻՋԱՏԱՍՊԱՆ,** *ած. Միջատներ սպանող:*

**ՄԻՋԱՏՆԵՐ,** *գ. (Կենդ.) Կենդանիների խիստ բազմատեսակ դաս:*

**ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ,** *գ. (Քրկն.) Խօսքի մասերից մեկը, որ արտայայտում է խօսողի կիրքը:*

**ՄԻՋԱՅԱԻ** } *գ. Մեջքի ցու:*

**ՄԻՋԱՅԱԻՈՒԹԻՒՆ** } *գ. Ինչ որ միջին տեղն է բռնում:*

**ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ,** *ած. Բուռների միջեւ եղած:*

**ՄԻՋԴԱԻԱՆԱԿԱՆ,** *ած. Տարբեր դասանանքների միջեւ եղող՝ ստեղծուող՝ գոյություն ունեցող:*

**ՄԻՋԳԱՂԹԱՎԱՅՐԱՅԻՆ,** *ած. Գաղթավայրերի միջեւ եղած:*

**ՄԻՋԳԵՏԵԱՅ,** *ած. Գետերի միջեւ եղած:*

**ՄԻՋԵԼ,** *նր. Միջից կտրել, կտրել անցնել:*

**ՄԻՋԵԻ,** *մկ. Մեջը, միջավայրում, արանքում:*

**ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ,** *ած. Երկիրների՝ ցամաքների մեջն ընկած:*

**ՄԻՋԵՐԿՐԱՅ,** *ած. Մի երկրի միջին վայրերում եղած:*

**ՄԻՋԸՆԴԵՐՔ,** *գ. (Կազմախ.) Աղիքների առագաստը:*

**ՄԻՋԻ,** *ած. Մի քանի առարկայի միջավայրում գտնուող:*

**ՄԻՋԻՆ,** *ած. Երկու ծայրերի (բարձրի եւ ցածի, աջի եւ ձախի եւն) մեջտեղը գրաւող:*

**ՄԻՋԼԵՉՈՒԱԿԱՆ,** *ած. Լեզուների միջեւ ընկած:*

**ՄԻՋԿՐՕՆԱԿԱՆ,** *ած. Մեկից աւելի կրօնների:*

**ՄԻՋՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ,** *ած. Հրատարակչությունների միջեւ եղած:*

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,** *ած. Մշակոյթների միջեւ առկայ:*

<p><b>ՄԻՋՆԱԲԱԿ</b>, գ. Տների միջև գտնուող բակ:</p> <p><b>ՄԻՋՆԱԲԵՐԴ</b>, գ. Հին քաղաքներում՝ ամենաբարձր տեղը:</p> <p><b>ՄԻՋՆԱԴԱՐ</b>, գ. Պատմական ժամանակի միջին դարերը:</p> <p><b>ՄԻՋՆԱԴԱՐԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ</b>, գ. Պատմագիտության ճիւղ, որ զբաղուում է միջնադարի ուսումնասիրությամբ:</p> <p><b>ՄԻՋՆԱԴԱՐԱՐԱԿ</b>, գ. Իրար յաջորդող դարակներից միջինը:</p> <p><b>ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ</b>, ան. Միջին դարերին յատուկ:</p> <p><b>ՄԻՋՆԱԴՐՈՒՌ</b>, գ. Փոքր դուռ, որ բացուած է մեծ դրան մէջ:</p> <p><b>ՄԻՋՆԱԺԱՍԿԵՏ</b>, ան. Միջին ժամկէտ ունեցող:</p> <p><b>ՄԻՋՆԱԼՈՒՄԻՆ</b>, գ. Լուսինը իր ամսական շրջանի միջավայրում:</p> <p><b>ՄԻՋՆԱԿ</b>, ան. Միջին տեղը գրաւող, միջին, միջակ:</p> <p><b>ՄԻՋՆԱԿԱՅՄ</b>, գ. Նաւի մէջտեղի կայմը:</p> <p><b>ՄԻՋՆԱԿԱՊ</b>, գ. Այստեղ խողովակի ամրացնող կապերը:</p> <p><b>ՄԻՋՆԱԿԱՐԳ</b>, ան. Միջին կարգի կմ աստիճանի, ութամեայ:</p> <p><b>ՄԻՋՆԱՄԱՇԿ</b>, գ. (Բուս.) Ծառերի կեղեւների երկու խաւերի միջեւ եղած մաշկը:</p> <p><b>ՄԻՋՆԱՅԱՐԿ</b>, գ. Շէնքերի միջին յարկը:</p> <p><b>ՄԻՋՆԱՇԱՐ</b>, գ. Միջին շարք:</p> <p><b>ՄԻՋՆԱՊԱՍ</b>, գ. Երկու տան միջին պատը:</p> <p><b>ՄԻՋՆԱՊԱՐԻՄՊ</b>, գ. Միջին պարիսպ:</p> <p><b>ՄԻՋՆԱՎԱՃԱՌ</b>, ան. գ. Վաճառելու եւ գնելու գործի միջնորդ:</p> <p><b>ՄԻՋՆԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ</b>, գ. Միջնավաճառի գործը:</p> <p><b>ՄԻՋՆԱՏԱՐԱՄՔ</b>, գ. Այստեղ՝ միջակայք:</p> <p><b>ՄԻՋՆԱՏՈՒՆ</b>, գ. Միջնայարկ: Հկո. Ներքնատուն:</p> <p><b>ՄԻՋՆԱՐԱՐ</b>, գ. Թատերական ընդմի-</p>	<p>ջում, դադար:</p> <p><b>ՄԻՋՆԱՐԿ</b>, գ. Միջակայքում ընկած:</p> <p><b>ՄԻՋՆԱՅԱՆՑ</b>, գ. (Բուս.) Հաստ կմ բարակ թաղանթ:</p> <p><b>ՄԻՋՆԱՔԱՐ</b>, գ. Պատի միջին շարուածքի քար:</p> <p><b>ՄԻՋՆԵԿ</b>, ան. գ. Մէջ եկող, մէջ մտնող իբրեւ միջնորդ:</p> <p><b>ՄԻՋՐՆՔ</b>, գ. (Եկեղ.) Այն օրը, որ մեծ պասի միջին կէտն է կազմում:</p> <p><b>ՄԻՋՆՈՐ</b>, գ. Նա որ միջամտում է երկու կմ աւելի մարդկանց գործերին:</p> <p><b>ՄԻՋՆՈՐԱԲԱՐ</b>, մկ. Իբրեւ միջնորդ:</p> <p><b>ՄԻՋՆՈՐԱԿԱՆ</b>, ան. Միջնորդին յատուկ, վերաբերեալ:</p> <p><b>ՄԻՋՆՈՐԱՅԻՆ</b>, ան. Միջնորդի:</p> <p><b>ՄԻՋՆՈՐԱՎՃԱՐ</b>, գ. Միջնորդային ծառայութեան համար տրուող վճար՝ միջնորդավարձ:</p> <p><b>ՄԻՋՆՈՐԵԼ</b>, չբ. Երկու առարկայի կմ երկու անձի մէջ ընկնել:</p> <p><b>ՄԻՋՆՈՐՈՒԹԻՒՆ</b>, գ. Միջնորդ լինելը:</p> <p><b>ՄԻՋՆՈՐԴԷՔ</b>, գ. Վարձատրութիւն:</p> <p><b>ՄԻՋՆՈՐՄ</b>, գ. Մէջտեղի որմ՝ պատ:</p> <p><b>ՄԻՋՆՈՐՄԱՀԱՏՈՒՄ</b>, գ. Միջնորմով առանձնացրած մաս՝ հատուած:</p> <p><b>ՄԻՋՇԱԲԱՅԻՆ</b>, ան. Շտաբների միջեւ եղած:</p> <p><b>ՄԻՋՈՑ</b>, գ. Միջին տեղը երկու կէտի մէջ:</p> <p><b>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ</b>, գ. Միջոց կմ միջոցներ ձեռք առնելը: Կազմակերպուած արարողութիւն:</p> <p><b>ՄԻՋՈՒԿ</b>, գ. Պտղի եւ նման իրերի միջին մասը:</p> <p><b>ՄԻՋՎԱՐԶԱԿԱՆ</b>, ան. Երկու վարչութիւնների միջեւ տեղի ունեցող:</p> <p><b>ՄԻՋՏԱՐԱՇՈՒՄ</b>, ան. Տարածաշրջանների միջեւ եղած:</p> <p><b>ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ</b>, ան. Երկու քաղաքների միջեւ տեղի ունեցող:</p> <p><b>ՄԻՋՕՐԷ</b>, ան. Կէսօրի, կէսօրուայ:</p>
--	--

<p><b>ՄԻՋՕՐԷԱԿԱՆ</b>, ան. Միջօրէի, կէսօրի: ան. գ. (Աստղաբ.) Երեւակայական մեծ շրջան:</p> <p><b>ՄԻՍ</b>, գ. Օրգանական նիւթ մարդու եւ այլ կենդանիների մորթի տակ, որ պատում է ոսկորները: (Կրօն.), Հեթանոսական ծէսով զոհուած կենդանու միս:</p> <p><b>ՄԻՍ-ԽԱՂՈՂ</b>, գ. Պինդ եւ մսոտ խաղող:</p> <p><b>ՄԻՍ-ՄԻՆԱԿ</b>, Տ. Մէն-մենակ:</p> <p><b>ՄԻՍՈՒՍՈՐԹԻ</b>, գ. Միս, մարմին:</p> <p><b>ՄԻՏ ՈՒ ՄՏԱՎԱՅ</b>, գ. Խոր մտածմունք:</p> <p><b>ՄԻՏԱԿԱՆԻ</b>, ան. Մետակ, չծալուած:</p> <p><b>ՄԻՏԱԿՈՂՄ</b>, գ. Միտելու կողմը:</p> <p><b>ՄԻՏՈՂԱՆԻ</b>, ան. Մի տող քաշած:</p> <p>ՄԻՏՈՒԹԻՒՆ } գ. Միտուելը, հակուելը: ՄԻՏՈՒՄ }</p> <p><b>ՄԻՏՈՒՄՆԱԻՈՐ</b>, ան. Որոշ գաղտնի դիտատրութեամբ կատարուած:</p> <p><b>ՄԻՏՈՒԵԼ</b>, չբ. Հակուել, թեքուել, տրամադրուել դէպի մէկը:</p> <p><b>ՄԻՏՔ</b>, գ. Բնական հոգու բարձրագոյն կարողութիւն: Մտածմունք, մտմտութիւն: Դատողութիւն, Դիտատրութիւն, Նպատակ: Խօսքի նշանակութիւնը: Ուշադրութիւն:</p> <p><b>ՄԻՐԳ</b>, գ. Ծառերի եւ այլ բոյսերի թարմ կլ չորացրած պտուղ:</p> <p><b>ՄԻՐՈՒՔ</b>, Տ. Սօրութ:</p> <p><b>ՄԻՐԷՋՁԻՆ</b>, գ. (Կրօն.) Մինարէի բարձունքից մահմետականներին աղօթքի հրահրող:</p> <p><b>ՄԻՐՈՒՆԷՍ</b>, գ. (Կենդ.) Օձաձկների ցեղին պատկանող ձուկ:</p> <p><b>ՄԻՐՍ</b>, ան. գ. Մէկայ:</p> <p><b>ՄԻՐԵՍ</b>, ան. Մէկ օր տեւող: Մի օրում կատարուող:</p> <p><b>ՄԻՐԻՆԱԿ</b>, ան. մկ. Միատեսակ, միակերպ:</p> <p><b>ՄԻՐԻՆԱԿԱԲԱՐ</b>, մկ. Միօրինակ կերպով:</p> <p><b>ՄԻՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ</b>, գ. Միօրինակ լինելը:</p>	<p><b>ՄԼԱԿ</b>, գ. Մոծակի մի տեսակը:</p> <p><b>ՄԼԱՐ</b>, գ. Մառախուղ:</p> <p><b>ՄԼԱԻԱՆ</b>, ան. Շատ միատող:</p> <p><b>ՄԼԱԻԵԼ</b>, չբ. Կատուի «միատ՛ւ-միատ՛ւ» ձայն հանելը:</p> <p><b>ՄԼԱԻԻՆ</b>, Տ. Մլաւոց:</p> <p><b>ՄԼԱԻՈՑ</b>, գ. Մլաւելու ձայնը:</p> <p><b>ՄԼԵԼ</b>, նբ. Մղել, կոխել: Հրել, բօթել:</p> <p><b>ՄԼԹՕՆԵՐԷՆ</b>, մկ. Մլթօնի լեզուով, փոխ. անհասկանալի լեզուով:</p> <p><b>ՄԼԹՕՆԻ</b>, գ. Մի անյայտ ցեղի անուն:</p> <p><b>ՄԼԻԿ-ՄԼԻԿ</b>, մկ. Մլալով:</p> <p><b>ՄԼԼԱԼ</b>, չբ. Մլալ, ծուխը հանդարտ բարձրանալ:</p> <p><b>ՄԼՄԼՈՒԿ</b>, Տ. Խորդենի (մարգերի):</p> <p><b>ՄԼՈՒՆ ՏԱԼ</b>, չբ. Պարապ ծամանակ անցկացնել, չնչին բաներով զբաղուել: Դանդաղ գործ անել:</p> <p><b>ՄԼՈՒԿ</b>, գ. (Կենդ.) Կիսաթելերի կլ մլուկների (bemiptera) կարգին պատկանող միջատ:</p> <p><b>ՄՄԱՄԱՈՆ</b>, ան. Մուխը հետը խառն, ծխախառն:</p> <p><b>ՄՄԱԿՈՂՈՂ</b>, ան. Մխի մէջ կոլոլուած, ծխով սեւացած:</p> <p><b>ՄՄԱՀԱՍ</b>, <b>ՄՄԱՀԱՍԵԼ</b>, Տ. Ծխահամ, - համել:</p> <p><b>ՄՄԱՀՄԱՅՈՒԹԻՒՆ</b>, գ. (Մնտ.) Հմայութիւն՝ մուխի պտոյտները դիտելով:</p> <p><b>ՄՄԱՀՈՑ</b>, գ. Մխի հոտ:</p> <p><b>ՄՄԵԼ</b>, նբ. Կոխել, խոթել:</p> <p><b>ՄՄԹԵԼ</b>, նբ. Մշտել, հրել:</p> <p><b>ՄՄԻԹԱՐ</b>, գ. Տ. Մխիթարանք:</p> <p><b>ՄՄԻԹԱՐԱԼԻՑ</b>, ան. Մխիթարանքով լի:</p> <p><b>ՄՄԻԹԱՐԱԿԱՆ</b>, ան. Մխիթարութիւն պարունակող:</p> <p><b>ՄՄԻԹԱՐԱԿԻՑ</b>, ան. Մխիթարութեան մասնակից:</p> <p><b>ՄՄԻԹԱՐԱՆՔ</b>, Տ. Մխիթարութիւն:</p> <p><b>ՄՄԻԹԱՐԵԱՆ</b>, ան. Մերաստացի Մխիթար Աբբայի հիմնած եւ նրա անունը կրող: Միաբանութիւն:</p>
--	--



**ՄԽԻԹԱՐԵԼ**, նբ. Մէկի վիշտը մեղմացնել:

**ՄԽԻԹԱՐԻՉ**, ած. Նա որ մխիթարում է:

**ՄԽԻՉ**, Տ. Ծխափող, ծխաքարջ:

**ՄԽԼՈՒ**, գ. Չուածեղի մի տեսակ:

**ՄԽԼՈՒՃ**, գ. Ջրասոյգ:

**ՄԽԿԵԼ**, նբ. Լիկեցնել, հոտեցնել:

**ՄԽՄԽԱԼ**, նբ. Թաքուն կերպով ուտել մի գողունի բան:

**ՄԽՄԽՈՏԵԼ**, չբ. Շարունակ միսալ, ծուխ արձակել:

**ՄԽՆՈՏ**, ած. Մուխ դիպած:

**ՄԽՈՏԵԼ**  
**ՄԽՈՏՈՒԵԼ** } չբ. Վրան մուխ կպչել:

**ՄԽՈՑ**, գ. (Մեք.) Գլան, որ օղախիտ կերպով հազգուած է շոգեշարժ մեքենայի սնամէջ գլանի մէջ:

**ՄԽՈՑ**, գ. Մեղուներին ծուխ տալու գործիք:

**ՄԽՈՑԱԲՈՒՆ**, գ. (Մեք.) Մետաղէ ձող:

**ՄԽՔԱՇ**, գ. Մուխը քաշող:

**ՄԽՕ**, գ. Ծաղրական մակդիր մշեցի հայերի:

**ՄԿԱՆ**, գ. Մարմնի մսեղէն մասը: (Կագմախ.) Մսեղէն խիստ նուրբ եւ առածգական թելերի խուրձ մարմնի զանազան տեղերում:

**ՄԿԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Կագմախօսութեան այն մասը, որ ուսումնասիրում է մկանները:

**ՄԿԱՆԱԿԾԿՈՒՄ**, գ. Մկանների կրծկում, մկանակծկանք:

**ՄԿԱՆԱՅԻՆ**, ած. Մկանին յատուկ, վերաբերեալ:

**ՄԿԱՆԱՆԵԱՐԴԱՅԻՆ**, ած. Մկանային եւ նեարդային:

**ՄԿԱՆՈՒՆՔ**, գ. Մկաններ:

**ՄԿԴԱԿ**, գ. Մկղակելով կար:

**ՄԿԸՕԵՆ**, ած. Կարճահասակ:

**ՄԿԸԿԱԼ**, չբ. Այծի եւ ուլի ձայն հանելը:

**ՄԿԸԿՈՑ**, գ. Մկըկալու ձայնը:

**ՄԿԻՏԱՆ**, գ. Ոզելից ըմպելիք վաճառող:

**ՄԿԼԱՀՈՏ**, գ. Խանձահոտ:

**ՄԿԼԷՉ**, գ. Մողէս (կարմրախայտ), խլէզ: Փոխ. Խորամանկ:

**ՄԿՆԱԾԵՌ**, ած. Մկան գոյնով:

**ՄԿՆԱԼԻՑ**, ած. Մկներով լիքը:

**ՄԿՆԱԿԱՆՁ**, գ. (Բուս.) Խոտատերեւների կարգին պատկանող բոյս:

**ՄԿՆԱԿԵՐ**, ած. Մկան կերած:

**ՄԿՆԱՀԱՏ**, ած. Մկան հասած:

**ՄԿՆԱՀԱՐՍՆՈՒԿ**, Տ. Աքիս:

**ՄԿՆԱՀՈՏ**, գ. Մկան հոտ:

**ՄԿՆԱՃԱՐԱԿ**, Տ. Մկնակեր:

**ՄԿՆԱՉՔ**, ած. Մկան նման մանր աչքեր ունեցող:

**ՄԿՆԱՌ**, ած. Մուկ դիպած:

**ՄԿՆԱՍՊԱՆ**, ած. Մկներ ոչնչացնող:

**ՄԿՆԱՏԱՄ**, Տ. Որքին:

**ՄԿՆԱՔԻՄ**, գ. (Կենդ.) Կրծողների ցեղին պատկանող փոքր մկան նման կենդանի:

**ՄԿՆԴԱՀԱՐ**, ած. Նիզակով կմ աշտեով զարկում:

**ՄԿՆԴԵՆ**, գ. (Քիմ.) Մկան թոյն, զառիկի բաղադրութիւններից մէկը թթուածնի հետ:

**ՄԿՆԸՆԿԷՑ**, ած. Մէջը մուկ ընկած:

**ՄԿՆԻԿ**, գ. Փոքր մուկ:

**ՄԿՆԿԵՐ**, գ. Մկան կերած:

**ՄԿՆԿԵՐՈՒՔ**, ած. գ. Մկնկեր եղած (նիւթ):

**ՄԿՆՈՌ**, գ. (Ախտաբ.) Մորթի հիւանդութիւն:

**ՄԿՆՈՏ**, ած. Մկներով ապականում՝ պղծում:

**ՄԿՆՈՐՄ**, ած. Մուկ որսացող, մուկ բռնող:

**ՄԿՆՈՒՏ**, ած. Լաւ զարգացած մկաններով:

**ՄԿՆՉԻՏ**, գ. Անորոշ տեսակի թռչուն:

**ՄԿՆՍՈՒՆ**, գ. (Բուս.) Մոխի մի տեսակը:

**ՄԿՈՒՆԴ**, գ. Մեծ գեղարդ, նիզակ:

**ՄԿՐԱՏ**, գ. Երկաթէ կտրող գործիք:

**ՄԿՐԱՏԱԿԻՐ**, ած. գ. Մկրատ կրող:

տանող:

**ՄԿՐԱՏԱՅ**, Տ. Խեչափառ:

**ՄԿՐԱՏԵԼ**, նբ. Մկրատով կտրել:

**ՄԿՐԱՏՈՒՄ**, գ. (փխբ.): Մկրատելը:

**ՄԿՐՏԱԳԻՐ**, գ. (Եկեղ.) Մկրտութեան վկայական:

**ՄԿՐՏԱՅԻՆ**, ած. Մկրտութեան յատուկ:

**ՄԿՐՏԱՐԱՆ**, գ. (Եկեղ.) Եկեղեցու, կից կմ մօտ շինություն, որի մէջ դրուած էր լինում մկրտութեան աւագանը:

**ՄԿՐՏԵԼ**, նբ. Մխրճել, ջրի մէջ ընկղմել՝ սուզել, թաթախել: (Եկեղ.) Նորածին երեխային աւագանի մէջ լուսւ: Կնքել, քրիստոնէայ դարձնել:

**ՄԿՐՏԻՉ**, ած. (Եկեղ.) Նա որ մկրտում է:

**ՄԿՐՏՈՒԹԻՒՆ**, գ. Ջրի մէջ ընկղմելը:

**ՄԿՐՏՍԱԿԱՆ**, ած. (Եկեղ.) Բողոքական եկեղեցու մի ճիւղատրություն:

**ՄԿՐՕՆ**, գ. Մկրատի նման գործիք:

